

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՂՎԱՆՔԻ
ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2013

1009530

93/99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՂՎԱՆՔԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

96



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

96

Signature

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013



**Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

**Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ս. Սվազյան**

Վարդանյան Ա.

**Վ 301 Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն/Ա. Վարդանյան. Եր.:
Պատմ. ինստ., 2013.— 208 էջ:**

Սենագրությունը նվիրված է բուն Աղվանքի պատմական աշխարհագրության ուսումնասիրությանը: Աղբյուրագիտական հարուստ նյութերի հիման վրա հեղինակը հաստատում է, որ Աղվանքն ըստ «Աշխարհացոյց»-ի ունեցել է 11 գավառ: Համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել Աղվանից պետության, ինչպես նաև մարզպանության ստեղծման թվականները: Աղբյուրների համալիր ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ Ուտիք և Արցախ նահանգները հայկական պետության ողջ ընթացքում գտնվել են Հայաստանի կազմում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների ու ընթերցող լայն հասարակության համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղվանից պետությունն արևելյան Այսրկովկասում¹ հանդես է եկել մ.թ.ա. I դարից և գոյատևել մինչև V դ. կեսերը: Իր գոյության շրջանում նրա սահմանները հյուսիսում հասել են Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, արևելքում՝ Կասպից ծովը², արևմուտքում՝ Վիրքը, իսկ հարավում՝ Կուր գետը: Այս սահմաններում ընդգրկված երկիրն անտիկ հեղինակների աշխատություններում հիշատակվում է «Ալբանիա», վրացականում՝ «Ռ-անի» (նաև՝ «Հերեթի»), իսկ ասորական, պարսկական ու արաբական աղբյուրներում՝ «Առան» անուններով: Սա է հայ մատենագիրների հիշատակած «բուն աշխարհն Աղուանից» երկիրը: Աղվանից երկրի համար նշված սահմանները պահպանվեցին մինչև մ.թ. V դ. կեսերը, երբ Սասանյան Պարսկաստանն Այսրկովկասում կատարեց վարչական փոփոխություններ՝ վերացրեց Աղվանից թագավորությունը, այն վերածեց մարզպանության ու նրան բռնակցեց հայկական Արցախ և Ուտիք նահանգները, որոնք, սակայն, Աղվանքի համար մնացին սոսկ որպես աշխարհագրական տարածք:

Հետագա իրադարձությունները նոր փոփոխություններ առաջացրեցին տարածաշրջանի քաղաքական կյանքում: Աղվանք ներխուժեցին արաբական, ապա՝ թուրքալեզու ցեղերը: Վերջիններս գրավեցին բուն Աղվանքի տարածքը, իսկ նրանց հետնորդները սեփականացրեցին Իրանական Ադրբեջանի անունը և սկսեցին հա-

¹ «Անդրկովկաս» անվանումը գործածության մեջ է մտել XVIII դարից սկսած: Կովկասյան լեռներից այս կողմ բնակվողների համար, այդ անվանման ճիշտ ձևը «Այսրկովկաս»-ն է (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բաքսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 260, տե՛ս նաև Գաբրիելյան Հ., Կովկասի ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1979, էջ 7): Ուտի, աշխատության մեջ նախապատվությունը տվել ենք գործածության այս ձևին:

² Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Աղվանքի արևելյան սահմանը հասել է Աղուան գետը: Հավելենք, որ Աղվանքի վարչական բաժանումը և աշխատանքում առկա քարտեզը ներկայացնում ենք համաձայն «Աշխարհացոյց»-ի:

վակնություններ ներկայացնել հարևան պետությունների տարածքների նկատմամբ:

Խորհրդային ժամանակներից սկսած աղբբեջանցի պատմաբանները, առաջնորդվելով ժամանակակից աղբբեջանական ժողովրդի պատմությունը հնամենի դարձնելու մոլուցքով, բուն Աղվանքի պատմությանը նվիրված իրենց աշխատություններում խեղաթյուրել և խեղաթյուրում են վերջինիս կազմավորման էթնիկական արմատները, «աղբբեջանցիներ» և «աղբբեջանական ցեղեր» փնտրելով այնտեղ, որտեղ դրանք չկան: Նրանք շարունակաբար փորձել ու փորձում են կեղծել և յուրացնել Ուտիքի, Արցախի և Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային ու քաղաքական պատմությունը և իրենց «իրավունքներն» ամրագրել պատմական Հայաստանի նշված աշխարհների վրա: Հակագիտական և հակահայկական այս մոտեցումները շարունակվում են առ օրս: Այդ իսկ պատճառով մեզանում Աղվանքի պատմական աշխարհագրությանը նվիրված և սկզբնաղբբությունների տեղեկությունների օբյեկտիվ վերլուծության հիման վրա գրված ամեն մի աշխատություն արժանի հակահարված է հարևան երկրի «պատմություն» հորինող հետազոտողների նենգափոխումներին ու քաղաքական նկրտումներին: Եվ հենց այս առումով է հիմնավորվում սույն մենագրության խիստ արդիական նշանակությունը, էլ չենք խոսում այն մասին, որ վերջին շրջանում Այսրկովկասում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները նոր երանգ են հաղորդում խնդրո առարկա հարցին՝ կարևորելով դրա գիտաքաղաքական հրատապությունը:

Աշխատության նպատակն է գրավոր սկզբնաղբբությունների՝ ձեռագիր մատյանների, հունա-հռոմեական, հայկական, վրացական, ասորական, արաբական, ինչպես նաև նոր ու նորագույն շրջանում ստեղծված առկա գրականության հիման վրա համակողմանի ուսումնասիրել ու գիտական հարթության վրա ներկայացնել Աղվանքի պատմությունը և պատմաաշխարհագրական սահմանները, վարչական կառուցվածքն ու հարակից մի շարք հարցեր: Ըստ այդմ՝ աշ-

խատանքում դիտարկվել են.

1. Աղվանական պետության կազմավորումը:
2. Հարևանների հետ աղվանացիների փոխհարաբերությունները:
3. Պետական-քաղաքական սահմանների ձևավորումը:
4. Աղվանքի գավառների, քաղաքների տեղորոշումը:
5. Աղվանից մարզպանության կազմավորումը, սահմանների տեղորոշումը, մարզպանության տրոհումը:

Աշխատանքն ունի աղբյուրագիտական հարուստ հենք: Այն շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների՝ հայ և օտար մատենագիրների, հատկապես՝ աշխարհագետների երկերի, ձեռագիր մատյանների, տպագիր գրականության բնական հետազոտության և վերլուծության հիման վրա: Թեմայի գիտական մշակման համար բացառիկ, հիմնական սկզբնաղբյուրը, սակայն, մնում է VII դարում ստեղծված Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը, որը մեզ է հասել երկու՝ համառոտ³ և ընդարձակ⁴ խմբագրություններով, քարգմանվել է տարբեր լեզուներով, ապա փորձ է կատարվել վերականգնելու նրա սկզբնական բնագիրը⁵: «Աշխարհացոյց»-ը մեր ուսումնասիրության համար կարևորագույն ու առանցքային այն սկզբնաղբյուրն է, առանց որի տեղեկությունների մենագրությունը կլիներ թերի: Նա է հաղորդում բուն Աղվանքի պատմության երեք ժամանակահատվածներում նրա պետական սահմանների ու տարածքային փոփոխությունների մասին, նշում գավառները, քաղաքները, վարչաքաղաքական կառուցվածքը: «Աշխարհացոյց»-ը պատմաաշխարհագրական հուշարձան է՝ նվիրված Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Սասանյան Իրանի, ինչպես նաև Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկայի) աշխարհագրական նկարագրությանը: Այս բոլոր երկրների մասին հե-

³ Патканов К., Армянская География VII века по. р. X. (приписывавшаяся Моисею Хоренскому), Санктпетербург, 1877.

⁴ «Աշխարհացոյց» Մովսէսի Խորենացոյ յանելուածովք նախնեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881:

⁵ Երեմյան Ս., «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1972, թիվ 4, էջ 209-230, 1973, թիվ 1, էջ 238-252, թիվ 2, էջ 261-274:

դիմակը խոսում է այնպիսի քաջատեղյակությամբ, որը բացառիկ երևույթ է իր դարի պատմության մեջ: Ուստի, պատահական չէ նրա նկատմամբ ուսումնասիրողների հետաքրքրությունը: Գոյություն ունի «Աշխարհացոյց»-ի 60 ձեռագիր ընդօրինակություն, որոնցից 45-ը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի սեփականությունն է, իսկ մյուսները պահվում են արտասահմանում՝ Վենետիկում, Վիեննայում և Երուսաղեմում⁶:

Երևանի Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի 36 ձեռագրի նկարագրությունը հրատարակել է պատմաբան Աշոտ Աբրահամյանը⁷:

Ցավոք, «Աշխարհացոյց»-ի բնագիրը չի պահպանվել: Մեզ հասած օրինակներն ընդօրինակություններ են, որոնք դարերի ընթացքում արտագրողների կողմից ենթարկվել են փոփոխությունների և մեկը մյուսից տարբերվում են: «Աշխարհացոյց»-ն ունեցել է տարբեր վերնագրեր՝ «Աշխարհագիր», «Տեսակը աշխարհաց և հանգամանք երկրի», «Աշխարհացոյց», «Յաղագս աշխարհագրութեան», «Յաղագս աշխարհագրութեան ստույգ», «Յաղագս աշխարհագրութեան ստույգ և ճշմարիտ Մովսեսի Խորենացույ»⁸: Թե նշված վերնագրերից ո՞րն է նախնականը, առայժմ պարզ չէ:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի և ստեղծման ժամանակի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ:

1. Մխիթարյան միաբանության անդամ Դ. Ինճիճյանն «Աշխարհացոյց»-ը համարել է Մովսես Խորենացու աշխատություն՝ պատմահոբը համարելով V դ. հեղինակ⁹: Ինչպես կտեսնենք ստորև, այդ տեսակետը հետագայում ունեցավ իր բազմաթիվ հետևորդները,

⁶ Անանիա Շիրակացի, Մատենագրություն (այսուհետև՝ Մատենագրություն), քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 352:

⁷ Աբրահամյան Ա., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 9-20:

⁸ Նույն տեղում, էջ 25:

⁹ Ինճիճեան Դ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Կ. Գ. Վենետիկ, 1835, էջ 304-314:

2. ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»-ը համարել է կեղծ Մովսեսի գործ՝ գրված IX դ. վերջում կամ X դ. կեսերին՝ մասնավորապես 950 թ.¹⁰: Սեն-Մարտենն այս կարծիքին էր հանգել հիմնվելով աշխարհագրական մի քանի անունների քննության հիման վրա,

3. պրոֆ. Բ. Պատկանյանն «Աշխարհացոյց»-ը համարում է Անանիա Շիրակացու աշխատություն՝ գրված VII դ.¹¹,

4. անվանի պատմաբան Հ. Մանանդյանն «Աշխարհացոյց»-ի հեղինակ է համարում Մովսես Խորենացուն՝ վերջինիս գործունեությունը հասցնելով IX դ.¹²:

Առաջ անցնելով նշենք, որ մինչև XIX դ. սկզբները գերիշխում էր այն տեսակետը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացին է, որն այն գրել է V դ.: Սակայն Սեն-Մարտենի կողմից 1819 թ. «Աշխարհացոյց»-ի հրատարակությունը ֆրանսերեն թարգմանությամբ, որն ուներ ընդարձակ ներածական և բազմաթիվ ծանոթագրություններ, սուր բանավեճերի տեղիք տվեց:

Մխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինճիճյանը¹³ և Հ. Մանանդյանը¹⁴ լուրջ փաստարկներով հերքեցին Սեն-Մարտենի տեսակետը: Այսպես, նրանք ցույց տվեցին, որ Սեն-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ը սխալաշատ մի ձեռագիր է¹⁵, որ նրա բերած կոմանների զգալի մասը ընդմիջարկություններ են և դրանցից մի քանիսն էլ սխալ են մեկնված, որ, ի թիվս այլ անճշտությունների, «Աշխարհացոյց»-ի այլ օրինակներում բացակայում են «որ է Յօզու Ռուսաց» արտահայտությունը և Շատախ գավառանունը¹⁶: Ի դեպ, մենք

¹⁰ Saint-Martin M. J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 301-317.

¹¹ Патканов К., նշվ. աշխ., էջ XVIII:

¹² Մանանդյան Հ., Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 113:

¹³ Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., հ. գ, էջ 305:

¹⁴ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 11:

¹⁵ Նույն տեղում, էջ 26-32:

¹⁶ Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., հ. գ, էջ 305-308:

ևս «Աշխարհացոյց»-ի մի շարք հրատարակություններ ուսումնասիրելիս չենք հանդիպել «որ է Յօզու Ռուսաց» արտահայտությանը:

Հ. Մանանդյանի տեսակետը, ըստ որի Մովսես Խորենացին ապրել ու ստեղծագործել է IX դ. և «Աշխարհացոյց»-ն էլ համարում է IX դ. աշխատություն, քննադատության չի դիմանում և հետազայում էլ չունեցավ իր հետևորդները: Ա. Աբրահամյանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Ղևոնդ պատմիչի աշխատության մեջ կան հատվածներ, որոնք ակնբախ վկայում են «Աշխարհացոյց»-ից նրա օգտվելու իրողությունը¹⁷: Եվ կատարելով «Աշխարհացոյց»-ի և Ղևոնդի պատմության մի շարք հատվածների համադրություն՝ Ա. Աբրահամյանը գրում է. «Ղևոնդի՝ «Աշխարհացոյց»-ից օգտվելու փաստը պարզ վկայում է, որ Ղևոնդի ժամանակ «Աշխարհացոյց»-ն արդեն գրած պատրաստ մի աշխատություն էր...: Մեզ հայտնի է, որ Ղևոնդն իր պատմությունը գրել է Բագրատունիների նշանավոր իշխան Շապուհի պատվերով (8-րդ դարի երկրորդ կեսում), պարզ է ուրեմն, որ «Աշխարհացոյց»-ը 8-րդ դարից ուշ գրված լինել չէր կարող. այս փաստը միանգամայն հերքում է Խորենացուն, ինչպես և «Աշխարհացոյց»-ի հեղինակի 8-րդ դարից ուշ բերող բանասերների բոլոր կովանները»¹⁸:

Մեր խնդրից դուրս է մեկ առ մեկ քննության առնել այդ տեսակետները¹⁹, նշենք միայն, որ եթե կարելի է վիճել «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, ապա պատմագիտության համար ակնհայտ է, որ Մովսես Խորենացին V դ. հեղինակ է:

Եթե Սեն-Մարտենի և Հ. Մանանդյանի տեսակետները հետազայում չունեցան իրենց հետևորդները, ապա նույնը չի կարելի ասել Մխիթարյան միաբանության անդամների (Ղ. Ինճիճյան, Ա. Սուքրյան) կարծիքների վերաբերյալ, որոնք «Աշխարհացոյց»-ի հեղինակ են համարում Մովսես Խորենացուն՝ դրանով աշխատությունը հա-

¹⁷ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

¹⁸ Նույն տեղում, էջ 60-61:

¹⁹ Հ. Մանանդյանի տեսակետների հերքումը տես Ստ.Մալխասյանցի «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքում, (Երևան, 1940):

մարելով V դ. ստեղծագործություն: Նրանք, մախ, մի քանի ձեռագրերի համեմատությամբ հրատարակեցին «Աշխարհացոյց»-ի համառոտ բնագիրը Մովսես Խորենացու աշխատությունների հետ²⁰, ապա 1881 թ. Ա. Սուքրյանը հրատարակեց «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության բնագիրն ու այն համարեց V դ. ստեղծագործություն²¹: Իր տեսակետը հիմնավորելու համար Մխիթարյան միաբանը գտնում է, որ դրա հեղինակի լեզուն և ոճը, բացառությամբ մի քանի կարճ ընդմիջարկությունների, V դարից ավելի ուշ ժամանակաշրջանի չեն²², նշում է, որ բազմաթիվ ընդհանրություններ կան Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի և «Աշխարհացոյց»-ի միջև, որն էլ ինքնըստինքյան խոսում է Խորենացու՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակ լինելու օգտին²³: Փորձելով հիմնավորել իր տեսակետը՝ Ա. Սուքրյանը գրում է, որ երկու աշխատություններում էլ միևնույն բնորոշումն ունեն Ճենաց աշխարհը, պոնտական ճեները և այլն²⁴:

«Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության պատմության մեջ շրջադարձային կետ հանդիսացավ 1877 թ., երբ նշանավոր հայագետ Ք. Պատկանյանը, հիմք ունենալով «Աշխարհացոյց»-ի 1843 թ. վեներտիկյան հրատարակությունը, տպագրեց դրա ռուսերեն քարգմանությունը՝ ընդարձակ ներածականով ու ծանոթագրություններով: Համոզված լինելով, որ Մովսես Խորենացին V դ. հեղինակ է, իսկ «Աշխարհացոյց»-ը պարունակում է VII դ. տեղեկություններ, նա առաջինն էր, որ ցույց տվեց, թե «Աշխարհացոյց»-ի մեջ իբրև աղբյուր հիշատակված Կոստանդին Անտիոքացին VI դ. մատենագիր Կոսմա Հնդկաշուն է, որի «Քրիստոնեական երկրագրությունից»-ից օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը²⁵: Փորձելով հիմնավորել «Աշխարհացոյց»-ի ստեղծման կոնկրետ ժամանակաշրջանը՝ Ք.

²⁰ Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք (այսուհետև՝ Մատենագրություն), Վեներտիկ 1843:

²¹ «Աշխարհացոյց», էջ III:

²² Նույն տեղում, էջ VI-VII:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Патканов К., նշվ. աշխ., էջ XII:

Պատկանյանը գտավ, որ այն կարող էր ստեղծվել պարսից արքայից արքա Խոսրով Բ-ի (590–628 թթ.) և բյուզանդական կայսր Հերակլի (610–641 թթ.) օրոք, մինչև արաբական արշավանքները Հայաստան, քանի որ աշխատության մեջ բացակայում են Պարսկաստանում արագ տարածված և կիրառություն գտած արաբական տեղանունները²⁶։ Ապացուցելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն ապրել և ստեղծագործել է VII դ., իսկ Մովսես Խորենացին միանշանակ V դ. հեղինակ է, Բ. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարեց, Անանիա Շիրակացուն²⁷։

Բ. Պատկանյանի կարծիքով Հայաստանի բաժանումը 15 աշխարհների և 189 գավառների Անանիա Շիրակացին քաղել է «պաշտոնական» հին աղբյուրներից²⁸։ Սակայն ուսումնասիրողների կողմից ապացուցված փաստ է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ինքնուրույնություն է ցուցաբերել հատկապես Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի և Պարսկաստանի նկարագրության մեջ²⁹ և դրանց վերաբերող մասերը կազմել է անձամբ³⁰։

Բ. Պատկանյանի տեսակետը հեղաշրջում առաջացրեց «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի ուսումնասիրության հարցում։ Մեծ հայագետն ունեցավ իր բազում հետևորդները, որոնք նոր փաստերով ավելի հարստացրեցին նրա տեսակետը՝ «Աշխարհացոյց»-ն համարելով Անանիա Շիրակացու մտքի արգասիք, իսկ ստեղծման ժամանակը՝ VII դ.։

«Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցում սկզբնական չորս տեսակետի փոխարեն հետագայում տիրապետող դարձան երկուսը։ Առաջինը, ինչպես նշել ենք, Մխիթարյան միաբանների տեսակետն էր՝ «Աշխարհացոյց»-ն համարել V դ. ստեղծագործություն,

²⁶ Նույն տեղում, էջ XIII:

²⁷ Նույն տեղում, էջ XVII:

²⁸ Նույն տեղում, էջ 42, ծան. 150:

²⁹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, 1963, էջ 13, 14:

³⁰ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 25–26:

հեղինակ ճանաչելով Մովսես Խորենացուն: Երկրորդը՝ Բ. Պատկանյանի և նրա հետևորդների տեսությունը, խնդրո առարկա աշխարհագրական երկը համարել է VII դ. ստեղծագործություն՝ Անանիա Շիրակացու հեղինակությամբ:

Ժամանակի ընթացքում երկու տեսակետներին էլ միացան մի շարք ուսումնասիրողներ, և, ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Մանանյանը, «Կարծիքների մեջ տիրապետող էին Պատկանյանի ենթադրությունները, ուստի և «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարվել է սովորաբար Անանիա Շիրակացին»³¹:

Փոխելով իր նախորդ տեսակետն «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցում³², Բ. Պատկանյանի կարծիքին հետագայում միացավ նաև գերմանացի մեծ հայագետ Հ. Մարկվարտը, գտնելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն ապրել է VII դ., վերջին – VIII դ. սկզբին, նա, մասնավորապես, գրել է. «Անանիա Շիրակացին իսկական գիտնական է, որը Հայաստանի բաժանումից 300 տարի հետո ապշեցուցիչ ճշտությամբ տվել է Հայաստանի աշխարհագրությունը բաժանումից առաջ»³³:

«Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության պատմության մեջ շրջադարձային մի նոր կետ հանդիսացավ Ա. Աբրահամյանի հետազոտությունը: Զննության ենթարկելով Երևանի Մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ների 36 ձեռագրերը, հեղինակը հայտնաբերել է, որ 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ներից և ոչ մեկի վերնագրում չի հիշատակվում Մովսես Խորենացու անունը³⁴: Ըստ այդմ, նա գրում է. «Մինչև XVI դ. «Աշխարհացոյց»-ը դեռ չի ճանաչվել Խորենացու հեղինակությամբ... և ընդօրինակող գրիչներից մեկն անհրաժեշտ է գտել նշանակել «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Եվ ահա

³¹ Նույն տեղում, էջ 34:

³² Markwart J., Éranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Exkursen, Berlin, 1901, S. 6.

³³ Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 14, 39, 58.

³⁴ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 29:

որոշում է հոգուտ Խորենացուն, որովհետև նա էր ամենամեծ հեղինակություն վայելողը»³⁵։ Եվ շարունակելով քննության ենթարկել «Աշխարհացոյց»-ին վերաբերվող այլևայլ հարցեր, գտնում է, որ այն VII դ. ապրած հեղինակի գործ է, գրվել է նախքան Հայաստանը արաբների կողմից նվաճվելը³⁶, հեղինակն էլ Անանիա Շիրակացին է³⁷։

Չեռնամուխ լինելով վիճահարույց հարցի քննարկմանը՝ «Աշխարհացոյց»-ի հաջորդ հոտագոտողը՝ Ս. Երեմյանը, նշում է, որ այն նախապես մոտավորապես 15 քարտեզի ժողովածու-ատլաս էր, որոնց մեջ հիմնականում եղել է Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի քարտեզը³⁸։ Նա հանգել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Հայաստանը և Այսրկովկասը նկարագրում է երկու ժամանակաշրջանում. առաջինը մինչև 387 թ., երբ Հայաստանը մի ընդարձակ, կենտրոնացած պետություն էր՝ «Մեծ Հայք» անունով, երկրորդը հեղինակի ապրած ժամանակահատվածն էր և արտացոլում էր Հայաստանի վարչատարածքային բաժանումը 591–610 թթ.³⁹։

Ս. Երեմյանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ն առանձին, ինքնուրույն աշխատություն է, այլ ոչ թե Պտղոմեոսի երկի ընդօրինակություն։ Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Պետք է նշել, որ շատ հարցերում հայ աշխարհագրագետն ավելի առաջ է գնացել, քան իր հույն մեծ նախորդը... հայ հեղինակը բոլորովին մի կողմ է թողնում Պտղոմեոսի ոչ ճիշտ պատկերացումը Կասպից ծովի արևմտյան ծովեզերքի մասին և բերում այնպիսի տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ նրա պատկերացումը գիտական տեսակետից հետ չի մնում XVIII դ. աշխարհագրագետների ու ճանապարհորդների պատկերացումից»⁴⁰։ Միաժամանակ Ս. Երեմյանն անհավանական է համարում, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն Անանիա Շիրակացին է՝ նշելով. «Աշ-

³⁵ Նույն տեղում, էջ 30։

³⁶ Նույն տեղում, էջ 114։

³⁷ Նույն տեղում, էջ 116, Աբրահամյան Ա., «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը. – ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 226–240։

³⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 7։

³⁹ Նույն տեղում։

⁴⁰ Նույն տեղում, էջ 26։

խարհացոյց»-ը գրվել է ամենաուշը 608–610 թթ. և հարց է առաջանում, թե որքանով ճիշտ են այն բանասերները, որոնք «Աշխարհացոյց»-ը համարում են Անանիա Շիրակացու (610–685) աշխատություններից մեկը⁴¹: Հետագա իր նոր աշխատություններում, սակայն Ս. Երեմյանն «Աշխարհացոյց»-ի հեղինակ ճանաչեց Անանիա Շիրակացուն⁴²:

XX դ. երկրորդ կեսին «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության խնդիրները քննության առարկա են դարձել Մ. Խաչատրյանի⁴³, Թ. Հակոբյանի⁴⁴, Գ. Պետրոսյանի⁴⁵ աշխատություններում: Նրանք պաշտպանեցին Զ. Պատկանյանի տեսակետը:

«Աշխարհացոյց»-ի որոշ հարցերով, մասնավորապես տիեզերագիտական խնդիրներով զբաղվել է Է. Դանիելյանը⁴⁶: Նրա վերջերս լույս տեսած «Գանձասարի պատմություն» մեծածավալ ուսումնասիրության մեջ մասնավորապես նշում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակներն են պատմահայր Մովսես Խորենացին (V դ.) և նրա գործը շարունակող նշանավոր աշխարհագրագետ Անանիա Շիրակացին⁴⁷:

Հետագայում էլ մի շարք ուսումնասիրողներ տարբեր կարծիքներ են հայտնել «Աշխարհացոյց»-ի հեղինակի և դրա ստեղծման ժամանակի վերաբերյալ⁴⁸:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Еремян С., География и картография. – “Культура раннефеодальной Армении (IV–VII вв.)”, Ереван, 1980, с. 232. Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1984, էջ 544:

⁴³ Խաչատրյան Մ., VII դարի «Աշխարհացոյց»-ի մասին. – ՊԲՀ, 1968, էջ 81–100:

⁴⁴ Հակոբյան Թ., Գիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին. – «Երևանի համալսարանի գիտական աշխատություններ», հ. 43, պրակ 1, 1954, էջ 119–147:

⁴⁵ Պետրոսյան Գ., «Աշխարհացոյց»-ի հեղինակի առեղծվածը. – ԼՀԳ, 1971, թիվ 10, էջ 54–60, նույնի՝ VII դ. հայկական «Աշխարհացոյց»-ի մասին. – ՊԲՀ, 1979, թիվ 2, էջ 241–246, նույնի՝ VII դ. հայկական «Աշխարհացոյց»-ի նոր լուսաբանության մի փորձի մասին. – ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1986, թիվ 6, էջ 59–65:

⁴⁶ Стн Даниелян Э., Армянские космографические труды VII века о строении вселенной, Ереван, 1978.

⁴⁷ Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, Երևան, 2005, էջ 8, 30:

⁴⁸ Ուսումնասիրողների տեսակետների մանրամասն քննությունը տե՛ս Հարությունյան Բ., Սե՛ծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհա-

«Աշխարհացոյց»-ում տեղ գտած Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման հարցերի ուսումնասիրությամբ իր մեծարժեք աշխատության մեջ հանդես է եկել Բ. Հարությունյանը: Ուսումնասիրության սկզբում մանրագին քննության ենթարկելով «Աշխարհացոյց»-ի վերաբերյալ հետազոտողների հայտնած տեսակետները՝ Բ. Հարությունյանը հանգել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը V դ. ստեղծագործություն է և պատկանում է Մովսես Խորենացու գրչին⁴⁹: Նա, մասնավորապես, նշում է, որ Կապկոի քուստակի նկարագրության մեջ հաղորդվում է, որ այն բաղկացած է 13 աշխարհներից, սակայն դրանք թվարկելիս հիշատակվում են 14-ը: Ըստ Բ. Հարությունյանի, ավելացվածը Սիսականն է, որն առանձին աշխարհի կարող էր վերածվել 571 թ. հետո⁵⁰: Նա գտնում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Կոստանդին Անտիոքացու աշխատության գոյության մասին չի էլ իմացել և նշված գործի հիշատակությունը լոկ խմբագիրների՝ քրիստոնեական գաղափարախոսությանը տուրք տալու հետևանք է⁵¹:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցը, ինչպես տեսնում ենք, բազմակարծության առարկա է: Կարծում ենք, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դ. և պատկանում է Անանիա Շիրակացու գրչին: Բերենք մի քանի փաստարկներ: Մեզ համար անվիճելի է պրոֆ. Ա. Աբրահամյանի ուսումնասիրության շնորհիվ պարզած հանգամանքները. առաջինը, Մովսես Խորենացու անվան բացակայությունը 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»ների վերնագրերում, երկրորդ՝ XV դ. գրիչներից մեկն այն վերագրել է Մովսես Խորենացուն: «Աշխարհացոյց»-ի տեքստում հիշատակվում են չորս Հայքե-

ցոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 5-38: Վարդանյան Ա., «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության համառոտ պատմություն. «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), (այսուհետև՝ ՀՊՀ), քիվ 9, Երևան, 2008, էջ 23-36:

⁴⁹ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում, էջ 34:

րը⁵², որոնք, ինչպես գիտենք, կազմավորվել են VI դ. Հուստինիանոսի կողմից, և Մովսես Խորենացին, որն ապրել է V դ., չէր կարող անդրադառնալ VI դ. կեսերին կատարված վարչական փոփոխություններին:

«Աշխարհացոյց»-ն Անանիա Շիրակացու գրչին պատկանելու մասին է խոսում դրանից Ղևոնդ պատմիչի օգտվելու փաստը: Նշենք նաև, որ անմիջապես է այն հանգամանքը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը պետք է ունենար աշխարհագրական ու մաթեմատիկական գիտելիքներ:

Եվ վերջապես Կամբեճան գավառի հիշատակումն «Աշխարհացոյց»-ում: Ինչպես կոեսենք գավառը Մեծ Հայքի պետականության ժամանակահատվածում եղել է նրա կազմում, իսկ «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է իբրև Աղվանքի գավառներից մեկը: Եվ դա էլ վկայում է այն մասին, որ «Աշխարհացոյց»-ն արտագրվում է V դարից հետո կատարվող իրադարձությունները ու պատկերել է Անանիա Շիրակացու գրչին, իսկ Մովսես Խորենացին ապրել և ստեղծագործել է V դարում:

Հայոց Արևելից կողմանց, դրա հետ նաև Աղվանքի պատմա:աշխարհագրական սահմանների մասին մյուս անփոխարինելի աղբյուրը VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու աշխատությունն է⁵³: «Պատմության» սկզբում հեղինակը տալիս է իր նկարագրելիք երկ-

⁵² «Աշխարհացոյց»-ում չորս Հայքերի գոյության վերաբերյալ այլ տեսակետ ունի Բ. Հարությունյանը. (տես «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997):

⁵³ Աշխատության մեծ մասը գրվել է VII դ., երրորդ մասը գրվել է X դարում Մովսես Դախուրանցու կողմից: Այն ունեցել է մի շարք հրատարակություններ, քարգմանվել է օտար լեզուներով (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատվացի), բնական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983: Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, предисл. и коммент. Ш. В. Смбацяна, Ереван, 1984. Dowsett C. J. F., History of the Caucasian Albanians. By Movses Dasxuranci, London, 1961) ու իր վրա բեռնել սարքեր ազգերի ուսումնասիրողների հետաքրքրությունը: Պատմության մեջ առկա բոլորիկ մի ակնարկից գիտենք, որ Աղվանից աշխարհի պատմության հեղինակը Ուտիքից է. «...առ ստորոտով լերինն որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի յորոմն և ես» (Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԱ, էջ 137): Այս վկայությամբ պայմանավորված հետագա ուսումնասիրողները պատմիչին կոչում են Կաղանկատվացի:

րամասի՝ Հայոց Արևելից կողմանց աշխարհագրական սահմանները՝ Արաքս գետից մինչև Հնարակերտ ամրոցը ընկած տարածությունը, որտեղ գտնվում են հայկական Ոստիք և Արցախ նահանգները: Իր նկարագրելիք աշխարհը պարփակելով Արաքսի գետի և Հնարակերտ ամրոցի միջև ընկած սահմաններում, Մովսես Կաղանկատվացին փաստորեն ցույց է տալիս, որ բուն Աղվանքը տարածվել է մինչև դրանց հետ սահմանակցելը, այսինքն՝ ունեցել է իր ուրույն սահմանները:

Աղվանքի պատմության, նրա պատմական աշխարհագրության որոշ հարցեր իրենց արտացոլումն են գտել Փափսոս Բուզանդի (V դ.) «Հայոց պատմություն»⁵⁴ աշխատության մեջ: Պատմիչի հաղորդած առանձին իրադարձություններից պատկերացում ենք կազմում IV դ. բուն Աղվանքի սահմանների վերաբերյալ:

Միջնադարյան հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Մովսես Խորենացին (V դ.) իր նշանավոր «Հայոց պատմության»⁵⁵ մեջ սահմանային հարցեր լուսաբանելիս մասնավորապես տալիս է իր ճանաչած Աղվանքի, այն է՝ Հայոց Արևելից կողմանց սահմանները՝ Արաքս գետից մինչև Հնարակերտ ամրոցը:

V դարի հայ մատենագրական գանձարանում իր ուրույն տեղն ունի Եղիշեի (V դ.) «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»⁵⁶ աշխատությունը, որտեղ արժանահավատ տեղեկություններ կան մինչնարգպանական շրջանի Աղվանքի վարչական սահմանների որոշ հարցեր պարզաբանելու տեսակետից: Դրանց համաձայն Աղվանքն այդ ժամանակ վարչա-քաղաքական առումով գտնվում էր անկայուն վիճակում:

⁵⁴ Փափսոսի Բիզանդացու Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Բուզանդ), քննադիրը Զ. Պատկանյանի, քարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987:

⁵⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), քննական քննադիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991:

⁵⁶ Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ Եղիշե), Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957:

Ոչ պակաս հետաքրքրական է Կորյունի (V դ.) աշխատությունը⁵⁷ Աղվանքում ու Վիրքում Մեսրոպ Մաշտոցի ծավալած լուսավորչական գործունեության մասին, որն անողղակիորեն լույս է սփռում նաև Աղվանքի վարչաքաղաքական կացության վրա:

Վեոնդի (VIII դ.) աշխատությունը⁵⁸ ներկայացնում է VII-VIII դդ. պատմությունը: Արաբական նվաճումների հետ կապված պատմիչը տալիս է նաև Աղվանքի գավառների նկարագրությունը, որով մեկ անգամ ևս հաստատվում է «Աշխարհացոյց»-ի տեղեկություններն Աղվանքի վարչաքաղաքական իրավիճակի վերաբերյալ:


Հայաստանի, մասնավորապես նրա արևելյան շրջանների մասին իր «Աշխարհացոյց»-ում⁵⁹ հարուստ տեղեկություններ է հաղորդում XIII դ. պատմիչ Վարդան Վարդապետը: Նրա հաղորդած նյութը մեծ հետաքրքրություն է ներկայացնում տեղագրական, վարչատարածքային բաժանումների, քաղաքների տեղադրության առումով: Պատմիչը շրջագայել է Հայոց Արևելից կողմերում և անձամբ ծանոթացել տեղանքի աշխարհագրությանը: Նրա հաղորդած տվյալները մեկ անգամ ևս փաստում են, որ հունա-հռոմեական աղբյուրներում հիշատակվող Ալբանիայի հարավային սահմանը ամենևին չի հասել Արաքս գետին, որ թե՛ Ոստիքը, և թե՛ առավել ևս Արցախն իրենց հայրենի երկրի մասն էին կազմում:

Այսրկովկասի, մասնավորապես Աղվանքի պատմության առանձին հարցերի, ցեղային կազմի, տարածաշրջանում Պարսկաստանի վարած կրոնական քաղաքականության, պարսկա-բյուզանդական պատերազմների, արաբական առաջին արշավանքների, նրանց հարկային քաղաքականության, քաղաքական սահմանների մասին իրենց աշխատություններում տեղեկություններ են հաղորդում Ագա-

⁵⁷ Կորյուն, Վարդ Մաշտոցի, (այսուհետև՝ Կորյուն), բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, քարգնամությամբ առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:

⁵⁸ Պատմութիւն Վեոնդիայ մեծի վարդապետի հայոց (այսուհետև՝ Վեոնդ), Ս. Պետերբուրգ, 1887:

⁵⁹ «Աշխարհացոյց» Վարդանայ Վարդապետի (այսուհետև՝ Վարդան), քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, Բարիզ, 1960:



քանգեղոսը (V դ.)⁶⁰, Հազար Փարպեցին (V դ.)⁶¹, Սեբեոսը (VII դ.)⁶², Հովհաննես Դրասխանակերտցին (IX-X դդ.)⁶³, Ասողիկը (X-XI դդ.)⁶⁴, Մատթեոս Ուռհայեցին (XII դ.)⁶⁵, Կիրակոս Գանձակեցին (XIII դ.)⁶⁶, Ստեփանոս Օրբելյանը (XIII դ.)⁶⁷ և ուրիշներ:

Հայկական սկզբնաղբյուրներում խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ պակասող նյութը լրացնելու են գալիս անտիկ սկզբնաղբյուրները: Դրանցում զգալի տեղ են գրավում անտիկ՝ հունահռոմեական հեղինակների գործերը: Եվ չնայած վերջիններս ժամանակագրական առումով ավելի հին են, քան հայ պատմիչների գործերը, այնուհանդերձ, նրանց օգնությամբ ճշտվում, հաստատվում ու լրացվում են հայ մատենագիրների տեղեկությունները, որով էլ մեր աշխատության համար դառնում են առաջնակարգ սկզբնաղբյուրներ: Հունահռոմեական հեղինակների մեջ մեր թեմայի համար առանձնապես են Ստրաբոնի, Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի աշխատությունները:

Մ.թ.ա. I դ. – մ.թ. I դ. սկիզբներն ընկած ժամանակաշրջանի Ադվանքի քաղաքական սահմանների, էթնիկական կազմի, բնական հարստությունների, տնտեսության մասին թողած իր տվյալներով անփոխարինելի աղբյուր է Ստրաբոնի (մ.թ.ա. 63 – մ.թ. 20) «Աշխար-

⁶⁰ Ագաթանգեղոսյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ագաթանգեղոս), աշխատութեամբ Գ. Տէր-Սլրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:

⁶¹ Հազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թողթ առ Վահան Սամիկոնեան (այսուհետև՝ Փարպեցի), աշխատութեամբ Գ. Տէր-Սլրտչեան եւ Ստ. Մալխասեանց, Տփղիս, 1904:

⁶² Պատմութիւն Սեբեոսի (այսուհետև՝ Սեբեոս), աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979:

⁶³ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, (այսուհետև՝ Դրասխանակերտցի), Թիֆլիս, 1912:

⁶⁴ Ստեփանոսի Տաթևեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885:

⁶⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Ուռհայեցի), Գրաքար բնագիրը Մամբրե Մելիք Աղամյանի և Ներսէս Տէր-Միքայելյանի, Երևան, 1991:

⁶⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գանձակեցի), աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

⁶⁷ Պատմութիւն նահանգին Միսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, (այսուհետև՝ Օրբելյան), Թիֆլիս, 1910:

հագրությունը»⁶⁸: Հույն աշխարհագրագետն առաջին հեղինակն է, որ նկարագրում է Աղվանքի սահմանները: Իր աշխատության 11-րդ գրքի 4-րդ գլուխը հեղինակը լիովին նվիրել է Աղվանքի, Մեծ Հայքի ու Վիրքի աշխարհագրական նկարագրությանը:

Աղվանքի պատմաաշխարհագրության, հայ-աղվանական հարաբերությունների և առանձին խնդիրների մասին իր «Բնական պատմություն» աշխատությունում տեղեկություններ է հաղորդում հռոմեացի հեղինակ Պլինիոս Ավագը (23–79 թթ.)⁶⁹: Այստեղ հեղինակն անդրադարձել է այնպիսի դեպքերի նկարագրությունների, որոնք քաղաքային են այլ պատմիչների մոտ: Անդրադառնալով Աղվանքի աշխարհագրական սահմաններին, նա, մասնավորապես, նշում է, որ աղվանացիներն ապրել են Կովկասյան լեռների փեշերին և որ նրանց երկիրը ձգվում է մինչև Հայաստանի ու Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը: Պլինիոսի հաղորդած տեղեկություններից կարելի է որոշել աղվանական քաղաքների տեղադրությունը, մայրաքաղաք Կապադակի տեղը և դիրքը, պատկերացում կազմել Աղվանքի գետային ցանցի, Կովկասյան լեռներից սկիզբ առնող և Աղվանքով հոսող ու Կուրը թափվող գետերի մասին:

Ստրաբոնից հետո հույն աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսը (83–168 թթ.) առաջին հեղինակն է, որ իր «Աշխարհագրական ուղեցույց»⁷⁰ նշանավոր աշխատության մեջ մի ամբողջ գլուխ է հատկացրել Աղվանքի նկարագրությանը: Նա բարեխղճորեն տվել է վերջինիս աշխարհագրական դիրքի մանրամասն նկարագիրը, նշելով, որ Կուր գետը Վիրքից և Աղվանքից բաժանում է Հայաստանը, այնուհետև պարզորոշ ներկայացրել է Աղվանքի սահմանները, հայտնելով, որ

⁶⁸ Страбон, География в 17 книгах (այսուհետև՝ Страбон), перевод, статья и коммент. Г. А. Страгановского, Л., 1964.

⁶⁹ Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев (այսուհետև՝ Латышев В.), т. II, СПб., 1904.

⁷⁰ Латышев В., т. I, СПб., 1893, с. 242–243. Claudii Ptolemaei, Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Mullerus, voluminis primi, pars secunda. (այսուհետև՝ Ptolemaei), Paris, 1901.

Աղվանքը հյուսիսում սահմանակից է Մարմատիային, հարավում՝ Մեծ Հայքին: Պտղոմեոսը քվարկում է Աղվանքի քաղաքները, տալիս նրանց դիրքը, շոշափում վարչական կառուցվածքի մի քանի հարցեր:

Աղվանքի պատմության որոշ դրվագների, սահմանային հարցերին են անդրադարձել Պլուտարքոսը (45–127 թթ.)⁷¹, Դիոն Կասսիոսը (155–235 թթ.)⁷², Տիտոս Լիվիոսը (մ.թ.ա. 59 – մ.թ. 17)⁷³, Կոռնելիոս Տակիտոսը (56–117 թթ.)⁷⁴, Ամմիանոս Մարկելիոսը (IV դ.)⁷⁵ և ուրիշներ:

Աղվանքի վերաբերյալ ստրաբոնյան, ինչպես և անտիկ մյուս հեղինակների նախանշած Աղվանքի սահմանները, ինչպես կտեսնենք հետագայում, հաստատում են «Աշխարհացոյց»-ի համանման հիշատակությունները:

Մենագրության համար կարևոր նշանակություն ունեն արար պատմիչների հաղորդած տեղեկությունները⁷⁶, որոնք հիմնականում վերաբերում են Արմինիայի վարչական սահմաններին, առանձին գավառների ու բնակավայրերի աշխարհագրական դիրքին: Արար հեղինակների գործերում Աղվանքի փոխարեն որպես աշխարհագրական տեղանուն հանդիպում է «Առան» անվանումը: Նկատենք, որ արարները լայն իմաստով «Առան» կոչում էին նախկին Աղվանից

⁷¹ Плутарх, Сравнительные жизнеописания (այսուհետև՝ Плутарх), т. II, М., 1963.

⁷² «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 9, «Հին հունական աղբյուրներ», Ա, Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս (այսուհետև՝ Դիոն Կասսիոս), քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976:

⁷³ Латышев В., т. II, с. 50–51:

⁷⁴ Корнелий Тацит, Сочинения в двух томах (այսուհետև՝ Тацит), перевод С. Утченко, Л., 1970.

⁷⁵ Аммиан Марцеллин, История (այսուհետև՝ Марцеллин), перевод с латинского Ю. Кулаковский и А. Сонни, вып. I–III, Киев, 1906–1908.

⁷⁶ Баладзори, Книга завоевания стран (այսուհետև՝ Баладзори), перевод П. Жузе, Баку, 1927; Արարացի մատենագիրները Հայաստանի մասին, հասարեց և քարգմանեց Բագրատ Խալաբեանը, Վիեննա, 1919, Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արարական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Ասիր, քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, «Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», 16, «Արարական աղբյուրներ», Գ, Արար մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածու-

մարզպանության տարածքը, իսկ նեղ իմաստով՝ Կուրի և Արաքսի միջագետքը:

Վրաց պատմիչների⁷⁷ հաղորդած տեղեկություններից կոահուներ կարելի է անել Աղվանքի, Վիրքի և Հայաստանի սահմանային գավառների, մասնավորապես՝ Կամբեճանի տեղադրության մասին: Նրանց տված տեղեկությունները լրացնում են նաև տարածաշրջանում ստեղծված վարչա-քաղաքական պատկերը:

Ասորական աղբյուրները⁷⁸ տեղեկություններ են տալիս Այսրկովկասի համար մի բախտորոշ ժամանակաշրջանի՝ V–VI դդ. պարսկա-բյուզանդական հակամարտությունների, Պարսկաստանի վարած կրոնական քաղաքականության և աշխարհագրական բնույթի որոշ հարցերի մասին:

Աշխատության հիմնահարցերի լուսաբանման համար խիստ արժեքավոր նշանակություն ունեն քեմային առնչվող օտար և հայ գիտնականների հիմնարար ուսումնասիրությունները, որոնցից բազմակողմանիորեն օգտվել ենք սույն հետազոտության շարադրման ընթացքում:

Դեռևս նախախորհրդային ժամանակաշրջանում Ալբանիա-Աղվանքի պատմությունն իր տարբեր ոլորտներով զրավել է ռուս գիտնականների ուշադրությունը և դարձել մշտական ուսումնասիրության

թյունը և բնագրերից բարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

⁷⁷ Такайшвили Е., Источники грузинских летописей. Три хроники. Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), вып. 28, Тифлис, 1900; Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայրենի երկրների մասին, Կ. Ա., Երևան, 1934: Вахушти Багратиони, История царства грузинского (այսուհետև՝ Багратиони), перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976; Матиане Картлиса, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Тбилиси, 1976; Жизнь картлийских царей, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая, Москва, 1979; Летопись Картли, перевод, введение и примечания Г. В. Цулая, Тбилиси, 1982.

⁷⁸ Пигулевская Н., Сирйские источники по истории народов СССР, Л.-М., 1941; «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 8, «Ասորական աղբյուրներ», Ա, բարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976:

առարկա: Այսպես, XIX դ. 40-ական թվականների կեսերին արևելագետ Ա. Յանովսկին քննության է առել Աղվանքի սահմանային հարցերը: Կատարելով աղբյուրագիտական մանրակրկիտ հետազոտություն՝ նա գտնում է, որ Հայաստանը Աղվանքից բաժանվել է Կուր գետով⁷⁹:

Աղվանքի պատմության և աշխարհագրության ուսումնասիրությունը շարունակել է ռուս կովկասագետ Ի. Շոպենը⁸⁰: Նա քննության է ենթարկել Կովկասյան Ալբանիային վերաբերվող տարբեր հարցեր, հստակ տարանջատել բուն Աղվանքը Կուրի աջափնյա հայկական գավառներից:

XX դարի 20–30-ական թվականներին ռուսական պատմագիտության մեջ շարունակվեց Աղվանքի պատմական աշխարհագրության ուսումնասիրությունը: Ալբանիա - Աղվանքի աշխարհագրական սահմաններին և դրա հետ կապված մի շարք հարակից հարցեր է իր աշխատությունում քննարկել հայտնի արևելագետ Ա. Կրիմսկին⁸¹: Նա Կովկասյան Ալբանիայի հարավային սահման է ճանաչում Կուր գետը, գետի աջ ափը համարելով հայկական թագավորության անբաժան մաս: Աղվանքի սահմանների վերաբերյալ նախորդ հեղինակների տեսակետների քննությանն է վերաբերում արևելագետ Ս. Յուշկովի աշխատությունը⁸²: Չի կարելի համաձայնել հեղինակի այն տեսակետի հետ, ըստ որի Աղվանքի սահմաններում է ընդգրկվել Դաղստանը: Աղվանքի հարավային սահմանի հարցում Ս. Յուշկովը, հենվելով անտիկ հեղինակների հաղորդումների վրա, իրավացիորեն սահման է ճանաչում Կուր գետը:

⁷⁹ Яновский А., О древней Кавказской Албании. – “Журнал Министерства Народного Просвещения” (այսուհետև՝ ЖМНП), 1846, № 52, с. 97–136, 161–203.

⁸⁰ Шопен И., Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб., 1866.

⁸¹ Крымский А., Страницы из истории северного или Кавказского Азербайджана (классической Албании). – Сборник в честь С. Ф. Ольденбурга, Л., 1934, с. 289–304. Նույնի՝ Страницы из истории северного или Кавказского Азербайджана (классической Албании), Шеки. – Сборник “Памяти Н. Я. Марра”, Л., 1938, с. 369–384.

⁸² Юшков С., К вопросу о границах древней Албании. – “Исторические записки”, т. I, АН СССР, Москва, 1937, с. 129–148.

Աղվանից աշխարհի պատմությունն իր բոլոր կողմերով՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքները, մշակութային կյանքը, սահմանային հարցերը, դարձել են հայտնի կովկասագետ Կ. Տրեվերի ուշագրավ աշխատության⁸³ քննարկման նյութը: Աղբյուրագիտական վերլուծության հիման վրա նա ներկայացրել է Աղվանքի պատմությունն աղվանացիների ծագումից մինչև արաբական արշավանքները:

Աղվանքի պատմության մի շարք առանցքային հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել է արևելագետ Վ. Բարտոլդը: Վերջինիս ուշադրության կենտրոնում է գտնվել՝ Աղվանիքի պատմությունը սկսած մ.թ.ա. 331 թ., երբ Գավգամելայի ճակատամարտում առաջին անգամ հիշատակվում է աղվաններ անվանումը⁸⁴:

Աղվանքի աշխարհագրությանը, սահմանային խնդիրներին է նվիրված ռուս հեղինակ Ա. Նովոսելցևի հոդվածը⁸⁵: Հեղինակը, կատարելով մանրակրկիտ ուսումնասիրություն, միանում է պատմաբանների այն խմբին, որոնք Աղվանքի և Մեծ Հայքի միջև սահման են ճանաչում Կուր գետը:

Բնականաբար Աղվանքի պատմությունն իր բազմազան կողմերով գտնվել է հայ պատմաբանների սկզբունքային ուշադրության կենտրոնում: Երկրի պատմական աշխարհագրությանն է նվիրված Մխիթարյան միաբանության անդամ, նշանավոր հայագետ Ղ. Ալիշանի «Աղուանք» աշխատությունը⁸⁶: Հեղինակն անտիկ սկզբնաղբյուրների մանրակրկիտ վերլուծությամբ ցույց է տալիս բուն Աղվանքի իրական սահմանները, տարանջատում է Աղվանքը Կուրի աջափնյա հայկական նահանգներից՝ վերջիններս կոչելով հայկական Աղվանք:

⁸³ Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н.э. – VII в. н.э., М.-Л., 1959.

⁸⁴ Бартольд В., Краткий обзор истории Азербайджана, т. II, ч. I, М., 1963.

⁸⁵ Новосельцев А., К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период. – «Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, с. 10–18.

⁸⁶ Ալիշան Ղ., Աղուանք. – Բազմավեպ, 1970, քիւ 11–12, էջ 336–353, 1972, քիւ 2–3, էջ 343–351, 1972, քիւ 4, էջ 509–517, 1973, քիւ 2, էջ 282–292:

1897 թ. լույս տեսած ուսումնասիրությունում⁸⁷ Հ. Մանանդյանը քննության է ենթարկում «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակի ապրած ժամանակը, հայ-աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունները և այլ հարցեր:

Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց պատմությանն են մվիրված եպիսկոպոս Մ. Բարխուտարյանցի աշխատությունները⁸⁸: Հեղինակը ներկայացնում է երկրի աշխարհագրական սահմանները, գավառների տեղադրությունը, բնակլիմայական պայմանները, նկարագրում է գետային ողջ ցանցը, ուշագրավ բացատրություններ է տալիս գավառների անվանմանը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայագետ Ստ. Կանայանցի պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը⁸⁹: Նա անդրադարձել է թե՛ Գարդմանի տեղադրությանը, թե՛ Կուրի ձախսափնյակում գտնվող Լփնաց աշխարհի դիրքին ու սահմաններին:

Խորհրդային տարիներին ևս աղվանագիտությունը գտնվում էր հայ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Տարածաշրջանի, մասնավորապես Աղվանքի պատմությանը, վարչաքաղաքական վիճակին, նահանգների, գավառների տեղադրությանն են մվիրված ակադեմիկոս Մ. Երեմյանի աշխատությունները⁹⁰: Աղվանքի սահմանային մի շարք հարցեր, դրա հետ կապված տարբեր դարերում կատարված փոփոխություններն արտացոլված են նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի աշխատությունում և նրան կից քարտեզում»⁹¹: Մ. Երեմյանն ընդգծում է «քուն աշխարհն Աղուանից» հասկացությունը և ներկայացնում Աղվանքի տարածքային աճը տարբեր ժամանակահատվածներում:

Անվանի բանասեր Աս. Մնացականյանի հեղինակությամբ լույս

⁸⁷ Manandian A., Beiträge zur albanischen Geschichte Inaugural Dissertation zur Erlangung der philosophischen Doctoprwarde, Leipzig, 1897.

⁸⁸ Բարխուտարյանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, Նույնի՝ Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999:

⁸⁹ Կանայեանց Ստ., Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Էջմիածին, 1914:

⁹⁰ Մանրամասն տե՛ս Երեմյան Մ., Կենսամատենագիտություն, Երևան, 1984, էջ 46–82:

⁹¹ Երեմյան Մ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի:

տեսած «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» արժեքավոր աշխատությունը⁹² թեպետ նվիրված է Աղվանից աշխարհի դպրությանը, սակայն անդրադարձ կա նաև աղվանական պետության սահմաններին: Հենվելով հունա-հռոմեական հեղինակների, մասնավորապես Ստրաբոնի և Պտղոմեոսի հաղորդումների վրա, նա նախ մերժում է այն գիտնականների տեսակետները, ըստ որի Մեծ Հայքի և Աղվանքի միջև սահմանը եղել է Արաքս գետը, ապա ցույց է տալիս, որ Կուրն է Մեծ Հայքի և Աղվանքի սահմանը: Աս. Մնացականյանը անդրադառնում է Կամբեճանի պատկանելության խնդրին և հիմնավորում, որ գավառը պատկանել է Մեծ Հայքին:

Մեծ Հայքի արևելյան աշխարհների պատմությունը ներկայացված է պատմաբան Բ. Ուլուբաբյանի աշխատություններում⁹³: Նա, նախ, անդրադառնում է Աղվանքի պատմական աշխարհագրությանը և, հիմնվելով օտար ու հայ հեղինակների հաղորդած տեղեկությունների վրա, գտնում, որ Մեծ Հայքի գոյության առաջին օրից Արցախը և Ուտիքը մինչև V դ. եղել են Հայաստանի կազմում: Հեղինակը մանրամասն նկարագրում է Ուտիքի և Արցախի գավառների տեղադրությունը, ապա անցնում «Ալբանիա», «Աղուանք», «Առան» անվանումների քննությանը: Բ. Ուլուբաբյանը Կամբեճան գավառը, իրավամբ, համարում է Հայաստանի անբաժան մասը:

Աղվանքի պատմությանը, վարչական սահմաններին, «Ալբանիա» և «ալբանացիներ» տերմիններին, էթնիկական կազմին է նվիրված արևելագետ Ա. Հակոբյանի «Ալբանիա-Աղվանքը հունա-լատինական և հին հայկական աղբյուրներում» աշխատությունը⁹⁴: Վերլուծելով օտար և հայ սկզբնաղբյուրների տեղեկություններն Աղվանքի

⁹² Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, նույնի՝ О литературе Кавказской Албании, Ереван, 1969.

⁹³ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, նույնի՝ Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական փոփոխության հարցի շուրջ. - Բանբեր Երևան Համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1975, թիվ 2, էջ 149-163:

⁹⁴ Акопян А., "Албания-Алуанк" в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

սահմանների հարցի մասին, նա գտնում է, որ Մեծ Հայքի հետ Աղվանքի վարչական սահմանն անցել է Կուր գետով: Ա. Հակոբյանն աղբյուրագիտական վերլուծության է ենթարկում Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն»-ը, շոշափում նրա նյութի ու լեզվի հետ առնչվող հարցեր, բացահայտում աշխատության մեջ նկարագրվող իրադարձությունների աշխարհագրական իրական տեղն ու միջավայրը:

Կուրի ձախափնյա շրջանների տեղադրությանը, նաև Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական կացությանն է անդրադաձել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը⁹⁵: Նա առաջիններից մեկը ցույց տվեց, որ Ուտիք և Արցախ հայկական աշխարհները 387 թ. բաժանումից հետո մնացել են Արևելա-հայկական թագավորության կազմում⁹⁶:

2005 թ. լույս տեսած «Հայաստանի պատմության ատլաս»-ի, Ա մասում Բ. Հարությունյանը ներկայացրել է Աղվանքի սահմանները տարբեր դարաշրջաններում⁹⁷:

Աղվանքի պատմության տարբեր հարցերի ուսումնասիրությունը մշտապես եղել է Հ. Սվազյանի գիտական հետաքրքրությունների առանցքում⁹⁸: Հեղինակը, նախ, անդրադառնում է «Ալբանիա», «Աղուանք», «Առան» անվանումների քննությանը, ցույց տալիս դրանց իմաստային փոխադրությունները, ապա, հիմնվելով սկզբնաղբյուրների վրա Աղվանքի հարավային սահման է ճանաչում Կուր գետը: Հ. Սվազյանը քննարկում է աղվանական պետության կազմավորման,

⁹⁵ Հարությունյան Բ., Լիվիքի տեղադրության հարցի շուրջը. – ԲԵՀ, 1981, թիվ 1, էջ 108–124, նույնի՝ Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի. – Շուշին հայոց քաղաքակրթության կենտրոն, (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2007, էջ 20–43:

⁹⁶ Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387–451 թթ. – ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77–94:

⁹⁷ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Երևան, 2005, տես նաև Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008:

⁹⁸ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (ինագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, 2006; նույնի՝ История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ереван, 2009.

հարևանների հետ փոխհարաբերությունների, ազատագրական շարժումների և դրանցում Աղվանքի մասնակցության հարցերը:

Այսրկովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո «աղրբեջանցի» հորջորջվող կովկասյան թաթարների ժառանգները ձեռնամուխ եղան ստեղծելու Աղրբեջանի պատմությունը՝ սեփականացնելով պատմության թատերաբեմից վաղուց հեռացած աղվանացիների պատմությունը, դրանով իսկ փորձելով իրենց իրավունքներն ամրագրել զավթված տարածքների նկատմամբ:

Այդ ճանապարհին մեծ «ներդրում» ունի Չ. Յամպոլսկին: Վերջինս իր մի շարք աշխատություններում⁹⁹ արհեստականորեն ուղեցնում է խորհրդային Աղրբեջանի սահմանները՝ վերջինիս կազմում ներառելով հայկական մի շարք շրջաններ: Չ. Յամպոլսկին է առաջին անգամ հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացուն «աղվան» կամ «ուտի» անվանել¹⁰⁰, ինչը հետագայում սկսեցին կրկնել աղրբեջանական կեղծարարության դասական Չ. Բունիաթովը, Ֆ. Մահմեդովան և ուրիշները:

Եթե Չ. Յամպոլսկու աշխատությունները առաջին փորձերն էին ստեղծելու Աղրբեջանի պատմություն, ապա Չ. Բունիաթովի հեղինակությամբ 1965 թ. լույս տեսած աշխատությունն¹⁰¹ աղրբեջանական պատմագիտության մեջ սկիզբ դրեց մի գործընթացի, որի նպատակն էր կեղծել սկզբնաղբյուրների տեղեկությունները, աղբյուրներից միտումնավոր սխալ թարգմանություններ կատարել, դրանք հարմարեցնել իրենց շահերին, այն է՝ Աղվանքի սահմանները «համաձայնեցնել» խորհրդային Աղրբեջանի սահմաններին: Ըստ որում, ավելին՝ Չ. Բունիաթովն Ուտիքի ու Արցախի հետ Աղվանքի կազմում ներառում է նաև հայկական Սյունիքը: Այս հեղինակի աշխատութ-

⁹⁹ Տե՛ս Ямполский З., Древняя Албания, III–I вв. до н.э., Баку, 1961; նույնի՝ Об этногенетической непрерывности на почве Азербайджана. – Сб., Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962, с. 32–43.

¹⁰⁰ Ямполский З., К изучению летописи Кавказской Албании. – Известия АН АЗССР, 1957, № 9, с. 149–161.

¹⁰¹ Бунятов З., Азербайджан в VII–IX вв., Баку, 1965.

յուններում քիչ չեն այլ կարգի խեղաթյուրումները ևս, որոնց կանրադառնա՞նք մենագրության շարադրանքի ընթացքում՝ կոնկրետ հարցեր քննելիս: Այստեղ միայն նշենք, որ տարբեր տարիների հայ հետազոտողները¹⁰² լուրջ փաստարկներով հերքել են Չ. Բունիաթովի «նորահնար» տեսությունը:

Աղվանքի տարածքում ցեղային առաջին միավորումների, պետականության կազմավորման, քաղաքական, սոցիալ-տնտեսական հարցերի և մշակութային կապերի պատմությանն են անդրադարձել ադրբեջանական պատմաբաններ Ի. Ալիևը¹⁰³, Բ. Ալիևը¹⁰⁴, Ի. Բաբևը¹⁰⁵, Չ. Խալիլովը¹⁰⁶ և ուրիշներ:

Եթե ադրբեջանցի վերոհիշյալ հեղինակները հավակնություններ ունեին Մեծ Հայքի այս կամ այն նահանգի նկատմամբ, ապա իր հակապատմական ու հակահայկական ուսումնասիրություններով աչքի ընկնող պատմաբան Ֆ. Մամեդովան¹⁰⁷ Աղվանքի կազմում է ներառում Արևելյան Հայաստանի մեծ մասը: Նա ոչ միայն շարունակում է հիմնավորել իր նախկին տեսակետները, այլև ներկայումս առաջ է քաշում նորերը, ինչը պատմական ճշմարտությունն աղավաղելու նոր

¹⁰² Минацаканян Ас., Севак П., По поводу книги З. Бунятова “Азербайджан в VII–IX вв.”. – ԴԲՀ, 1967, 1, էջ 177–190; Мелик-Огаджанян К., Историко-литературная концепция З. Бунятова. – Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), 1968, 2, с. 169–190; Ганалаян А., Хачикян Л., Тер Гевондян А., Об очередных “размышлениях” З. М. Бунятова. – ԼՀԳ, 1978, քիվ 5, էջ 95–104:

¹⁰³ Алиев И., О первых племенных союзах на территории Азербайджана, Баку, 1959; նույնի՝ К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV глава XI книги “Географии” Страбона. – Вестник Древней Истории (այսուհետև՝ ВДИ), 1975, 3, с. 150–165; նույնի՝ О скифах и скифском царстве в Азербайджане. – Переднезиатский сборник, т. III, М., 1979, с. 4–14.

¹⁰⁴ Алиев К., Кавказская Албания (I в. до н.э. – I в. н.э.), Баку, 1974.

¹⁰⁵ Бабаев И., К вопросу о возникновении государства Албании (Кавказской). – “Известия АН АзССР”, 1976, 4, с. 40–51.

¹⁰⁶ Халилов Дж., Материальная культура Кавказской Албании, Баку, 1985.

¹⁰⁷ Տե՛ս մանրամասնում, Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, (III в. до н.э. – VIII в. н.э.), Баку, 1986; նույնի՝ Кавказская Албания и албанцы, Баку, 2005; նույնի՝ Об истотической географии Кавказской Албании, Армении и албанском этносе, udi.az/articles/0052.htm/.

փորձ է¹⁰⁸:

Աղբբեջանցի հեղինակների հիմնագուրկ փաստարկները բազմիցս հերքվել են հայ պատմաբանների կողմից, դրանց տրվել է արժանի գնահատական¹⁰⁹:

Վրաստանի պատմության խնդիրներով զբաղվելիս՝ Աղվանքի պատմա-աշխարհագրական հարցերը շոշափել են մահ վրաց պատմաբանները: Նրանք իրենց հետազոտություններում իրենց երկրի, ժողովրդի, պետության շահերից ելնելով, ներկայացրել են Աղվանքի աշխարհագրական մի շարք տեղավայրերի՝ գավառների, քաղաքների, ավանների ու այլ բնակավայրերի դիրքը, տեղը և երկրի քաղաքական ու տնտեսական կյանքում դրանց ունեցած դերը¹¹⁰:

Այսպիսով, պատմագիտության կողմից Աղվանքի գավառների, քաղաքների և այլ բնակավայրերի տեղորոշման, տարածաշրջանում կատարվող իրադարձությունների հետ կապված սահմանների փոփոխման, հարևանների հետ աղվանացիների փոխհարաբերությունների վերաբերյալ մինչ օրս համակողմանիորեն լուսաբանող, ամբող-

¹⁰⁸ Գրքում արծարծված մի շարք հակահայկական հարցերի քննադատությունը (տե՛ս Սվազյան Հ., «Ուշ աղվանների» առասպելը. – «ՎԷՄ» համահայկական հանդես, 2009, քիվ 3, էջ 129–140:

¹⁰⁹ Арутюнян Б., Когда отсутствует научная добросовестность. ЛՀԳ, 1987, № 9, էջ 33–56; Акопян А., Мурадян П., Юзбашян К., К изучению истории Кавказской Албании. – ԴԲՀ, 1987, 3, с. 166–189; Связян Г., Пример использования исторической науки в экспансивных целях. – ԲԵՀ, 1989, № 2, էջ 46–56; Сибатян Ш., Еще раз о южной границе Кавказской Албании. – ЛՀԳ, 1989, № 10, с. 3–17; Мумсегян А., Псевдоалбанская литература и его апологеты. – ЛՀԳ, 1989, № 8, էջ 16–33, Վարդանյան Ա., Աղվանքի հարավային սահմանը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբբություններում. – ԴԲՀ, 2009, քիվ 1, էջ 157–165, Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, Աղբբեջանի մակադափի աշխատակազմի ղեկավար Ռամիկ Մեհրիկի «Գորիս-2010. արտուրդի քաղաքի տարեշրջանը» գիտաքաղաքական աճպարարությունը. – «ՎԷՄ» համահայկական հանդես, 2010, քիվ 4, էջ 24–57, Շահնազարյան Ա., Մարտահրավեր գիտությանը, Կրկին Ռամիկ Մեհրիկի «գլոխգործոցի» մասին. – «ՎԷՄ» համահայկական հանդես, 2011, քիվ 2, էջ 164–183:

¹¹⁰ Տե՛ս մասնավորապես, Мелкишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959; Мухелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шаки и Гогарсна), Тбилиси, 1982.

ջական ուսումնասիրություն չի ստեղծվել: Թեև Աղվանքի որոշ հիմնահարցեր, ինչպես նկատեցինք, հետազոտության առարկա են դարձել հայ և օտարազգի գիտնականների կողմից: Ըստ այդմ, մեր աշխատությունը որպես քննվող հիմնախնդրի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձ՝ նորույթ է հայ պատմագիտության մեջ: Մույն ուսումնասիրությամբ փորձել ենք մեր համեստ ներդրումով լրացնել այդ բացը, ամենևին հավակնություն չունենալով կարծելու, որ այն թեման լուսաբանող վերջնական խոսք է:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՂՎԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. ԱՂՎԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Աղվանքի պետական - քաղաքական սահմանները միանգամից չէ, որ ձևավորվել են: Դրանք կազմավորվում էին ժամանակի ընթացքում և այն իրադարձությունների բովում, որոնք տեղի էին ունենալու տարածաշրջանում: Դրան մեծապես նպաստում է նաև երկիրը բնակեցնող բազմազան էթնիկ խմբերի ու ցեղերի՝ իրենց բնակատեղիներով հանդերձ, մեկ միասնական վարչական միավորման մեջ համախմբումը: Սահմանների հաստատումն ու ամրապնդումն ապահովում էին երկրի տիրակալները՝ իրենց վարած արտաքին քաղաքականությամբ: Այս խմատով մինչև Աղվանքի սահմաններին անդրադառնալը, հարկ է համառոտ ներկայացնել երկրում ծավալվող այն իրադարձությունները, որոնք պայմանավորեցին դրանց գոյացումն ու հաստատումը:

Ինչպես ցույց են տալիս հունա-հռոմեական սկզբնաղբյուրները, Աղվանքը որպես միասնական պետություն հանդես է եկել ավելի ուշ, քան Մեծ Հայքն ու Վիրքը: Դա պայմանավորված էր պատմական ու աշխարհագրական բնույթի մի շարք գործոններով, այն է՝ զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող տարալեզու բազմաթիվ ցեղերով, գավառների միջև տնտեսական թույլ կապով, ինչպես նաև թույլ զարգացած սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Դրա խոսումն վկայությունն այն է, որ Այսրկովկասում Աքեմենյան տիրապետության ժամանակահատվածում աղվանացիներին որպես առանձին պետական միավորում պատմահայր Հերոդոտոսը չի հիշատակում: Նա հիշատակում է միայն Կասպից ծովի արևմտյան մարզերում և ապագա Աղվանքի տարածքում բնակվող «կասպե-

րին»¹, որոնք մտել են պարսկական տերության կազմի մեջ: Ըստ Հերոդոտոսի, «Աքեմենյան պետության հյուսիսային սահմանը հասել է մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթա»²: Կարծում ենք, որ մերձկասպյան մարզերն Աքեմենյան պետության կազմում հայտնվեցին Կյուրոս Մեծի նվաճողական քաղաքականության հետևանքով, որը մ.թ.ա. 550 թ. գրավել էր մարական գահը՝ դնելով Աքեմենյան պետության հիմքը³: Թեպետ դրա մասին սկզբնաղբյուրներում ուղղակի վկայություն չկա, սակայն ուսումնասիրողները կարծում են, որ մ.թ.ա. 546 թ.⁴ Հայաստանի նվաճման ժամանակ Կյուրոսը շարժվում է Կասպից ծով և տիրում նրա արևմտյան ափի մարզերին ու ապագա Աղվանքի տարածքին: Հետևաբար այս նվաճման հետևանքով Աքեմենյան Պարսկաստանի սահմանները հյուսիսում հասան Կովկասյան լեռնաշղթային:

Մ.թ.ա. 522 թ. պարսկական գահը գրաված Դարեհ Ա Վշտասպյանն Աքեմենյան հսկայածավալ պետությունը բաժանում է վարչական նոր միավորների՝ 21 սատրապությունների⁵: Մերձկասպյան ցեղերը կազմում են 18-րդ սատրապությունը⁶, վճարում էին 200 տաղանդ⁷ հարկ, նաև պատերազմի ժամանակ պետք է տրամադրեին որոշակի քանակությամբ զորք: 18-րդ սատրապությունը, կարծում ենք, Պարսկաստանի համար ունեցել է ռազմավարական կարևոր

¹ Հերոդոտոս, Պատմություն իմը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), քարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 92: «Կասպեր» անվան տակ չի կարելի հասկանալ էթնիկական ուրույն միավոր: Կասպերը Կասպից ծովի այս կամ այն ափամերձ հատվածի բնակչությունն է (տե՛ս Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպը) մարզի տեղադրության մասին. – ԼՀԳ, 1983, թիվ 1, էջ 96):

² Նույն տեղում, III, 97:

³ Дьяконов И., История Мидии, М.-Л., 1956, с. 343–346; Дандамасев М., Иран при первых Ахеменидах (IV в. до н.э.), М., 1963, с. 105.

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 417:

⁵ Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջը, Երևան, 2010, էջ 48:

⁶ XVIII սատրապությունը գտնվել է Կովկասյան լեռների և Կուր գետի միջև ընկած տարածքում (տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջը). – Հանդես Անսորեայ, Վիեննա-Երևան, 1999, թիվ 1–12, էջ 45–114:

նշանակություն, քանի որ պատվար էր հյուսիսային ցեղերի արշավանքի ժամանակ: Կովկասյան լեռներից ելնող այս վտանգը և նրա դեմ պատվար ունենալու անհրաժեշտությունն ուրվագծեց ապագա Աղվանքի՝ համանուն լեռնաշղթայով անցնող հյուսիսային սահմանագիծը: Այս իրավիճակը շարունակվեց մինչև մ.թ.ա. IV դ. 30-ական թվականները, երբ մերձկասպյան ցեղերի հասարակական կյանքում տեղի ունեցան սոցիալական ու տնտեսական այնպիսի խոշոր տեղաշարժեր, որոնց հետևանքով նրանց ընդհանուր «կասպեր» անվանումը, տեղի տալով նոր, ընդհանրական «աղվանացիներ» անվանը դադարում է վերաբերել մերձկասպյան ցեղերին⁸: Դրա վառ ապացույցը պատմության մեջ առաջին անգամ «աղվանացիներ» անվան հանդես գալն է՝ կապված մ.թ.ա. IV դ. 30-ական թվականների այն խոշոր իրադարձությունների հետ, որը փոխեց Առաջավոր Ասիայի ողջ քաղաքական դիմագիծը: Հույն պատմիչ Արիանոս Փլաքիոսը (մոտավորապես 95–180 թթ.) հաղորդում է, որ մ.թ.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում Դարեհ III Կոդոմանոսի բանակի կազմում մասնակցել են նաև աղվանացիները՝ Մարաստանի սատրապ Ատրոպատեսի հրամանատարությամբ. «Մարերի հրամանատարն էր Ատրոպատեսը. մարերի հետ էին կաղուսիները, աղվանացիները և սակեսիները»⁹: Այս վճռորոշ ճակատամարտում աղվանացիները հիշատակվում են նաև Դարեհ Գ-ի թիկնազորի շարքերում. «Երբ (թշնամի) բանակները մոտեցան, երևաց, որ Դարեհը իրեն շրջապատողների՝ խնձորակիր – պարսիկների, ինդերի, ալբանացիների, «գաղթեցրած» կարիյցիների ու նետածիգ-մարտիչի հետ կանգնած է Ալեքսանդրի ու թագավորական շքախմբի դեմ»¹⁰: Այս հաղորդումներից ելնելով, կարծում ենք, որ աղվանական ցեղերն այդ ժամանակ

⁷ Հերոդոտոս, III, 92:

⁸ Մվագյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 99:

⁹ Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ Արիանոս), ռուսերենից թարգմանեցին Ա. Սարգսյանը, Ռ. Մավիսակալյանը, Երևան, 1987, էջ 97:

¹⁰ Арриан, Поход Александра, пер. с древнегреч. Е. Сергеев, М.-Л., 1962, III, 13, 1.

ապրում էին ցեղային միություններով: Դա է վկայում նաև այն, որ աղվանացիներն արեմենյանների համար այդ բախտորոշ ճակատամարտում հանդես էին գալիս ոչ թե որպես առանձին զորամիավորում, ինչպես, օրինակ, Մեծ և Փոքր Հայքերի բանակները¹¹, այլ գտնվում էին Ատրոպատեսի ընդհանուր հրամանատարության տակ¹²:

Պարսկական պետության փլուզումից հետո Այսրկովկասն ամբողջությամբ դուրս է մնում մակեդոնական ազդեցությունից, քանի որ Ալեքսանդրի երթուղին այլ էր, և աղվանական ցեղերը, ազատվելով պարսկական գերիշխանությունից, սկսում են ապրել ինքնուրույն, անկախ կյանքով: Ալեքսանդր Մակեդոնացու գործունեության կարևոր ու առանձնահատուկ կողմերից մեկը նվաճված երկրներում սոցիալ-տնտեսական, ռազմական ու քաղաքական ամուր հեմարան ստեղծելու նպատակով քաղաքների կառուցումն էր¹³, Այսրկովկասում այդպիսիք չկան: Համենայն դեպս մինչ այժմ չի հայտնաբերվել Ալեքսանդրի հրամանով կառուցված քաղաք կամ նույնիսկ բնակատեղի:

Մինչ Ալեքսանդրը շարունակում էր իր նվաճումները դեպի Սիջին Ասիա և Հնդկաստան, Այսրկովկասում սահմանները մնացին անփոփոխ, ու Երվանդունիների կառավարման ժամանակ Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանն անցնում էր Կուր գետով¹⁴:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո՝ մ.թ.ա. 323 թ., և դրան հաջորդող մի քանի տարիների ընթացքում մակեդոնական անձայրածիր տերությունը սկսեց արագորեն քայքայվել ու տրոհվել մի քա-

¹¹ Квинт Курций Руф, История Александра Македонского, (այսուհետև՝ Руф), М., 1963, IV, 12, 10, IV, 12.

¹² Алиев И., История Мидии, Баку, 1960, с. 104, пр. 10; Սվազյան Հ., Ատրպատականի պետության կազմավորումն ու Կովկասյան Ալբանիան. - ԼՀԳ, 1985, քիվ 2, էջ 77:

¹³ Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 106:

¹⁴ Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ - մ.թ.ա. III դ. վերջ). - ՊԲՀ, 1981, քիվ 2, էջ 82; Bais M., Albania caucasia. Ethnos, storia, territorio attraverso le tonti greche, latino e armeno, Roma, 2001, p. 68, Аконян А., նշվ. աշխ., էջ 14-15, Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 55:

նի մասերի¹⁵: Մասնատման հետևանքով առաջացավ Սելևկյան տերությունը՝ հիմնված զորավար Սելևկոս Նիկատորի կողմից (մ.թ.ա. 312–280 թթ.), որը և ժառանգեց Ալեքսանդրի տերության գերակշիռ մասը՝ նրա նվաճած ասիական գրեթե բոլոր հողերը¹⁶:

Սելևկյան պետության շնորհիվ հեղինակը¹⁷ ներթափանցում է այսրկովկասյան պետություններ, ինչը մշակութային կյանքի զարգացման համար նշանակալից երևույթ էր: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Սելևկյան պետության և Աղվանքի միջև շփումներ են եղել, քանի որ Աղվանքի տարածքում հայտնաբերվել են սելևկյան դրամներ¹⁸:

Եթե տարածաշրջանի այլ պետությունների կազմավորման վերաբերյալ առկա տեղեկությունները բազմազան են և մեծամասամբ անվիճելի, ապա Աղվանական պետության առաջացման ժամանակաշրջանի հարցը մնում է պատմագիտության վիճելի հարցերից մեկը: Դրա վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներն որևէ տեղեկություն չեն հաղորդում, իսկ անտիկ հեղինակների հաղորդումները հետազայում ուսումնասիրողների կողմից արժանացան ոչ միանշանակ ընդունելության:

Ինչպես Աղվանքի պատմության մի շարք հարցերի, այնպես էլ պետական կազմավորման վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Ստրաբոնը: Ըստ աշխարհագրագետի, Աղվանքի միասնական թագավորությունը ստեղծվել էր մ.թ.ա. I դարի կեսերին կամ էլ դրա նախօրյակին. «Այժմ, ճիշտ է, նրանց մոտ մեկ թագավոր է կառավարում բոլոր ցեղերին, այն դեպքում, երբ նախկինում յուրաքանչյուր

¹⁵ Տե՛ս Էլչիրեկյան Ժ., Հայաստանը և սելևկյանները, Երևան, 1979, էջ 28–34:

¹⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 495:

¹⁷ «Հեղինակը» (հունականություն) տերմինով բնութագրվել է մ.թ.ա. III–I դարերի պատմությունը որպես մի ժամանակաշրջան, որի ընթացքում հունական ազդեցությունն իր ցայտուն դրսևորումը գտավ Հին Արևելքի ժողովուրդների մշակութային, քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 489):

¹⁸ Бабаев И., Казнев С., Халилов Дж., Бабаев И., О городах древней Кавказской Албании. – “Советская археология”, М., 1974, № 4, с. 1–32; Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում (IV դ. մ.թ.ա. – XIV դ. մ.թ.), Երևան, 1983, էջ 32:

այլալեզու ցեղ կառավարվում էր սեփական թագավորով: Լեզուները նրանց մոտ 26-ն են, այնպես որ նրանք միմյանց հետ հեշտությամբ չեն մտնում հարաբերությունների մեջ»¹⁹:

Ստրաբոնի վկայությունները «Ալբանիա» երկրի մասին հաստատվում են նաև անտիկ այլ հեղինակների հաղորդումներով: Պլուտարքոսը, Ապպիանոսն ու Դիոն Կասսիոսը, նկարագրելով հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքն Աղվանք և նրա ռազմական գործողություններն այդ երկրում, նշում են, որ Աղվանքում այդ ժամանակ արդեն գոյություն ունեւ պետական միավորում՝ թագավորի գլխավորությամբ, որը պայքարում էր պետության անկախության պահպանման համար²⁰:

Վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ Աղվանքում պետական միավորումն առաջացել է մ.թ.ա. I դ.: Ուսումնասիրողների տեսակետները, սակայն, այս հարցում բաժանվում են:

Այսպես, Վ. Լևիատովի կարծիքով Աղվանքում պետական առաջին միավորումն առաջացել է մ.թ. I դ., որին նախորդող շրջանում է միայն աղվանական ցեղերի մոտ սկսվում է տոհմային կարգերի քայքայման ու դասակարգերի ձևավորման գործընթացը²¹: Նույն կարծիքին է Օ. Իսմիկադեմ²²:

Արծարծվող հարցին անդրադարձած Ս. Երեմյանը և Բ. Ուլուբաբյանը ևս Աղվանքում պետության ծագման ժամանակաշրջան են համարում մ.թ. I դարը²³, իսկ Ա. Հակոբյանը և Հ. Սվազյանը, հենվելով Ստրաբոնի հաղորդման վրա, մ.թ.ա. I դարը²⁴:

¹⁹ Страбон, XI, IV, 6.

²⁰ Плутарх, Помпей, XXXIV, XXV. Латышев В., т. I, с. 531; Դիոն Կասսիոս, 54, 1-5:

²¹ Левинатов В., Азербайджан в V в. до н. л. по III в. н. л. — «Известия АН АзССР», Баку, 1950, № 1, с. 80.

²² Исмизаде О., Ялойлутепинская культура, Баку, 1956, с. 59.

²³ Еремян С., Основные проблемы периодизации истории народов Закавказья. — «Труды объединенной научной сессии АН ССР и АН Закавказских республик по общественным наукам», Баку, 1957, с. 100; Ուլուբաբյան Բ., Դավազներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 113:

²⁴ Акобян А., նշվ. աշխ., էջ 18, Սվազյան Հ., Աղվանական պետության կազմավորումը. — ԼՀԳ, 1996, քիվ 2, էջ 65-73:

Կ. Տրեվերն Աղվանքում պետականության գոյության սկիզբ համարում է մ.թ.ա. II դարի երկրորդ կեսերը²⁵, ապա քիչ անց ավելացնում է. «գուցե և ավելի վաղ»²⁶:

Ինչպես Աղվանքի պատմության շատ հարցերի, այնպես էլ նրա պետականության կազմավորման վերաբերյալ սկզբունքային այլ տեսակետ ունեն աղբբեջանցի հետազոտողները, որոնք փորձում են արհեստականորեն Աղվանքում պետության գոյության սկիզբը համարել մ.թ.ա. IV–III դդ.:

Նրանցից Ի. Բաբաևը²⁷ և Ջ. Խալիլովը²⁸ աղվանական պետության գոյության սկիզբը համարում են մ.թ.ա. IV դ. վերջը – մ.թ.ա. III դ. սկիզբը: Այդպիսի տեսակետի համար որպես հիմք մատնանշելով հնագիտական նյութերի ու գրավոր սկզբնաղբբությունների տվյալների համադրությունը²⁹:

Իսկ Ֆ. Մամեդովան նշում է, որ «...անտիկ գրավոր աղբբությունների համաձայն (*աղվանական պետությունը* – Ա. Վ.) ստեղծվել է մ.թ.ա. I դարում, իսկ ըստ հնագիտական հետազոտությունների՝ մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակում – մ.թ.ա. III դարում»³⁰:

Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա հարցի վերաբերյալ ուսումնասիրողների տեսակետները տարբեր են: Աղբբեջանցի հեղինակներն իրենց կարծիքները հաստատելու համար վկայակոչում են Արիանոսի հաղորդումը, որ Գավգամելայի ճակատամարտում կռվում էին մասնացիները: Եվ ելնելով այս հաղորդումից՝ ասում են, որ եթե մասնակցել են ճակատամարտին, ուրեմն պետություն գոյություն ուներ: Մեր կարծիքով, ճակատամարտին մասնակցելը դեռևս չէր նշանակում պետության առկայությունն Աղվանքում, քանի որ, ինչպես վերը տեսանք, աղվանացիները ճակատամարտին

²⁵ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 144:

²⁶ Նույն տեղում, էջ 145:

²⁷ Бабаев И., К вопросу о возникновении государства Албании (Кавказсой), с. 40–51.

²⁸ Халилов Дж., *նշվ. աշխ.*, էջ 160, 206:

²⁹ Бабаев И., К вопросу о возникновении государства Албании (Кавказсой), с. 40.

³⁰ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 57.

մասնակցում էին մարերի առաջնորդ Ատրոպատեսի հրամանատարության ներքո: Պատմիչի հաղորդումից աներկբա է, որ մարերը Գավգամելայի ճակատամարտում հանդես էին գալիս որպես պետականություն ունեցող ժողովուրդ՝ Ատրոպատեսի հրամանատարությանը, իսկ մյուսները, այդ թվում և աղվանացիները, ինչպես նշեցինք, որպես ցեղային միություն:

Աղբբեջանցի հեղինակներից ոմանք իրենց տեսակետները հիմնավորելու համար վկայակոչում են մաս հնագիտական գտածոները³¹: Ինչպես գտնում են ուսումնասիրողները «(Աղվանքի տարածքում – Ա. Վ.)՝ պեղված բազմաթիվ գերեզմանները միմյանցից առանձնապես շատ չեն տարբերվում: Մինչդեռ Աղվանից պետության գոյության դեպքում դրանց մեջ հանդիպելու էին թագավորական թաղումներ, որոնց բնութագրական է հարուստ գույքը»³², մաս՝ ննջեցյալին հողին հանձնելու արարողությանն ուղեկցող մարդկային զանգվածային զոհաբերությունները³³: Հայտնի է, որ մինչ այսօր Աղվանքի տարածքում այդպիսի դամբարաններ հայտնաբերված չեն:

Վերը նշված փաստերը գալիս են ապացուցելու, որ մ.թ.ա. IV դդ. Աղվանքի տարածքում չի եղել պետական ոչ մի միավորում:

Գավգամելայի ճակատամարտը բախտորոշ եղավ տարածաշրջանի բոլոր պետությունների, այդ թվում՝ Աղվանքի համար, քանի որ հեղինիստական մշակույթի հետ շփումը նպաստեց ցեղային միությունների քայքայմանը և սկսվեց պետության կազմավորման բարդ ու երկարատև գործընթացը: Հեղինիզմի ժամանակամիջոցում աղվանական ցեղերն անցան պետության կազմավորման փուլը: Դրան նպաստեց ոչ միայն հեղինիզմի ներթափանցումն Աղվանք, այլև Վիրքում և, հատկապես, Մեծ Հայքում մի քանի հարյուրամյակ գործող պետական կազմավորումների գոյությունը: Եթե Աղվանքում պետա-

³¹ Նույն տեղում, էջ 144; Бабаев И., К вопросу о возникновении государства Албании (Кавказской), с. 40, 47.

³² Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 113:

³³ Массон В., Экономика и социальный строй древних обществ, Ленинград, 1976, с. 169.

կան միավորումը ստեղծված լինել մ.թ.ա. IV – մ.թ.ա. III դդ., ինչպես պնդում են աղբյուրների հեղինակները, ապա հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված կլինեին աղվանական դրամներ, քանի որ վերջիններս նաև պետական մեխանիզմի կարևորագույն հատկանիշներից էին: Սակայն այդպիսի դրամներն ուսումնասիրողների կողմից թվագրվում են միայն մ.թ.ա. I դարի երրորդ քառորդում³⁴: Ելնելով այս հանգամանքից, գտնում ենք, որ հավանական կլինի կարծել, որ դրամները հատող պետությունը ծագած պետք է լինի պետական նման գործառույթից քիչ առաջ: Հետևաբար, Աղվանքում պետական միավորումը ստեղծվել է մի փոքր վաղ՝ այն է մ.թ.ա. I դարի 80-ական թվականներին, քան թվագրվում են աղվանական դրամները: Իսկ մինչ սեփական դրամների թողարկումը, ինչպես վերը նշվել է, օգտագործվել են մակեդոնական, սելևկյան, պարթևական դրամներ, որոնք հայտնաբերվել են Կապադակում, Շամախիում և մի շարք այլ շրջաններում³⁵:

Մինչ Աղվանքում պետության կազմավորման վերաբերյալ վերջնական եզրահանգման գալը, պետք է անդրադառնալ նաև հնագիտական հետազոտությունների արդյունքներին, ինչը հուշում է, որ աղվանական պետության ստեղծման գործընթացը տևել է հարյուրամյակներ: Ապագա Աղվանքի սահմանները ձևավորվել են ժամանակի ընթացքում և այն գրավել է այժմյան Աղբյուրների այն տարածքը, որը հայտնի է իր «Յալոյլութափայան» կոչվող հնավայրով ու, համապատասխանաբար, «Յալոյլութափայան» մշակույթ անվամբ նյութերով: Անվանումը կապված է Աղբյուրների Կուտկաշեն շրջանի Յալոյլութափա անունը կրող վայրի հետ, որտեղ հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերվել են թաղումներ: Հետագայում, «Յալոյլութափայան» մշակույթի նյութերով ուսումնասիրելով Աղվանքի սոցիալ-տնտեսական կյանքի այդ շրջանի պատմությունը, Օ.

³⁴ Бабаев И., Казиев С., *նշվ. աշխ.*, էջ 1–32, Մուշեղյան Խ., *նշվ. աշխ.*, էջ 32:

³⁵ Пахомов Е., Античные монеты в Албании (в пределах Азербайджанской ССР). – «Вопросы истории Кавказской Албании», Баку, 1962, с. 106–113; Халилов Дж., Материальная культура Кавказской Албаний, с. 152–155.

Իսմիզադեն որոշել է նաև տվյալ մշակույթի սահմանները: Այն արևմուտքում անցնում էր Ալազանի հովտով՝ Կախեթի սահմաններում, իսկ արևելքում ընդհուպ մոտենում է Ջեյրանքեչմազ գետին, այսինքն՝ գրեթե մինչև Ապշերոնի թերակղզին: Հյուսիսում նրա սահմանները հասնում էին Կովկասյան լեռնաշղթայի հարավարևելյան լանջերին, իսկ հարավայինը՝ Կուր գետին³⁶:

Հնագիտական պեղումները և գտածո նյութերը վկայում են, որ Աղվանքում պետության կազմավորման գործընթացն անցել է բարդ ու երկարատև ուղի և ավարտվել է մ.թ.ա. I դարի 80-ական թվականներին:

Աղվանքի մեզ հայտնի առաջին թագավորը Օրոյսեսն է³⁷: Վերջինս Մեծ Հայքի արքայից արքա Տիգրան Բ-ի (մ.թ.ա. 95-55 թթ.) ժամանակակիցն է և գործում մասնակցություն է ունեցել հռոմեացիների դեմ վերջինիս ծավալած պայքարին: Կարծում ենք, որ Օրոյսեսը գահ է բարձրացել մոտավորապես I դարի 80-ական թվականների երկրորդ կեսին և կառավարել է մինչև 60-ական թվականները: Դրա ապացույցն է մ.թ.ա. 65 թ. Օրոյսեսի և Պոմպեոսի միջև կնքված հաշտության պայմանագիրը, որով Աղվանքը դարձավ Հռոմի «բարեկամ և դաշնակից»³⁸ երկիր:

Հայտնի է նաև Աղվանքի մեկ ուրիշ թագավորի՝ Ջոբերտոսի անունը³⁹, կապված հռոմեացի զորավար Անտոնինոսի արևելյան արշավանքի հետ, երբ Արևելքի կուսակալ Պորփիրոս Կանիդիոս Կրաստը ներխուժում է Աղվանք՝ ստիպելով Ջոբերտոսին ընդունելու հռոմեական գերիշխանությունը⁴⁰: Աղբրեջանցի հեղինակները փորձում են նրա անվան ծագումնաբանությունը կապել թյուրքական ցեղերից մե-

³⁶ Исмизаде. О., *նշվ. աշխ.*, էջ 3:

³⁷ Ղ. Ալիշանը Օրոյսեսին կոչում է նաև Վարազ անունով (տե՛ս Ալիշան Ղ., *նշվ. աշխ.*, էջ 344):

³⁸ Латышев В., т. II, с. 258.

³⁹ Դիոն Կասսիոս, XXXIX, 21, 2:

⁴⁰ Նույն տեղում:

կի անվան հետ⁴¹: Այսպիսի շինծու եզրակացությունը պայմանավորված է մ.թ.ա. I դ. Աղվանքում անպայման թյուրքական տարրեր տեսնելու և երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրանց առաջատար դեր հատկացնելու սնապարծ տենչով⁴²:

Կարծում ենք, Աղվանքում ստեղծված պետականության ձևը, ինչպես այդ հատուկ էր Հին Արևելքի և հելլենիստական շրջանի պետություններին, այսպես կոչված, անսահմանափակ միապետությունն էր: Պետական ապարատի գլուխ կանգնած էր թագավորը, որի իշխանությունը, ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Աղվանքում ժառանգական էր, և թագավորները տեղական ազնվականության ներկայացուցիչներ էին: Թագավորական տան անդամները նշանակվում էին պետական, քաղաքական ու ռազմական պաշտոններում: Որպես այդպիսին հիշատակվում է թագավորի եղբայր և արվանական բանակի հրամանատար Կոտիսը⁴³:

Ինչպես հաղորդում է Ստրաբոնը Աղվանքում, «Թագավորից հետո ամենահարգված մարդը քուրմն էր»⁴⁴: Հին աշխարհում քուրմը սոցիալական կարևոր դաս էին: Նրանք խոշոր դեր էին կատարում երկրի հասարակական ու տնտեսական կյանքում: Դրա վառ վկայությունը Ստրաբոնի հետևյալ հաղորդումն է. «Քուրմը կանգնած էր մեծ ու խիտ բնակեցված սրբազան մարզի գլուխ, ինչպես նաև տնօրինում էր ստրուկներին»⁴⁵:

Աղվանքում տիրապետող դիրք էր գրավում ավագանին, որը համախմբված էր արքունիքի շուրջը: Հաջորդն ազատների դասն էր: Ապա՝ կիսանկախ ու կախյալ գյուղացիներն էին, որոնք միավորված էին գյուղական համայնքներում: Հասարակության ամենաստորին խավը ստրուկներն էին:

⁴¹ Ст'ю Алнев К. Албаны-кочевники и Басилевс Зобер.— "Известия АН АзССР", Баку, 1962, 8, с. 23–29, Гусейнов Р., О тюрках IV–VII вв. в зоне Кавказской Албании. — "Вопросы истории Кавказской Албании", Баку, 1962, с. 181–192.

⁴² Ст'ю Ավագյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 117:

⁴³ Плутарх, Помпей, XXXV.

⁴⁴ Страбон, XI, IV, 7.

⁴⁵ Նույն տեղում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը բավարար են համոզվելու, որ Աղվանքում պետական միավորումը ծագել է մ.թ.ա. I դարի 80-ական թվականներին՝ իր որոշակի սահմաններով և պետական մեքենային յուրահատուկ մյուս հատկանիշներով:

2. ԱՂՎԱՆՔԸ ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մինչ աղվանական ցեղերի մոտ նշմարվում էր պետականության կազմավորման գործընթացը, որը, ինչպես ասվեց, ավարտվելու էր մ.թ.ա. I դ. 80-ական թվականներին, Հռոմի հարվածների տակ Առաջավոր Ասիայում որպես աշխարհակալություն դադարեց գոյություն ունենալ Սելևկյան պետությունը: Մ.թ.ա. 190 թ. Մագնեսիա քաղաքի մոտ հռոմեացիների և սելևկյանների միջև տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց վերջիններիս պարտությամբ, պարտություն, որը միաժամանակ ի հայտ բերեց մի նոր երևույթ. Առաջավոր Ասիայում տիրապետության համար պայքարի դուրս եկավ մի նոր, հզոր ուժ՝ Հռոմեական Հանրապետությունը⁴⁶: Ստեղծված նոր իրավիճակը փոխեց տարածաշրջանի պետությունների քաղաքական դիմագիծը:

Միջազգային ասպարեզում հանդես գալով որպես գլխավոր ռազմական ուժ՝ Հռոմն այնուհետև ավելի ու ավելի մեծ ազդեցություն էր գործում արևելյան պետությունների ճակատագրերի վրա: Մեկը մյուսի հետևից հռոմեական պրովինցիաներ դարձան Մակեդոնիան ու Պերգամոնն, իսկ Բյուրանիան և Կասպադովկիան ընկան Հռոմի ազդեցության տակ:

Վերելքի ուղին բռնած Արտաշեսյան Հայաստանը՝ հատկապես Տիգրան Բ-ի կառավարման տարիներին, դարձել էր Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը: Իր կառավարման սկզբում Հայոց արքայից արքան ամենայն պարզությամբ Հռոմին և մյուս հարևաններին ցույց տվեց, որ Առաջավոր Ասիայում Մեծ Հայքն ունի իր սե-

⁴⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 524:

փական շահերը⁴⁷ և որ գործելու է դրան համապատասխան: Ըստ այդմ, մի քանի տարվա ընթացքում հարևան պետությունները ներառվեցին Մեծ Հայքի ազդեցության ոլորտում:

Հռոմը չէր կարող հաշտվել ստեղծված իրավիճակի հետ, քանի որ դաշնակից երկրների՝ Պոնտոսի և Մեծ Հայքի հզորությունը սպառնալի չափերի էր հասել: Մ.թ.ա. 74–71 թթ. ընթացող Միհրդատյան երրորդ պատերազմի ժամանակ՝ Կափիռայի ճակատամարտում (մ.թ.ա. 71 թ.) հռոմեացիներին հաջողվում է հաղթել Միհրդատ VI Եվպատորին և ժամանակավորապես նվաճել պոնտական քաղաքությունը: Հռոմը չէր կարող թույլ տալ, որ փոքրասիական իր գաղութների թիկունքում և Միջերկրական ծովի ափին վերջնականապես կազմակերպվի ու ամրանա հզոր Հայաստանը, որը Արևելքում մշտական սպառնալիք էր լինելու նրա տիրապետության համար: Ուստի Հռոմը ծրագրում է նվաճել նաև Մեծ Հայքի պետությունը: Մ.թ.ա. 69 թ. գարնանը հռոմեական զորավար Լուկուլլոսը, առանց պատերազմ հայտարարելու Մեծ Հայքին և առանց հռոմեական ծերակույտի համաձայնության, անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ սկսեց հայկական արշավանքը՝ սկզբնապես նպատակ ունենալով գրավել Տիգրանակերտը և արքայից արքային ստիպել կնքել հաշտության պայմանագիր, այլ խոսքով՝ Հռոմի գերիշխանությունը հաստատել Հայաստանի վրա⁴⁸:

Սկսված հայ-հռոմեական պատերազմում հայկական բանակը համալրելու համար Տիգրան Բ-ն հավաքում է Մեծ Հայքից վասալական կախման մեջ գտնվող պետությունների ռազմական ուժերը: Ներառնված լինելով Մեծ Հայքի քաղաքական ոլորտում՝ աղվանացիները ևս չէին կարող հեռու մնալ ծավալվող իրադարձություններից և Տիգրանակերտի ճակատամարտում առաջին անգամ բախվեցին հռոմեացիների հետ: Ինչպես հաղորդում է Պլուտարքոսը, «...Բաբե-

⁴⁷ Տե՛ս Վարդանյան Ա., Պոմպեոսի արշավանքն Աղվանք. – ՀՊՀ, 2009, թիվ 10, էջ 14:

⁴⁸ Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 31:

լոնյան ծովից եկավ արաբների անթիլ-անհամար ամբոխը, իսկ Կասպից ծովից ալբանացիների ու նրանց հարևան իբերների բազմությունը...»⁴⁹: Այսպիսով, Մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի Տիգրանակերտի ճակատամարտում հայկական բանակի կազմում էին գտնվում աղվանացիների ու վրացիների օգնական ուժերը:

Ուսումնասիրողները տարբեր կարծիքների են Տիգրանակերտի ճակատամարտում աղվանացիների կարգավիճակի վերաբերյալ: Ըհիշտ են այն ուսումնասիրողները⁵⁰, ովքեր գտնում են, որ աղվանացիները կատարում էին իրենց վասալական պարտավորությունները⁵¹ և թագավորական բանակում էին գտնվում («Տիգրանին – Մ. Վ.) ստորադրված վասալ թագավորները և իշխանները»⁵², ոչ թե նրանք ճակատամարտի դաշտ էին եկել անշահախնդիր՝ «ընդհանուր թշնամուն դիմագրավելու անհրաժեշտությունից մղված»⁵³:

Տիգրանակերտի ճակատամարտն ավարտվեց Տիգրան Բ-ի և նրա դաշնակիցների պարտությամբ: Լուկուլլոսը շարունակեց խորանալ երկրում: Պատերազմի այս փուլում Տիգրան Բ-ն և Միհրդատ Պոնտացին ընտրելով ակտիվ մահանջի ռազմավարություն, մ.թ.ա. 68 թ. սեպտեմբերին Արածանի (Արևելյան Եփրատ) գետի մոտ ջախջախեցին Լուկուլլոսի բանակին և ստիպեցին նրան հեռանալ Մեծ Հայքից:

Արածանի ճակատամարտում պարտություն կրած Լուկուլլոսին սենատը հեռացրեց Արևելքում հռոմեական լեգեոնների հրամանատարի պաշտոնից՝ փոխարենը նշանակելով ճանաչում ստացած Պոմպեոսին: Այդ քայլով Հռոմը նպատակ ուներ ոչ միայն նվաճելու պոնտական թագավորությունը, այլև Հռոմի գերիշխանությունը հաս-

⁴⁹ Плутарх, Лукулл, XXVI.

⁵⁰ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 455, 456, Լեո, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1966, էջ 309, Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի եւ Հռովմայ 190-էն մ. Ք. մինչև 428 հ. Ք., Վենետիկ, 1912, էջ 40:

⁵¹ Меликишвили Г., նշվ. աշխ., էջ 323:

⁵² Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 507:

⁵³ Тревер К., նշվ. աշխ. էջ 90:

տատել ամբողջ տարածաշրջանում: Ծրագրի առաջին մասն իրականացնում է. Պոմպեոսը կարողանում է հաղթել Հռոմին շուրջ քառորդ դար անհանգստություն պատճառած պոնտական թագավորությանը: Իսկ Արտաշատում մ.թ.ա. 66 թ. Պոմպեոսի և Տիգրան Բ-ի միջև կնքված պայմանագրով վերջինս հրաժարվում է Հայաստանից դուրս կատարած նվաճումներից: Պոմպեոսը տիրացավ արքայից արքայի բողած ժառանգությանը, այլ խոսքով՝ նախկինում Տիգրան Բ-ին ենթակա երկրներին, մասնավորապես Ասորիքին, Արևելյան Կիլիկիային, Փյունիկիային: Պոմպեոսը մտադիր էր շարունակել արշավանքը դեպի Կողքիս, սակայն մոտալուտ ծնունդ պայմաններում արշավանքը ժամանակավորապես հետաձգեց և զորքը երեք մասի բաժանելով՝ նա մ.թ.ա 66–65 թթ. ձմեռեց «Անահտական երկրում և Կյուռնոս (Կուր) գետի մոտ...»⁵⁴: Չորամասերը տեղավորված էին իրարից բավականաչափ հեռու և գտնվում էին Պոմպեոսի ու նրա օգնականներ Լուկիոս Փլակկիոսի և Մետելլոս Կելերի հրամանատարության ներքո:

Հռոմեական զորքի ձմեռվա կայանների հարցի շուրջ պատմագիտության մեջ կան տարաձայնություններ: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով դրանք գտնվել են Եփրատի վերին հոսանքի ու Կուր գետի ակունքների միջև⁵⁵: Մյուս մասը գտնում է, որ հռոմեական լեգեոնները կայանել են ներկայիս Ախալցխայի ու Ախալքալաքի միջև ընկած շրջանում⁵⁶: Կ. Տրեվերը բնակատեղին համարում է Խաղխաղը կամ Գուգարքը⁵⁷: Ս. Կազիևը գտնում է, որ Պոմպեոսի բանակատեղին գտնվել է Մինգեչաուրի շրջանում, որտեղ գոյություն ուներ հնուց ի վեր գործող գետանց⁵⁸: Նշված կարծիքներից ընդունելի է Կ. Տրեվերի տեսակետը, քանի որ Խաղխաղի շրջանն աշխարհագրորեն էլ ընկած էր Մեծ Հայքի, Վիրքի ու Աղվանքի շփման կետում: Այլ

⁵⁴ Դիոն Կասսիոս, XXXVI, 48, 1, 53, 5:

⁵⁵ Моммзен Т., История Рима, Русский перевод под общей редакцией Н. А. Машкина, т. III, М., 1941, с. 106; Меликишвили Г., *նշվ. աշխ.*, էջ 326:

⁵⁶ Մանանդյան Հ., *Երկեր*, հ. Ա, էջ 587:

⁵⁷ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 93:

⁵⁸ Казнев С., Археологические памятники Мингечаура как исторический источник для изучения истории Азербайджана. – «Изв. АН АзССР», 1950, 7, с. 168.

կերպ չէր ել կարող լինել. հռոմեական զորավարը պետք է բանակէր «բարեկամ և դաշնակից» երկրում՝ անակնկալներից զերծ մնալու համար:

Հռոմեացիների ձմռան կայանատեղին վախեցրեց Աղվանից Օրոյսես քազավորին, թե հռոմեացիները կներխուժեն Աղվանք: Ուստի, նա որոշեց կանխել դա և հարձակվել հռոմեացիների վրա, քանի դեռ վերջիններս անհոգություն էին ցուցաբերել՝ չստեղծելով բանակատեղի և զբաղված էին Սատտունալիայի տոնակատարության մախապատրաստական աշխատանքներով: «Օրոյսեսը՝ Այոտնոսից վերև բնակվող ալբանների քազավորը, ցանկանալով մի կողմից շնորհ անել Տիգրան կրտսերին, որն իրեն բարեկամ էր, մյուս կողմից հատկապես վախենալով, որ հռոմեացիները կներխուժեն Ալբանիա, և կարծելով, որ անկասկած հաջողության կհասնի, եթե ձմեռ ժամանակ անսպասելի հարձակվի նրանց վրա, քանի դեռ նրանք չեն կենտրոնացել մեկ միասնական զորակայանում, արշավեց նրանց վրա Սատտունալիա տոնի ժամանակ»⁵⁹: Պատմիչի այս վկայությունից երևում է, որ արդեն ձևավորվել էր Աղվանքի հարավային սահմանը, որը Կուրն էր, և որը Աղվանքը բաժանում էր Մեծ Հայքից, քանի որ դրանից հյուսիս՝ «Այոտնոսից վերև», գտնվում էր Օրոյսեսի քազավորությունը:

Հռոմեացիների հետ այս բախումով Աղվանքը հանդես է գալիս որպես ինքնուրույն քաղաքականություն վարող պետություն՝ սեփական քազավորի գլխավորությամբ:

Աղվանացիների 40 հազարանոց բանակն անցնելով Կուր գետը՝ հարձակվում է հռոմեացիների վրա: Ասվեց, որ Օրոյսեսի նպատակն էր թույլ չտալ հռոմեացիներին ներխուժել Աղվանք, նաև ազատել Տիգրան կրտսերին: Դա ուղղակի վկայություն է, որ Օրոյսեսը շարժվում էր Մետելլոս Կելերի զորամասի կողմը, որտեղ շրթայակապ պահված էր արքայից արքայի դավաճան որդին՝ Ասիայի երեք վե-

⁵⁹ Դիոն Կասսիոս, XXXV, 54, 1-2:

հապետներին կապող օղակը⁶⁰:

Եթե ճակատամարտի սկիզբը բարենպաստ էր աղվանացիների համար, ապա հետագա ժամերին իրադարձությունները դասավորվեցին ոչ նրանց օգտին: Ուշքի գալով առաջին անհաջողությունից՝ Պոմպեոսը շարժվում է Մետելլոս Կելերի գորախմբին օգնության. «Պոմպեոսը, տեղեկանալով մյուսների դեմ բարբարոսների ձեռնարկած փորձի մասին, անակնկալ եկավ իր դեմ արշավողներին ընդառաջ և հաղթելով նրանց, իսկույն, ինչպես կար, շտապեց Օրոյսեսի դեմ: Եվ նրան չհանդիպեց, քանի որ (սա) ետ մղվելով Կելերի կողմից և տեղեկանալով մյուսների ձախորդությունների մասին, փախուստի էր դիմել, սակայն (Պոմպեոսը) ալբաններից շատերին ձեռք գցելով Կյուտնոսի գետանցի մոտ, կործանեց»⁶¹: Դակատամարտն ավարտվեց Օրոյսեսի բանակի ծանր պարտությամբ: Անսպասելի ու վտանգավոր այս հարձակումից հետո հռոմեական լեգեոնները մնացին Կուր գետի մոտ մինչև մ.թ.ա. 65 թ. գարունը:

Դակատամարտից հետո Օրոյսեսի և Պոմպեոսի միջև կնքվում է հաշտության պայմանագիր՝ Աղվանք չմտնելու պայմանով⁶², որն էլ հենց թագավորի նպատակն էր: Պոմպեոսը չշարունակեց արշավանքը դեպի Աղվանք, ոչ թե «մեծահոգությունից» դրդված, ինչպես ներկայացնում է Պլուտարքոսը⁶³, այլ հաշվի առնելով ձմեռվա դժվարություններն ու աղվանացիների ռազմական ուժը: Պլուտարքոսը նշում է, որ աղվանացիները «սկզբում համաձայնվել էին թույլ տալ Պոմպեոսին անցնելու իրենց երկրի միջով»⁶⁴: Դրա հետ, սակայն, չի կարելի համաձայնվել, քանի որ Տիտոս Լիվիոսը գրում է հակառակը. «Նա (Պոմպեոսը – Ա. Վ.) պայքարում հաղթեց իրեն բաց չթողնող իբերներին ու աղվանացիներին»⁶⁵:

⁶⁰ Տիգրան Կրտսերը Տիգրան Մեծի որդին էր, Միհրդատ Եվպատորի թոռը և պարթևների թագավոր Հրահատ III-ի փեսան:

⁶¹ Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 3–4:

⁶² Նույն տեղում, XXXVI, 54, 4–5:

⁶³ Плутарх, Помпей. XXXIV.

⁶⁴ Նույն տեղում, XXXIV:

⁶⁵ Латышев В., т. II, с. 50–51.

Գարնան բացվելու հետ վերսկսելով արշավանքը, հռոմեական զորավարը հարձակվում է իբերների վրա, պարտության մատնում նրանց, շարժվում դեպի Կողքիս՝ Բոսպոր ներխուժելու համար, ուր ապաստանել էր Միհրդատ Եվպատորը։ Սակայն զգալով արշավանքի դժվարությունները, հռոմեական բանակը հետ է վերադառնում դեպի Հայաստան՝ Աղվանք ներխուժելու համար։ Պոմպեոսը խախտում է աղվանացիների հետ կնքած պայմանագիրը և իր բանակով ներխուժում է Աղվանքի տարածք։ Հայաստանից դեպի Աղվանք Պոմպեոսը գնացել է Պևտինգերյան քարտեզի՝ Արտաշատ – Արմաստիկա – Լազո շրջանային հին ուղիով⁶⁶։ Պոմպեոսի այս արշավանքն Աղվանք, փաստորեն, դաշնադրության կոպիտ խախտում էր։ Պլուտարքոսը, սակայն, փորձելով արդարացնել հռոմեացիների արարքը, այն ներկայացրել է որպես աղվանացիների խռովություն⁶⁷։ Իրականում Աղվանքում ոչ մի խռովություն էլ տեղի չի ունեցել։ Պոմպեոսը փորձել է շրջանցիկ ճանապարհի ընտրելով (Կողքիս – Մեծ Հայք – Աղվանք)՝ աղվանացիներին անակնկալի բերել, որոնք հանգստացել էին մ.թ.ա 66–65 թթ. ձմռանը ձեռք բերած հաշտության պայմանագրով՝ ցցապատնեշներով փակելով Կուրի գետանցը։ Անցնելով Կուր գետը՝ հռոմեացիները մոտենում են Կամբյուսես – Կանբեճան գետին։ Աղվանացիներն առաջին դիմադրությունը ցույց են տվել Ալազան գետի ձախ ափին։ Ճակատամարտում Պոմպեոսին հաջողվում է հաղթանակ տանել հակառակորդի նկատմամբ, որոնց առաջնորդում էր քազավորի եղբայր Կոտիսը⁶⁸։ Պլուտարքոսը նշում է, թե ճակատամարտում աղվանական բանակը բաղկացած էր 60 հազար հետևակից ու 12 հազար հեծելազորից ու ունեցել է թվային գերակշռություն⁶⁹, սակայն Դիոն Կասիոսը վկայում է, որ աղվանացիները

⁶⁶ Մանանյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 590:

⁶⁷ Плутарх, Помпей, XXXV.

⁶⁸ Նույն տեղում, XXXVII, 4, 1: Ենթադրվում է, որ Կոտիսը ոչ թե քազավորի եղբայրն էր, այլ՝ որդին (տե՛ս Ալաջաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գա-հիրե, 1950, էջ 170):

⁶⁹ Плутарх, Помпей, XXXV.

թվային առումով զիջում էին հակառակորդին⁷⁰:

Մ.թ.ա. 65 թ. ամռանը Ալազան (Աբբանո) գետի ափին Օրոյսես թագավորի և Պոմպեոսի միջև տեղի ունեցավ վճռական ճակատամարտ: Դրանից առաջ Պոմպեոսը դիմեց խորանանկության՝ հետևակ զորքին թաքցնելով հեծելազորի թիկունքում: Աղվանացիներն ընկան հռոմեացիների լարած թակարդը: Հռոմեական հեծելազորին օգնության եկած հետևակը վճռեց ճակատամարտի ելքը: Աղվանական բանակը սկսեց անկանոն մահանջը, որն ավելի կործանարար եղավ նրա համար: Չեն փրկվում մաս նրանք, ովքեր փախել ու թաքնվել էին անտառներում. հռոմեացիները հրդեհեցին դրանք և կոտորեցին այնտեղ ապաստանածներին⁷¹:

Աղվանական բանակի պարտությունը լիակատար էր: Սա Պոմպեոսի և աղվանացիների միջև մղվող երրորդ ճակատամարտն էր: Սակայն Օրոյսեսին այս անգամ էլ է հաջողվում հաշտության պայմանագիր կնքել Պոմպեոսի հետ: Դրա համար թագավորը ժամանում է հռոմեական ճամբար և կնքվում է պայմանագիր, ըստ որի՝ Աղվանքը հռչակվում է Հռոմի «քարեկամ ու դաշնակից»⁷²: Ի դեպ, տեղին է նշել, որ իրադարձությունների հետագա զարգացումը թույլ չի տալիս համաձայնել ուսումնասիրողների այն պնդումների հետ, թե «քարեկամ և դաշնակից»-ը նշանակում է, որ Աղվանքը վասալական կախման մեջ ընկավ Հռոմից: Կարծում ենք, որ վերը նշված արտահայտությունը լոկ փոխադարձ ռազմական օգնություն է նշանակում: Դա մասնավորապես երևում է Մեծ Հայքի օրինակից: Առանձնահատուկ ուշադրություն է գրավում աչքի զարնոդ այն հանգամանքը, որ մ.թ.ա. 66 թ. Արտաշատի պայմանագիրը չէր շոշափում հայկական բանակի ո՛չ զինաթափման, ո՛չ կրճատման, ո՛չ ցրման հարց ի տարբերություն Հռոմի կնքած մյուս պայմանագրերի⁷³: Դիշտ է, մենք լիովին տեղե-

⁷⁰ Դիոն Կասսիոս, XXXVII, 4, 1:

⁷¹ Латышев В., т. II, с. 531:

⁷² Նույն տեղում, էջ 258:

⁷³ 197 թ. մ.թ.ա. Մակեդոնիայի և մ.թ.ա. 188 թ. Սելևկյան պետության հետ Հռոմի կնքած պայմանագրերով Մակեդոնիային թույլատրվում էր ունենալ 5 հազ. բանակ (40

կություն չունենք Աղվանքի հետ կնքած պայմանագրի կետերի վերաբերյալ, սակայն կարծում ենք, որ այն մնան էր Արտաշատի պայմանագրին:

Այսպիսով կասյան պետությունների և Հռոմի միջև կնքված պայմանագրերով նրանց պարտավորությունների շրջանակը սահմանափակվում էր միայն փոխադարձ ռազմական օգնությամբ: Այսպես, երբ մ.թ.ա. 64 թ. աշնանը Կորդուքի տարածքում սկսվեցին հայ-պարթևական պատերազմական գործողությունները, Պոմպեոսի հրամանով լեգեոններն Ափրիանոսի հրամանատարությամբ բշեցին պարթևներին Կորդուքից և այն հանձնեցին հայոց արքայից արքային:

Մեր տեսակետի օգտին է խոսում նաև Արտավազդ Բ-ի (մ.թ.ա. 55-34 թթ.) օգնության առաջարկը Մարկոս Կրասոսին՝ իր պայմաններով, այն է՝ պարթևների դեմ արշավել Հայաստանի լեռնային շրջաններով: Իսկ երբ հռոմեական զորավարը փորձեց Հայոց արքայից արքային ներքաշել պարթևների հետ բախման մեջ, ապա Արտավազդ Բ-ն առանց հաշվի առնելու Հռոմի և նրա զորավարների կարծիքը, իր երկրի շահերից բխող պայմանագիր կնքեց պարթևների հետ:

Մ.թ.ա. I դ. երկրորդ կեսին Մեծ Հայքի, Աղվանքի և Վիրքի թագավորները գահ էին բարձրանում՝ չհարցնելով հռոմեական սենատի կարծիքը: Նաև եթե թվարկված երկրները Հռոմի հանդեպ ունենային վասալական պարտավորություն, ապա պետք է որոշակի հարկ վճարեին, սակայն պատմիչների մոտ այդպիսի տեղեկություն չկա:

Օրոյսեսին հաղթելուց ու նրա հետ դաշինք կնքելուց հետո, Դիոն Կասսիոսի վկայությամբ⁷⁴, դաշինք կնքելու ցանկությամբ Պոմպեոսի մոտ են գալիս Կասսից ծովի արևմտյան ափին բնակվող ցեղերը: Պոմպեոսը նրանց նվաճված Աղվանքի հետ մեկտեղում է միասնական պետական կազմավորման մեջ: Քաղաքական այս ակտով էլ

հազ. փոխարեն), իսկ Մելեկյան պետությունը պարտավորվում էր Հռոմին հանձնել ողջ ռազմաճակատորմը և ոչնչացնել մարտական փղերը (տե՛ս Մաշկին Ն. Ա., Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 265-270):

⁷⁴ Դիոն Կասսիոս, XXXVII, 5, 1:

վերջնական ձևավորում է ստանում Աղվանքի արևելյան սահմանը՝ հասնելով մինչև Կասպից ծով:

Մ.թ.ա. 61 թ. Պոմպեոսը վերադառնում է Հռոմ, որտեղ սենատի բույլտվությամբ հաղթահանդես է անցկացնում: Դրան Այսրկովկասյան երկրներից չէին հիշատակվում ոչ մի թագավոր: Աղվանքն այդտեղ ներկայացված էր միայն «երկու առաջնորդներով» ու պատանդներով⁷⁵: Դա մեկ անգամ ևս հաստատում է այն տեսակետը, ըստ որի Աղվանքը (և տարածաշրջանի մյուս երկրները) վասալական պարտավորություն չունեին Հռոմի հանդեպ:

Պոմպեոսի Հռոմ վերադառնալուց հետո՝ օգտվելով Հռոմեական Հանրապետությունում ստեղծված քաղաքական խառը իրավիճակից, Աղվանքը հարում է հայ - պարթևական դաշնագրությանը՝ մասնակցելով դեպի Միջագետք կատարվող արշավանքներին. «Հայոց թագաւորէ որդի Տիգրանայ: ... Սա մանաւանդ զի և զՄիջագետս Անտոնիոսի համեալ էր ի նմանէ, զայրացեալ՝ հրաման տայր զօր յաւրուցանել զքիւրաւորս Ատրպատական մահանգին և զբնակիչս լեռինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղայ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զգօրս Հռոմայեցոց»⁷⁶:

Այսպիսով՝ Աղվանքում հռոմեական տիրապետություն հաստատելու Պոմպեոսի գործադրած բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն: Նրա հեռանալուց հետո երկիրը կրկին ձեռք է բերում լիակատար անկախություն:

Հռոմը, սակայն, չէր հաշտվելու ստեղծված վիճակի հետ և ձեռնարկելու էր նորանոր փորձեր այսրկովկասյան երկրներին հպատակեցնելու համար: Մ.թ.ա. 53 թ. Կրասոսի արևելյան արշավանքն աղվանացիների համար աննկատ անցավ, քանի որ Խառան քաղաքի մոտ այն ավարտվեց հռոմեացիների պարտությամբ: Մ.թ.ա. 43 թ. Հռոմում կազմված երկրորդ եռապետությունը ոչ միայն բաժանեց ամբողջ Հռոմեական Հանրապետությունն Անտոնիոսի, Օկտավիա-

⁷⁵ Դրեբեր Կ., նշվ. աշխ., էջ 109–110:

⁷⁶ Խորենացի, Բ. գլ., ԻԲ, էջ 137:

նոսի և Լեպիդոսի միջև, այլև նպատակ ունենալով վրեժ լուծել պարթևներից Կրասոսի պարտության համար և վերականգնել Հռոմի խաթարված հեղինակությունը տարածաշրջանում:

Մ.թ.ա. 38–37 թթ. տարածաշրջանում քաղաքական ընդհանուր կացությունը հիմնավորապես փոխվել էր ի նպաստ Հռոմի, քանի որ Անտոնիոսի գորավար Պոլիոս Վենտիդիոս Բասսոսը մ.թ.ա. 38 թ. հյուսիսային Ասորիքում, Գինդարոս լեռան մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում զլխովին ջախջախեց Բակուրի ղեկավարած 20 հազարանոց այրուծին⁷⁷: Եվ թվում էր, Արևելքի նվաճման Անտոնիոսի ծրագիրը կարող էր հեշտությամբ իրագործվել: Փորձելով ապահովել իր թիկունքը՝ Արևելքի կուսակալ Պոլիոս Կանիդիոս Կրասոսը, Անտոնիոսի պարթևական արշավանքից առաջ ներխուժեց Վիրք ու Աղվանք: Ինչպես գրում է Դիոն Կասսիոսը, «Կանիդիոսը, արշավելով իբերները՝ լին, այդ կողմում հաղթեց նրանց թագավոր Փառնաբազոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ և նրա հետ միասին ներխուժելով հարևան Ալբանիա և հաղթելով սրանց ևս ու սրանց թագավոր Ջոբերոսին, սրանց նույնպես իր կողմը գրավեց»⁷⁸: Սակայն հայտնի է, որ Անտոնիոսի արշավանքն ավարտվեց խայտառակ պարտությամբ և, հավանաբար, աղվանացիների օգնական ուժերը վերադարձան հայրենիք: Անտոնիոսի հետագա արշավանքից Աղվանքի գերծ մնալու վառ ապացույցը Եգիպտոսում կազմակերպված «հաղթահանդեսն» է, որտեղ Անտոնիոսի և Կլեոպատրայի որդիների միջև բաժանված արևելյան պետությունների շարքում Աղվանքը չի հիշատակվում⁷⁹:

Տեղի ունեցած իրադարձություններում պարթևների պասիվ դիրքը, Մեծ Հայքի կարճատև նվաճումն Անտոնիոսի կողմից վկայում են, որ Աղվանքը մ.թ.ա. I դ. վերջին, ամենայն հավանականությամբ, ունեցել է հռոմեական կողմնորոշում: Վիրքում և Աղվանքում եղել են

⁷⁷ Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 19:

⁷⁸ Դիոն Կասսիոս, XLI, 24, 1:

⁷⁹ Նույն տեղում, XLI, 41, 1:

հռոմեական իշխանության ներկայացուցիչներ՝ կուսակալներ⁸⁰, որոնց հրամանատարության տակ գտնվել են մեծաքանակ զինված ուժեր⁸¹: Այս վիճակը շարունակվել է մաս հետագայում, մասնավորապես, Օգոստոս Օկտավիանոս կայսեր ժամանակ (մ.թ.ա. 27 – մ.թ. 14 թ.): Փորձելով վերացնել ռազմական ու ստրատեգիական մեծ կարևորություն ունեցող Մեծ Հայքի անկախությունը՝ Օկտավիանոսը, դաշինք կնքելով չեզոքացրեց աղվանացիներին ու վրացիներին, հռոմեական ազդեցությանը ենթարկեց ամբողջ հյուսիսային Այսրկովկասը մինչև Կովկասյան լեռներն ու Կասպից ծովի արևմտյան ափերը: «Դեսպանների միջոցով մեր բարեկամությունը խնդրեցին մահալբանացիների, իբերների ու մարերի թագավորները»⁸²:

Օկտավիանոս կայսեր արևելյան արշավանքից սկսած (մ.թ.ա. 20 թ.)՝ Աղվանքը դառնում է Հռոմին ենթակա երկիր, և այդ վիճակը շարունակվում է երկար ժամանակ: Այդ մասին է վկայում 1948թ. հունիսին Ադրբեջանի Քաբիրիստան բնակավայրում հայտնաբերված լատինատառ արձանագրությունը⁸³: Ուսումնասիրություններից պարզվել է, որ այն թողել է հռոմեական XII Ֆուլմինատի (Fulminato-Կայծակնասլաց)⁸⁴ լեգիոնի ցենտուրիոն Լուկիոս Յուլիոս Մաքսիմուսը, Դոմեդիանոս կայսեր կառավարման օրոք (81–96 թթ.): Լեգիոնի ջոկատներից մեկը մշտապես գտնվել է Աղվանքում, որպես հռոմեական գերիշխանության պահպանման երաշխիք:

⁸⁰ Страбон, VI, IV, 2.

⁸¹ Դիոն Կասիոս, XLIX, 44, 2-4, LI, 16, 2, Հրանդ Բ. Արմեն, Անկում Արտաշեսեան հարստութեան, Պեյրոք, 1967, էջ 123:

⁸² Латышев В., т. II, с. 41.

⁸³ Տե՛ս Джафарзаде И., Древнелатинская надпись у подошвы горы Беюк-даш. - «Доклады Академии наук АзССР», т. IV, 1948, № 7, с. 304-311; Խաչիկյան Լ., Դիտողություններ Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԴ գլխի մասին (Ադրբեջանում գտնված հին լատինական արձանագրության առնչությամբ). - ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1948, թիվ 11, էջ 91-97: Пахомов Е., Римская надпись I века н.э. и легион XII Фульмината. - «Известия АН АзССР», 1949, № 1, с. 79-88; Ямпольский З., Вновь открытая латинская надпись у горы Беюк-даш, (Азедбайджанская ССР). - «ВДИ», 1950, № 1, с. 177-182.

⁸⁴ Տե՛ս Дворецкий И., Латинский-русский словарь, М., 2008, էջ 445:

3. ՀԱՅ-ԱՂՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ III-V դդ.

Աղվանական պետությունն իր ստեղծման պահից բարիորդացիական հարաբերություններ է ունեցել իր հարևանների, մասնավորապես, Մեծ Հայքի թագավորության հետ: Աղվանացիները մերթընդմերթ զինակցել են Մեծ Հայքի հետ՝ տարածաշրջանից դուրս քշելով ալաններին: Հայ-աղվանական զինակցությունը ցայտուն երևաց III դարի սկզբին, երբ միջազգային նշանակություն ունեցող իրադարձություններն իրենց անդրադարձն ունեցան տարածաշրջանի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վրա: Հռոմի անընդհատ առաջխաղացումը, գահակալական կռիվները ծայրաստիճան թուլացրել էին երբեմնի աշխարհակալ պարթև Արշակունիների հարստությունը, և դրանից օգտվում է Սասանի թոռ Արտաշիրը: Վերջինս կարողանում է հաղթանակ տանել Արտավան V-ի նկատմամբ՝ գրավելով մայրաքաղաք Տիգրանը, որտեղ նրան շնորհվեց «Արքայից արքա Երանի» տիտղոսը⁸⁵: Եթե մինչ այդ այսրկովկասյան երկրների անկախությանը սպառնացող վտանգը գալիս էր արևմուտքից՝ Հռոմեական կայսրությունից, ապա այժմ առավել վտանգավոր էր դառնում Սասանյան Պարսկաստանը: Վերջինս խնդիր էր դրել վերացնելու հարևան երկրներում գոյություն ունեցող Արշակունյաց հարստության բոլոր ճյուղերը: Այդ ճանապարհին առաջինը հայ Արշակունիներն էին, քանի որ գահակալող Արշակունի հարստությունների մեջ առաջնությունը, փաստորեն, անցել էր հայ Արշակունիներին:

Քաղաքական նոր հարաբերություններում Աղվանքը, Մեծ Հայքի թագավորությունն ու Վիրքը կազմում են զինակցություն, որին հետագայում միանում են մի շարք երկրներ: Սասանյանների դեմ պայքարը զլխավորում էր Հայոց թագավոր Տրդատ Բ-ն հայ հեղինակներ-

⁸⁵ Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 71:

րի՝ Խոսրով Մեծը⁸⁶: Այդ մասին մեզ մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ագաթանգեղոսը. «Միս ևս ի գլուխ տաքոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս Աղուանից և Վրաց, և բանալ զդրոմս Ալանաց և զճորայ պահակին, հանել զզօրս, Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրոմս Տիսրոնի»⁸⁷: Դաշնակիցներին հիշատակում է նաև Ուխտամեսը. «Սկսաւ զօրածողով լինել Խոսրով արքայն Հայոց և ժողովեաց զզօրս Աղուանից և զՎրաց, և զԼիմաց, և զՃրաց, և զԿասբից և զզօրս Հոնաց»⁸⁸:

Պատերազմական գործողությունները տեղի են ունենում հիմնականում Մարաստանում ու Աղիաբենում և տևում են մի քանի տարի⁸⁹: Դաշնակիցները չեն կարողանում հասնել իրենց վերջնական նպատակին՝ այն է տապալել Սասանյան հարստությունը: Այսպիսով կասի ժողովուրդների պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ ավարտվում է անհաջողությամբ: Ամրապնդելով իրենց դիրքերը՝ Սասանյանները Արտաշիրի որդու՝ Շապուհ Ա-ի օրոք (241–272 թթ.) 244 թ. Տիգրոնի մատույցներում կարողանում են ոչ միայն պարտության մատնել հռոմեացիներին, այլև գրավում են Մեծ Հայքը և Աղվանքը: Այդ մասին է վկայում Նախշ-է-Ռուստամում Զաաբե-ի-Չարդուշտ շինության վրա հայտնաբերված արձանագրությունը, որտեղ թվարկված են Շապուհ Ա-ի հաղթանակները և նշված են նվաճված երկրները. «Ատրպատականը, Հայաստանը, Իբերիան, Մաքեդոնիան»⁹⁰, Ալբանիան (մինչև) Կապկոհ (և Ալանական) դռներն ընկած երկրները»⁹¹: Սակայն այս հաջողությունը ժամանակավոր բնույթ էր կրում:

⁸⁶ «Խոսրով» ոչ միայն անուն է, այլ՝ տիտղոս: Այն նշանակում է «քարեհամբալ, հռչակավոր, անվանի» (տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 529–530):

⁸⁷ Ագաթանգեղոս, էջ 16:

⁸⁸ Ուխտամես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ուխտամես), Վաղարշապատ, 1871, էջ 70:

⁸⁹ Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 92:

⁹⁰ Ермош С., Страна "Махелония" надписи "Кааба -и Зардушт". – ВДИ, 1967, № 4, с. 52.

⁹¹ Recherches sur les Res Geste dive Saporis par Ernest Honigmann et Andre maricq, Bruxelles, 1953, p. 11.

Պատերազմական գործողությունները Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև նոր ուժով վերակսվեցին III դարի 90-ական թվականներին: Սկզբնական շրջանում հռոմեական բանակը ծանր պարտություն կրեց: Թվում էր, թե վերականգնվել է մախկին վիճակը, սակայն, 297 թ. հայ-հռոմեական միացյալ զորաբանակը Գալերիոս Մաքսիմիանոսի հրամանատարությամբ Հայաստանում վճռական հաղթանակ տարավ պարսիկների նկատմամբ: Պատերազմն ավարտվում է Մծբինի 40-ամյա դաշնագրով: Այսպիսով՝ III դարի վերջում թե՛ Աղվանքը, և թե՛ նրա հարևանները թոթափում են պարսկական ժամանակավոր տիրապետությունն ու վերստին ձեռք բերում անկախություն: Եթե III դարում հայ-աղվանական հարաբերությունների մասին տեղեկությունները կցկտուր են, ապա IV դարում այդ հարաբերությունների վերաբերյալ շնորհիվ հայ պատմիչների, բավականին տեղեկություններ ունենք:

IV դ. սկիզբը Աղվանքի կյանքում քաղաքական փոփոխությունների ժամանակահատված էր: Տեղի է ունենում դինաստիական փոփոխություն. տեղական թագավորական տանը փոխարինելու է գալիս Արշակունիների հարստությունը: Բայց մինչ այդ պայքար է ծավալվում հայոց գահի շուրջը, որին գործուն մասնակցում են աղվանացիները:

Մեծ Հայքի թագավոր Տրդատ Գ. Արշակունին (298–330 թթ.) եպիսկոպոս Գրիգորիսի⁹² գործունեությանը զորավիզ լինելու առաջադրանքով, իր ազգական Սանատրուկին որպես գործակալ ուղարկում է Փայտակարան⁹³:

Սանատրուկը, լսելով Հայոց՝ Տրդատ թագավորի մահը և օգտագործելով ստեղծված նպաստավոր վիճակը իրեն թագավոր է հռչա-

⁹² Գրիգոր Լուսավորչի թողը՝ տասնհինգամյա եպիսկոպոս Գրիգորիսը, նշանակվում էր ոչ միայն Հայոց հյուսիսարևելյան կողմերի եպիսկոպոս, այլև ստանում էր «յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին, Վրաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքբաց» (տե՛ս Բուզանդ, Գ, գլ. Ե, էջ 20):

⁹³ Խորենացի, Գ, գլ. Գ, էջ 259:

կում Փայտակարան քաղաքում և նրա շրջակա գավառներում⁹⁴, պատրաստելով արշավանքի՝ փորձելով գրավել հայոց գահը: Մակայն նոր գահ բարձրացած Հայոց թագավոր Խոսրով Կոտակը (330–338 թթ.) հռոմեացիների օգնությամբ բանակ է ուղարկում Մանատրուկի դեմ: Վերջինս տեսնելով, որ անկարող է դիմադրել հայ-հռոմեական միացյալ բանակին՝ փախչում է Պարսկաստան⁹⁵, սակայն չէր հրաժարվել հայոց գահին տիրանալու մտքից: Պարսկաստանից անցնելով Մազքութների երկիրը ու հյուսիսային ցեղերից բանակ կազմելով, նա արշավում է Հայաստանի վրա: Այս արշավանքի մասին պատմում է Փավստոս Բուզանդը, որը չնայած նրան Մանեսան է անվանում ու Մազքթաց թագավոր կոչում, բայց նրանց նպատակային գործողությունների նմանությունը, օտար ազգերի օգնությամբ Հայոց թագավոր դառնալու փորձերը, Վատնյան դաշտում Մանուկ Գրիգորիսին սպանելը⁹⁶, նույնիսկ, սպանության եղանակը ցույց են տալիս, որ նրանք պառակտչական տրամադրություններով տարված միևնույն անձնավորություններն են⁹⁷:

Մանատրուկ-Մանեսանի ծավալած ողջ գործունեության ընթացքում աղվանացիները նրան աջակցել են: Երբ նա իր խնամակալությանը հանձնված Փայտակարանում պատրաստվում էր պայքարի հայոց գահի համար, նրան իրենց զորագնդերով օգնության են գալիս Աղվանից նախարարները: Ինչպես տեսանք այդ ձեռնարկումը հաջողություն չունեցավ, և Մանատրուկ-Մանեսանը Պարսկաստան է փախչում «հանդերձ Աղուանից նախարարօք»⁹⁸: Սրանով չավարտվեց, սակայն, հայոց գահի «հավակնորդի» գործունեությունը, քանի

⁹⁴ Հարությունյան Բ., Մազքթաց Մանեսան թագավորի արշավանքը Հայաստան. – ԼՀԳ, 1981, թիվ 6, էջ 67:

⁹⁵ Խորենացի, Գ., գլ. Գ, էջ 263:

⁹⁶ Գրիգորիս եպիսկոպոսը սպանվեց Վատնյան դաշտում մազքթաց թագավորի հրամանով (տե՛ս Խորենացի, Գ., գլ. Գ, էջ 259–260, Բուզանդ, Զ, էջ 26):

⁹⁷ Մեկ այլ տեսակետի համաձայն Մանատրուկը և Մանեսանը տարբեր անձնավորություններ են (տե՛ս Հարությունյան Բ., Մազքթաց Մանեսան թագավորի արշավանքը Հայաստան, էջ 67–77):

որ նրան խրախուսում և ապաստան էր տրամադրում պարսից արքայից արքան⁹⁹: Խրախուսելով Մեծ Հայքի թագավորության կենտրոնական իշխանության դեմ ուղղված երկպառակտչական ամեն մի շարժում՝ Շապուհ Բ-ն (309–379 թթ.) Սանատրուկ-Սանեսանին օգնում է նաև դաշնակիցներ ձեռք բերելու հարցում, քանի որ Հռոմի և Պարսկաստանի միջև 298 թ. կնքված Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետը դեռ չէր լրացել, և պարսիկները չէին կարող բացահայտ հանդես գալ Մեծ Հայքի թագավորության դեմ: Ապստամբ վերակացուի համար լավագույն դաշնակից հանդիսացան աղվանացիները: Եվ եթե Շապուհ Բ-ի հովանավորությամբ ու Սանատրուկի գլխավորությամբ այս ձեռնարկումը հաջողություն ունենար, ապա Հռոմի դեմ առաջիկա պատերազմում, որին խնամքով նախապատրաստվում էր պարսից արքունիքը մեծ գերակշռություն ձեռք կբերեր՝ դաշնակից ունենալով Մեծ Հայքը:

Ինչ վերաբերում է Աղվանից նախարարների մասնակցությանը Մեծ Հայքի թագավորություն կատարվող արշավանքին, ապա ուսումնասիրողները կարծիք են հայտնել, որ Աղվանքում այդ ժամանակ գոյություն ունեւ թագավորական հարստության դեմ ուղղված ընդդիմություն, ուստի, կարծում ենք, որ այդ իրադարձությունների մասնակիցները հենց դժգոհ նախարարական-ազնվական տարրերն էին, որոնք դրանցում տեսնում էին քաղաքական փոփոխությունների ամենահարմար պահը¹⁰⁰: Ճիշտ է, պատմիչները հիշատակում են միայն նախարարներին և խոսք չկա թագավորի մասին, սակայն, գտնում ենք, որ այդ ձեռնարկմանը մասնակցել է նաև թագավորը: Դրա վառ ապացույցն այն է, որ Աղվանքն այդ ժամանակ գտնվում էր պարսիկների հովանավորության տակ, և Շապուհ Բ-ն կստիպեր Աղվանքի թագավորին մասնակցելու իր լայն օժանդակությունը վայելող ձեռնարկին: Իսկ եթե թագավորը կողմնակից չլիներ հայոց գա-

⁹⁸ Խորենացի, Գ, գլ. 2, էջ 263: Բաղարի տեղադրության մասին (տե՛ս Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը. – ԼՀԳ, 1981, թիվ 12, էջ 61–76):

⁹⁹ Նույն տեղում, Գ., գլ. Թ, էջ 266, Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԲ, էջ 30:

¹⁰⁰ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 174:

հի շուրջը ծավալված այս ամբողջ իրադարձություններին, ապա դժվար թե նախարարներն աջակցեին հայոց գահի «հավակնորդին», քանի որ վերջինիս հաջողության դեպքում նախարարները կփորձեին տապալել Աղվանքի թագավորին՝ ընդօրինակելով Արշակունի Սանատրուկ-Սանեսանի թեկուզ անհաջող փորձը: Իսկ եթե, իրոք, այդ նախարարները դժգոհ էին Աղվանքի թագավորական իշխանությունից և ակնկալում էին փոփոխություններ, ապա թագավորին այլ ելք չէր մնում, քան դաշնակցել Մեծ Հայքի թագավորության արքա Խոսրով Կոտակի հետ, որի դեմ էր ուղղված այդ ամբողջ ձեռնարկումը՝ սպազայում փորձելով ստանալ նաև Հռոմի աջակցությունը: Այլ խոսքով՝ որդեգրել հռոմեական կողմնորոշում: Սակայն պատմիչների մոտ այդպիսի տեղեկություններ չկան: Եվ, կարծում ենք, որ Աղվանից թագավորն աջակցել է Սանատրուկին՝ նրա մոտ ուղարկելով իր նախարարներին: Իսկ թագավորը չի ներկայացել այն պարզ պատճառով, որ չի հավատացել պարսիկների աջակցությունը ստացած արշավանքի հաջող ելքին, որն ուղղված էր Հռոմի հովանավորությունը վայելող Խոսրով Կոտակի տապալմանը:

Սակայն պարսկական ձեռնարկումը դեռևս ավարտված չէր, քանի որ թե՛ Շապուհ Բ-ն, թե՛ Սանատրուկ-Սանեսանը չէին հրաժարվել հայոց գահը գրավելու մտքից: Ուստի, այս անգամ ապստամբ վերակացուն Հայաստան է արշավում ավելի մեծ զորաբանակով. «Գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հենմատակաց, Իժմախաց, Գաթաց և Գդուարաց, Գուգարաց, Շչբաց և Ղըբաց և Բաղասճաց և Եգերսուանացն, և այլոց խառնադանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց: Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին»¹⁰¹:

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ Փափստոս Բուզանդը Փայտակարանի կուսակալի բանակում չի հիշատակում

¹⁰¹ Բուզանդ, Գ., գլ. Է, էջ 28:

պարսիկներին, որոնք այս արշավանքի նախաձեռնողներն էին: Կարծում ենք, պատճառն այն է, որ պարսից արքունիքը ցանկանում էր Մեծ Հայքի խնդիրը լուծել նվազագույն կորուստներով և ուրիշի ձեռքերով: Ստեղծված պայմաններում Փայտակարանի գործերին Շապուհ Բ-ի ամեն մի միջամտություն, ինչպես ասվեց, ոչ միայն Մծբինի հաշտության պայմանների խախտում էր, այլև կարող էր առիթ դառնալ մեծ պատերազմի¹⁰²:

Սկսելով արշավանքը՝ Սանատրուկ-Սանեսանի ժողոված բանակն անցել է Մազքթաց երկրի սահմանը, ապա Աղվանքով մոտեցել Կուր գետին, որն անցնելուց հետո. «տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին»¹⁰³: Անցնելով իր դաշնակից Աղվանքի տարածքով և ունենալով աղվանացիների ռազմական օգնությունը՝ 330 թ. խռովարարի բազմազգ բանակն արշավում է Հայաստան և գրավում Վաղարշապատը: Խոսքով Կոտակը չի կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ, և մի ամբողջ տարի վաշկատում հրոսակները վխտում էին երկրում: Հաջորդ տարի՝ 332 թ., Մեծ Հայքի թագավորության սպարապետ Վաչե Մամիկոնյանը Օշականի մոտ՝ Առապար վայրում, ջախջախում է Սանատրուկ-Սանեսանի բանակը և դուրս շարտում երկրից: Ճակատամարտում սպանվում է նաև ապստամբ վերակացուն:

Պարտություն կրելով հայոց գահի համար մղվող պայքարում՝ վերջինիս հաջորդ սերունդները, ունենալով Շապուհ Բ-ի ռազմական ու քաղաքական օգնությունը, ինչպես նաև օգտվելով Աղվանքում տիրող քաղաքական խառն իրադրությունից, որն ավելի էր խորացել պատերազմում կրած անհաջողություններից հետո, ընդգրկվում են երկպառակտչական պատերազմի մեջ՝ կարողանալով գրավել Աղվանից գահը: Շապուհ Բ-ի օգնությամբ գահ ստացած Արշակունիները, ինչպես կտեսնենք ստորև, դառնում են նրա քաղաքականության կենսագործողները՝ մասնակցելով պարսկական արշավանքներին

¹⁰² Հարությունյան Բ., Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, էջ 68:

¹⁰³ Բուզանդ, Գ, գլ. Է, էջ 28:

թե՛ հռոմեացիների, թե՛ հայերի դեմ:

Այսպիսով՝ IV դ. 30-ական թվականների վերջին Աղվանքում տապալվում է տեղական թագավորական տունը և գահ է բարձրանում հայ Արշակունիների կրտսեր ճյուղը¹⁰⁴: Այդ մասին Մովսես Կաղանկատվացին գրում է. «Եւ թիւ անուանցն յԱռանայ մինչև զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ... Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսոքիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայ Աղուանից»¹⁰⁵:

Աղվանքում գահ բարձրացած Արշակունյաց արքայատոհմի անդամներն ամբողջ IV դ. ընթացքում պահպանել են երկրի սահմանների անվտանգությունը: Նրանք իրենց պետության արտաքին քաղաքականությունը համաձայնելով պարսիկների հետ, ինչը բերելու էր նույնիսկ հարևանների հետ ռազմական ընդհարման: Սակայն մինչ այդ, Այսրկովկաս են ներխուժում հյուսիսային քոչվոր ցեղերը, որոնք չորս տարի իրենց տիրապետությունն են հաստատում Աղվանքում, ինչպես նաև կողոպուտի ենթարկում Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան գավառները: Պարսիկները, որոնք անհանգստացած էին ստեղծված վիճակից, փորձում են ազատագրել Աղվանքը հյուսիսային ցեղերի տիրապետությունից: Աղվանքի ազատագրության գործին մասնակցում է նաև Մեծ Հայքի թագավոր Տիրան Արշակունին (338–350 թթ.), որը բարիդրացիական հարաբերություններ ուներ Շապուհ Բ-ի հետ: «Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղութիւն ընդ Պարսս և լեալ օգնական Շապիոյ, թափէ զնա ի յարձակմանէ հիւսիսայնոցն, որք ամս չորս բնակեալ յԱղո-

¹⁰⁴ Փալստոս Բուզանդը Սանեսանին ներկայացնում է որպես Արշակունիների տոհմից սերված. «Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն...» (տե՛ս Բուզանդ, Գ, գլ. Է, էջ 28): Մեկ այլ տեսակետով Աղվանքում Արշակունիները հաստատվել են մոտ 298 թ. (տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ–Չ դարերի Աղուանքում. - «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2003, թիւ 1–12, էջ 62–63):

ւանս նեղէին զՀայս»¹⁰⁶, – գրում է Մովսէս Կաղանկատվացին:

Այս իրադարձությունների ավարտին քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում սրվում է. բռնկվում է պարսկա-հռոմեական նոր պատերազմը, որը փոքր ընդհատումներով շարունակվելու էր մինչև IV դ. վերջը:

Գտնվելով պարսիկների ագդեցության ոլորտում՝ աղվանացիները մասնակցում էին թե՛ հռոմեացիների, թե՛ հայերի դեմ ուղղված պարսից արշավանքներին: Եթե Սանատրուկի դեպքում աղվանացիները հանդես էին գալիս սոսկ որպես պարսիկներին օժանդակող ուժ, ապա այժմ նրանք ունենալով պարսիկների աջակցությունը, արշավանքներ էին նախաձեռնում դեպի Հայաստան:

Օգտվելով Մեծ Հայքում ստեղծված քաղաքական խառն իրադրությունից և Արշակ Բ-ի (350–368 թթ.) բացակայությունից՝ Աղվանից Ուռնայր թագավորը¹⁰⁷ փորձում է ընդարձակել իր երկրի սահմաններն ի հաշիվ Մեծ Հայքի թագավորության: Անցնելով Կուր գետը՝ աղվանացիները գրավում են Հայաստանի հյուսիսարևելյան գավառները՝ Ուտի - Առանձնակը, Շակաշենը, Գարդմանը, Կողթը և մի շարք այլ գավառներ, որոնք «շուրջն էին զնովաս»¹⁰⁸: Ռազմական այս ներխուժման հետևանքով Աղվանքի սահմանը պատմության մեջ առաջին անգամ անցավ Կուր գետը և հաստատվեց նրա աջափնյա

¹⁰⁵ Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԵ, էջ 41:

¹⁰⁶ Նույն տեղում, Ա, գլ. ԺԳ, էջ 30:

¹⁰⁷ Սկզբնաղբյուրները Ուռնայր արքային են համարում Աղվանքում առաջին քրիստոնյա թագավորը (տե՛ս Կաղանկատվացի, ԺԱ, էջ 18, Գանձակեցի, էջ 193): Ըստ պատմիչների՝ Ուռնայր արքան մեծ շքախմբով գալիս է Հայաստան, ներկայանում Տրդատ III Մեծ (298–330 թթ.) Արշակունուն և կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին (301–325 թթ.) և վերջիններիս կողմից մկրտվում է քրիստոնյա: Սակայն ապացուցված փաստ է, որ Ուռնայրը հայոց թագավոր Պապ Արշակունու (368–374 թթ.) ժամանակիցն էր և մասնակցել է Հայաստան կատարված 371 թ. պարսկական արշավանքին, ու չէր կարող IV դ. սկզբին թագավորել: Իսկ ինչ վերաբերում է քրիստոնեության ընդունման տարեթվին, ապա կարծում ենք, որ ընդունելի է Հ. Սվազյանի տեսակետը, ըստ որի պետք է Աղվանքում քրիստոնեության ընդունման տարի համարել IV դարի 70-ական թվականները. (տե՛ս Սվազյան Հ., Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը. - ՊԲՀ, 2002, քիվ 2, էջ 140):

¹⁰⁸ Բուզանդ, Ե, գլ. ԺԳ, էջ 323:

որոշ շրջաններում, որը, ինչպես կտեսնենք ստորև, կրեց ժամանակավոր բնույթ: Զբավարարվելով ձեռքբերածով՝ Ուռնայր թագավորը մասնակցեց մահ դեպի Հայաստան Շապուհ Բ-ի կազմակերպած արշավանքին:

Ճակատամարտը տեղի է ունենում 371 թ. Նպատ լեռան մոտ՝ Զիրավի դաշտում: Հայկական բանակը հռոմեացիների հետ միասին խոշոր հաղթանակ է տանում պարսիկների և նրա դաշնակիցների նկատմամբ: Տեսնելով ճակատամարտի նման ընթացքը՝ աղվանացիներն Ուռնայր արքայի գլխավորությամբ դիմում են փախուստի: Սակայն հայոց բանակի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը հասնելով նրան՝ ասում է. «Շնորհս կա, զի այր թագաւոր ես և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ» և արքային բռնյ է տալիս մի քանի թիկնապահների հետ հեռանալ¹⁰⁹:

Զիրավի ճակատամարտից հետո հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում Արշակ Բ-ի գահակալության վերջին տարիներին Հայաստանից անջատված ծայրագավառների միավորմանը: Նա արշավանք է ձեռնարկում դեպի Աղվանք, ջախջախում է աղվանացիներին և դուրս շարտում Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան շրջաններից: «Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից, հարկանէր գնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովսոս սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխատրացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին»¹¹⁰, — հաղորդում է Փավստոս Բուզանդը:

Այսպիսով՝ պարսիկների հովանավորությամբ և օժանդակությամբ մի քանի տարի տիրելով հայկական գավառներին՝ աղվանա-

¹⁰⁹ Նույն տեղում, Ե, գլ. Դ, էջ 304:

¹¹⁰ Նույն տեղում, Ե, գլ. ԺԳ, էջ 320-322:

ցիները ստիպված ետ են քաշվել այդ տարածքներից և, ինչպես նախկինում, 370-ական թվականներին էլ Մեծ Հայքի և Աղվանքի միջև սահման է դառնում Կուր գետը:

IV դ. վերջին տասնամյակներում Մեծ Հայքի և Աղվանքի միջև հաստատվում են բարիդրացիական հարաբերություններ: Ավելին, հարկեր վճարելով ու պատանդներ տալով, հավանական է, որ Աղվանքն իր արտաքին քաղաքականության մեջ սկսում է հետևել իր հարավ արևմտյան հարևանին:

Սակայն իրադրությունը կրկին փոխվում է. երկարատև բանակցություններից հետո՝ 387 թ., Մեծ Հայքի թագավորությունը բաժանվում է Հռոմեական կայսրության ու Պարսկաստանի միջև: Շուտով Հայաստանի երկու մասերում էլ վերացվում է Արշակունյաց թագավորությունը, մի նպատակ, որին Սասանյանները ձգտում էին հասնել իրենց իշխանության գլուխ անցնելու պահից ի վեր: Պարսկաստանի տիրապետության տակ անցած Հայաստանում 428 թ. ստեղծվեց մարզպանություն: Ու թեև Հայաստանը վարչական առումով գտնվում էր պարսիկների վերահսկողության տակ, սակայն ներքին կյանքում կար ինքնուրույնություն: Դրանում մեծ դեր էին խաղում եկեղեցին և նախարարները: Եվ պարսից արքունիքը դա արմատախիլ անելու համար որդեգրեց քրիստոնեա հալած քաղաքականություն: Եթե արյաց արքա Վահրամ Ե-ն (421–439 թթ.) բարեհաճ վերաբերմունք ուներ Այսրկովկասի քրիստոնյաների նկատմամբ, ապա նրա հաջորդ Հազկերտ Բ Սասանյանը (438–457 թթ.) «...թշնամի և հակառակորդ երևեցուցաներ իւր գհաւատացեալքս ի Քրիստոս»¹¹¹:

Միջին Ասիայում վաչկատուն ցեղերի, ինչպես նաև իռների դեմ պատերազմելու համար Հազկերտ Բ-ն զորքեր է հավաքագրում նաև քրիստոնյա երկրներից: Հայաստանից, Աղվանքից ու Վիրքից զինվորական ուժի հավաքագրումը Սասանյանների համար նաև այն նշանակությունն ուներ, որ նրանց զրկում էին տեղական ռազմական ուժերից: Քրիստոնյա զորամասերն ուղարկվում էին մարտի ամե-

¹¹¹ Եղիշե, էջ 6:

նավտանգավոր տեղերը, որտեղ զինվորների մեծ մասը զոհվում էր¹¹²: Ապահովելով Պարսկաստանը քուշանների հարձակումից՝ պարսից արքունիքը ձեռնամուխ եղավ քրիստոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանը: Այս գործընթացը նախ սկսվեց մարգալանական Հայաստանում, քանի որ վերջինս տարածաշրջանում քրիստոնեության պատվարն էր: Թեպետ Սասանյանների հիմնական նպատակը Հայաստանն էր, բայց միաժամանակ Աղվանքում և Վիրքում էլ սկսվեց կրոնափոխության հարկադիր գործընթացը: Պարսից արքունիքի հրովարտական, որն ուղղված էր Այսրկովկասի մեծամեծներին, նշվում էր, որ եթե հայերն ընդունեն զրադաշտականությունը, ապա վրացիներն ու աղվանները կհետևեն նրանց օրինակին¹¹³: Կրոնափոխության առաջարկը մերժվում է Մեծ Հայքի, Աղվանքի և Վիրքի հոգևոր ու աշխարհիկ պետերի կողմից: Դրան հաջորդում է Հազկերտ Բ-ի երկրորդ հրովարտակը: «Չյիշելով ամենևին զմեծամեծ վաստակս տիրասեր մարդկանն»¹¹⁴ արքունիք էին կանչվում երեք երկրների նախարարները: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, աղվանացիներն էլ էին. «...ի միաբան յուխտ Հայաստանեայց»¹¹⁵: Եղիշեն թվարկելով Պարսկաստան մեկնած հայ նախարարներին¹¹⁶, չի նշում, թե Աղվանքից և Վրաստանից ովքեր գնացին, իսկ Ղազար Փարպեցին հիշատակում է Վրաց աշխարհից Աշուշա բղեշխին և այլ տանուտերերի¹¹⁷, առանց անունները հիշատակելու: «Զի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և Լիմաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաղէից և Դասն և որ այլ ևս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնեութիւն»¹¹⁸, – գրում է Եղիշեն:

¹¹² Վարդանյան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 189:

¹¹³ Փարպեցի, գլ. ԻԲ, էջ 44:

¹¹⁴ Եղիշեն, էջ 42:

¹¹⁵ Կաղանկատվացի, Բ, գլ. Բ, էջ 112:

¹¹⁶ Եղիշեն, էջ 42–43:

¹¹⁷ Փարպեցի, գլ. ԻԵ, էջ 47:

¹¹⁸ Եղիշեն, էջ 51:

Հայոց, աղվանից և վրաց նախարարները Տիգրանում ընկնում են անելանելի վիճակի մեջ՝ կա՛ն պետք է ընդունեին կրոնափոխության առաջարկը, կա՛ն նրանց սպառնում էին մահապատժով: Ստեղծված վիճակից դուրս գալու միակ միջոցը նախարարները գտնում են կեղծ ուրացության մեջ: Պարսից արքունիքը ուրախությամբ է ընդունում նրանց այդ որոշումը և մեծ պատիվներով ճանապարհում է հայրենիք:

Հայաստանում հայրենասեր ուժերը կարողանում են շուտափույթ երկիրը մաքրել պարսից կայազորներից: Վիճակն այլ էր Աղվանքում. այստեղ էր ներխուժել պարսկական 10 հազարանոց զորաբանակը¹¹⁹, որը մշտապես գտնվում էր ճորա Պահակում՝ հյոսիսային սահմանը քոչվոր ցեղերի ներխուժումից պահպանելու համար¹²⁰: Աղվանքն ամբողջությամբ գրավվում է պարսկական զորքերի կողմից:

Աղվանացիներին այլ ելք չէր մնում, քան բանագնացներ ուղարկել Հայաստան՝ օգնության խնդրանքով¹²¹: Ելնելով ռազմաքաղաքական վիճակից՝ հայկական բանակի մի մասը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ շարժվում է Աղվանք՝ նպատակ ունենալով թիկունքից հարվածել Աղվանքի ճորա Պահակում գտնվող պարսկական զորաբանակին և ազատագրել Աղվանքը: Հայկական բանակը դեռ Աղվանք չէր մտել, որ հայոց մարզպան Վասակ Սյունին տեղեկացնում է ճորա մարզպան Սեբուխտին Վարդանի առաջխաղացման և զորքի թվաքանակի մասին¹²²: Սեբուխտը, որին Ղազար Փարպեցին անվանում է «զօրագլխացն Պարսից»¹²³, ստանալով այս տեղեկությունները՝ մեծաթիվ զորաբանակով շտապ գալիս է հարավ: Անցնելով Կուր գետը՝ Վարդան Մամիկոնյանը պարսկական բանակին հանդիպում է «Ի Խաղխաղ քաղաքի, ի ձմեռոցս արքայութեանն Հայոց»¹²⁴: Չնայած պարսիկների մեծաթիվ բանա-

¹¹⁹ Նույն տեղում, էջ 70, **Կաղանկատվացի**, Բ, գլ. Բ, էջ 112:

¹²⁰ **Լեռ**, Երկեր, հ. 2, Երևան, 1967, էջ 12:

¹²¹ **Եղիշեն**, էջ 70:

¹²² **Փարպեցի**, գլ. ԼԴ, էջ 64:

¹²³ Նույն տեղում, գլ. ԼԵ, էջ 65:

¹²⁴ **Ազաթանգեղոս**, էջ 21: Ղազար Փարպեցին Ոստիքի Խաղխաղը տեսնում է Աղվանքի կազմում. «Ի գեղոն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից», (տե՛ս **Փարպեցի**,

կին, որը համալրվել էր Բաղասականի ու Լիփնքի գորագնդերով, հայոց սպարապետը որոշում է ընդունել մարտը: Ճակատամարտը տեղի է ունենում 450 թ. Խաղխաղ քաղաքի մոտակայքում՝ հայկական զորաբանակի գրոհով: Եղիշեն գրում է. «...զաջ թևն բեկեալ՝ զծախոյ կողմամբն արկեալ, սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լուինաս գետոյ»¹²⁵: Մովսես Կաղանկատվացին էլ նշում է. «Եւ ի բազմութենէ անկելոցն յստակ ջուր գետոյն յարին դառնայր. և ոչ գտանէր որ ի նոցանէ ամենկին ապրեալ և թաքուցեալ յանտառախիտ մայրիսն դաշտաց»¹²⁶: Ջախջախելով պարսկական բանակը՝ հայկական զորաբանակն անցնելով Կուր գետը մտնում է Աղվանք: Այստեղ հայերին են միանում աղվանացիների զորաջոկատները, որոնք փախել - թաքնվել էին երկրի լեռնային շրջաններում: Հայկական բանակը և աղվանացիների զորաջոկատներն անցնում են Ավթարանի հովտով և շարժվում դեպի Ճորա Պահակ. «առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զգօրսն, որ ի ներքս բնակեալ էին, և զդուռն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»¹²⁷:

Վարդան Մամիկոնյանն աղվանից արքայազն Վահանին որպես դեսպան ուղարկում է հոների մոտ դաշինք կնքելու: Հոների ներկայացուցիչները խոստանում են օգնել ապստամբ հայերին ու աղվանացիներին¹²⁸: Առաջ անցնելով նշենք, որ եթե այլադավան հոները վերջիվերջո կատարում են իրենց ստանձնած պարտավորությունը,

ԼԵ, էջ 65): Խաղխաղն Աղվանքի կազմում է տեսնում նաև Մովսես Կաղանկատվացին. «Խաղխաղ քաղաքի, որ ձմեռոցս էր թագաւորացն Աղուանից», (տե՛ս Կաղանկատվացի, Բ, գլ. Բ, էջ 114): Սակայն թե՛ Ղազար Փարպեցու, թե՛ Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները վերաբերում են ուշ շրջանին, քանզի երկու պատմիչների աշխատություններն էլ գրվել են Աղվանքում մարզպանության կազմավորումից հետո, երբ արդեն Ոսիքը և վերջինիս կազմում նաև Խաղխաղը գտնվում էին Աղվանից մարզպանության կազմում:

¹²⁵ Եղիշեն, էջ 76:

¹²⁶ Կաղանկատվացի, Բ, գլ. Բ, էջ 115:

¹²⁷ Եղիշեն, էջ 78:

¹²⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 182:

ապա նույնը չենք կարող ասել հավատակից Արևելյան Հռոմեական կայսրության մասին: Նոր գահ բարձրացած Մարկիանոս կայսրը (450–457 թթ.) հրաժարվում է այսրկովկասյան ժողովուրդներին որևէ կերպ օգնություն ցույց տալուց և ջանում է Սասանյաններին ցուցադրել իր չեզոքությունն ու հավատարմությունը 422 թ. կնքված խաղաղության դաշնագրին¹²⁹: Ինչպես նկատել է Վ. Իսկանյանը. «Թերևս, կար նաև մի այլ կարևոր հանգամանք. Բյուզանդիայի համար հաճելի չէր Պարսկաստանից Մարգպանական Հայաստանի անկախացումն, որը կարող էր վարակիչ օրինակ հանդիսանալ իր տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի համար»¹³⁰:

Տեսնելով Հայաստանում ծավալվող ապստամբական հուժկու շարժումը՝ պարսից արքունիքը, մարգպան Վասակ Սյունու ջանքերով ապստամբների մեջ երկպառակություն սերմանելով, փորձում է ջլատել նրանց ուժերը: Սակայն գլխավոր պատճառն այդ չէր, որ, ի վերջո, հայերը ճակատամարտի դաշտում մեն մենակ մնացին պարսից զերակշիռ ուժերի դեմ հանդիման: Գուցե թե վրացիների օգնությունը ձախողվեց պարսից արքունիքում Աշուշա բղեշխի պատանդ մնալով և Վասակի պառակտիչ գործունեության հետևանքով: Ինչ վերաբերում է աղվանացիներին, ապա նրանք չժամանեցին ճակատամարտի դաշտ՝ հետագայում պարսից արքունիքի հետ հաշտվելու մտադրությամբ: Այնուամենայնիվ, այս ամենը դաշնակցային պայմանավորվածությունների կոպիտ խախտում էր:

Հայկական բանակը ճակատամարտ է տալիս Ավարայրի դաշտում 451 թ. մայիսի 26-ին: Սակայն ճակատամարտը կողմերից և ոչ մեկին հաղթանակ չբերեց. «այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկրքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»¹³¹:

Հավատարիմ իրենց դաշնակցային պարտականությանը՝ հոռերը հարձակվում են Աղվանքում գտնվող պարսից բանակի վրա, մեծ

¹²⁹ Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Երևան, 1991, էջ 98:

¹³⁰ Նույն տեղում, էջ 97:

¹³¹ Եղիշե, էջ 119:

ջարդ են տալիս և բազմաթիվ գերիներ ու ավար վերցնում: Շարունակելով արշավանքը նրանք հասնում են մինչև Պարսկաստանի սահմանը՝ ավերելով մի քանի նահանգներ¹³²: Սակայն պարսիկներն արագ արձագանքում են հոների այս արշավանքին և «զՄուշկան Նիսալաուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեննատակաց և ի Թաւասպարաց և ի Խիթիովան, և յամենայն ամրականս, զորս ատերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց»¹³³: Այս արշավանքով Սասանյանները վերականգնում են իրենց խաթարված հեղինակությունն Աղվանքում:

4. ԱՂՎԱՆՔԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես տեսանք նախորդ ենթագլուխներում նկարագրված իրադարձություններից, որոնք, ի դեպ, վերաբերում են Աղվանքի պատմության առաջին փուլին կամ քաղալորության շրջանին, ընդհանուր գծերով ձևավորվել էին երկրի սահմանները և որոշակիորեն ընդգծվում էին տարածաշրջանում նրա աշխարհագրական դիրքը:

Աղվանքի սահմանների հարցը կենտրոնացված պետության ժամանակահատվածում՝ մ.թ.ա. I դարի 80-ական թվականներ – մ.թ. V դարի կեսերը, մնում է պատմական աշխարհագրության չլուծված հարցերից մեկը և իր վրա է բեռեղ բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը: Այդ գործընթացը շարունակվում է մինչ օրս:

Աղվանքի սահմանների ուսումնասիրության համար ինչպես բազմիցս նշվել է, առաջնահերթ նշանակություն ունի «Աշխարհացոյց»-ը:

Անանիա Շիրակացին, նկարագրելով Աղվանքը, մասնավորապես, նշում է. «Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յեից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ

¹³² Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 188:

Կուր գետով, թեպետ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեր ասասցուր զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»¹³⁴: Հայ աշխարհագետի այս տեղեկության մեջ, ինչպէս տեսնում ենք, ներկայացված է Աղվանքն իր ամբողջ ընդգրկումով, այն է՝ Կովկասյան լեռներից Կուր գետն ընկած տարածքը: Տալով Աղվանից աշխարհի ընդգրկած տարածքն արևելյան Այսրկովկասում՝ Անանիա Շիրակացին հաստուկ շեշտում է, որ դա է իսկական Աղվանքը, նրա խոսքերով՝ «զբուն աշխարհն Աղուանից», տերմին, որ մինչ այդ չէր հանդիպում Աղվանքին վերաբերող և ոչ մի աղբյուրում: Մեջբերված քաղվածքից հստակորեն երևում է, որ Կուր գետը, որի մասին խոսում է հեղինակը որպէս սահմանի, անցնում է հենց բուն Աղվանքի և Մեծ Հայքի միջև ու իր ամբողջ երկարությամբ նրանց բաժանում էր: Սրանից էլ բխում է այն պարզ եզրակացությունը, որ բուն Աղվանքի հարավային սահմանն անցնում է Կուր գետով: Ավելացնենք, որ հայ աշխարհագետը մեկից ավելի անգամ է շեշտում Աղվանքի սահմանը Կուր գետով անցնելու իրողությունը: Այսպէս, խոսելով Վիրքի մասին և տալով նրա աշխարհագրական նկարագրությունը, Անանիա Շիրակացին նշում է. «Աշխարհ Վիրք, յելից կալով Գգերայ, յերի Սարամատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն»¹³⁵: Մ. Երեմյանը կարծում է, որ Աղվանքին և Վիրքին նվիրված մասերը գրելիս «Աշխարհացոյց»-ի հեղինակն առաջնորդվել է իր հավաքած փաստերով, զրել է նոր նյութի հիման վրա, որոնք իրենց մանրամասնություններով չեն զիջում Մեծ Հայքին նվիրված բաժնին¹³⁶:

Կուրի որպէս երկու հարևան երկրների միջև սահմանի մասին այս հաղորդումը հեղինակի կողմից արված մերկապարանոց հայտարարությունն չէ: Դա տարբեր առիթներով և ուղղակի ու անուղղակի

¹³³ Եղիշե, էջ 128–129:

¹³⁴ «Աշխարհացոյց», էջ 28–29:

¹³⁵ Նույն տեղում, էջ 28:

¹³⁶ Երեմյան Մ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 13–14:

ձևերով հաստատում են ինչպես հայ պատմիչները, այնպես էլ անտիկ շրջանի հեղինակները:

IV դարում Այսրկովկասում կատարված իրադարձություններին անդրադառնալիս՝ Աղվանքի սահմանների, մասնավորապես դրա Կուրով անցնելու հարավային սահմանի մասին ստույգ տեղեկություն է հաղորդում Փավստոս Բուզանդը: IV դ. 30-ական թվականներին մագքութներն արշավում են Հայաստան: Այստեղ մտնելու համար նրանք պետք է անցնեին Կուր գետը. «Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին»¹³⁷: Այս տեղեկությունը աներկբայորեն ցույց է տալիս, որ Կուրը սահման էր Աղվանքի և Մեծ Հայքի միջև:

Աղվանքի սահմանների հարցերին անդրադարձել են նաև անտիկ հեղինակները, որոնք, մեկը մյուսին լրացնելով, տալիս են ոչ միայն Աղվանքի, այլև ամբողջ տարածաշրջանի աշխարհագրական նկարագիրը: Ստրաբոնն առաջին հեղինակն է¹³⁸, որ մանրամասն նկարագրում է Աղվանքի սահմանները, և որն էլ հետագայում իր արտահայտությունն է գտել «Աշխարհացոյց»-ի համանման հիշատակության մեջ: Ստրաբոնը հաղորդում է. «ալբանացիները... սալքում են իբերների ու Կասպից ծովի միջև, արևելքում նրանց երկիրը հասնում է ծովին, իսկ արևմուտքում՝ սահմանակցում իբերների հետ: Ինչ վերաբերվում է մյուս կողմերին, ապա հյուսիսայինը շրջապատված է Կովկասյան լեռներով (որովհետև այդ լեռները բարձրանում են հարթության վրա և կոչվում, հատկապես նրանց այն մասը, որ ծովին մոտ է, Կերսունյան լեռներ), իսկ վերջին կողմը կազմում է նրա հետ սահմանակցող Հայաստանը»¹³⁹: Ստրաբոնի այս տեղեկությունից միանշանակ երևում է, որ երկու պետությունների միջև Կուր գետն է եղել

¹³⁷ Բուզանդ, Գ, գլ. Է, էջ 28:

¹³⁸ Աղվանքի և Հայաստանի մասին Ստրաբոնի աղբյուրների վերաբերյալ վերջին հետազոտությունը (տե՛ս Traina G., Roman perceptions of Caucasian Albania. – Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան (Միջազգային գիտաժողով), Երևան, 2007, էջ 223–228):

¹³⁹ Страбон, XI, IV, 1.

սահման:

Մեկ այլ առիթով՝ խոսելով հայկական Շակաշեն գավառի մասին, Ստրաբոնը նշում է. «Այդ հարթավայրից հետո գալիս է Շակաշենը, որը նույնպես սահմանակցում է Աղվանքին և Կուր գետին»¹⁴⁰:

Աղվանքի և Մեծ Հայքի միջև վերոհիշյալ սահմանը մատնանշում է նաև Կլավդիոս Պտղոմեոսը՝ բարեխղճորեն տալով Ալբանիայի աշխարհագրական դիրքի ամենամանրամասն նկարագրությունը. «Ալբանիան հյուսիսից սահմանակից է Սարմատիային, արևմուտքից Իբերիային, հարավից Մեծ Հայքի մի մասին ձգված Իբերիայի սահմանից մինչև Վրկանա ծով՝ Կուրի գետաբերանը...»¹⁴¹: Մեկ այլ առիթով էլ ավելացնում է. «Կուրը հոսելով Իբերիայի և Ալբանիայի երկարությամբ՝ նրանից բաժանում է Հայաստանը»¹⁴²: Սա նշանակում է, թե Կուր գետը որպես սահման ոչ միայն Աղվանքից է անջատում Հայաստանը, այլև՝ Իբերիայից¹⁴³:

Պլինիոս Ավագը ևս, անդրադառնալով Աղվանքի սահմաններին, Կուրը նշում է որպես սահման: «Աղվանները, - գրում է նա, - տարածված են Կովկասյան լեռների վրա և նրանց երկիրը ձգվում է մինչև Հայաստանի և Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»¹⁴⁴:

Աղվանքի սահմաններին նաև Մեծ Հայքի հետ Կուրով անցնող սահմանին անդրադարձել է Պլուտարքոսը՝ հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքը դեպի Աղվանք նկարագրելիս: Պատմիչը նշում է, քանի որ Պոմպեոսը ձմեռելու համար կայանել էր Մեծ Հայքի տարածքում, ուստի աղվանացիները հռոմեական բանակի վրա հարձակվելու համար անցել են Կուր գետը¹⁴⁵: Հետ մղելով նրանց գրոհը՝ հռոմեական լեգեոններն անցնում են Կուրը՝ հայտնվելով Աղվան-

¹⁴⁰ Շակաշենի հայկական մարզ լինելու մասին Ստրաբոնը վկայում է մեկից ավելի անգամ (տե՛ս Страбон, II, I, 14; XI, VII, 2; XI, VII, 4; XI, XIV, 15):

¹⁴¹ Латышев В., т. I, с. 242.

¹⁴² Նույն տեղում, էջ 242:

¹⁴³ Վարդանյան Ա., Աղվանքի հարավային սահմանը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում, էջ 164:

¹⁴⁴ Ган К., նշվ. աշխ., էջ 109:

¹⁴⁵ Плутарх, Помпей, XXXIV.

քում: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցում է երկու երկրների միջև պետական սահմանը Կուրով անցնելու իրողությունը, քանի որ թե՛ հռոմեացիները, թե՛ աղվանացիները իրար դեմ ճակատելու համար պետք է անցնեին գետը¹⁴⁶:

Դիոն Կասսիոսը նշում է «Կյուռնոսից վերև»¹⁴⁷ գտնվող Օրոյեսի թագավորությունը, որն այլ խոսքով նշանակում է, որ Օրոյեսի իշխանությունը սկսվում էր Կուր գետից: Նկարագրելով Պոմպեոսի արշավանքը դեպի Կողքիս՝ պատմիչը հաղորդում է, որ հռոմեական լեգեոնները «...ձմեռեցին Անահտական երկրում և Կյուռնոս գետի մոտ»¹⁴⁸, այսինքն՝ «բարեկամ և դաշնակից», Մեծ Հայքի տարածքում, որն Աղվանքից բաժանվում է Կուր գետով:

Վերոգրյալին հավելենք, որ Աղվանքի և Մեծ Հայքի միջև Կուր գետը սահման է ճանաչում մաև VI դ. բյուզանդական հեղինակ Ստեփան Բյուզանդացին. «Կուրի մոտ ապրում են օբարեններն ու օտենները, որոնք կազմում են Հայաստանի նշանակալից մասը»¹⁴⁹:

Այսպիսով՝ «Աշխարհացոյց»-ը, հայ մատենագիրները, օտար սկզբնաղբյուրներն Աղվանքի հարավային սահմանը ճանաչում են Կուր գետը: Նկատենք, որ հայկական լեռնաշխարհում պետականության ստեղծման պահից մինչև V դարի երկրորդ կեսը Մեծ Հայքի թագավորության արևելյան սահմանը փոփոխություն չի կրել, ուստի ամենևին էլ կասկած չի կարող լինել, որ հայկական Ուտիք և Արցախ նահանգները գտնվել են նրա տարածքում: Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ փաստերը: Ուրարտական սեպագիր արձանագրություններում Արցախը Ուրտեխի անվամբ հպատակեցվել է Սարգուր Բ-ի (մ.թ.ա. 764–735 թթ.) օրոք. «Խալդին արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց Արկուկի (ցեղի) երկիրը: Սարգուրին ասում է. - Արշավեցի գրավեցի Արկուկի (ցեղի) երկիրը, կտրեցի

¹⁴⁶ Վարդանյան Ա., Աղվանքի հարավային սահմանը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում, էջ 165:

¹⁴⁷ Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 51:

¹⁴⁸ Նույն տեղում, XXXVI, 48, 1, 53, 5:

¹⁴⁹ Латышев В., т. I, с. 270–271:

մինչև Ուրտեխի (երկիրը)»¹⁵⁰: Գանձադրան տարեգրության մեջ հիշատակվում է Ուխունե երկիրը, որը Հ. Կարազյոզյանը տեղադրում է Կույաբա (Մեծ Կուենք) և Տերիա (Տրի) գավառների միջև¹⁵¹: Այսինքն՝ մ.թ.ա. VIII դ. երկրորդ կեսին արդեն Արցախը կազմում էր Վանի թագավորության մաս¹⁵²: Ի դեպ, Գ. Մելիքիշվիլին Արդուխունին նույնացրել է այսօրվա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ¹⁵³: Հետագա սեպագիր արձանագրություններում Ուտիքը ևս հիշատակվում է որպես ուրարտական պետության անբաժան մաս: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի մոտ հայտնաբերված Սարդուր Բ-ի սեպագիր ժայռափոր արձանագրությունում հիշատակվում է նաև Տերիա երկիրը¹⁵⁴: Ս. Երեմյանը Տերիան նույնացնում է Արցախի Տրի գավառի հետ¹⁵⁵: Ա. Հակոբյանը ցույց է տվել, որ Տերիան ավելի մեծ հավանականությամբ հնարավոր է տեղորոշել կենտրոնական Արցախում՝ Տրակերտի շրջանում¹⁵⁶: Սեպագիր արձանագրություններում առկա տեղեկությունները հաստատվում են «Աշխարհացոյց»-ի հաղորդմամբ, ըստ որի Տերիան կամ Տրի գավառը մաս է կազմել Ուտիքին¹⁵⁷:

Սարդուրի Բ-ին հաջորդած Ռուսա Ա-ի օրոք (735–714 թթ.) շարունակվեցին ռազմական առաջխաղացումը ներկայիս Ուտիքի և Արցախի տարածքում: Պահպանվել է Ռուսա Ա-ի սեպագիր արձանագրությունը՝ փորագրված Սևանա լճի ափին: Թվարկելով իր նվա-

¹⁵⁰ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հնագույն ժամանակներից մինչև թ.հ. 298 թ., հ. 1, Երևան, 2007, էջ 173:

¹⁵¹ Կարազեռզեան Յ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում ևս հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 138, 206:

¹⁵² Пиготровский Б., Ванское царство, М., 1959, с. 92; Դավանցյան Գր., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 186:

¹⁵³ Меликишвили Г., Урартские клинообразные надписи, М., 1960, с. 228, 237.

¹⁵⁴ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 180, 181:

¹⁵⁵ Երեմյան Ս., Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյց»-ը. – Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 82:

¹⁵⁶ Յակոբյան Ա., Պատմա-աշխարհագրական և վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ և Ուտիք), Վիեննա-Երևան, 2009, էջ 317–318:

¹⁵⁷ Տե՛ս «Աշխարհացոյց», էջ 33:

ճումները Ռուսա Ա-ն հայտնում է. «Ես այս երկրները մեկ արշավանքում նվաճեցի, ծառա դարձրի՝ Ադախու (երկիրը), Վելեքուխի (երկիրը), Լուեքուխի (երկիրը), Արկուկյան (երկիրը),- չորս արքայի այս կողմից ծովային գավառում. Գուրկումիլի (երկիրը), Շանատույան (երկիրը), Թերիվիշայան (երկիրը), Ռիշուայան (երկիրը): [...] զուսայան (երկիրը), Արիայան (երկիրը), Ջամանե (երկիրը), Երկինայան (երկիրը), Էլայան (երկիրը), Էրեթուայան (երկիրը), Այսամանիու (երկիրը), Գուրիայան (երկիրը), Ալգերա (երկիրը), Պիրուայան (երկիրը), Շիլայան (երկիրը), Վիդուայան (երկիրը), Ատեգայան (երկիրը), Էրիայան (երկիրը), Ագամերունի (երկիրը),- տասնինն արքայի այն կողմից ծովային գավառում՝ լեռն(աշղթայի) ստորոտում: Ընդամենը քսաներեք արքայի մեկ օրում (=արշավանքում) նվաճեցի: Մարդ, կին դեպի Բիաինիլի (երկիրը) քշեցի: Հարկայի տարում եկա, կառուցեցի այս ամրոցները հենց այս երկրում (?) [...] Թեյշեբաինի ամրոցը հույսկապ կառուցեցի, դրեցի անունը «Թեյշեբայի քաղաք»՝ Բիաինիլի (երկիր) գործությունը լուլույանների (=բարբարոսների) մեջ ամրապնդելու (համար)»¹⁵⁸:

Բ. Հարությունյանը իրավացիորեն կարծում է, որ վերը նշված 19 երկրների եթե ոչ մեծ, ապա նշանակալից մասը գտնվում է Արցախի, թերևս նաև Ուտիքի տարածքում¹⁵⁹:

Աղվանքի սահմանների ուսումնասիրության հարցում ռուս հետազոտողներն ունեն հետևյալ դիրքորոշումը: Դեռևս XX դ. սկզբին արևելագետ Ա. Կրիմսկին, անդրադառնալով Աղվանքի սահմաններին, մասնավորապես, հարավային սահմանին, նախ այն համարում է Արաքս գետը, սակայն երբ ի մի է բերում սկզբնաղբյուրների հաղորդումները՝ նշում է. «...հունա-հռոմեական հեղինակները աջափնյան համարում են հայկական, որովհետև այն կազմում է հայկական

¹⁵⁸ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, էջ 183–184: Меликишвили Г., Урагские клинообразные надписи, с. 446, № 266.

¹⁵⁹ Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի շուրջը, ՊԲՀ, 1994, քիվ 1–2, էջ 257:

պետության մաս»¹⁶⁰:

Մեկ այլ ռուս անվանի գիտնական Ս. Յուշկովը, տալով Աղվանքի սահմանների նկարագրությունը, մասնավորապես գրում է. այն, որ «Աղվանները պիտի գրաված լինեին ավելի մեծ տարածություն, քան Կուր գետի հովիտն է (ավելի ճիշտ միայն Կուրի ձախ ափի հովիտը, որովհետև աջ կողմի հովիտը Հայաստանինն էր), հաստատվում է նույնպես Ստրաբոնի հաղորդմամբ...»¹⁶¹: Ապա Աղվանքի մասին տեղեկություններ քաղելով Մովսես Կաղանկատվացու աշխատությունից, սակայն տեսնելով, որ դրանք վերաբերում են Հայոց Արևելից կողմանց պատմությանը, Ս. Յուշկովը նշում է. «Մովսես Կաղանկատվացու Աղվանքը ոչ մի կերպ չի համադրվում Ալբանիա - Աղվանքի հետ. Աղվանքը նույնիսկ գտնվում է ոչ թե Ալբանիայի տարածքում, այլ Հայաստանի»¹⁶²:

Վերոհիշյալ կարծիքին է ավելի վաղ հանգել նաև Ա. Յանովսկին: Վերջինս, մանրամասնորեն նկարագրելով Կովկասյան Ալբանիայի սահմանները, նշում է. «Կուրից հարավ ձգված է Հայաստանը»¹⁶³, կամ. «Հայաստանի հյուսիսարևելյան մասը կոչվել է Հայոց Աղվանք»¹⁶⁴: Կուրը Աղվանքի և Մեծ Հայքի միջև սահման են ճանաչում նաև գերմանացի գիտնական Վ. Թոմաշեկը¹⁶⁵ և իտալացի պատմաբան Մ. Բախը¹⁶⁶:

Հայ ուսումնասիրողներից Ս. Երեմյանը, Աս. Մնացականյանը, Բ. Ուլուբաբյանը, , Ա. Հակոբյանը, Բ. Հարությունյանը, Հ. Սվազյա-

¹⁶⁰ Крымский А., նշվ. աշխ., էջ 289-290:

¹⁶¹ Юшков С., նշվ. աշխ., էջ 132:

¹⁶² Նույն տեղում, էջ 137:

¹⁶³ Яновский А., նշվ. աշխ., էջ 128:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 180:

¹⁶⁵ Tomaschek W., Albania, Albanoi, Pouly-Wissowa-Kroll, Realencyclopädie der klassischen Altertumswissenschaft, Stuttgart, 1893, I, 1, S. 1303.

¹⁶⁶ Bais M., նշվ. աշխ., էջ 131-145, նույնի՝ The Southern border of Caucasian Albania (1st B.C. - 2nd A.D.): Calling up the sources. - Բազմալեզ. Վեցնտիկ, 2005, քիւ 1-4, էջ 331-345:

նը, Շ. Սմբատյանը և ուրիշներ¹⁶⁷, հենվելով սկզբնաղբյուրների վրա, Աղվանքի և Մեծ Հայքի միջև պետական սահման են ճանաչում Կուր գետը: Նրանց է հետևում մաս ռուս պատմաբան Ա. Նովոսելցևը¹⁶⁸:

Արևելագետ Կ. Տրեվերն իր ուսումնասիրության մեջ, չմանրամասնելով «Աշխարհացոյց»-ի և մյուս հեղինակների հաղորդումներն Աղվանքի հարավային սահմանի մասին, ընդունում է Կուրի սահմանային գետ լինելու հանգամանքը, բայց մ.թ.ա. II դ. – մ.թ. IV դդ.: Մեջքերելով Ստրաբոնի նկարագրությունը Արտաշեսյան նվաճումների մասին՝ նա գրում է. «Մ.թ.ա. II դարում Արտաշես I-ը (189–160 թթ.) Հայաստանին միացրեց մի շարք հարևան գավառներ, այդ թվում մաս Կուր գետի աջ ափը...»¹⁶⁹, ապա՝ «Բռնագրաված այդ գավառները (Շակաշեն գավառը, Ոսիքը, Արցախ ու Փայտակարան մահանգները) մինչև IV դարը մնացին Հայաստանի կազմում, իսկ հետո վերամիավորվեցին Աղվանքի հետ»¹⁷⁰: Վերջերս Կ. Տրեվերի վերը նշված տեսակետի կրկնությամբ հանդես եկավ Ադրբեջանի մախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեիքիևը¹⁷¹, իբր թե Կուր գետի աջափնյակը Մեծ Հայքին է միացվել արտաշեսյան նվաճումների

¹⁶⁷ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 67 և կից բարոնեզը, Մնացականյան Աս., նշվ. աշխ., էջ 21–42: Улубабян Б., О границах древнего Арванка. - ԲՀԵ, 1979, № 1, էջ 113–114; Акобян А., նշվ. աշխ., էջ 21–27: Հարությունյան Բ., Մեծ Հայքի բազմաբնույթի հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387–451 թթ., էջ 77–94, նույնի՝ Պետական մակարդակի բարձրացված կեղծարարությունը, Ադրբեջանի մախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեիքիևի «Գորիս-2010. արտուրդի քաղաքի տարեշրջանը» գիտաքաղաքական ածարարությունը, էջ 42, Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 63: Смбатян Ш., նշվ. աշխ., էջ 3–17, Վարդանյան Ա., Աղվանքի հարավային սահմանը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում, էջ 157–165, նույնի՝ «Աղվանքը մ.թ.ա. I – մ.թ. VI դդ. (Պատմաաշխարհագրական քննություն)», «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների քեկնածուի գիտական աատիճանի հայցման ատենախոսություն, սեղմագիր, Երևան, 2010, էջ 11–14:

¹⁶⁸ Новосельцев А., նշվ. աշխ., էջ 10–18:

¹⁶⁹ Тревер К., նշվ. աշխ., էջ 58, ծան. 8:

¹⁷⁰ Նույն տեղում, ծան. 8:

¹⁷¹ Տե՛ս Мехтиев Р., Горис – 2010: сезон театра абсурда, <http://www.1news.az/>.

հետևանքով¹⁷²: Մակայն, հայտնի է, որ սխալը կրկնվելով, ճշմարտություն չի դառնում:

Ուսումնասիրողներն արդեն ցույց են տրվել (Աս. Մնացականյան, Բ. Ուլուբաբյան, Բ. Հարությունյան, Ա. Հակոբյան, Հ. Սվազյան և այլք) նման կարծիքի անհիմն լինելը, քանի որ, Ստրաբոնի այդ հաղորդումներից հնարավոր չէ նման եզրակացության հանգել: Խոսելով արտաշեսյան նվաճումների մասին¹⁷³, Ստրաբոնը, նշում է. «Մեդիացիներից նրանք անջատեցին Կասպիանեն, Փավնիտիսը և Բաստրոպեդան, իբերներից Պարիադրեսի լեռնալանջերը, Խորյենեն և Գոգախենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, Դեքսենեն (Դերջանը), Ակիլիսենեն (Եկեղիքը), Տամոնիտիսը (Տմորիքը...)»¹⁷⁴: Ասվածից պարզ երևում է, որ Ստրաբոնի հաղորդման մեջ խոսք չկա Հայոց Արևելից կողմանց նահանգների՝ Ուտիքի և Արցախի և Շակաշենի մասին: Վերջիններս ոչ թե բռնագրավված են եղել Աղվանքից և ապա IV դարում, հետ վերադարձվել, այլ հայկական պետականության ողջ ընթացքում, բացառությամբ մի քանի տարվա¹⁷⁵, դրանք եղել են Մեծ Հայքի կազմում և նրանից անջատվել են միայն V դ. երկրորդ կեսին՝ կապված Այսրկովկասում վարչական փոփոխությունների հետ:

Հակառակ տեսակետ են պնդում աղբյուրներից հեղինակները: Նրանց մեծ մասը գտնում է, որ բոլոր ժամանակներում Աղվանքի հարավային սահմանն անցել է Արաքս գետով և դրանով, փաստորեն,

¹⁷² Ռ. Մեհրիկի արժարժած հակահայկական հարցերի բննադատությունը (տե՛ս Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, Աղբյուրների նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիկ Մեհրիկի «Գորիս-2010. արտուրդի բատրոնի տարեշրջանը» գիտաբաղադրական ածպարարությունը, էջ 24–57, Շահնագարյան Ա., Մարտահրավեր գիտությանը, Կրկին Ռամիկ Մեհրիկի «գլուխգործոցի» մասին, էջ 164–183:)

¹⁷³ Հ. Սվազյանը գտնում է, որ Կասպիանե-Փայտակարան, ինչպես նաև Բաստրոպեդան և Փավնիտիսն Արտաշեսին են անցել ոչ թե ինչ որ նվաճումների միջոցով, ինչպես, մինչև այժմ ենթադրվել է, այլ որպես ժառանգություն՝ հաղթողի իրավունքով (տե՛ս Սվազյան Հ., Արտաշես Ա-ի կողմից Կասպիանե-Փայտակարան մարզի «նվաճման» հարցի շուրջ (ըստ Մովսես Խորենացու տվյալների). – ԼՀԳ, 1991, թիվ 3, էջ 55–59):

¹⁷⁴ Страбон, XI, XIV, 15:

¹⁷⁵ Բուզանդ, Ե, գլ. ԺԳ, էջ 320–322:

հարավային սահմանի հարցը համարում են լուծված: Դեռ ավելին, ինչպես նշել ենք, Ձ. Բունիաթովն Աղվանքի մաս է համարում նաև Սյունիքը¹⁷⁶: Սակայն հայտնի է, որ այն երբևէ Աղվանքի կազմի մեջ չի մտել, այլ Սյունյաց իշխան Վահանը հարկահավաքման գործը Դվինից սոսկ տեղափոխել է Ատրպատական: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին որ դա Սյունյաց իշխանների դիրքը Այսրկովասում ամրապնդելու պարսկական տիրապետության քաղաքական ծրագրի արտահայտությունն էր¹⁷⁷: Այդ մասին Մեքենսը հաղորդում է. «Ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի...»¹⁷⁸: Սակայն Փայտակարանից որևէ կախում ունենալը դեռևս չէր նշանակում, թե Սյունիքը ենթարկվում էր Աղվանքին: Ղազար Փարպեցին նկարագրելով 450–451 թթ. կատարվող իրադարձությունները նշում է. «Միհրներսէս Արեաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝ գումդ կազմէ և ընդ Աղուանս արծակէ ի Հայս. զոր և Աղուանից ազատքն, որ ուխտակիցք էին Հայոց՝ ստեալ փութացուցանէին հասանել առ ինքեանս և անդէն յԱղուանս ի դիմի հարկանել նոցա պատերազմաւ»¹⁷⁹: Ինչպես իրավացիորեն նկատել է Բ. Հարությունյանը. «Ղազար Փարպեցու այս տեղեկության մեջ արժեքավոր է այն հանգամանքը, որ Փայտակարանը V դ. կեսերին վարչականորեն չէր մտնում ո՛չ Աղվանքի, և ո՛չ էլ Հայկական մարզապանության մեջ»¹⁸⁰: Այս իրավիճակը երկար չշարունակվեց: Հայոց իշխան Համազասպ Մամիկոնյանի օրոք (654–661 թթ.) Սյունիքը կրկին միավորվեց Հա-

¹⁷⁶ Бунятов З., Размышления по поводу книги А. Н. Тер-Гевондяна “Армения и Арабский халифат”. – “Известия АН АЗССР”, 1977, 4, с. 116.

¹⁷⁷ Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, էջ 69:

¹⁷⁸ Մեքենս, գլ. Ը, էջ 67–68:

¹⁷⁹ Փարպեցի, էջ 63:

¹⁸⁰ Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, էջ 68:

յաստանի հետ¹⁸¹:

Աղբբեջանցի հեղինակներից՝ Զ. Ալիևը գտնում է, որ Կուրը Մեծ Հայքի և Աղվանքի միջև սահման է եղել մ.թ. II դարից, իսկ մինչ այդ Աղվանքի հարավային սահմանն Արաքս գետն էր¹⁸²: Սակայն սկզբնաղբյուրներում իր տեսակետն հաստատող վկայություններ չգտնելով, նա վերափոխում է Ստրաբոնի տեղեկությունը, քե «Արաքսը հոսում է մինչև Ալբանիայի սահմանները»¹⁸³, (որից երևում է, որ Արաքսը չէ Աղվանքի սահմանը, այլ իր հոսանքով ընդամենը հասնում է մինչև նրա սահմանները), և գրում. «Արաքսը հոսում, մտնում է Ալբանիայի սահմանները»¹⁸⁴: Այսպես աղճատելով հաղորդումը՝ Զ. Ալիևը նպատակ է հետապնդում Արաքսը համարել Աղվանքի գետերից մեկը և դրանով հող նախապատրաստել այն երկու պետությունների միջև սահման ներկայացնելու համար: Այսքանից հետո էլ դեռ մեղադրում է այն հեղինակներին, որոնք անտիկ հեղինակների աշխատություններից իբր, միտումնավոր ոչ ճիշտ թարգմանություններ են կատարել: Էլ չենք խոսում այն մասին, որ հենց ինքն է կամայականորեն թարգմանել հունա-հռոմեական հեղինակների հաղորդումները, մասնավորապես՝ Աղվանքի մասին Պտղոմեոսի ու Պլինիոսի հաղորդումները, ձգտելով դրանք ներկայացնել իրեն ցանկալի ձևով: Սակայն, ինչպես վերը ցույց տվեցինք, Պտղոմեոսը, Պլինիոսը և մյուս հեղինակները հստակորեն տարանջատել են Կովկասյան Ալբանիան Կուրի աջափնյա հայկական գավառներից:

Խնդրո առարկա հարցին յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել ոչ անհայտ Ֆ. Մամեդովան: Ցանկանալով Աղվանքի սահմանները հարմարեցնել նախկին Աղբբեջանական ԽՍՀ-ի տարածքի հետ, նա չի զլանում հայ և անտիկ հեղինակների հաղորդումները՝ Կուրի որպես Մեծ Հայքի ու Աղվանքի միջև սահմանային գետի մասին համա-

¹⁸¹ Տեր-Մանդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, 1996, էջ 89:

¹⁸² Алиев К., *նշվ. աշխ.*, էջ 90, 122:

¹⁸³ Страбон, XI, XIV, 4.

¹⁸⁴ Алиев К., *նշվ. աշխ.*, էջ 114:

րել հակասական և պատմականորեն սխալ: Ըստ նրա՝ Ստրաբոնի, Փավստոս Բուզանդի և Անանիա Շիրակացու հաղորդումները Կուրի և Արաքսի միջագետքը Մեծ Հայքին պատկանելու մասին անհիմն են¹⁸⁵: Իր տեսակետները համոզիչ դարձնելու համար Ֆ. Մամեդովան Աղվանքի հարավային սահմանի վերաբերյալ գրում է, թե, իբր, Մովսես Կաղանկատվացին և Մովսես Խորենացին Աղվանքի հարավային սահման են ճանաչում Արաքս գետը¹⁸⁶: Մի փոքր անց էլ եզրակացնում է. «...համաձայն «Աշխարհացոյց»-ի Ալբանիայի սահմանը շարունակում է մնալ Արաքս գետը»¹⁸⁷: Հարկ է նկատել, սակայն, որ Մովսես Խորենացին նկարագրելով Աղվանքը, այն է՝ Հայոց Արևելից կողմանց սահմանները, նշում է. «Ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ...»¹⁸⁸: Մովսես Կաղանկատվացին էլ գրում է. «Ապա կարգեաց նոցա առաջնորդ և վերակացուս, յորոց զլիսաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլեռինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ»¹⁸⁹: Մովսես Կաղանկատվացու աշխատության այս հատվածը վկայում է, որ այն Հայոց Արևելից կողմանց պատմությունն է, և որ այստեղ նշված են այդ կողմերի սահմանները¹⁹⁰: Թվում է, թե հարցը փակված է, քանի որ վերը նշված տարածքում գտնվում են հայկական Ոստիք և Արցախ նահանգները, իսկ Հնարակերտ ամրոցը գտնվում է Կուրի աջ ափին¹⁹¹: Մովսես Խորենացու այս և Մով-

¹⁸⁵ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 45–46, 53, 119, 124, 145–146; նույնի՝ Об истотической географии Кавказской Албании, Армении и албанском этносе, udi.az/articles/0052.htm/.

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 145:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 150:

¹⁸⁸ Խորենացի, Բ, գլ. Ը, էջ 113:

¹⁸⁹ Կաղանկատվացի, Ա, գլ. Դ, էջ 8:

¹⁹⁰ Սվազյան Հ., «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու. – ԲՀԱ, 1973, թիվ 1, էջ 231:

¹⁹¹ Ինչպես Աղվանքի, այնպես էլ Մեծ Հայքի սահմանային զավառների ու բնակավայրերի վերաբերյալ այլ «տեսակետ» ունի Դ. Մուսխելիշվիլին: Վերջինս, անտեսելով

սես Կաղանկաթվացու մնանատիպ հաղորդումները վերաբերում են հայոց աշխարհում տեղի ունեցող վերափոխումներին՝ Հայոց թագավորի կողմից Հայաստանի Արևելից կողմերի վրա կառավարիչ նշանակելուն՝ «...ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն... Հնարակերտ» ընկած տարածքում: Սա Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մասն էր և ոչնչով չի կապվում Աղվանքի հետ:

Ահա այսպես «լուծված» համարելով երկու երկրների միջև եղած սահմանային հարցը՝ Ֆ. Մամեդովան փորձում է դրանով իսկ աղվանացիների ծագումնաբանությունը կապել Հայոց թագավորի կուսակալ Առանի հետ՝ վերջինիս ներկայացնելով աղվանացիների նախահայր: Սակայն և ոչ մի լուրջ հետազոտողի մոտ կասկած չի կարող առաջացնել այն հանգամանքը, որ «նախահայր» կարգված Առանը լոկ կառավարիչ էր Մեծ Հայքի արևելյան նահանգներում: Իսկ եթե դրան ավելացնենք և այն, որ Առանն ինքը պատմական անձ չէ, այլ երկրամասի «Առան» տեղանվան ծագումը բացատրելու համար անձնավորված կերպար¹⁹², ապա ավելի պարզ ու հասկանալի կլինի, թե որքան անիրական հիմքի վրա է Ֆ. Մամեդովան կառուցում իր տեսակետները:

Իսկ ինչ վերաբերում է Ֆ. Մամեդովայի կողմից «Աշխարհացոյց»-ին վերագրվող այն մտքին, թե, իբր, Աղվանքի սահմանը Մեծ Հայքի հետ «շարունակում է մնալ Արաքս գետը», ապա դա կեղծիք է, քանի որ «Աշխարհացոյց»-ն ասում է 428 թ. հետո եղածի մասին և

լով սկզբնաղբյուրների տեղեկությունները, փորձում է Հնարակերտ բերդաքաղաքը տեղադրել Տավուշ գետի ստորին հոսանքի շրջանում (տե՛ս *Мусхелишвили Д., К вопросу о локализации Хунана (Хнакерта). - "Археологические памятники феодальной Грузии", Тбилиси, 1974, т. II, с. 275-277*), դրանով իսկ փորձելով Մեծ Հայքի սահմանային կետ հանդիսացող Հնարակերտը ներառել Վրաստանի կազմում: Սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա կատարելով մանրակրկիտ վերլուծություն՝ Ա. Շահնազարյանը ցույց է տվել որ Հնարակերտը գտնվել է Խրամի և Կուրի գետախառնուրդում (տե՛ս *Շահնազարյան Ա., Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 96-97*):

¹⁹² Սվազյան Հ., Խորենացիական ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղը և նրա պատմական ատաղձը. - Շուշին հայոց քաղաքակրթության կենտրոն (Շուշիի

Անանիա Շիրակացին, ինչպես մենք վերը ցույց տվեցինք, մեկից ավելի անգամ է շեշտում բուն Աղվանքի սահմանը Կուր գետով անցնելու մասին¹⁹³: Նմանօրինակ հակապատմական և հակագիտական անհիմն հաղորդումներով լեփլեցուն են ոչ միայն Ֆ. Մամեդովայի, այլև աղբյուրաբանի մյուս հեղինակների աշխատությունները:

Որպեսզի խնդրո առարկա հարցում չլինի տարակարծություններ, մեկ անգամ էլ կրկնենք. հայ մատենագիրների հաղորդած տվյալներով բուն Աղվանքի տարածքը հարավում վերջացել է Կուր գետով, այլ ոչ թե Արաքս գետով: Եվ Աղվանք ասելով՝ նրանք հասկացել են Արաքս գետից Հնարակերտ ընկած տարածքը՝ այն կոչելով «...աշխարհն Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց»¹⁹⁴:

Ուսումնասիրողները միակարծիք չեն մաս Աղվանքի հյուսիսային սահմանի հարցում:

Անանիա Շիրակացին հստակորեն նկարագրել է Աղվանքի հյուսիսային սահմանը: Խնդրո առարկա երկիրը, ըստ նրա, հյուսիսում սահմանակցում էր Սարմատիային: «Աշխարհ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք,- գրում է նա,- յեկից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով...»¹⁹⁵: Մինչ այդ էլ, անդրադառնալով Սարմատիայի սահմաններին, «Աշխարհացոյց»-ի հեղինակը նշում է. «...Աշխարհ Ասիոյ Սարմատացոց հասարակն է... առ Կաւկասին լերինսն՝ առ Վրօք եւ Աղուանիւք, մինչեւ ցԿասքից ծովն, ի մոտս Սըւանաս գետոյ...»¹⁹⁶:

Հայկական աղբյուրներից Աղվանքի և Սարմատիայի սահմանային խնդրին հարևանացիորեն անդրադարձել է Ղազար Փարպեցին՝ կապված դեպի Աղվանք Վարդան Մամիկոնյանի կատարած արշավանքի հետ. «...պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից և Հոնաց...»¹⁹⁷:

ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2007, էջ 5-19:

¹⁹³ «Աշխարհացոյց», էջ 25, 28, 29:

¹⁹⁴ Ուռհայեցի, էջ 246:

¹⁹⁵ «Աշխարհացոյց», էջ 28:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 25:

¹⁹⁷ Փարպեցի, գլ. ԼԵ, էջ 66:

I դարի արշալույսին, նկարագրելով Աղվանքի սահմանները, մասնավորապես՝ հյուսիսայինը, Ստրաբոնը նշում է. «Կովկաս լեռը հարավից բաժանում էր Ալբանիան ու Իբերիան, իսկ հյուսիսից՝ սարմատական հարթությունները»¹⁹⁸։ Իր աշխատության մեկ այլ տեղում էլ ավելացնում է. «Հյուսիսայինը շրջապատված է Կովկասյան լեռներով (որովհետև այդ լեռները բարձրանում են հարթության վրա և կոչվում են, հատկապես նրանց այն մասը, որ ծովի մոտ է, Կերաունյան լեռներ)»¹⁹⁹։

Հետագայում Պտղոմեոսն էլ, խոսելով Աղվանքի մասին, նշում է. «Աղվանքը հյուսիսից սահմանակից է Սարմատիայի մի մասին, արևմուտքից՝ Իբերիային, հարավից՝ Մեծ Հայքի այն մասին, որն ընկած է Իբերիայի հետ նրա ունեցած սահմանից մինչև Հյուրկանյան (Վրկանից - Ա. Վ.) ծով Հյուրոս գետի գետաբերանը...»²⁰⁰։ Իսկ Պլինիոս Ավագն ավելացնում է, որ Ալբանիայի ծովամերձ տարածքից վերև, այսինքն՝ հյուսիս, տարածված են Սարմատիայի հողերը²⁰¹։

Եզրակացությունը մեկն է. Կովկասյան Ալբանիան հյուսիսում սահմանակցում է Սարմատիայի հետ, ինչը վկայում է «Աշխարհացոյց»-ի հեղինակը, և ինչը հաստատվում է թե՛ անտիկ, թե՛ հայ հեղինակների հաղորդումներով։

Ուսումնասիրողներն ընդունում են Աղվանքի և Սարմատիայի հարևանությունը, սակայն որոշ հետազոտողներ փորձում են արհեստականորեն առաջ տանել Աղվանքի հյուսիսային սահմանը, որով էլ տեղաշարժում են Սարմատիայի սահմանները։ Այսպես, հենվելով Պտղոմեոսի և «Աշխարհացոյց»-ի այն հաղորդման վրա, ըստ որի Սոանա գետով վերջանում է Աղվանքի սահմանը հյուսիս-արևելքում, ոմանք առանց որևէ հիմնավորման Սոանա գետը փորձում են նույնացնել Թերեք գետի հետ՝ Աղվանքի կազմում ընդգրկելով ողջ

¹⁹⁸ Страбон, XI, V, I.

¹⁹⁹ Նույն տեղում։

²⁰⁰ Латышев В., т. I, с. 242; Ptolemae; գիրք V, գլ. 9, 7, գ V, 1։

²⁰¹ Նույն տեղում, էջ. 169։

Դադստանը²⁰²:

Այս տեսակետին է հարում նաև Ք. Ալիևը՝ Կերաունյան լեռները նույնացնելով Սամուրի լեռնաշղթայի, իսկ Սոանա գետը՝ Սամուր գետի հետ²⁰³: Վերոհիշյալ ուսումնասիրողներից հետ չմնալու համար, նա ևս Դադստանը ներառում է Աղվանքի կազմում՝ իր տեսակետն արդարացնելու համար անհիմն վկայակոչելով անտիկ հեղինակներին²⁰⁴:

Ֆ. Մամեդովան նույնպես Դադստանը տեսնում է Աղվանքի կազմում. «Մ.թ.ա. III դարից, - գրում է նա, - Աղվանքի հյուսիսային սահմանները հասել են Կովկասյան գլխավոր լեռնաշղթային, Սամուրի լեռնաշղթայի հյուսիսային նախալեռները, արևմուտքում՝ Իդրի և Ալազան գետերի վերին հոսանքը, կամ այժմյան Դերբենդ»²⁰⁵: Չբավարարվելով դրանով՝ նա նշում է, որ ժամանակ առ ժամանակ հյուսիսային սահմանը կարող է հասած լինել Սուլակ գետը և ավելի հեռու:

Մի շարք պատմաբաններ ևս Աղվանքի հյուսիսային սահմանը հասցնում են Դերբենդ²⁰⁶:

Ա. Յանովսկին Սոանա գետը նույնացնում է ներկայիս Մումգայիք գետի հետ և Աղվանքի հյուսիսային սահմանը հասցնում է այդ գետը²⁰⁷: Հ. Սվազյանն էլ գտնում է, որ Աղվանքի հյուսիսային սահմանը կազմել է ոչ թե Կովկասյան լեռնաշղթայի ողջ զանգվածը, այլ նրա հարավային ճյուղը կազմող Կերաունյան լեռները²⁰⁸:

Այսպիսով՝ պարզվում է, որ Աղվանքի հյուսիսային հարևանը եղել է Սարմատիան և երկուսի միջև սահման էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային լեռնազանգվածը, որը գտնվել է ծովի մոտ և

²⁰² Юшков К., նշվ. աշխ., էջ 138, 148, Левинатов В., նշվ. աշխ., էջ 78:

²⁰³ Алиев К., նշվ. աշխ., էջ 97, 100:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 107-108:

²⁰⁵ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 144.

²⁰⁶ Բարխուդարիանց Մ., նշվ. աշխ., էջ 36, Халилов Дж., նշվ. աշխ., էջ 11:

²⁰⁷ Улубабян Б., նշվ. աշխ., էջ 114-118, 121; Акопян А., նշվ. աշխ., էջ 35:

²⁰⁸ Яновский А., նշվ. աշխ., էջ 97:

²⁰⁸ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 66:

կոչվել է Կերաունյան լեռներ: Պոմպոնիոս Մելան Կերաունյան է կոչում Կասպից ծովին հարող լեռները²⁰⁹: Իսկ Պտղոմեոսն այն անվանում է Կովկասյան²¹⁰:

«Աշխարհացոյց»-ի հեղինակը հավաստում է Աղվանքի հյուսիսային սահմանը Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղով անցնելու իրողությունն ավելի մանրամասն գրելով. «Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն գնայ դէպ ուղիս կոյս, յորում Շրւան եւ Խսրւան ազգ՝ մինչեւ ցխորալէմ. եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ է դէպ ուղիղ ի հիւսիսի՝ յԱթլ գետ, եւ ապա նոյն բազուկն գնայ զելիւք հիւսիսոյ, յորում բնակեալ են Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փքանակք, Բազանք...»²¹¹: Թվարկված ժողովուրդների նկարագրությունն «Աշխարհացոյց»-ի հեղինակը տալիս է Սարմատիայի բաժնում²¹²: Ինչպես տեսնում ենք, վիճահարույց հարցն Անանիա Շիրակացին ավելի մանրամասն է նկարագրել, քան հունա-հռոմեական մատենագիրները: Կրկնենք, ըստ նրա, Աղվանքի հյուսիսային սահմանը Սարմատիայի հետ անցնում էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղով:

Այսպիսով՝ հունա-հռոմեական հեղինակների և «Աշխարհացոյց»-ի հաղորդումներից ելնելով՝ մենք ևս միանում ենք այն ուսումնասիրողների կարծիքին, որոնք գտնում են, որ Աղվանքի հյուսիսային սահմանը կազմել է ոչ թե Կովկասյան լեռնաշղթայի ողջ զանգվածը, այլ նրա հարավային ճյուղը, որը հայտնի է Կերաունյան անունով, և որին Պտղոմեոսն ամբողջ լեռնաշղթայի անունով պարզապես կոչում է Կովկաս: Մտրաբոնի համար Կերաունյան լեռները Կովկասի «ուղիղ» գնացող բազուկն է²¹³: Վերոհիշյալ ուղիով, սակայն, չի ավարտվում Աղվանքի հյուսիսային սահմանը, քանի որ, ըստ Պտղո-

²⁰⁹ Латышев В., т. I, с. 238.

²¹⁰ Նույն տեղում, էջ 242:

²¹¹ «Աշխարհացոյց», էջ 27:

²¹² Նույն տեղում, էջ 25-27:

²¹³ Страбон, XI, II, I.

մեռսի հաղորդման, Աղվանքի արևելյան սահմանակետը հասնում էր մինչև Սոանա գետի գետաբերանը²¹⁴: «Աշխարհացոյց»-ը, որը, ի տարբերություն հունա-հռոմեական պատմիչների ցաքուցրիվ հաղորդումների, տալիս է Սարմատիայի մանրամասն նկարագրությունը, նույն գետը կոչում է Սոանաս և այն համարում որպես Սարմատիայի հարավային սահման. «ԳԿասքից ծովն, ի մոտս Սըւանաս գետոյ»²¹⁵: Հ. Սվազյանը գտնում է, որ Սոանան և Սուանասը միևնույն գետի անվան տարբեր հնչողություններն են: Ըստ նրա, Աղվանքի հյուսիսային սահմանը Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղի ընդհատվելուց հետո շարունակվել է դրա մոտերքից սկիզբ առնող Սոանա գետի ընթացքով ու ավարտվել նրա գետաբերանի մոտ՝ Կասպից ծովի արևմտյան ափին: Այնուհետև Հ. Սվազյանը, շարունակելով իր միտքը, Սոանա գետը, ինչպես Ա. Յանովսկին, նույնացնում է ներկայիս Սումգայի գետի հետ և գալիս է այն վերջնական եզրակացության, որ Կերաունյան ճյուղից հետո վերջինս եղել է Աղվանքի հյուսիսային սահմանի շարունակությունը²¹⁶:

Անտիկ հեղինակները, մասնավորապես, Ստրաբոնը և Պլինիոս Ավագն Աղվանքի արևմտյան սահմանը համարում են Ալազան գետը: Ըստ Ստրաբոնի, «Ճանապարհն Ալբանիայից (*դեպի Իբերիա* – Ա. Վ.) անցնում է ժայռերի մեջ առաջացած քարե արահետներով, ապա Կովկասից հոսող Ալազան գետի գոյացրած հովտի միջով»²¹⁷: Պլինիոս Ավագն էլ նշում է. «Կուրից սկսած (*ողջ հարթությունը* – Ա. Վ.) բնակեցնում է ալբանացիների ցեղը, ապա իբերների, որն առաջիններից բաժանվում է Կովկասյան լեռներից Կուր հոսող Օկազան (*Ալազան* – Ա. Վ.) գետով»²¹⁸: Վերոհիշյալ հաղորդումներին, եթե ավելացնենք նաև Պտղոմեոսի այն հաղորդումը, որ արևմուտքից Ալբանիան սահմանակցում էր Իբերիայի հետ, ապա լիովին պարզ

²¹⁴ Латышев В., т. I, с 242.

²¹⁵ «Աշխարհացոյց», էջ 25:

²¹⁶ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 66–67:

²¹⁷ Страбон, XI, III, 5.

²¹⁸ Латышев В., т. II, с. 181.

կղառնա, որ Աղվանքի արևմտյան սահմանը եղել է Ալազան գետը, իսկ արևմտյան հարևանը եղել է Իբերիան²¹⁹:

Առաջին հայացքից թվում է, թե հարցը պարզ է և լուծված: Սակայն հավաստի փաստերը ցույց են տալիս, որ արևմուտքում հայկական սահմանը դեպի Աղվանք է խորացած եղել՝ իր մեջ ընդգրկելով ողջ Կամբեճան գավառը: Ըստ «Աշխարհացոյց»-ի, ինչպես վերը տեսանք, Կամբեճանն Աղվանքի գավառներից էր: Թվարկելով երկրի գավառները, Անանիա Շիրակացին Եխնի (Խենի) գավառից հետո նշում է՝ «Եւ Քամբեճան առ Կուրա»²²⁰: Սակայն այլ աղբյուրները, այդ թվում և անտիկ շրջանի, Կամբեճանին վերագրում են այլ պատկանելիություն:

Կամբեճան գավառի²²¹ մասին առաջին հաղորդումը պատկանում է Ստրաբոնին, ըստ որի՝ «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»²²²: Մեկ այլ առիթով հույն հեղինակը գրում է. «Անցումը Իբերիայից Աղվանք ձգված է Կամբեճանի անջուր և քարքարոտ գավառով դեպի Ալազան գետը»²²³: Երրորդ անգամ

²¹⁹ Նույն տեղում, հ. 1, էջ 242:

²²⁰ «Աշխարհացոյց», էջ 29:

²²¹ Պատմական Կամբեճան գավառը ներկայիս Ջաբաթալայի տարածքն է: Ավանդույթի համաձայն Ջաբաթալա անվանումն առաջացել է Ջաբար և Թալայ երկու եղբայրների անունների միացումից (տե՛ս Էփրիկեան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903–1905, էջ 767):

²²² Страбон, XI, IV, I. Հակառակ Ստրաբոնի վերը նշված հաղորդումների՝ Դ. Մուսխելիշվիլին, «հենվելով» Ստրաբոնի այս հաղորդման վրա, նշում է. «Այդ տեղեկության արժեքը կայուն է այնքանով, որ պարտադրում է պատկերացնել թե Արևելա-Վրացական ցեղերը մ.թ.ա. I դարից մի քանի դար առաջ խորացել էին Կամբեճանի հյուսիսարևելյան մասում» (տե՛՛ս Мусхелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шакы и Гогарена), с. 18): Այդ հաղորդման մեջ Ստրաբոնն ընդհանրապես չի հիշատակում վրացական ցեղերին: Բայց Դ. Մուսխելիշվիլին, փորձելով հող նախապատրաստել իր համար շահեկան եզրակացության համար, նախ, Կամբեճանի մի մասը, ապա գավառն ամբողջությամբ հայտարարում է վրացական տարածք, թեպետ սկզբնաղբյուրներում չկան համապատասխան հաղորդումներ:

²²³ Страбон, XI, IV, 5.

Ստրաբոնը Կամբեճանին անդրադառնում է Հայաստանի նկարագրության մեջ. «Հայաստանի ծայրագավառներից է Փավենեն, ինչպես Կոմիսենեն և Օրքիստենեն...: Խորձենեն և Կամբեջանը ամենից հյուսիսայիններն են և առավել ձյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կոլխիդային»²²⁴:

Այսպիսով՝ Ստրաբոնը երեք անգամ անդրադառնալով Կամբեճանին, երկու անգամ այն նկարագրում է որպես Հայաստանի գավառ, իսկ երրորդ անգամ նշում, որ նրա վրայով է ձգվում Իբերիա – Աղվանք ճանապարհը²²⁵: Ելնելով Ստրաբոնի հաղորդումներից՝ միանգամայն հստակ կարելի է ասել, որ պատմական Հայաստանի այս գավառը գտնվել է Կուր գետից հյուսիս՝ Աղվանքի և Իբերիայի մեջտեղում:

Կամբեճանի պատկանելիության մասին տեղեկություններ ենք գտնում նաև Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի աշխատություններում: Պոմպեոսը դեպի Աղվանք արշավելիս անցել է Կամբեճանով և հետո միայն Ալազան գետի մյուս ափին, ինչ-որ տեղ հանդիպել աղվանական բանակին²²⁶: Հարց է ծագում, եթե գավառը պատկանում էր Աղվանքին, ապա ինչու՞ աղվանացիները չէին պաշտպանում այն և հռոմեացիներին թողնում են անարգել անցնել դրա միջով: Կարծում ենք, որ Կամբեճանը Հռոմի «բարեկամ և դաշնակից» Մեծ Հայքի տարածքն էր, և լեզեոններն անարգել անցել են գավառով ու Ալազանն անցնելուց հետո միայն շփման մեջ մտել աղվանացիների հետ:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում Կամբեճան գավառը հիշատակվում է Աղվանքի գավառների շարքում, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դարում, իսկ Կամբեճանը Մեծ Հայքի կազմում եղել է մինչև 387 թ.: Աշխարհագրական այս իրողությունն էլ արձանագրել է Անանիա Շիրակացին՝ իր վերոհիշյալ հա-

²²⁴ Նույն տեղում, XI, XIV, 4:

²²⁵ Մնացականյան Աս., նշվ. աշխ., էջ 49–50:

²²⁶ Плутарх, Помпей, XXXV, Դիոն Կասսիոս, XXXVII, III, 6:

դորդմամբ: Իսկ որ դա այդպես է եղել, ցույց է տալիս Ղևոնդ պատմիչն ու ժամանակների իրադարձությունները մատնանշելիս՝ Կամբենանը համարելով Աղվանքի գավառներից: Նա գրում է՝ «*Խազարները – Ա. Վ.*» սփռեալ գասպատակս իւրեանց, ըստ հիւսիսոյ գետոյն հօգօրագունի, որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս զՀեջար, զՔաղա, զՈստանի, զՄարգալանեան²²⁷, զՀաբանդ, զԳեղատու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխնան, զԽողմար»²²⁸, շեշտելով, որ թվարկված գավառներն Աղվանից աշխարհում են: Ինչպես կտեսնենք ստորև, Աղվանից մարզպանության տրոհումից հետո Կամբենանը գտնվել է հայ իշխանական ընտանիքների տիրապետության ներքո:

Հետագա ուսումնասիրողները միակարծիք չեն Կամբենանի պատկանելիության հարցում: Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը, ելնելով աղբյուրների մանրակրկիտ քննությունից, գտնում է, որ Կամբենանը «Հայաստանի ամենեն հյուսիսային ձյունաշատ մեկ տեղն էր...»²²⁹: Աս. Մնացականյանը, Բ. Ուլուբաբյանն ու Է. Դանիելյանը գավառը տեսնում են Մեծ Հայքի կազմում²³⁰: Հենվելով Ստրաբոնի վերը հիշատակված տեղեկությունների վրա՝ Ա. Տեր-Ղևոնդյանը փաստում է. «Կամբենանը եղել է հայ Արշակունիների թագավորության մի մասը և նրա բնակչությունը հայկական է եղել»²³¹: Հ. Սվազյանը գտնում է, որ մինչև մ.թ. II դարը Կամբենանը մաս է կազմել Մեծ Հայքին, ապա անցել է Աղվանքին²³²: Ա. Հակոբյանը գավառը համարում է Աղվանից թագավորության մաս²³³: Գ. Ստեփանյանը Կամբե-

²²⁷ Ստ. Կանայեանցն առաջարկում է այս երեք անվանումները կարդալ որպես մեկ գավառի անուն՝ Քապաղա Ոստան ի Մարգալանեան (տես Կանայեանց Մա., նշվ. աշխ., էջ 172):

²²⁸ Ղևոնդ, էջ 132:

²²⁹ Հյուբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, քարգմանեց Հ. Բ. Պիլեգիլեան, Վիեննա, 1907, էջ 18–19:

²³⁰ Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 48–55, Ուլուբաբյան Բ., Դավազներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 31, Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 43:

²³¹ Ter-Ghevondian A., նշվ. աշխ., էջ 673:

²³² Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 70:

²³³ Акопян А., նշվ. աշխ., էջ 28–30:

ճան գավառը տեսնում է Մեծ Հայքի թագավորության կազմում²³⁴: Հ. Խորիկյանը վերջերս լույս տեսած իր աշխատանքում գտնում է, որ Կամբեճան մ.թ.ա. I (գուցե II դարից) – մ.թ. I դարերում է գտնվել Հայաստանի կազմում: Եվ շարունակելով եզրակացնում, որ II դարում Կամբեճան անցնում է Աղվանքին²³⁵: Գ. Մելիքիշվիլին և Գ. Մուսխելիշվիլին կարծում են, որ գավառը բաժանված է եղել երեք հարևանների միջև²³⁶: Ի դեպ, հետագա աշխատանքներում վրաց հեղինակները նախ գտնում են, որ Կամբեճան գավառը մինչև մ.թ.ա. III դարը չէր կարող չայատկանել Վրաստանին, քանի որ այդ ժամանակաշրջանը համարում են վրացական թագավորության շրջան, մայա շարունակելով՝ գրում են. «Կամբեճանը Հայաստանի նահանգ դարձավ վերջինիս հզորացման ժամանակաշրջանում» մ.թ.ա. II – մ.թ.ա. I դարերի կեսերին²³⁷: Աղբրեջանցի հեղինակները և, մասնավորապես, Ֆ. Մամեդովան ինչպես սահմանային մյուս հարցերում, այնպես էլ Կամբեճանի խնդրում, առանց հաշվի առնելու անտիկ հեղինակների հաղորդումները, կամայական մեկնաբանություններով ինչ-որ դեպքեր յուրովի բացատրելով փորձում են, գավառը հայտարարել «աղվանական մարզ»²³⁸:

Այս առումով, նախ, ճիշտ չենք համարում վրաց հեղինակների տեսակետը, քանի որ Գ. Մելիքիշվիլին Կամբեճանը սկզբնապես համարում էր վրացական, ապա, իբր թե, Տիգրան II-ը այն նվաճել է վրացիներից: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ նա գրում է. «Նշանավոր Տիգրան II-ից հետո Հայաստանը թուլացավ...: Դրան համապատասխան հայկական իշխանությունն այդ գավառի վրա,

²³⁴ Ստեփանյան Գ., Բարվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 6, ծան. 2:

²³⁵ Խորիկյան Հ., Աղվանից մարզականության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի. – Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Երևան, 2011, էջ 72:

²³⁶ Меликишвили Г., К истории древней Грузии, с. 123; Мухелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шаки и Гогарена), с. 19.

²³⁷ «Очерки истории Грузии», т. I, Тбилиси, 1989, с. 270.

²³⁸ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 93–94, 137–143.

ըստ երևույթին, մոտենում էր իր վախճանին, իսկ քարթլիները (*վրացիները* – Ա. Վ.) ամրապես տիրում են նրան (*Կամբեճանին* – Ա. Վ.)²³⁹։ Այս տեսակետը, սակայն, քննադատության չի դիմանում, քանի որ, ինչպես ցույց տվեցինք, մեր թվարկության սկզբում Ստրաբոնը Կամբեճանը ճանաչում է Մեծ Հայքի մաս²⁴⁰։ Նրա այս տեղեկության հիման վրա է Աս. Մնացականյանը Կամբեճանի զբաղեցրած տարածքն՝ անվանում Անդրկուրյան Հայք, որը «Իրենից ներկայացնում է այն աշխարհագրական վայրը, որով Հայաստանը շփվում է Վրաստանի և Ադվանքի հետ։ Ուստի և պատմական Հայաստանի այս գավառը ոչ այլ ինչ է, քան Անդրկուրյան Հայքի մի ընդարձակ մաս»²⁴¹։

Հնարավոր չենք համարում նաև Խորձենե - Կղարջքի շրջանում մեկ այլ Կամբեճանի գոյությունը, որին իբր թե վերաբերում է Ստրաբոնի հաղորդումը²⁴²։

Իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, թե Կամբեճանը մինչև մ.թ.ա. III դարը գտնվել է Վրաստանի կազմում, ապա դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ սկզբնաղբյուրներում այդպիսի հաղորդում չկա։

Չենք կարող համաձայնել նաև Հ. Սվազյանի տեսակետի հետ, ըստ որի մ. թ. II դարում հռոմեացիներն Այսրկովկասում կատարեցին վարչական փոփոխություններ և Կամբեճանն անցավ Ադվանքին²⁴³։

Ինչ վերաբերում է Հ. Խորիկյանի տեսակետին, ապա գտնում ենք, որ մ.թ. II դարում Կամբեճանը չէր կարող անցնել Ադվանքին, քանի որ այդ ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած աշխարհագրագետները և պատմիչներն այդպիսի տեղեկություն չեն հայտնում։

Աղբյուրների քննությունից ելնելով՝ կարելի է ասել, որ Կամբեճան գավառը հայկական պետականության ողջ ընթացքում և մինչև

²³⁹ Меликишвили Г., К истории древней Грузии, с. 127.

²⁴⁰ Стб'и Страбон, XI, IV, I; XI, IV, 5; XI, XIV, 4.

²⁴¹ Մնացականյան Աս., նշվ. աշխ., էջ 50։

²⁴² Акопян А., նշվ. աշխ., էջ 29–30։

²⁴³ Սվազյան Հ., Ադվանից աշխարհի պատմություն, էջ 70։

IV դ. վերջը եղել է Մեծ Հայքի կազմում ու նրանից դուրս է եկել այն ժամանակ, երբ 387 թ. տեղի ունեցավ Հայաստանի առաջին բաժանումը²⁴⁴ : Փալստոս Բուզանդի վկայությամբ. «Ի նոցանէ քազում գաւառք կրծեալք հատեալ այսր անդր...»:²⁴⁵ Հետագայում, արաբական տիրապետության ժամանակաշրջանում Կամբեճանի հայությունը հիմնականում ենթարկվում էր Հայոց Արևելից կողմանց իշխանության տնեքին²⁴⁶ :

IX դարում գավառը գտնվում էր Առանշահիկների իշխանապետության ներքո: Առանշահիկ Սահլ Սմբատյանի²⁴⁷, մանավանդ նրա թոռ Գրիգորի իշխանության օրոք վերստին այդ տոհմին է անցնում անդրկուրյան Կամբեճանը²⁴⁸ :

894 թ. Հայոց Արևելից կողմերում Համամ իշխանի²⁴⁹ ջանքերով ու Հայոց Սմբատ Ա Բագրատունի (890–914 թթ.) թագավորի համաձայնությամբ ստեղծվում է թագավորություն. «Ապա քարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն այսք ի միում ժամանակի գործեցան»²⁵⁰ : Համամի ստեղծած թագավորությունը որոշ ժամանակ անց բաժանվում է նրա որդիների միջև: Ատրներսեհին²⁵¹ բաժին է ընկնում Շաքե-Կամբեճանը, որի մասին արաբ պատմիչ Մաստուլին վկայում է. «Շա-

²⁴⁴ Հնարավոր ենք համարում, որ Կամբեճան գավառը եղել է Արշակունիների հայրենական կալվածքը, ինչպես Առեքանի, Աղյուվիտ և Հաշտեանք գավառները:

²⁴⁵ Բուզանդ, Ե, գլ. Ա, էջ 400:

²⁴⁶ Ուլուքաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 31:

²⁴⁷ Միքայել Ասորին Սահլ Սմբատյանին անվանում է Սահակ Հայկազուն (տե՛ս Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1879, էջ 365):

²⁴⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 87:

²⁴⁹ Համամ Առանշահիկի կողմից Հայոց Արևելից կողմերում թագավորության վերականգնման վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ (տե՛ս Շիրազյան Ա., Հայ Բագրատունիների պետությունը (885–908 թթ.) (Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Երևան, 2011, էջ 61–65):

²⁵⁰ Կաղանկատվացի, Գ, գլ. ԻԲ, էջ 335:

²⁵¹ Համամի որդի Ատրներսեհը սկսել է իշխել 910 թ. (տե՛ս Ուլուքաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XIV դարերում, Երևան, 1975, էջ 82):

քեցիների թագավորը Ադրնեոսն իբն Համամն է»²⁵²:

«Արևելից մեծ իշխան»²⁵³ Համամ Բարեպաշտի ստեղծած թագավորությունը ժամանակի հայ պետական կազմավորումներից մեկն էր և ընդգրկված էր Բագրատունյաց Հայաստանի գերագույն իշխանության ներքո գտնվող ֆեոդալական համակարգի մեջ: Նրա թագավորությունը ընդգրկում էր Կամբենանը, Հերեթը, Շաքին, Կապադակի շրջանը և Ճիդբքը՝ տարածվելով Կուր գետից մինչև Կովկասյան լեռները և Թելավ քաղաքից արևմուտք գտնվող Գաղգաղ բնակավայրից մինչև Փիրսահատ գետի վերին հոսանքի ավազանը²⁵⁴:

Աղվանքի արևելյան սահմանը, անտիկ հեղինակները հասցնում են Կասպից ծով²⁵⁵, և այդ սահմանագիծը ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել:

«Աշխարհացոյց»-ն Աղվանքի արևելյան սահմանի մասին ուղղակի հաղորդում չունի: Ս. Երեմյանը, անդրադառնալով «Աշխարհացոյց»-ի հեղինակի համապատասխան հատվածին, նրա խոսքին՝ «առ Կաւկասով մինչև», իր կողմից ավելացնում է «ի Կասպից

²⁵² СМОМПИК, вып. 38, с. 57.

²⁵³ Տե՛ս Դրասխանակերտցի, էջ 170: Ինչպես նկատել է Ա. Եղիազարյանը. «Աղվանքը մտնում էր Հայոց թագավորության մեջ, ուստի նրա իշխան Համամին տրվող «Արևելից մեծ իշխան» կոչումից պետք է ենթադրել, որ Հայոց թագավորության կազմում «Արևելից» էր կոչվում Աղվանից իշխանությունը» (տե՛ս Եղիազարեան Ա., Աղուանից թագավորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ. «Հանդես Ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2009, թիւ 1-12, էջ 167, 170):

²⁵⁴ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.) Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), էջ 196-197:

²⁵⁵ Այս առումով Հ. Խորիկյանը նշում է. «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունից պարզվում է, որ Աղվանքի նկարագրության մեջ հին Աղվանքի ծովափնյա մասն արտացոլված չէ, այսինքն հեղինակը Կապադակից արևելք ընկած տարածքները բուն Աղվանքի մաս չի համարում (տե՛ս Խորիկյան Հ., Բաղասական աշխարհի տարածքը. - ՊԲՀ, 2010, թիւ 2, էջ 158): Ինչպես նկատել է Ա. Հակոբյանը. «Թիւ 1276 բնագրի ուշադիր համեմատութիւնը երկի համառօտ խմբագրութեան ձեռագրերի հետ քոյլ է տալիս նկատել, որ առաջինի այս հատումում մի բառականին անփոյթ գրչի վրիպման հետեւանքով կորսուած է շուրջ երկու պարբերութիւն, առաջինը՝ Բուն Աղուանքի նկարագրութեան վերջում, երկրորդը՝ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբում» (տե՛ս Յակոբեան Ա., Միսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միսգաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի. - Հանդես Ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 2008, թիւ 1, էջ 93-94, ծան. 4):

ծովն»²⁵⁶, որով, կարծես թե, լրացնում է հեղինակին և ցույց տալիս, որ երկրի արևելյան սահմանը հասել է մինչև Կասպից ծով: Բայց, չնայած դրան, Ս. Երեմյանը գտնում է, որ արևելյան սահմանն անցել է հունա-հռոմեական հեղինակների նշած Ադուան կամ այժմյան Ադսու գետի հունով²⁵⁷: Նկատենք, սակայն, որ դա բնավ չի համապատասխանում հունա-հռոմեական աղբյուրների հաղորդումներին:

Կարծում ենք, Ադվանքի արևելյան սահմանը ձևավորվել է ավելի ուշ՝ մ.թ.ա. I դ. 60-ական թվականներին: Դիոն Կասսիոսը հաղորդում է. «Պոմպեոսը այս գործերը կատարելուց և ամբողջ երկիրը ասպատակելուց հետո ավաններին խաղաղություն պարգևեց, ինչպես մի շարք այլ ցեղերի հետ, որոնք բնակվում են այն տարածքի վրա, որն ընկած է Կովկասից մինչև Կասպից ծով, որտեղ և վերջանում է Պոնտոսում սկիզբ առնող լեռը, դաշինք կնքեց, երբ սրանք իր մոտ այդ նպաստակով դեսպաններ ուղարկեցին»²⁵⁸: Պատմիչի այս հաղորդումից ելնելով՝ վստահորեն կարելի է ասել, որ նշված ցեղերի մոտ դեռ չէր ավարտվել պետականության անցման գործընթացը, ուստի և Ադվանքի պետական-քաղաքական սահմանն ամբողջությամբ ձևավորված չէր: Որ մինչ Պոմպեոսի արշավանքը Ադվանքի արևելյան սահմանը դեռ չէր ձևավորվել, երևում է նույն ժամանակի ստրաբոնյան այն հաղորդումներից, որոնց համաձայն Ադվանքի տարածքում բնակվում էին 26 տարալեզու ցեղեր²⁵⁹, որոնք վարում էին «կիկլոպյան կյանք»²⁶⁰: Այստեղից բխում է, որ տարալեզու այդ ցեղերը մ.թ.ա. II դ. վերջին և մ.թ.ա. I դ. սկզբին դեռևս չէին միավորվել ադվանական պետության կազմի մեջ և միայն Պոմպեոսի արշավանքից հետո, երբ պետականության կազմավորման գործընթացն արագանում է, նրանք միավորվում են, որով էլ վերջնականապես ձևավորվում է Ադվանքի արևելյան սահմանը՝ հասնելով Կասպից ծով:

²⁵⁶ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 105, և կից քարտեզը:

²⁵⁷ Նույն տեղում, էջ 34 և կից քարտեզը:

²⁵⁸ Դիոն Կասսիոս, XXXVII, 5, 1:

²⁵⁹ Страбон, XI, IV, 6:

²⁶⁰ Նույն տեղում, XI, IV, 3:

Այսպիսով՝ «Աշխարհացոյց»-ի հաղորդումներն Աղվանքի սահմանների մասին, որոնք ուժ են ստանում հայ և օտարազգի պատմիչների ու աշխարհագիրների տվյալներով, ցույց են տալիս, որ ուսումնասիրվող երկրի սահմանները նրա պետականության ժամանակաշրջանում (մ.թ.ա. I – մ.թ. V դարի կեսերը) կազմել են հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղը՝ Կերաունյան լեռները և սրանց շարունակությունը կազմող Մոսնա (Մումգայիթ) գետը, արևելքում՝ Կասպից ծովը, հարավում՝ Կուր գետը, արևմուտքում՝ Վիրքը:

Սկզբնաղբյուրների և առկա գրականության քննիւթյունը ցույց է տալիս, որ, լինելով վերոհիշյալ տարածքում, Աղվանքը չէր կարող ընդգրկվել ներկայիս Ադրբեջանի տարածքն ամբողջությամբ, ուստի դրանից դուրս էին մնում մերձկասպյան մարզերը, Ուտիքը, Արցախն ու դրանց հարակից շրջանները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՎԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի

1. ԱՂՎԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ինչպես նշել ենք, Աղվանքի վարչական բաժանումների մասին պատկերացում կազմելու համար հայկական և օտար սկզբնաղբյուրներում անվիճելի է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի հաղորդած տեղեկությունների նշանակությունը: Հեղինակը մանրամասն նկարագրում է Աղվանքի գավառների¹ ու խոշոր բնակավայրերի աշխարհագրական դիրքը, տալիս դրանց տեղադրությունը, ինչպես նաև անդրադառնում հարակից բնույթի մի շարք հարցերի: Մակայն մինչ դրանց մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում քննել «Աշխարհացոյց»-ի այն ձեռագրերի և հրատարակությունների հաղորդումները, որոնք հնարավորություն կընձեռեն վերականգնելու Աղվանքի գավառների վարչական նկարագիրը:

«Աշխարհացոյց»-ի առկա ձեռագրերը² և հրատարակությունները³ բազմակողմանի քննության են ենթարկվել ուսումնասիրողների կողմից: Մակայն մենք հարցին կանոնադաշտնադր Աղվանքի վարչական կառուցվածքի նկարագիրը տալու համար: Նախ, ձեռագրերի տարրնթերցումների միջոցով կփորձենք վերականգնել գավառների ճիշտ անվանումները, ապա կատարել ընդարձակ և համառոտ տեքստերի, ինչպես նաև այլ հրատարակությունների համեմատութ-

¹ Ի տարբերություն Մեծ Հայքի, որտեղ երկիրը բաժանված էր մահանգների, իսկ վերջիններս էլ՝ գավառների, Աղվանքում մահանգներ գոյություն չունեին: Անանիա Շիրակացին հիշատակում է միայն գավառները:

² Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 9-20:

³ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 9-82, Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-բաղադրական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 5-40:

յուն⁴, հրատարակություններ, որոնք ուսումնասիրողների կողմից արժանացել են բարձր գնահատականի: Առաջ անցնելով նշենք, որ «Աշխարհացոյց»-ի համառոտ և ընդարձակ շրջանառության մեջ դրված խմբագրությունները զգալի չափով տարբերվում են մեկը մյուսից, և երկուսն իրար լրացնելով մոտավորապես են արտացոլում Աղվանքի գավառների ընդհանուր պատկերը: Հ. Մանանդյանը, համեմատելով ընդարձակ և համառոտ տեքստերն այդ առումով, իրավամբ, գտնում է. «Սուրբյանի հրատարակած բնագրի համեմատությամբ համառոտի հետ պարզ ցույց է տալիս, որ տպագրված երկու հրատարակություններն էլ համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական ընդարձակ բնագրից, որոնք ծագում են հնագույն մայր բնագրից»⁵: Եվ ավելացնենք, որ երկուսն էլ դարերի ընթացքում արտագրողների կողմից ենթարկվել են փոփոխությունների: Դժբախտաբար, մենք հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու ընդարձակ խմբագրության ձեռագրի հետ, որը պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում 1245 թվահամարով, իսկ Բ. Պատկանյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ռուսերեն տարբերակի հիմքում ընկած է 1843 թ. վենետիկյան հրատարակությունը, որով էլ հետագայում առաջնորդվել են ուսումնասիրողները: Մեր աշխատանքի ընթացքում հիմնականում օգտվել ենք 1881 թ. Սուրբյանի հրատարակությունից, սակայն մեր ձեռքի տակ է եղել նաև Ա. Աբրահամյանի հրատարակած տեքստը⁶, որի համար հիմք է ծառայել Երևանի Մատենադարանի № 582 ձեռագիրը⁷, և որն ուսումնասիրողներն ավելի ընտիր տեքստ են համարում, քան «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությանը պատկանող և հրատարակված որևէ այլ

⁴ Տե՛ս Վարդանյան Ա., Տարբերություններ Աղվանքի գավառների վերաբերյալ. – «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2010, թիվ 2, էջ 214–219:

⁵ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 15:

⁶ Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու Մատենագրությունը (այսուհետև՝ Անանիա Շիրակացի), Երևան, 1944:

⁷ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 582, էջ 177^բ, 178^ա:

տեքստ⁸: Այդ տեսակետի օգտին է խոսում № 582 ձեռագրի և Ա. Սուքրյանի հրատարակության համեմատությունը⁹: Ճիշտ է, ինչպես վերը նշել ենք, մենք չունենք ընդարձակ խմբագրության ձեռագիրը, սակայն, կարծում ենք, որ Ա. Սուքրյանը նույնությամբ հրատարակել է № 1245 ձեռագիրը: Եվ ուսումնասիրողները, մասնավորապես Ս. Երեմյանն իր ուսումնասիրությունում¹⁰ և Ա. Աբրահամյանն «Աշխարհացոյց»-ի աշխարհագրական քարտեզագրությունում¹¹, ընդարձակ տեքստերում Աղվանքի վերաբերյալ գոյություն ունեցող այդ թերությունը լրացրել են՝ օգտագործելով համառոտ խմբագրությունը, այն ընդարձակից տարբերակելով փակագծերով:

«Աշխարհացոյց»-ի համառոտ և ընդարձակ տեքստերում գավառների անվանումների, դրանց քանակի ու տեղադրությունների տարբերությունն այնքան մեծ է, որը նպատակահարմար համարեցինք այն ներկայացնել առանձին ենթագլխի տակ: Ընդարձակ խմբագրության մեջ Անանիա Շիրակացին տալով Աղվանքի աշխարհագրական սահմանները՝ անցնում է գավառների տեղադրությանը, մասնավորապես՝ գրելով. «Նախ առ Վրօք Եփնի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբեճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւոյ նորա բերդն Վարագմանաւառ, հանդերձ Կուղրաթ գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ. յորոյ յեկից կողմանէ Գլուգաւ քաղաք, առ Աղուան գետով, եւ Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ յեկից նորա Շաքէ, եւ Դէգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով: Այս ամնայն հոսին ի Կովկասայ, եւ խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին՝ ի Կուր գետ. իսկ ի յեկից կուսէ Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սեբոջ դէպ ի հարաւոյ

⁸ Անանիա Շիրակացի, էջ 336:

⁹ Ա. Սուքրյանի կողմից հրապարակված «Աշխարհացոյց»-ի տեքստերի և Ա. Աբրահամյանի տպագրած համառոտ խմբագրության բնագրի վերահրատարակությունը կատարել է Ռ. Հյուսթընը (տե՛ս Hewsens R., *The Seventh Century Geography Attributed to Ananias of Shirak*. — *Revue des Etudes Armeniennes*, t. 25, New York, 1994, p. 460–462.

¹⁰ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 105:

¹¹ Մատենագրություն, (Երևան), էջ 291:

ըստ փոքր (?) Հայոց»¹²: Մա ընդարձակ խմբագրության այն ամբողջական մասն է, որտեղ տրված է Աղվանքի հինգ գավառների նկարագրությունը:

Իսկ, ահա, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությանը պատկերող № 582 ձեռագրում Աղվանքի գավառների թվարկումն ունի հետևյալ պատկերը. «Եխնի, Բիխ, Քամբեճան, Հողմագ, Շաքէ, Գեգաու, Ոստան, Հաքանդ, Ի մարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իբազկան»¹³:

Ինչպես տեսնում ենք, ընդարձակ խմբագրության տեքստում Աղվանքի գավառների տեղադրությունն ավելի մանրամասն է տրված, քան համառոտ տեքստում, սակայն № 582 ձեռագրի համառոտ տեքստն ունի այն առավելությունը, որ հաղորդում է Աղվանքի գավառների ամբողջական կազմը, ինչը չկա թե՛ Ա. Սուրբյանի հրատարակած ընդարձակ տեքստում, թե՛ Բ. Պատկանյանի ռուսերեն հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում, որտեղ հիշատակվում են Աղվանքի վեց գավառները, այն է՝ Եխնի, Բեխ, Քամբեճան, Շաքէ, Ոստան - Մարծպան, Դաշտ ի Բալասական¹⁴:

Ըստ այդմ, մենք ստորև կանդրադառնանք այն գավառներին, որոնք չեն հիշատակվում ընդարձակ խմբագրության մեջ, իսկ տեղադրության մասին կխոսենք առանձին:

№ 582 ձեռագրում և դրանից արտատպված Մատենագրությունում (Երևան), ինչպես տեսանք, հիշատակվում է Աղվանքի 12 գավառ: Որպես առանձին գավառներ են հիշատակվում Ոստանը, Ի մարծը և Պանանը¹⁵: Գուցե թե կարճ ժամանակով վերոհիշյալ երեք գավառներն առանձին-առանձին են եղել և հետագայում են կազմել մեկ գավառ՝ Ոստան-ի-Մարգպան գավառը, այսօր դժվար է ասել:

№ 582 ձեռագրում Աղվանքի գավառների շարքում հիշատակվում

¹² «Աշխարհացոյց», էջ 29:

¹³ ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^բ:

¹⁴ Патканов К., նշվ. աշխ., էջ 40:

¹⁵ ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^բ:

է Հաբանդը¹⁶, որը Ս. Երեմյանը տեղադրում է Շամախու շրջանում¹⁷: Բ. Ուլուբաբյանը Հաբանդը համարում է Աղվանքի գավառներից՝ գրելով. «Աշխարհացոյց»-ն այն ցոյց է տալիս որպէս Ալքանիայի մարզերից մեկը¹⁸: Այդ առումով «Աշխարհացոյց»-ը նշում է. «Աշխարհի Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ եւ Արծախայ, յեկից Այրարատոյ. ունի գաւառս երկոտասան. զՀաբանդ...», «Արցախս յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՄիսն Հաբանդ...»¹⁹: Բ. Հարությունյանը, ելնելով Փափստոս Բուզանդի այն հաղորդումից, որ Հաբանդում է գտնվել Ամարասը²⁰ և վերջինս մինչ օրս գոյություն ունի, գավառը տեղադրում է Սյունիքի Հաբանդ գավառի հարևանությամբ՝ տարածելով այն մինչև Ամարասի կողմերը²¹: Սակայն Սյունիքի Հաբանդը գտնվում է Արցախի Մյուս Հաբանդ գավառից արևելք՝ Աղավնո գետի շրջակայքում²²: Իսկ այն հարցին, թե ինչու են Սյունիքի և Արցախի երկու հարևան գավառները հանդես գալիս միևնույն անունով, ապա այդ առումով ևս դիտարկում ունի Բ. Հարությունյանը. «Միասնական Հաբանդ գավառը Մեծ Հայքի աշխարհաբաժանման շրջանում կիսվել է Սյունիքի և Արցախի միջև, որի արդյունքում Սյունիքի կազմում հայտնված հիմնական հատվածը պահպանել է Հաբանդ անվանումը, իսկ Արցախի մեջ մտած ավելի փոքր հատվածը ստացել է Մյուս Հաբանդ, կամ Փոքր Հաբանդ անվանումը»²³:

Այսպիսով, Աղվանքը երբեք Հաբանդ անունով գավառ չի ունեցել և այդ անունն «Աշխարհացոյց»-ում ներմուծվել է հետագայում արտագրողների կողմից, որոնք աշխարհագրական հին անունները հասկանալի դարձնելու նպատակով դրանք փոխարինել են նորերով

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62:

¹⁸ Улубабян Б., О границах древнего Арванка. – ԲԵՀ, 1979, № 1, էջ 117.

¹⁹ «Աշխարհացոյց», էջ 33:

²⁰ Բուզանդ, Գ, գլ. 2, էջ 26:

²¹ Հարությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34:

²² Աղավնո գետը Սյունիքի ու Արցախի միջև սահման է ճանաչում նաև Թ. Հակոբյանը (տես Սյունիքի բազմակրթությունը, Երևան, 1966, էջ 39 և կից քարտեզը):

²³ Նույն տեղում, էջ 36:

և անճանոթ տեղանունների մեջ սխալներ են թույլ տվել՝ շփոթելով Հաբանդը Սյունիքի Հաբանդ և Արցախի Մյուս Հաբանդ գավառների հետ: Իսկ եթե ասենք, որ արտագրողները Հաբանդը շփոթել են Համբասի գավառի հետ, ապա, կարծում ենք, որ ճշմարտությունից հեռու չենք լինի:

№ 582 ձեռագրում և Մատենագրությունում (Երևան) չի հիշատակվում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ տեղ գտած Դեգառու գավառը՝ Սանի գետի վրա²⁴: Դրա փոխարեն հիշատակվում են երեք առանձին գավառներ՝ Ոստան-ի-Մարգպան, ինչին արդեն անդրադարձել ենք: Եթե № 582 ձեռագրում և Մատենագրությունում (Երևան) առկա Ոստան, Ի մարծ և Պանան «գավառները» միացնում ենք և ավելացնում Համբասի և Դեգառու գավառները, ապա Աղվանքի գավառների թիվը հասնում է 11-ի:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության և Բ. Պատկանյանի համառոտ խմբագրության հրատարակություններում, նաև ուսներեն քարգմանությունում հիշատակվում է Դաշտ ի Բալասական գավառը²⁵, ինչը չկա ընդարձակ խմբագրության մեջ: Ինչպես վերը նշել ենք, Բ. Պատկանյանի քարգմանության համար հիմք ծառայած վենետիկյան համառոտ հրատարակության մեջ նույնպես հիշատակվում է նույն ձևով²⁶: Բ. Պատկանյանը ծանոթագրությունում գրում է, որ Սեն-Մարտենի մոտ «Դաշտ ի Բալասականը» հիշատակվում է «Ի Բազկան» ձևով²⁷: Սա ինչպես կտեսնենք իր տեղում, ուսումնասիրողների մոտ ընդունելություն է գտել²⁸: Բ. Պատկանյանի համառոտ խմբագրությունում հիշատակվում է նաև Ոստան-ի-Մարծպան գավառը, ինչը պակասում է ընդարձակ խմբագրության մեջ: Իսկ այստեղ, ինչպես նշել ենք, կա Դեգառու գավառը, որը չկա Բ. Պատկանյանի համառոտ տեքստում:

²⁴ «Աշխարհացոյց», էջ 29:

²⁵ Патканов К., նշվ. աշխ., էջ 40:

²⁶ Մատենագրություն, Վենետիկ, էջ 606:

²⁷ Патканов К., նշվ. աշխ., էջ 41, ծան. 6:

²⁸ Տե՛ս Երեմյան Մ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42-43:

Այսպիսով՝ «Աշխարհացոյց»-ի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ տեքստերը ամբողջական չեն: Կարծում ենք, ընդարձակ խմբագրության տեքստն ու՛շ ժամանակներում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, արտագրողների կողմից մի շարք հատվածներ դուրս են թողնվել, ինչը պահպանվել է համառոտ տեքստում: Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ Ա. Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագիր հեղինակը օգտագործել է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության սխալաշատ մի օրինակ²⁹: Այդ տեսակետի համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ վենետիկյան խմբի «Աշխարհացոյց»-ի տեքստերում եղած գրչական սխալները կրկնվում են նաև Ա. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում³⁰:

Քանի որ մեզ հասու չի եղել ընդարձակ խմբագրության միակ ձեռագիրը, դրա համար էլ չենք կարող ժխտել կամ կողմ արտահայտվել Ա. Աբրահամյանի տեսակետին: Սակայն ամերկյա է, որ եթե Ա. Սուքրյանի հրատարակած ընդարձակ խմբագրության տեքստը (իր թերություններով հանդերձ, որում մեծ բաժին ունեն արտագրողները), լրացվի համառոտ տեքստով, ապա դրանով իսկ ուսումնասիրողներին հնարավորություն կընձեռվի ամբողջությամբ վերականգնելու «Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը:

Ինչպես վերը նշել ենք, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության № 582 ձեռագիրը, մեզ հասած համանման տեքստերի մեջ, լավագույնն է: Ժամանակի ընթացքում, սակայն գրիչների կողմից այն ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, բնագրի վրա հատվածներ են ավելացել, բարդ թվացող հատվածները կրճատվել են, ունի վրիպակներ և սխալ ընթերցումներ: Դրանով հանդերձ՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերի մեջ այն ինքնատիպ է և արժեքավոր:

Գավառների տեղադրության համար, չբավարարվելով միայն № 582 ձեռագրի և ընդարձակ խմբագրության տեքստում դրանց վերա-

²⁹ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 23–24:

³⁰ Նույն տեղում;

բերյալ հաղորդումներով, մենք կօգտագործենք Երևանի Մատենա-դարանի ձեռագրերում պահպանված «Աշխարհացոյց»-ի տեքստերը: Մինչ այդ, սակայն, կատարենք գավառների անվանումների տարընթերցումներ՝ դրանցից ընտրելով հավանական ճիշտ ձևերը:

Տարընթերցումներ

Ճիշտ ձևը

- | | |
|---|---------|
| 1. Եխնի, Խնի ³¹ | Եխնի |
| 2. Բեխ, Նիբուխ, Բիխ, Բեխ, Բիղամ ³² | Բեխ |
| 3. Շաքե, Շաքի, Շաեղ ³³ | Շաքե |
| 4. Կամբենան, Քանքինան, Քամբենան, Կամբենան Քանքինան, Քամբենան, Ամբենան ³⁴ | |
| 5. Ոստեան ի մարծպան, Ոստանի մարծպան, Ոստան-ի-Մարգպան | |
| Ոստան Մարծպանան, Ոստան մարգպան, | |
| Մարգպանան, Ոստանիմարծ, Ի մարծպան, | |
| Ոստան ի մարծ պանան, Մարծպանան ³⁵ | |
| 6. Գեգաու, Գեգաու, Գաաղե, Գեգաու ³⁶ | Գեղավու |
| 7. Դեղաու, Դեգառու, Դեգաուղե ³⁷ | Գեղառու |
| 8. Հողմաց, Հողմաղաշե, Հողմաղ, Խողմաղ, | Հողմազ |
| Խողմախ ³⁸ | |

³¹ ՄՄ, ձև. № 3160, էջ 283^ա, ձև. № 582, էջ 177^բ:

³² ՄՄ, ձև. № 3941, էջ 280^բ, ձև. № 1864, էջ 284^բ, ձև. № 2370, էջ 256^ա, ձև. № 5120, էջ 97^ա, ձև. № 5613, էջ 291^բ:

³³ ՄՄ, ձև. № 696, էջ 93^բ, ձև. № 4284, էջ 34^բ, ձև. № 7993, էջ 95^բ:

³⁴ ՄՄ, ձև. № 1717, էջ 167^բ–165^ա, ձև. № 1864, էջ 284^բ, ձև. № 1883, էջ 152^ա, ձև. № 1898, էջ 268^բ, ձև. № 2370, էջ 256^ա, ձև. № 3502, էջ 214^բ:

³⁵ ՄՄ, ձև. № 696, էջ 93^բ, ձև. № 1267, էջ 357^ա–358^բ, ձև. № 1864, էջ 284^բ, ձև. № 1883, էջ 152^ա, ձև. № 1898, էջ 268^բ, ձև. № 2019, էջ 292^բ, ձև. № 2191, էջ 108^ա, ձև. № 4284, էջ 34^բ, ձև. № 7993, էջ 95^բ–96^ա:

³⁶ ՄՄ, ձև. № 582, էջ 177^բ, № 1717, էջ 164^բ–165^ա, ձև. № 2370, էջ 256^ա, ձև. № 5613, էջ 291^բ:

³⁷ ՄՄ, ձև. № 1883, էջ 152^ա, ձև. № 1898, էջ 268^բ, ձև. № 4284, էջ 34^բ:

³⁸ ՄՄ, ձև. № 582, էջ 177^բ, ձև. № 1717, էջ 164^բ–165^ա, ձև. № 1883, էջ 152^ա, ձև. № 2370, էջ 256^ա, ձև. № 4284, էջ 34^բ:

9. Համբասի, Համբաղի, Համբաղ ³⁹	Համբասի
10. Բաղաղաշտ, Բաղաց դաշտ, աղաղաշտ ⁴⁰	Բաղաց դաշտ
11. Բազկան, Դաշտի Բալասկան, դական, Իբազկան, Իայբաղական ⁴¹	Բազկանի Բա-

Մենք փորձեցինք տարընթերցումների միջոցով, հենվելով «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում պահպանված հաղորդումների վրա, ընտրել գավառների անվանումների ճիշտ տարբերակները: Ի տարբերություն մյուս երկրների, Աղվանքի վարչական բաժանման վերաբերյալ մեր տեղեկությունները գործնականում սահմանափակվում են Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի հաղորդումներով: Ուստի, կարծում ենք, որ ամեն ինչ չէ, որ պարզ է: Այդ պատճառով էլ Աղվանքի քաղաքներին և մյուս բնակավայրերին անդրադառնալիս կփորձենք օգտվել հունա-հռոմեական սկզբնաղբյուրներից: Ինչպես նշել ենք, «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը մեկը մյուսից տարբերվում են և հնարավորություն չեն ընձեռում լիովին վերականգնելու Աղվանքի գավառների ճիշտ անվանումները: Նույն պատկերն է նաև դրանց տեղադրության հարցում: Ճիշտ է, ինչպես նշել ենք, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության բնագիրը գավառների տեղադրության առումով համեմատաբար մանրամասն տեղեկություն է հաղորդում, քան համառոտ խմբագրության որևէ տեքստ, սակայն ընդարձակ խմբագրությունում էլ ոչ բոլոր գավառներն են ներկայացված: Դրանով պայմանավորված՝ ստորև մենք կփորձենք Աղվանքի գավառների տեղադրությունը տալ մախ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության սահմաններում, իսկ մյուսները ներկայացնել համառոտ խմբագրության տեքստից՝ պահպանելով առկա գավառների հերթականությունը:

³⁹ ՍՄ, ձեռ. № 582, էջ 177^p, ձեռ. № 1864, էջ 284^p, ձեռ. № 4284, էջ 34^p:

⁴⁰ ՍՄ, ձեռ. № 1864, էջ 284^p, ձեռ. № 3160, էջ 283^m, ձեռ. № 4284, էջ 34^p:

⁴¹ ՍՄ, ձեռ. № 582, էջ 177^p, ձեռ. № 1486, էջ 101^m, ձեռ. № 1717, էջ 164^p–165^m, ձեռ. № 1898, էջ 268^p, ձեռ. № 5613, էջ 291^p:

2. ԳԱՎԱՌՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. վերջին – XX դ. սկզբին Աղվանքի գավառների տեղադրության, վարչական նկարագրի հարցերով զբաղվել է Մակար Բարխուտարյանը⁴²: Առաջնորդվելով իր տեսածով՝ նա, ինչպես վերնասովեց, հանգամանորեն ներկայացրել է երկրի աշխարհագրական սահմանները, գավառների տեղադրությունը, բնակլիմայական պայմանները, գետային ցանցը: Հեղինակի նկարագրությունները, սակայն, տարբերվում են «Աշխարհացոյց»-ի հաղորդումներից, քանզի դարերի ընթացքում կատարված վարչական փոփոխությունների հետևանքով մի շարք գավառներ այլևս գոյություն չունեին, փոխվել էին դրանց անվանումներն ու էթնիկական կազմը: Ըստ այդմ, հասկանալի է, որ Մ. Բարխուտարյանը չէր կարող տալ Աղվանքի գավառների վարչաքաղաքական այն պատկերը, ինչը գոյություն ուներ Անանիա Շիրակացու օրերում: Ուստի, մենք կօգտագործենք հեղինակի միայն այն հաղորդումները, որոնք համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի տվյալներին:

«Աշխարհացոյց»-ի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ տեքստերում առաջինը հիշատակվում է Եխնի գավառը: Սկզբնաղբյուրը փաստում է, որ Եխնի գավառը սահմանակից է Վրաստանին՝ «առ Վրօք»⁴³, սակայն Ս. Երեմյանն իր աշխատությունում և կից քարտեզում, հակառակ այդ տեղեկության, Եխնի գավառը հեռացնում է Վիրքի սահմաններից դեպի արևելք⁴⁴, դրանով իսկ փոքրացնելով Աղվանքի սահմանները: Եխնի գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն, քան նշում է Ս. Երեմյանը: Վերջինս Եխնի գավառի տարածությունը հաշվում է 1722 կմ²(?)՝ այն տեղադրելով այժմյան Զաքաթալայի շրջանում⁴⁵: Կարծում ենք, որ Եխնի գավառը սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է Վիրքի սահմանը, այսինքն՝ Վելիս-Յի-

⁴² Բարխուտարյանց Մ., նշվ. աշխ., էջ 34–152:

⁴³ «Աշխարհացոյց», էջ 29:

⁴⁴ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի էջ 50 և կից քարտեզը Բ7:

⁴⁵ Նույն տեղում, էջ 50, 119:

խն ամրոցի շրջակայքից՝ իր մեջ ներառելով «Գավազը» գավառի⁴⁶ տարածքը: Եխնի գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Աղուան (Ալազան) գետի երկարությամբ բաժանվում է Կամբեճան գավառից, արևելքից սահմանակից է Բեխ գավառին, իսկ արևմուտքից՝ Դիդոյքին⁴⁷:

Հակառակ սկզբնաղբյուրների տեղեկությունների, որոնք Եխնի գավառը համարում են Աղվանքի անբաժան մաս, վրաց պատմաբան Դ. Մուսխելիշվիլին գավառը ներառել է Վիրքի կազմում: Նա նշում է, որ V դարում Եխնի և Բեխ գավառները միացվեցին Վիրքին⁴⁸: Իր իսկ խոստովանությամբ՝ սկզբնաղբյուրներում չգտնելով հաղորդում այն մասին, որ Եխնի և Բեխ գավառները պատկանել են Վիրքին, այդ տեղադրման համար որպես հիմք նշում է վրացիների և աղվանացիների «քաղաքական համագործակցությունը» հին ժամանակներից, որը պայմանավորված էր տնտեսական պատճառներով⁴⁹: Սակայն, ինչպես կտեսնենք, մինչև V դարի կեսերը Աղվանքում գոյություն ուներ թագավորական իշխանություն, իսկ վերջինիս վերացումից հետո ստեղծվեց մարզպանություն, որի կազմում էլ գտնվում էին Եխնի և Բեխ գավառները: Վրաց հեղինակի հիմնագուրկ փաստարկները քննադատության չեն դիմանում այն պարզ պատճառով, որ VII դ. «Աշխարհացոյց»-ը նշում է, որ Աղվանքը V դարում ունեցավ ոչ թե տարածքային կորուստներ, այլ, ընդհակառակը, մի շարք գավառներ միացվեցին Աղվանից պետությանը⁵⁰: Եխնի և Բեխ գավառները մարզպանության գոյության ողջ ընթացքում մնացին Աղվանքի կազմում, իսկ ինչ վերաբերում է վրաց պատմաբանի կարծիքին, կրկին

⁴⁶ Ս. Երեմյանը Եխնի գավառի հարևանությամբ նշում է Գավազը գավառը: «Աշխարհացոյց»-ում, սակայն, այդ մասին հաղորդում չկա: Կարծում ենք, որ մնան անվանումով գավառ ընդհանրապես գոյություն չի ունեցել:

⁴⁷ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

⁴⁸ Мусхелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шаки и Гогарена), с. 18.

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Տե՛ս «Աշխարհացոյց», էջ 28–29, 33:

ասենք, որ «քաղաքական համագործակցության» հետևանքով մեկ պետության գավառը բնավ չի անցնում մյուս տերությանը:

Կամբեճան գավառի տեղադրությունն Անդրկուրյան Հայքում ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել: Գավառն Անանիա Շիրակացու օրերին արդեն գտնվում էր Աղվանքի կազմում և, ըստ այդմ, «Աշխարհացոյց»ում հիշատակվում է նրա գավառների շարքում: Ինչպես վերը նշել ենք, դա հաստատվում է նաև Դևոնդի տեղեկություններով: Պատմիչը, անդրադառնալով խազարների Այսրկովկաս կատարած արշավանքին, նշում է. «Առնուին բազում գաւառս զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարգպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲէխ, զԽենի, զԿամբէխճան, զԽողմաղ»⁵¹: Գավառը, ինչպես նշել ենք, Աղուան (Ալազան) գետով սահմանակից էր Եխնի և Բեխ գավառներին, իսկ արևելքից՝ Ալազան գետով Գետառու գավառին: Կամբեճան և Գետառու գավառների հատման կետում, մասնավորապես Աղուան գետի արևելյան կողմում՝ Կուրի ջրախարնուրդի շրջանում գտնվում էր Գվգավ քաղաքը: Հարավից գավառը Կուր գետի երկարությամբ սահմանակցում էր հայկական Ուտիքին, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Վիրքին: Կամբեճանն ունեցել է նշանավոր բերդեր և գյուղաքաղաքներ, որոնց կանդառնալով ստորև: Գավառի մեծ մասն իր բնակչի մայական պայմանների պատճառով անմարդաբնակ է եղել, քանի որ, ըստ «Աշխարհացոյց»-ի տեղեկության, Կուրդաք գյուղաքաղաքից «Վայրքն անապատ մինչև ցԿուր գետ...»⁵²: «Աշխարհացոյց»-ից առաջ այդ մասին վկայում է նաև Ստրաբոնը: Անդրադառնալով Հայաստանի նկարագրությանը, նա գրում է. «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերոների և աղվանների հետ»⁵³:

⁵¹ Դևոնդ, էջ 132:

⁵² «Աշխարհացոյց», էջ 29:

⁵³ Страбон, XI, IV, 1.

Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ գավառի բնակչության հոծ զանգվածները կենտրոնացած են եղել Կուր գետի և գավառի միջով հոսող Կամբեճ գետի շրջակայքում: Կամբեճանի բնակչության գերակշիռ մասն Անանիա Շիրակացու օրերում եղել են հայերը: Դա հաստատվում է նաև IX դ. վրաց մատենագիր Արսեն Սափարացու հաղորդած տեղեկություններով. պատմիչը, խոսելով VII դ. հայ մատենագիր Հովհան Մայրավանեցու գործունեության մասին, նշում է. «Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները... Լեռնականները նրան չէին ընդունել, քանի որ վերջիններս կռապաշտներ էին, և անցավ Կամբեջ[ով]ան՝ տիրելով փոքր ձորին, որ Հայոց (Սոմխեթի) ձոր» է կոչվում...»⁵⁴: Ասվածից պարզ երևում է, որ VII դարում ևս Կամբեճանը հայաբնակ էր, ու նրա ձորերից մեկը կոչվում էր Հայոց ձոր⁵⁵:

Այս հարցի կապակցությամբ բոլորովին այլ վարկած է առաջադրում Դ. Մուխեթիշվիլին: Նա ճգնում է ապացուցել, որ Կամբեճանում Արսեն Սափարացու հիշատակած «Հայոց ձորը» ոչ թե բնակավայր է, այլ կիրճ⁵⁶: Ապա շարունակելով, վրաց հեղինակը վերափոխում է պատմիչների հաղորդումը՝ նշելով. «Կամբեճանում բացակայում էր հայ բնակչությունը, լավագույն դեպքում փոքրամասնության տեսքով էր, քանի որ Արսեն Սափարացին նշում է, որ «Հայոց կիրճը» Կամբեճանում «փոքր կիրճ էր»⁵⁷: Նախ ինչպես վերը տեսանք, Արսեն Սափարացին հիշատակում է ոչ թե «Հայոց կիրճ», այլ «Հայոց ձոր», իսկ Կամբեճանում հայ բնակչության վերաբերյալ վրաց մատենագիրը ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Ինչպես կտեսնենք, Կամբեճանը հայաբնակ էր նաև հետագա դարերում: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին X դ. կեսերին մասնավորապես 949 թ., ուղևորվում է Հայոց Արևելից կողմերը. «...մաքրել

⁵⁴ Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 46-47:

⁵⁵ Մնացականյան Աս., նշվ. աշխ., էջ 53:

⁵⁶ Мухелишвили Д., նշվ. աշխ., էջ 27:

⁵⁷ Նույն տեղում:

զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց»⁵⁸: Կաթողիկոսը հանգրվանում է Հերեթի կողմերում, իսկ «Հերեթի» ասելով հասկացվում է Կամբեճան գավառը⁵⁹, որտեղ թագավորում էր քաղկեդոնական դավանանքի անցած Իշխանիկը, որի իշխանության սահմանները Կամբեճանից հասնում էին Խաչեն⁶⁰. «Ծագեաց ի սիրոսս հօրացն Աղուանից ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրնէքսէիի, և Սենիքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նորին և տեառն Սենիքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի և Տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանի և այլ բազում մեծամեծաց...»⁶¹:

Կամբեճան գավառի բնակչության մեծամասնությունը մինչև XV դարը կազմել են հայերը⁶²:

Գավառը սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև «Անդրկուրյան Հայք», «Փոքր Հայք» անվանումներով: Այդ մասին կարևոր վկայության ենք հանդիպում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ. «Քալաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կալկաս ընդ որոյ մէջ գետն Սեբոջ դէպ ի հարաւոյ ըստ փոքր Հայոց»⁶³: Այսինքն՝ Անանիա Շիրակացուն հայտնի է Կուր գետից հյուսիս, Աղվանից աշխարհի սահմաններում «Փոքր Հայք» կոչվող մի տարածություն, որի սահմաններից մեկը Սեբոջ գետն է⁶⁴: Եվ «Փոքր Հայք» կոչվող տարածությունը Կամբեճան գավառն է՝ Աղվանքի հյուսիսային սահմաններում:

⁵⁸ Անանիա Մոկացի, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսատրչի արքայն (այսուհետև՝ Մոկացի). – «Արարատ», մարտ 1897, էջ 132:

⁵⁹ Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 211:

⁶⁰ Խաչենում այդ ժամանակ իշխանության գլուխ էր կանգնած Գրիգոր իշխանը. (մանրամասն տե՛ս Յակոբեան Ա., Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում (բնական ակնարկ). – Հանդես Ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 2010, էջ 78):

⁶¹ Մոկացի, էջ 144:

⁶² Ter-Ghevondian A., Notes sur le Šakē-Kambečan (I^e-XIV^e s). – Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 678–679:

⁶³ «Աշխարհացոյց», էջ 29:

⁶⁴ Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 56:

Կամբեճան գավառի⁶⁵ ընդհանուր տարածությունն էր շուրջ 7510 կմ²⁶⁶:

Գավառի մի շարք բնակավայրերում հայկական եկեղեցիները մահմեդականների կողմից ենթարկվել են ավերածությունների: Այդ առիթով Մ. Բարխուտարյանը գրում է. «Վերնայարկն ըստ ամենայնի ունի Հայաստանեայց տաճարների բոլոր յատկութիւնները: Կամարներն շինուած են կոփածոյ չիչ քարով»⁶⁷:

Աղվանքի գավառացանկում երրորդը Բեխն է: Հյուսիսից գավառը սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային՝ «առ Կաւկասաւ»⁶⁸, հարավ-արևմուտքից՝ Ալազան գետով Կամբեճանին, իսկ արևելքում՝ Շաքե գավառին:

Գավառը գտնվում է այժմյան Կախի շրջանում:

Բեխ գավառում պահպանվել են եկեղեցու ավերակներ, որտեղից հայտնաբերվել է արծաթյա խաչ: Եկեղեցին շրջապատված է միջնադարյան հայ հանգստարաններով⁶⁹:

Աղվանքի հաջորդ՝ Շաքե գավառի տեղադրությունը տարակարծությունների տեղիք չի տալիս: Ըստ «Աշխարհացոյց»-ի գավառը գտնվում է Բեխից արևելք⁷⁰: Մենք համակարծիք ենք Ս. Երեմյանի և Բ. Հարությունյանի տեսակետներին, ըստ որոնց Շաքե գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից Գետառու գետի ամրոցը երկարությամբ սահմանակցում է համանուն գավառին, արևելքից՝ Հոդմազ, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Բեխ գավառին⁷¹:

⁶⁵ Կամբեճան գավառի պատկանելության մասին հեղինակների տեսակետների մանրամասն քննությունը տես առաջին գլխի չորրորդ բաժնում՝ Աղվանքի քաղաքական սահմանների քննության ընթացքում:

⁶⁶ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57, 120:

⁶⁷ Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 139:

⁶⁸ «Աշխարհացոյց», էջ 29:

⁶⁹ Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 108:

⁷⁰ «Աշխարհացոյց», էջ 29:

⁷¹ Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44 և կից քարտեզը, Բ7, Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քար-

Շաքե գավառի ընդհանուր տարածությունը կազմում է 870 կմ² և գտնվում է այժմյան Նուխիի շրջանում⁷²: Շաքեն հանդիսացել է Աղվանքի եպիսկոպոսություններից մեկը⁷³: Գավառի տարածքում կան հայկական մի շարք եկեղեցիներ՝ սուրբ Գևորգ, սուրբ Գեղարդ⁷⁴, նաև Գիս վանքը:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ հիշատակված Աղվանքի հաջորդ գավառը Գետառուն կամ Գեգառուն է: Վերջինիս տեղադրությունը հստակ է, քանի որ «Աշխարհացոյց»-ը հաղորդում է. «Գեգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով»⁷⁵: Հյուսիսից գավառը սահմանակից է Շաքե գավառին, հարավից՝ Կուրին, արևելքից՝ Սանի գետով բաժանվում է Հոդմազ և Քաղաց դաշտ գավառներից, իսկ արևմուտքում՝ Կամբեճանին: Թվում է՝ Գետառուի սահմանները որոշելիս չպետք է խնդիր առաջանա, քանի որ «Աշխարհացոյց»-ը հստակ տալիս է գավառի աշխարհագրական դիրքի մանրամասն նկարագրությունը: Դրան հակառակ՝ Ս. Երեմյանը Քաղաց դաշտ գավառը տեղադրում է Սանի գետի երկու կողմերում՝ մի մասով մտցնելով Գետառու գավառի մեջ⁷⁶, ինչը հակասում է սկզբնաղբյուրի տեղեկությանը: Այդ մասին ավելի հանգամանորեն կխոսենք Քաղաց դաշտ գավառի տեղադրության քննության ժամանակ:

Գետառու գավառն այժմ զբաղեցնում է Աջինոտրի - Էլդարի տափարակ տարածքը: Գավառի ընդհանուր տարածությունը Ս. Երեմյանը հաշվում է 1575 կմ²(?)⁷⁷: Սակայն, կարծում ենք, որ գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ ի հաշիվ Քաղաց դաշտ գավառի:

տեղ, նույնի՝ Այսպես կոչված Աղվանքի սահմանների, տարածքի և գավառաբաժանման շուրջ. - «ՎԷՄ» համահայկական հանդես, 2012, քիվ 2, էջ 69:

⁷² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73:

⁷³ Կաղանկատվացի, Բ, գլ. Է, էջ 122, Բ, գլ. ԼԲ, էջ 213, Գ, գլ. ԻԴ, էջ 344:

⁷⁴ Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 136-137:

⁷⁵ «Աշխարհացոյց», էջ 29:

⁷⁶ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89 և կլից քարտեզը, Բ7:

⁷⁷ Նույն տեղում, էջ 47, 120:

Այս գավառի աշխարհագրական նկարագրությամբ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում ավարտվում է Աղվանքի վարչական նկարագրությունը: Մենք կփորձենք գավառների մյուս մասը ներկայացնել «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տեքստերում առկա հաղորդումների հիման վրա:

Բայց մինչ այդ նշենք, որ «Աշխարհացոյց»-ի մի շարք ձեռագրերի հաղորդումների և Ս. Երեմյանի կազմած քարտեզի միջև հակասություն է նկատվում: Դա ակնհայտ է նաև սկզբնաղբյուրի աշխարհաբար թարգմանության մեջ: Նախ, «Աշխարհացոյց»-ի խմբագրության համառոտ ձեռագրերում՝ Աղվանքի արևելյան գավառները հերթականությամբ չեն բերվել: Եթե որոշ ձեռագրերում հիշատակվում են արևելյան գավառները, ապա պարզ չէ, թե ուր գավառն է մյուսին հաջորդում և այն գավառներն, որոնք ներկայացված են կողք կողքի՝ մեկը մյուսին հարևան են, թե՞ ոչ: Օրինակ, մի շարք ձեռագրերում Հողմազ գավառը միշտ հիշատակվում է Շաքե գավառի տեղում⁷⁸ և, թվում է, Հողմազ գավառը պետք է լինի Շաքեի տեղում՝ Բելսի հարևանությամբ:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության № 582 ձեռագիրը, որը մյուս ձեռագրերի համեմատ ավելի անխաբար է և մեզ է ներկայանում Աղվանքի գավառների ցանկով, այդ առումով նույնպես ամբողջական չէ: Դրանում պահպանված չէ գավառների հերթականությունը՝ արևելյան գավառները հայտնվել են արևմտյան գավառների կողքին, ինչպես սկզբում նշել ենք, մի շարք գավառներ էլ դուրս են մնացել: Այսպես, Գեղավու գավառը հայտնվել է Շաքեի կողքին⁷⁹: Ինչպես գիտենք, Գեղավուն «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեքստում չի հիշատակվում, իսկ Շաքե գավառը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ՝ իր հարևան գավառների ու գետերի հետ⁸⁰: Նույն տեղում Գեղավուի կողքին հիշատակվում է Ու-

⁷⁸ Մ. Մ. ձեռ. № 582, էջ 177^բ, ձեռ. 1864, էջ 152^ա, ձեռ. 2370, էջ 256^ա:

⁷⁹ ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^բ:

⁸⁰ «Աշխարհացոյց», էջ 29:

տան գավառը⁸¹ (Ոստան-ի-Մարգապան): Այս դեպքում թվում է, թե այս երկու գավառները իրար կից են, բայց դրա հետևանքով արդեն Համբասի գավառը դուրս է մնում, որը Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրում է Գեղավու և Ոստան գավառների միջև⁸²:

Նույն պատկերն է նաև Ոստան-ի-Մարգապան գավառի տեղադրության առումով: Մի շարք ձեռագրերում գավառը հիշատակվում է Գետառուի կողքին⁸³, մեկ այլ տեղում էլ՝ Շաքե գավառի հարևանությամբ⁸⁴: Բայց, ինչպես հայտնի է, այս երկու գավառների՝ հատկապես Շաքեի և թագավորանիստ գավառի միջև գտնվում է Հողմազ գավառը⁸⁵: «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունում Գեղավու և Համբասի գավառները հիշատակվում են Հողմազ գավառի հարևանությամբ. «Իսկ դեպի արևելք գտնվում են Հողմազ, Գեղավու, Համբասի գավառները, ապա Ոստան-ի-Մարգապան գավառը»⁸⁶: Ստացվում է, որ թվարկված այս երեք գավառներից հետո է սկսվում Ոստան-ի-Մարգապան գավառը: Բարեբախտաբար, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է հետևյալ հատվածը. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ դէպ ի հարաւոյ»⁸⁷: Այս հաղորդումից ելնելով վստահորեն կարելի է ասել, որ Աղվանքի մայրաքաղաք Կապաղակը գտնվել է Ոստան-ի-Մարգապան գավառում՝ Սեբոջ գետի ափին: Ամերկբա է, որ այն գտնվել է ոչ թե վերոհիշյալ երեք գավառներից արևելք, այլ՝ Հողմազ գավառի հարևանությամբ⁸⁸:

Աղվանքի արևելյան գավառների տեղադրության հարցում մենք է տարբերությունը «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար տեքստի և Ս.

⁸¹ ՍՄ, ձեռ. № 582, էջ 177^p:

⁸² Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, Բ8:

⁸³ ՍՄ, ձեռ. № 1898, էջ 268^p, ձեռ. № 2370, էջ 256^m, ձեռ. № 3502, էջ 214^p:

⁸⁴ ՍՄ, ձեռ. № 5120, էջ 97^m:

⁸⁵ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁸⁶ Մատենագրություն, (Երևան), էջ 290:

⁸⁷ «Աշխարհացոյց», էջ 29:

⁸⁸ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, Բ7:

Երեմյանի կազմած քարտեզի միջև:

Սկզբնաղբյուրի աշխարհաբար տեքստում Հողմագ, Գեղավու, Համբասի գավառները հանդես են գալիս մեկ շարքով, ըստ որում՝ վերջինս համարվել է Աղվանքի սահմանային արևելյան գավառը: Մակայն Ս. Երեմյանը հակառակ հերթականությամբ է ներկայացնում Աղվանքի արևելյան գավառների տեղադրությունը: Նախ՝ Հողմագը, ճիշտ տեղում՝ Ոստան-ի-Մարգանը, ապա դրանից արևելք՝ Համբասին և Գեղավուն⁸⁹: Եթե չհաշվենք աշխարհաբար տեքստում Հողմագ և Գեղավու գավառների նկարագրությունը մեկը մյուսի կողքին, որոնց միջև ընկած է Ոստան-ի-Մարգան գավառը, ապա տարբերությունը մնում է վերջին երկու գավառը՝ Համբասի, դրանից արևելք Գեղավու, թե՞ Գեղավու, ապա Համբասի: Վերոհիշյալ հարցին որոշակի պատասխան չեն տալիս մույնիսկ «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը, որտեղ, ինչպես նշել ենք, չի պահպանվել գավառների հերթականությունը, որը պետք է կատարվեր հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կամ հակառակ ուղղությամբ: Եվ այստեղ մեզ մնում է ընդունել Ս. Երեմյանի տեսակետը՝ Գեղավուն, այլ ոչ թե Համբասին է Աղվանքի արևելյան վերջին գավառը՝ Կովկասյան լեռների հարավային փեշերին: Մեր կարծիքով, դրա համար հիմք կարող է ծառայել նաև համանուն գետի առկայությունը: Եվ եթե այդ գետը կոչվում էր Գեղավու, ապա հարկ չկա մույնանուն գավառը տեղափոխել արևմուտք և նրա տեղը խցկել Համբասին:

Վերը թվարկված տարբերություններն իր բոլոր մանրամասնություններով այստեղ չենք քննարկում, որովհետև այն առանձին ուսումնասիրության հարց է:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում առկա խաթարումները (ինչպես նշել ենք, դրանում իրենց մեղքի բաժինն ունեն արտագրողները) ուսումնասիրողներին թույլ չեն տվել հարցին տալ ամբողջական և սպառնիչ պատասխան: Եվ մենք էլ կփորձենք մոտավոր ճշտությամբ ներկայացնել Աղվանքի արևելյան գավառների վարչական բաժա-

⁸⁹ Նույն տեղում:

նումը: Ի դեպ, նշենք, որ ուսումնասիրողները խնդրո առարկայի վերաբերյալ գործնականում սահմանափակվել են «Աշխարհացոյց»-ի համառոտ տեքստի հաղորդումներով:

Աղվանքի արևելյան գավառների շարքում առաջինը Հոդմազ կամ Խողմազ գավառն է: Այն հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավ-արևելքից՝ Գետառու⁹⁰ գավառին, արևելքից՝ Ոստան-ի-Մարգալանին, իսկ արևմուտքից Շաքեին⁹¹: Գավառի տարածքը հետագայում կոչվել է Խաչմազ և ներկայումս գտնվում է Ադրբեջանի Վարդաշենի շրջանում: Ընդհանուր տարածությունը կազմում է 1330 կմ² (?)⁹²:

Աղվանքի Քաղաց դաշտ գավառի երեմյանական տեղադրությունը, ինչպես նշել ենք, չի համապատասխանում սկզբնաղբյուրի տեղեկությանը, քանի որ Գետառու գավառը Քաղաց դաշտից բաժանվում է Սանի գետի ողջ երկարությամբ: Իսկ Քաղաց դաշտի վերաբերյալ «Աշխարհացոյց»-ում չկա այն հաղորդումը, ըստ որի վերջինս տարածված է եղել գետի երկու կողմերում, ինչը ներկայացված է Ս. Երեմյանի կազմած քարտեզում: Հյուսիսից գավառը սահմանակից է Հոդմազ և Ոստան-ի-Մարգալան գավառներին, հարավից՝ Կուր գետին, արևելքից՝ Սեբոջ (Քալաճոր) գետով Բազկան գավառին, իսկ արևմուտքից՝ Գետառուին: Գավառը գտնվում է Դուրիան-չայ (Սեբոջ) և Ալջիգան-չայ (Սանի) գետերի ստորին հոսանքի տարածքում: Ս. Երեմյանը գավառի տարածքը մոտավորապես հաշվում է 1270 կմ²⁹³: Սակայն, եթե դրանից հանենք այն փոքր հատվածը, որը Ս. Երեմյանը տեղադրում է Գետառուի մեջ, ապա Քաղաց դաշտի տարածությունը կմնա մոտավորապես 950–1000 կմ²:

⁹⁰ Ս. Երեմյանի կազմած քարտեզում Հոդմազ գավառը նշված է մի փոքր դեպի արևելք, որի հետևանքով գավառի հարավային հարևան է դարձել Քաղաց դաշտ գավառը (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 55 և կից քարտեզը, Բ7):

⁹¹ Հարությունյան Բ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁹² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 55, 120:

⁹³ Նույն տեղում, էջ 89, 120:

Ոստան-ի-Մարգպան գավառը հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայով սահմանակից է Շիրքքին⁹⁴, հարավից՝ Քաղաց դաշտ և Բագկան գավառներին, արևելքից՝ Համբասի և Գեղավու, արևմուտքից՝ Հողմազ գավառներին: Տարածությունը հաշվում է 1550 կմ2(?)⁹⁵: Վիճահարույց է մնում Ոստան գավառի հարավային սահմանը: Մեր կարծիքով, այն հասել է Մեքոջ գետի այն հատվածին, որի մյուս ափին գտնվել է Քաղաբերդ ամրոցը և ունեցել է ավելի մեծ տարածք:

Սակայն, Բ. Հարությունյանը, վերջերս լույս տեսած իր աշխատանքում և դրան կից քարտեզում Աղվանքի տարածքում նշում է երկու Ոստան՝ մեկը՝ Ոստան գավառը որտեղ գտնվում է Կապադակը, և մյուսը՝ Ոստան-ի-Մարգպանան գավառը⁹⁶, նշելով. «Այս գավառի սահմաններն էին հյուսիսում Սամուր գետի հարավ-արևելյան ջրբաժանը՝ իր մեջ առնելով Ճորա Պահակի կամ Դերբենդի ամրությունների շրջանը, հարավում՝ Կովկասյան լեռների դեպի Կասպից ծով ձգվող բազուկը, որի վրա գտնվում էր Ալբանական կամ Աղվանից Դրոմբ լեռնանցքը, իսկ արևելքում՝ Կասպից ծովը»⁹⁷: Հեղինակն իր այս տեսակետը հիմնավորում է այն հանգամանքով, իբր թե «Աշխարհացոյց»-ն արտագրող գրիչները, հանդիպելով երկու անգամ Ոստան գավառանվանմանը, ենթադրել են, որ դրանցից մեկն ավելորդ է: Հիշյալ և դրան նախորդած ձեռագրերում դեն են նետել Ոստան գավառանունը, որով փաստորեն ցուցակից անհետացել է Կապադակի Ոստանը, իսկ մյուս ձեռագրերում պահպանվել է Կապադակի Ոստանը, սակայն ցուցակից «Ոստան-ի-Մարգպանան կամ Մարգպանան» գավառանվան Ոստան կապակցությունը համարվել է սխալ և դեն ենտվել⁹⁸: Կարծում ենք, որ այստեղ ոչ մի գաղտնիք

⁹⁴ Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁹⁵ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 75, 120:

⁹⁶ Իր հեղինակած նախորդ քարտեզներում Բ. Հարությունյանն Աղվանքի տարածքում նշել է մեկ Ոստան գավառ:

⁹⁷ Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի սահմանների, տարածքի և գավառաբաժանման շուրջ, էջ 71:

⁹⁸ Նույն տեղում:

չկա, ինչպես նշում է Բ. Հարությունյանը այլ «Աշխարհացոյց»-ն արտագրողների մեղքն այնքանով է, որ մի ձեռագրում գավառը⁹⁹ նշել են Ոստան, մյուսում Ոստան-ի-Մարգպանան, իսկ երրորդում ընդհամենը Մարգպանան կամ Մարգպան՝ իմանալով որ դա արքայանիստ Ոստան-ի-Մարգպան գավառն է, որտեղ գտնվում է մայրաքաղաք Կապադակը¹⁰⁰։ Ինչպես ցույց են տալիս հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրներն Աղվանքը, թե՛ թագավորության և թե՛ մարգպանության շրջանում երկու Ոստան գավառ չի ունեցել։

«Աշխարհացոյց»-ը հաղորդում է. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէրոջ»¹⁰¹։ Սակայն Ս. Երեմյանը գետը բավականին հեռացնում է Կապադակի սահմաններից, այն ավելի մոտեցնելով Հոդմազ գավառին։ Անշուշտ, մենք չենք կարող ասել՝ Սէրոջ գետը Կապադակի ուղղակի միջով էր հոսում, թե՞ երիզում էր քաղաքը, սակայն աներկբա է, որ գետը գտնվում էր մայրաքաղաքի շրջակայքում և հարկ չկար արհեստականորեն փոխելու դրա հունը։

Աղվանքի և ոչ մի գավառի տեղադրությունն այնքան տարակարծությունների տեղիք չի տվել, որքան Բազկան գավառինը։ Նախ, ժամանակի ընթացքում սխալ է նշվել գավառի անվանումը՝ Բաղասական դաշտ, Բաքանի Բազանք և այլն։ Հիմնականում գործածության մեջ է եղել առաջին անվանումը։ Ինչպես նկատել է Ս. Երեմյանը, «Հետագա արտագրողների մոտ Քաղաց դաշտ, Դաշտ-ի-Բազկան շարքն աղավաղվելով դարձել է Քաղաց դաշտ, ի Բազկան, կամ Քաղա, Դաշտ ի Բաղկան, ապա՝ Դաշտ ի Բաղական և Դաշտ ի Բալասական»¹⁰²։ Հետագայում «Աշխարհացոյց»-ի համառոտ № 582 ձե-

⁹⁹ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^p, ձեռ. № 696, էջ 93^p, ձեռ. № 1717, էջ 164^p–165^m, ձեռ. № 4244, էջ 34^p, ձեռ. № 5120, էջ 97^m։

¹⁰⁰ Ոստան նշանակում է մայրաքաղաք, քաղաքամայր, գահանիստ, նախագահ քաղաք (տե՛ս Մուքիսայան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 519)։

¹⁰¹ «Աշխարհացոյց», էջ 29։

¹⁰² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42–43։

ռագրի¹⁰³ շնորհիվ վերականգնվել է գավառի անվանումը՝ Ի Բազական: Կարծում ենք, ելնելով վերը նշված հանգամանքից, գավառի անունը պետք է լինի ոչ թե Ի Բազկան, այլ ուղղակի՝ Բազկան: Վրիպումն առաջ է եկել նրանից, որ Դաշտ-ի-Բազկան գավառին նախորդում է Բաղաց դաշտը:

Գավառի անվան սխալ ընթերցումները շփոթության մեջ են գցել նաև Ս. Երեմյանին. իր կազմած քարտեզում նա Դաշտ ի Բաղասականը նշում է Փայտակարանի տարածքում¹⁰⁴: Քանի որ այստեղ մեր խնդիրը բուն Աղվանքի գավառների տեղադրությունն է, ապա այդ առումով չենք ծավալվում, այլ՝ միայն նշենք, որ գուցե թե հարևան շրջաններից ինչ-որ մեկը, մասնավորապես, ներկայիս Շամախու տարածքը, որոշ ժամանակ կոչվել է Բաղասական կամ Բազկան անունով: Բայց աներկբա է, որ Բազկան անվամբ գավառ ունեցել է նաև Աղվանքը և դրա տեղադրությունը որոշելիս չպետք է դուրս գալ բուն Աղվանքի սահմաններից: Ս. Երեմյանի քարտեզում գավառն Աղվանքի տարածքում նշված է Հեջերի անվամբ¹⁰⁵, ինչն «Աշխարհացոյց»-ի Բազկան գավառն է, քանի որ սկզբնաղբյուրը հաղորդում է. «Ըստ որում Բաղաց դաշտ, Դաշտ ի Բազկան որ է Հեջերի»¹⁰⁶: Այսինքն՝ Բազկան գավառը գտնվել է Բաղաց դաշտի հարևանությամբ: Մեր կարծիքով, երկու գավառների միջև սահման է հանդիսացել Մեքոզ գետը. «...դէպ ի հարաւոյ ըստ փոքր Հայոց»¹⁰⁷: Ս. Երեմյանը գավառը 4900 կմ² տարածությամբ¹⁰⁸ տեղադրել է ներկայիս Շիրվանում, ինչը, կարծում ենք, չարդարացված մեծություն է Բազկան գավառի համար:

Ոստան-ի-Մարզպան գավառը մեծ տարածություն է ունեցել ի հաշիվ Բազկան գավառի, ուստի, կարծում ենք, որ Համբասի գա-

¹⁰³ ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^p:

¹⁰⁴ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, Գ7-Գ8:

¹⁰⁵ Նույն տեղում, Բ7:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 105:

¹⁰⁷ «Աշխարհացոյց», էջ 29:

¹⁰⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62, 120:

վառն իր տարածքի մեծ մասով կարելի է տեղադրել Բազկան գավառի մեջ: Ս. Երեմյանը դա տեղադրել է Ոստան-ի-Մարզպան և Գեղավու գավառների միջև՝ համապատասխանաբար Կեսիոս (Կոկիսոն) և Գեղավու գետերի ավազանում, ինչի մասին խոսք կլինի ստորև:

Այսպիսով՝ Բազկան գավառը Համբասի գավառից դեպի հարավ տեղաշարժելու դեպքում էլ հյուսիսից սահմանակցում է Ոստան-ի-Մարզպան, Համբասի, Գեղավու գավառներին, հարավից Կուր գետով Փայտակարան նահանգին, իսկ արևելքից նրա սահմանը Ադուան գետն է, արևմուտքից՝ Քաղաց դաշտ գավառը՝ Մեքոջ գետի երկարությամբ:

Աղվանքի մյուս՝ Համբասի գավառի ճշգրիտ տեղադրությունն ուսումնասիրողների մոտ որոշակի չէ, կարելի է միայն գավառի տեղադրությունը տալ ենթադրաբար, քանի որ այդ հարցում մեզ լիովին չի օգնում այնպիսի վստահելի սկզբնաղբյուր, ինչպիսին է «Աշխարհացոյց»-ը:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում, ինչպես քանիցս արդեն նշել ենք, չի պահպանվել Աղվանքի գավառների հերթականությունը՝ ինչը հնարավորություն կտար դրա վրա հիմնվելով՝ մոտավոր տալ գավառների, մասնավորապես Համբասի գավառի տեղադրությունը: «Աշխարհացոյց»-ի մի քանի ձեռագրերում¹⁰⁹ Համբասի գավառը հանդես է գալիս Ոստան-ի-Մարզպան գավառի հարևանությամբ, և միգուցե դրանից ելնելով է Ս. Երեմյանն այն տեղադրել է Կեսիոս և Գեղավու գետերի ավազանում¹¹⁰: Սա ենթադրություն է և ոչ ավելին, քանզի մենք չենք կարող պնդել, թե վերոհիշյալ հանգամանքն է Ս. Երեմյանին ստիպել գավառը տեղադրել այդ տարածքում: Միաժամանակ իր աշխատության այն մասում, որտեղ ներկայացրել է «Աշխարհացոյց»-ի հաղորդումն Աղվանքի վերաբերյալ, սկզբնաղբյուրը Համբասի գավառի մասին փաստում է. «Իսկ դեպի արևելք գտնվում

¹⁰⁹ ՄՄ, ձեռ. № 1864, էջ 248^p, ձեռ. № 1883, էջ 152^ա, ձեռ. № 1898, էջ 268^p:

¹¹⁰ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, ԲՑ:

են... Համբասի գավառները»¹¹¹: «Գեպի արևելք» չի նշանակում, որ Համբասի գավառը պարտադիր պետք էր տեղադրել Կովկասյան լեռների փեշերին՝ իր ամբողջ տարածությամբ ներառելով Ոստան-ի-Մարգապան ու Գեղավու գավառների միջև: Ասվածից ելնելով էլ, կարծում ենք, որ Համբասի գավառի սահմանների որոշման հարցում «Աշխարհացոյց»-ի հաղորդման և երեմյանական տեղադրության միջև հակասությունն ակնհայտ է: Ս. Երեմյանը չափազանց փոքր տարածություն է հատկացրել մաս գավառի զբաղեցրած դիրքին¹¹²:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Ոստան-ի-Մարգապան և Համբասի գավառների կողք կողքի հիշատակումից թվում է, թե դիմաց հարևան են եղել սահմանի ողջ երկարությամբ: Մակայն դա միայն առաջին հայացքից: Համբասի գավառը տարածված է եղել ավելի հարավ և Կովկասյան լեռների հետ սահման չի ունեցել: Մեր կարծիքով գավառի մեծ մասը պետք է տեղադրել Բազկան գավառի հյուսիսային շրջաններում: Կոնկրետացնելով նշենք, որ Համբասի հիմնական մասը պետք է որ փոված լիներ Գեղավու գետի այն մասում, որը Ս. Երեմյանի քարտեզում նշված է որպես Բազկանի տարածք:

Համբասի գավառը հյուսիսից սահմանակից է Գեղավու գավառին, հարավից՝ Բազկանին, արևելքից Գեղավու գետին, իսկ արևմուտքից՝ Ոստան-ի-Մարգապան գավառին և մոտավորապես ունեցել է 1100–1200 կմ² տարածություն: Մեր եզրակացությունն այն է, որ Ոստան-ի-Մարգապան և Համբասի գավառները սահմանի ողջ երկարությամբ հարևան չեն եղել: Այս մասին ավելի հանգամանալիս խոսք կլինի ստորև:

Աղվանքի վերջին գավառը Գեղավուն է: Այն գտնվում է այժմյան Աղ-սուի շրջանում: Ս. Երեմյանը գտնում է, որ գավառի անունն առաջացել է Գեղ կամ Գել ցեղի անունից և որ տարածությունը 975 կմ² է¹¹³: Ըստ Ս. Երեմյանի քարտեզի՝ գավառը հյուսիսից սահմանակ-

¹¹¹ Նույն տեղում, էջ 105:

¹¹² Նույն տեղում, էջ 62:

¹¹³ Նույն տեղում, էջ 47:

ցում է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Բազկան գավառին, արևելքից՝ Ադուան գետին, արևմուտքից՝ Համբասի գավառը դեպի հարավ տեղափոխման հետևանքով, Ոստան-ի-Մարգալան գավառին, հյուսիս-արևմուտքից էլ, սահմանի մի փոքր մասով, Համբասի գավառներին: Մեր նախանշած սահմաններով, մասնավորապես, Գեղավուն սահմանակից է Ոստան-ի-Մարգալան գավառին, ինչի արդյունքում Համբասի գավառի տեղադրությունը տեղափոխվում է դեպի հարավ: Դա հաստատվում է նաև Մ. Բարխուտարյանցի հետևյալ հաղորդումով. «(Գեղավու – Ա. Վ.) գավառն ընկած է Կոկիսոն (Կեսիոս – Ա. Վ.) եւ Օրարան գետակների եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի եւ Բօզ-Դաղի հիւսիսային լեռնաշղթայի հիւսիսային լանջերի մէջ...»¹¹⁴: Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ Գեղավու գավառի սահմանը հասել է Կոկիսոն գետը: Իսկ եթե դա այդպես է, ապա Գեղավուն սահման է ունեցել Ոստան-ի-Մարգալան գավառի հետ: Այստեղից էլ՝ Գեղավու գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ մոտավորապես 1080–1150 կմ²:

Գեղավուն եղել է Աղվանքի ամենաջրառատ գավառը՝ շնորհիվ Կովկասյան լեռներից սկիզբ առնող և տարածքով հոսող գետերի:

Աղվանքի գավառների նկարագրությունն ամփոփելուց առաջ նպատակահարմար ենք գտնում «Աշխարհացոյց»-ի և հունա-հռոմեական սկզբնաղբյուրների ընդեռած հնարավորության սահմաններում տալ նաև երկրի քաղաքների, ամրոցների, մշակութային կենտրոններ հանդիսացող բնակավայրերի համառոտ տեղադրությունը:

Կ. Տրեվերն իրավացիորեն նկատել է, որ Աղվանքի քաղաքների ուսումնասիրության խնդիրը մնում է պատմագիտության չլուծված հարցերից մեկը¹¹⁵: Այդ հարցով զբաղվել են մի շարք հետազոտողներ (Կ. Տրեվեր, Ս. Երեմյան, Օ. Իսմիզադե, Ի. Բաբան, Ս. Կազիև և ուրիշներ¹¹⁶), որոնք սկզբնաղբյուրների, նաև հնագիտական նյութերի

¹¹⁴ Բարխուտարյանց Մ., նշվ. աշխ., էջ 124:

¹¹⁵ Тревер К., նշվ. աշխ., էջ 137:

¹¹⁶ Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանքի քաղաքներն ըստ հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների. – ԼՀԳ, 2011, թիվ 3, էջ 98–105:

անբավարար առկայության պայմաններում ստիպված են եղել տալ Աղվանքի քաղաքների մոտավոր տեղադրությունը՝ մեծապես հենվելով Պտղոմեոսի, Պլինիոս Ավագի ու «Աշխարհացոյց»-ում առկա հաղորդումների վրա:

Աղվանքի քաղաքների մասին առաջինն իր «Աշխարհագրական ուղեցույց» աշխատության մեջ հիշատակում է հույն աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսը: Նա գրում է, որ Աղվանքի քաղաքների թիվը հասնում է 29-ի և անուն առ անուն թվարկում է դրանք¹¹⁷: Այս հաղորդումից կարելի է ենթադրել, որ Աղվանքն ունեցել է քաղաքների բավականաչափ խիտ ցանց: Բայց, ըստ երևույթին, դրանց մի մասը քաղաքներ չեն եղել, թեկուզ այն ժամանակների հասկացությամբ, այլ պարզապես բնակավայրեր են եղել, որոնք ժամանակի ընթացքում ավերվելով՝ դադարել են գոյություն ունենալուց: Ըստ էության դա է այն հիմնական պատճառը, որ Պտղոմեոսի թվարկած 29-ը քաղաքներից 28-ը, բացառությամբ Կապադակի, գոնե մոտավորապես չի համընկնում մյուս աղբյուրների նշած հայտնի քաղաքների հետ: Դրանք բոլորն էլ իրենց լատինական հնչողությամբ այնքան անճանաչելի են դարձել, որ ավելորդ է նույնիսկ փորձել դրանց համարժեքները գտնել: Չեն օգնում նաև Վ. Լատիշևի և Կ. Գանի¹¹⁸ քարգմանություններում առկա քաղաքների անվանումների համեմատությունը (խոսքը հունա-հռոմեական ակզբնաղբյուրների ռուսերեն կատարած քարգմանության մասին է): Հնագիտական պեղումներն էլ Աղվանքի տարածքում չեն հայտնաբերել այնպիսի բնակավայրերի մնացորդներ, որ հիշեցնեին կամ նույնացվեին Պտղոմեոսի հիշատակած այս կամ այն քաղաքի հետ: Այդ քաղաքների մեծ մասն Անանիա Շիրակացու օրերում արդեն գոյություն չունեին և այդ պատճառով էլ հայ աշխարհագրագետն իր աշխատությունում դրանք չի հիշատակում, այլ միայն թվարկում է իր ժամանակ գոյություն ունեցող

¹¹⁷ Латышев В., т. 1, с. 242–243.

¹¹⁸ Ган К., Известия древних писателей греческих и римских о Кавказе. – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 4, Тифлис, 1884, с. 169–171.

քաղաքներն ու բնակավայրերը: Ուստի, մեզ մնում է բավարարվել սոսկ դրանց թվարկումով, ինչպես նաև փորձել դրանք ենթադրաբար տեղադրել՝ հենվելով Պտղոմեոսի տեղեկությունների վրա, հետազա-
յում հնագիտական նոր նյութերով այդ հարցում պարզություն մտցնե-
լու ակնկալիքով:

Ստորև բերում ենք Վ. Լատիշևի և Կ. Գանի թարգմանություննե-
րում առկա Աղվանքի քաղաքների անվանումները:

Վ. Լատիշև	Կ. Գան
Տելեվա	Տելաիբա
Գերրա	Գերրա
Գելգա	Գելդա
Կեսիա	Կեսիա
Ալբանա	Ալբանա
Գետարա	Գետարա
Տագոդա	Տագոդա
Վակրիա	Բակլիսիա
Սանվա	Սանուա
Դազլանա	Դեզլանա
Հիզա	Հիզա
Մոսիզա	Մոսեզա
Սամունիզա	Սամունիա
Իովուլա	Իոբուլա
Իունա	Իյունա
Եմվոլեի	Էմբոլեոն
Ագիավլա	Ադիարլա
Ավլանա	Աբլանա
Մամեխիա	Մամեխիա
Օսիկա	Օսսիկա
Սիոդա	Սիոդա
Վարուկա	Բարուկա
Խավալա	Խաբալա

Խավոտա	Խարոտա
Մոզիատա	Մոզիատա
Մուսիյա	Միզիա
Ալամ	Ալամ
Օիավնա	Օիավնա
Օավիլակա	Օաբիլակա
	Խադախա

Ինչպես տեսնում ենք, Վ. Լատիշևի և Կ. Գանի քարգմանություններում առկա են քաղաքների անվանումների տարբերություններ: Կ. Գանն Աղվանքի քաղաքների թիվը հասցրել է 30-ի՝ ավելացնելով Խադախա քաղաքը¹¹⁹:

Պտղոմեոսի կողմից հիշատակված աղվանական 29 քաղաքների տեղադրության խնդրով զբաղված Կ. Տրեվերը նույնպես հարցին մոտենում է ենթադրաբար, գտնելով, որ ժամանակի ընթացքում քաղաքները փոխում են իրենց անվանումները, առավել ևս այն դեպքում, երբ անցել է շուրջ երկու հազար տարի¹²⁰: Պտղոմեոսը նշում է, որ Աղվանքի քաղաքները տեղակայված են եղել գետերի հովիտներում և տալիս է դրանց աստիճանները (կոորդինատները): Կ. Տրեվերը ևս փորձում է քաղաքները տեղադրել գետերի հովիտներում. այսպես, Տելայբան կամ Տելաբիա քաղաքը նա դնում է Կուր գետի գետաբերանին, Ալբանա քաղաքը՝ Ալբանի գետի մոտ, Գետառան՝ Կուր, իսկ Գելդան՝ Գեռա գետի մոտ¹²¹: Սակայն նշված գետերի անվանումները, բացի Կուր գետից, նույնպես հստակ չեն, քանի որ այլ սկզբնաղբյուրներում ընդհանրապես գոյություն չունեն նման անվանումով գետեր:

Մի շարք քաղաքներ նշված են Վրաստանի սահմանի մոտ:

¹¹⁹ Стів Ган К., *նշվ. աշխ.*, էջ 171:

¹²⁰ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 137:

¹²¹ Նույն տեղում, էջ 139: Ս. Մուրավյովը Գելդան տեղադրում է այժմյան Գյոյլառ Դարի մոտ (տե՛ս Муравьев С., Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия. – ВДМ, N 1, 1983, с. 140).

Դրանք են՝ Տագողան, Բակրիան, Սանվան, Դեգլանան, Նիգուն¹²²։ Այսուհետև գալիս է մեկ տասնյակ բնակավայրերի թվարկում, որոնք նշված են Ալբան գետի երկարությամբ, որը նույնպես սկիզբ է առնում Կովկասյան լեռնաշղթայից։ Կ. Տրեվերը, իրավամբ, սրանք համարում է գյուղեր¹²³։ Թվարկված քաղաքների տեղադրությունը նույնիսկ ենթադրաբար հնարավոր չէ տալ։

Աղվանքի քաղաքներից միայն Կապադակի վերաբերյալ են սկզբնաղբյուրները որոշակի տեղեկություններ հաղորդում, այն էլ այս կամ այն իրադարձության հետ կապված, իսկ մյուս քաղաքների և բնակավայրերի մասին սկզբնաղբյուրները լռում են՝ բավարարվելով միայն դրանք թվարկելով։

Պտղոմեոսի մոտ Կապադակը հիշատակվում է *Χαβάλα*¹²⁴, իսկ Պլինիոսի մոտ՝ *ձևով*¹²⁵։ Փոքր-ինչ մանրամասն է «Աշխարհացոյց»-ի հաղորդումը. «Զավադակ քաղաք Աղուանից մերձ ի Կովկաս»¹²⁶։ Կապադա *Cabalaca* կը գտնվել է ներկայիս Ադրբեջանի Նուխիի շրջանից հարավ-արևելք, մոտավորապես 50 կմ-ի վրա, այժմյան Կուտկաշենի շրջանում՝ Չուխուր-Կաբալա գյուղի շրջակայքի ավերակների տեղում¹²⁷։ Պտղոմեոսի քարտեզում Կապադակի աստիճանները ներկայացված են հյուսիսային երկարությամբ 47°, իսկ արևմտյան լայնությամբ՝ 80°¹²⁸։ Անտիկ հեղինակների և «Աշխարհացոյց»-ի տվյալներից ելնելով կարելի է ասել, որ Կապադակը գտնվում է Ավթարանի հովտում։ Անանիա Շիրակացին «Աշխարհացոյց»-ում Կապադակը տեղադրել է Կովկասյան լեռների մոտակայքում՝ «ընդ որոյ մէջ գետն Սէբոջ»¹²⁹։ Պտղոմեոսի կազմած քարտեզում Կապա-

¹²² Латышев В., т. I, с. 242.

¹²³ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 141:

¹²⁴ Латышев В., т. I, с. 243; Ptolemaei, v, 11, 5.

¹²⁵ Նույն տեղում, հ. 2, էջ 181:

¹²⁶ «Աշխարհացոյց», էջ 29:

¹²⁷ Исми-Заде О., Кабала — столица древней Кавказской Албании. — «Вопросы истории Кавказской Албании», Баку, 1962, с. 54.

¹²⁸ Латышев В., т. I, 243.

¹²⁹ «Աշխարհացոյց», էջ 29:

դակի աստիճանները լիովին հաստատում են այս տեղեկությունները: Կապադակն ընդգրկում է ավելի քան 25 հա տարածություն¹³⁰: Քաղաքի ավերակները գտնվում են լեռան վրա:

XIX դարավերջին և XX դարասկզբին Աղվանքի տարածքում սկսվեցին հնագիտական հետազոտությունները: Ուսումնասիրողները տարբեր կարծիքներ հայտնեցին (տե՛ս ստորև) Կապադակի գտնվելու վայրի վերաբերյալ՝ փորձելով այն դուրս բերել Աղվանքի սահմաններից: Այսպես, արևելագետներ Ե. Տոկայաշվիլին և Ա. Կարաուլովը¹³¹ քաղաքը տեղադրում են արևելյան Վրաստանում՝ Կախեթիում: Այդ տեսակետի հերքումով հանդես եկավ Ա. Կրիմսկին¹³². Կապադակի մասին գրելով հատուկ ուսումնասիրություն, նա այն կարծիքը հայտնեց, որ քաղաքը գտնվում է պատմիչների նախանշած վայրում:

1926 թ., երբ լայն թափով սկսվեցին քաղաքի հնագիտական հետազոտությունները¹³³, ուսումնասիրողների հայտնած այն տեսակետները, թե Կապադակը գտնվել է Աղվանքի սահմաններից դուրս, հերքվեցին¹³⁴:

Կապադակի արևմտյան կողմով հոսել է Կարա-չայ գետը, իսկ արևելքում՝ Դուրլու-չայը: Հարավային մասում այդ գետերը հոսել են մույն հունով և թափվել Դուրխան-չայ (Մերոջ) գետը: Գետերի առկայությունը քաղաքի մոտ նպաստում էր, որ անհրաժեշտության դեպքում Կապադակի շուրջը փորված խրամները լցվեյին ջրով և քաղաքն անմատչելի դառնար:

Հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ Կապադակն ունեցել է պաշտպանական հզոր պարիսպներ և աշտարակներ: Քաղաքն ունեցել է երկու դարպաս, պահպանվել են հարա-

¹³⁰ Алиев И., Гадиров Ф., Кабала – Sabala, Баку, 1985, с. 23.

¹³¹ Токайашвили Е., Сборник попечителя Кавказского учебного округа, вып. XXII, отд. 1, Тифлис, 1897, с. 64; Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. – СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, с. 17.

¹³² Крымский А., *նշվ. աշխ.*, էջ 289-305:

¹³³ Исма-Заде О., *նշվ. աշխ.*, էջ 65:

¹³⁴ Նույն տեղում, էջ 54-73:

վային դարպապի 9–10 մ բարձրությամբ և 15 մ լայնությամբ աշտարակները: Ամրոցի պատերի հաստությունը կազմել է 3–4 մ¹³⁵: Պարիսպների տակ պահպանվել են խորը փորվածքներ՝ անցուղիների տեսքով, որը քաղաքի պաշարման դեպքում արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու միակ միջոցն էր:

Քաղաքում հայտնաբերվել է ջրատար համակարգ. այն ունեցել է ընդարձակ ցանց, ջրատարի խողովակները տարածված են եղել ողջ քաղաքով՝ բնակիչներին մատակարարելով խմելու ջուր: Ինչպես նշում է Օ. Իսմիզադեն, նման ջրատարներ հայտնաբերվել են Ադվանքի մյուս քաղաքներում ևս¹³⁶, բայց թե ո՞ր քաղաքներում չի մանրամասնում:

Կապադակի տարածքում հայտնաբերված մետաղյա առարկաները սահմանափակ են. ամենահին զենքերը հետազոտողները քվադրում են XIV դարով, երբ Լենկ-Թեմուրը գրավեց քաղաքը¹³⁷:

Քաղաքի ավերակներից հայտնաբերվել են նյութական մշակույթի մնացորդներ՝ թասեր, գավեր, կերամիկական արտադրանքի մնացորդներ¹³⁸: Պետության կազմավորմանը զուգընթաց քաղաքում սկսեց գործել դրամահատարանը: Նախահելլենիստական շրջանում՝ մ.թ.ա. VI–IV դարերում, աղվանական ցեղերի մոտ դրամական շրջանառությունը թույլ էր զարգացած, ապրանքափոխանակությունը կատարվում էր բնամթերային և թանկարժեք մետաղների կշռային ձուլվածքներով: Աղվանքում դրամական համակարգը զարգացում ապրեց հելլենիստական ժամանակահատվածում, մասնավորապես, մ.թ.ա. III–II դարերում: Դրա վկայությունը 1966 թ. Կապադակից 2 կմ հարավ-արևմուտքից գտնված դրամական գանձն է¹³⁹, 593 արծաթյա

¹³⁵ Նույն տեղում, էջ 62:

¹³⁶ Նույն տեղում, էջ 70:

¹³⁷ Նույն տեղում, էջ 68:

¹³⁸ Бабаев И., Античная черепица Кавказской Албании. — “Советская археология”, М., 1974, № 2, с. 49.

¹³⁹ Бабаев И., Казиев С., Кабалинский клад монет эллинистической эпохи. — “Нумизматика и этнография”, М., 1971, № IX, с. 16.

դրամից 440-ը սելևկյան դրամներ են¹⁴⁰: Այստեղ չկար աղվանական և ոչ մի դրամ, քանի որ այդ ժամանակ Աղվանքում դեռևս գոյություն չունեին պետական միավորում, ինչպես նաև դրամահատարան: Պետության կազմավորմանը զուգընթաց՝ մ.թ.ա. I դարի երրորդ քառորդից սկսվեց նաև աղվանական դրամների թողարկումը, քանի որ դրսից բերված դրամները չէին կարող բավարարել շուկայի պահանջները: Դրամահատարանը պետք է գտնվեր Աղվանքի առևտրական ու վարչական կենտրոններից մեկում: Ամենից առաջ այդպիսի կենտրոն էր Կապադակը: Տարբեր ժամանակներում այստեղ հայտնաբերվել են պարթևական, սասանյան, մակեդոնական, սելևկյան, հռոմեական և, վերջապես, աղվանական բազմաթիվ դրամներ¹⁴¹:

Կապադակում հայտնաբերված աղվանական դրամները նման էին դեռ այն ժամանակ նշանավոր և լայն տարածում գտած Ալեքսանդր Մակեդոնացու դրամին ու մանրադրամին, սակայն դրանց զիջում էին որակական առումով¹⁴²: Դեռևս անհայտ պատճառներով՝ մ.թ.ա. I դարի կեսին Կապադակի դրամահատարանում տեղական դրամների թողարկումը դադարեցվում է¹⁴³ և Աղվանքի դրամական համակարգում նորից սկսում են մեծ դեր խաղալ պարթևական, հռոմեական, մի փոքր ուշ՝ սասանյան դրամները:

Կապադակում և նրա շրջակայքում կատարված հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ Աղվանքի գլխավոր քաղաքը եղել է Այսրկովկասի նշանավոր վարչական, առևտրական ու մշակութային կենտրոններից մեկը, և որը մեծ դեր է խաղացել Աղվանքի քաղաքական կյանքում շնորհիվ իր զբաղեցրած դիրքի: Հին առևտրական ճանապարհներն Աղվանքի մայրաքաղաքը կապել են ուրիշ երկրների հետ: Մինչև օրս պահպանվել են հին և միջնադարյան ճանապարհների հետքերը, որոնց շնորհիվ աղվանացիները տնտեսական ու մշակութային սերտ կապի մեջ էին հարևան երկրնե-

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 16, 18, 21:

¹⁴² Նույն տեղում, էջ 21:

¹⁴³ Նույն տեղում:

րի՝ Մեծ Հայքի և միջերկրածովյան պետությունների հետ¹⁴⁴։ Մ.թ.ա. I դարի սկզբին դառնալով աղվանական նորաստեղծ պետության գլխավոր քաղաքը¹⁴⁵, ինչպես նաև Արշակունի թագավորների նստավայրը, Կապադակն իր դերը պահպանեց մինչև մ.թ. V դարի կեսը, այլ ոչ թե մ.թ. I դարը¹⁴⁶։ 461 թ. Աղվանքում թագավորական իշխանության վերացումից հետո պարսից վարչական մարմինները կենտրոնացան Չողում¹⁴⁷, ապա Պարտավում, և Կապադակը սկսեց աստիճանաբար կորցնել իր առաջատար նշանակությունը։

Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Կապադակը որպես բնակավայր գոյատևել է նաև հետագա դարերում։ Թեպետ Լենկ-Թեմուրի 1387 թ. արշավանքի հետևանքով քաղաքն ավերվեց, սակայն բնակչության մեծ մասն այնտեղից չհեռացավ։ Երբ 1500 թ. Իրանի ապագա շահ Իսմայիլը պաշարեց Կապադակը, նրան հաջողվեց քաղաքը գրավել միայն մեծաթիվ զոհերի գնով¹⁴⁸։ Ենթադրվում է, որ Կապադակի բնակչությունը Չուխուր-Կաբալա գյուղ է տեղափոխվել XIX դ. երկրորդ կեսին¹⁴⁹։ Սակայն, կարծում ենք, որ Աղվանքի տնտեսական ու մշակութային երբեմնի նշանավոր կենտրոն Կապադակը չէր կարող գոյատևել մինչև XIX դ. երկրորդ կեսը, այլ վերջնականապես լքվել և ավերակների է վերածվել Իսմայիլի աշավանքի հետևանքով։

Աղվանքի գլխավոր քաղաքի՝ Կապադակի ինչպես հին, այնպես էլ միջնադարյան ամբողջական պատմությունը լուսաբանելու համար անհրաժեշտ է հնագիտական լրացուցիչ հետազոտություններ կատարել քաղաքի տարածքում և շրջակայքում։ Կարծում ենք, որ ձեռք

¹⁴⁴ Исми-Заде О., *նշվ. աշխ.*, էջ 55։

¹⁴⁵ Աղբյուրներն ուղղակի չեն նշում, որ Կապադակը եղել է Աղվանքի մայրաքաղաքը, դրանք միայն այն անվանում են երկրի կարևոր քաղաք։

¹⁴⁶ Крымский А., *նշվ. աշխ.*, էջ 289–290։

¹⁴⁷ Չողը մինչև VI դարի սկիզբը Աղվանից մարզպանության մայրաքաղաքն էր (տե՛ս Акопян А., *նշվ. աշխ.*, էջ 118, 133։ Խորիկյան Հ., Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82)։

¹⁴⁸ Исми-Заде О., *նշվ. աշխ.*, էջ 72։

¹⁴⁹ Նույն տեղում։

բերված նոր փաստերը լույս կափռեն աղվանական մայրաքաղաքի կյանքի այն կողմերի վրա, որոնք նյութերի անբավարարության պատճառով մնացել են անհայտ:

Աղվանքի մշանավոր քաղաքներից է Շամախին¹⁵⁰, որը Պտղոմեոսի մոտ հիշատակվում է որպես Մամեխիա¹⁵¹:

Աղբրեջանցի հեղինակներ Դ. Խալիլովն ու Ի. Բաբանը համարում են, որ Շամախիի ծաղկման ժամանակաշրջանը եղել է մ.թ.ա. II հազարամյակը, երբ այն դարձավ Աղվանքի մշակութային ու տնտեսական կենտրոնը¹⁵²: Կարծում ենք, որ մ.թ.ա. II հազարամյակում Աղվանքի տարածքում քաղաքներ ընդհանրապես գոյություն չեն ունեցել, իսկ Շամախի քաղաքի ծաղկման ժամանակահատվածի սկիզբը պետք է համարել մ.թ.ա. I դարը: Հնագիտական պեղումների շնորհիվ անտիկ Շամախիի տարածքից հայտնաբերվել են միայն աղյուսից կառուցված պատերի մնացորդներ¹⁵³: Հին Շամախին գտնվում է ներկայիս Շամախի քաղաքից 1.5 կմ դեպի հյուսիս արևմուտք¹⁵⁴:

Դ. Խալիլովը և Ի. Բաբանը Աղվանքի տարածքում անտիկ շրջանի քաղաքատիպ ավան են համարում նաև Մինգեչաուրը¹⁵⁵: Սակայն թե՛ Պտղոմեոսը և թե՛ Անանիա Շիրակացին չեն հիշատակում այդպիսի քաղաքատիպ ավան:

Աղբրեջանցի հեղինակներն Աղվանքի կազմում հիշատակում են Ուրցեկ քաղաքը և նշում, որ իբր թե, այդ մասին վկայում է Մովսես Կաղանկատվացին՝ այն հիշատակելով որպես հոների թագավորության մայրաքաղաք՝ Վարաչան անունով¹⁵⁶: Այո՛, Մովսես Կաղանկատվացին իր աշխատության մեջ մի քանի անգամ հիշատակում է

¹⁵⁰ Халилов Дж., Бабаев И., *նշվ. աշխ.*, էջ. 103.

¹⁵¹ Латышев В., т. 1, с. 243; Մամեխիան Ս. Մուրավյովը տեղադրում է Ալեքսանդրացիների ոչ շատ հեռու (տե՛ս Муравьев С., *նշվ. աշխ.*, էջ 137):

¹⁵² Халилов Дж., Бабаев И., *նշվ. աշխ.*, էջ 104:

¹⁵³ Նույն տեղում, էջ 103:

¹⁵⁴ Ашурбейли С., Государство Ширваншахов (VI–XVI вв.), Баку, 1983, с. 39–40.

¹⁵⁵ Халилов Дж., Бабаев И., *նշվ. աշխ.*, էջ 105:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 106:

Վարաչան¹⁵⁷, որը տեղակայված է ներկայիս Բույնական (Բույնակսկ) քաղաքի մոտ գտնվող Կոսֆիր - Կումուխ վայրում¹⁵⁸: Վերջինս նույնիսկ հեռավոր կապ չունի, թե՛ Ուրցեկ քաղաքի, թե՛ Աղվանքի տարածքի հետ, քանզի գտնվում է Դաղստանի տարածքում:

Վերը նշված աղբբեջանցի հեղինակներն այսօրվա Աղբբեջանի տարածքում հայտնաբերված մեծ ու փոքր բնակավայրերն անվերապահորեն հայտարարում են աղվանական: Մակայն քաջ հայտնի է, որ Աղվանքը զբաղեցրել է ներկայիս Աղբբեջանի մի մասը, իսկ մնացած տարածքում բնակվել են բազմաթիվ ժողովուրդներ, և այդ քաղաքների ու բնակավայրերի մեծագույն մասը պատկանում է նրանց:

Նկատենք, որ Կամբեճան գավառում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հիշատակում է Վարազմանավառ բերդը՝ Կուդրաթ գյուղաքաղաքով. «Քամբեճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւոյ նորա բերդն Վարազմանաւառ, հանդերձ Կուդրաթ գեղաքաղաքաւ...»¹⁵⁹: Սա նշանակում է, որ բերդը գտնվում է կամ գյուղաքաղաքում, կամ նրա շրջակայքում: Ս. Երեմյանը, սակայն, իր կազմած քարտեզում Կուդրաթ գյուղաքաղաքը նշում է Կամբեճանի կազմում, իսկ Վարազմանավառ բերդը՝ Վիրքի¹⁶⁰: Առաջին հայացքից թվում է, թե կատարվածը տպագրական սխալ է: Սակայն նույն պատկերն է նաև Ս. Երեմյանի կազմած այլ քարտեզներում¹⁶¹, որտեղ այդ ամրոցը տրված է Վրաստանին: Եթե բերդը պատկաներ վերջինիս, ապա Ամանիա Շիրակացին այն կհիշատակեր Վիրքի սահմաններում, այլ ոչ թե Աղվանքի:

Աղվանքի հաջորդ քաղաքը Գվգավն է Ալազան գետի մոտ: Ըստ երևույթին, քաղաքի կառուցման վայրը պատահական չի ընտրված՝ «Գլուգաւ քաղաք, առ Աղուան գետով»¹⁶², քանի որ գետի առկայութ-

¹⁵⁷ Կաղանկատվացի, էջ 239, 255, 260:

¹⁵⁸ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի), քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 287, ծան. 218:

¹⁵⁹ «Աշխարհացոյց», էջ 29:

¹⁶⁰ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82, և կից քարտեզը, Բ6:

¹⁶¹ Երեմյան Ս., Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Երևան, 1984:

¹⁶² «Աշխարհացոյց», էջ 29:

յունը նայաստելու էր քաղաքի հետագա զարգացմանը: Գվգավից ոչ հեռու է հոսել մահ Կուր գետը: Բ. Հարությունյանը քաղաքը տեղադրել է Կամբեճանի ու Գետառուի սահմանում՝ Աղուան և Կուր գետերի միախառնման մոտակայքում¹⁶³:

Բ. Հարությունյանը Գետառու գավառում՝ Կուր գետի ափին, հիշատակում է Կյուրոպոլիս (Քանդակ) գյուղաքաղաքը¹⁶⁴, որին Ս. Երեմյանն ընդհանրապես չի անդրադարձել:

Ս. Երեմյանը Շաքե գավառի կազմում հիշատակում է Գիշ բնակավայրը, որը գտնվում է ներկայիս Նուխիից հյուսիս¹⁶⁵: «Աշխարհացոյց»-ում, սակայն, այդպիսի բնակավայրի հիշատակության մենք չենք հանդիպել: Կարծում ենք, որ Գիշ կոչվող բնակավայրը հանդես է եկել ավելի ուշ շրջանում:

Նշանավոր մյուս բնակավայրը Քաղաքերդ ամրոցն է Քաղաց դաշտ գավառում: Ներկայումս այն կոչվում է Աղդաշ¹⁶⁶: Ամրոցը գտնվել է Սեբոջ գետի ափին և ուներ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն, քանի որ Քաղաց դաշտից հյուսիս-արևելք արդեն սկսվում էր Ոստան-ի-Մարգալան գավառի տարածքը և Քաղաքերդ ամրոցը, որ ամենայն հավանականությամբ, նախատեսված էր պաշտպանել դրա հեռավոր մատույցները:

Այսքանով ավարտվում են «Աշխարհացոյց»-ի հաղորդումներն Աղվանքի քաղաքների ու բնակավայրերի մասին:

Այսպիսով՝ իր պետականության ժամանակաշրջանում (մ.թ.ա. I – մ.թ. V դ. կեսեր) աղվանական պետության տարածքը տարբեր չափերի է եղել: Պետականության շրջանում Ս. Երեմյանն այն հաշվում է 23.002 կմ² (?)¹⁶⁷: Սակայն դրանից պետք է հանել Կամբեճան գավառի 7510 կմ²-ը, քանի որ, ինչպես վերևում նշել ենք, այն եղել է Մեծ

¹⁶³ Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

¹⁶⁴ Նույն տեղում:

¹⁶⁵ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 48 և կից քարտեզը, Բ7:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 89:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 34, 120:

Հայքի կազմում՝ մինչև 387 թ.: Անանիա Շիրակացու օրերում՝ VII դ. գավառն արդեն գտնվում էր Աղվանքի կազմում և, բնական է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն այն պետք է հիշատակեր Աղվանքի գավառների կազմում ու դրանով դրանց թիվը հասցներ 11-ի, այն է՝ Եխնի, Կամբեճան, Բեխ, Շաքե, Գետառու, Հողմազ, Քաղաց դաշտ, Ոստան-ի-Մարգալան, Բազկան, Համբասի, Գեղավու: Բայց տարածքի նշված չափն Աղվանքն ունեցել է միայն Կամբեճանի միացումից հետո, իսկ մինչ այդ պետության տարածքը կազմել է մոտավորապես 15492 կմ²: Դրան ավելացնում ենք նաև Կամբեճանի 7510 կմ² և այն տարածքը, որը Ս. Երեմյանը նշում է որպես՝ «Գավազք» գավառի տարածք: Ինչպես նշել ենք, «Աշխարհացոյց»-ն Եխնի գավառը հիշատակում է որպես Վիրքին սահմանակից¹⁶⁸, իսկ Ս. Երեմյանը Վիրքի և Եխնի միջև տեղադրում է «Գավազք» գավառը, ինչը հավանաբար, եղել է Եխնիի տարածքը: Սրանով հանդերձ՝ Աղվանքի տարածքն ըստ «Աշխարհացոյց»-ի, Կամբեճան գավառի հետ կկազմի մոտավորապես 23.800–24.000 կմ:

Նման կերպ է ահա մեզ ներկայանում Աղվանքի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ սկզբնաղբյուրների:

¹⁶⁸ «Աշխարհացոյց», էջ 29:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՂՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայտնի է, որ Մեծ Հայքը 387 թ. բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Հայաստանի մեծագույն մասը, որն անցել էր Պարսկաստանին, դեռևս կառավարվում էր տեղական Արշակունի թագավորների կողմից: Սակայն այդ իրավիճակը երկար չշարունակվեց. 428 թ. վերացվեց Արշակունյաց թագավորությունը, և Հայաստանը դարձավ պարսկական մարզպանություն: Պարսից կառավարող շրջանները, սակայն, դրանով չսահմանափակվեցին: Նրանց նպատակն էր իրենց ենթարկել ամբողջ տարածաշրջանը: Ինչպես վերն ասվեց, պարսից արքունիքի համար գաղտնիք չէր, որ եթե կարողանային ընկճել Մեծ Հայքը, ապա հեշտությամբ կհնազանդեցնեին Աղվանքը և Վիրքը: Ուստի, երբ հաղթահարված էր դիմադրության ամենահզոր միջնաբերդը՝ Մեծ Հայքը, այն բաժան-բաժան արեցին, դրանից անջատեցին մի շարք գավառներ ու միացրեցին հարևան պետություններին: Ինչպես Փավստոս Բուզանդն է հաղորդում, «Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան...»¹: Բայց պատմիչը չի հիշատակում, թե ո՞ր գավառներն անջատվեցին և ո՞ր պետություններին միացվեցին:

Հայկական երկու աշխարհների՝ Ուտիքի և Արցախի, ճակատագրի հարցի պարզաբանումը կարևոր է նրանով, որ դա կապված է Այսրկովկասում վարչական նոր միավորի՝ մարզպանության, ստեղծման տարեթվի և վերջինիս սահմանների ճշգրիտ որոշման հետ: Նախ, փորձենք պարզել, թե Ուտիքն ու Արցախը երբ միացվեցին Աղ-

¹ Բուզանդ, Ե, գլ. Ա, էջ 400:

վանքին:

Մինչ XX դ. երկրորդ կեսը հայագիտության մեջ տիրապետող էր այն տեսակետը, որ 387 թ. Մեծ Հայքից բաժանման ժամանակ նրանից անջատվեցին Ուտիքն ու Արցախը և միացվեցին Աղվանքին², կամ աղվանացիներն այն ետ են գրավել³: Սակայն սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հետազոտողներին բերեց այդ կարծիքների վերանայմանը⁴:

«Աշխարհացոյց»-ը, նկարագրելով Աղվանքի սահմանները, հստակորեն նշում է, որ մինչև Կուր հասնող երկրամասը վերցված է Հայաստանից. «...ամտի ց Կուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց»⁵: Ինչպես տեսնում ենք, Անանիա Շիրակացին արձանագրում է, որ Կուրի աջափնյա հայկական գավառները տրվել են Աղվանքին, սակայն չի նշում, թե դա կատարվեց 387 թ. Հայաստանի բաժանման ժամանակ, բայց այլ թվական էլ չի նշում: Այս հարցում օգնության են գալիս հայկական մյուս աղբյուրները, որոնց հաղորդումներից պարզվում է, որ Հայաստանի բաժանումից հետո Ուտիքը և Արցախը մնացին նրա կազմում: Ուտի, «Աշխարհացոյց»-ի հեղինակը, որը ծանոթ էր հայ պատմիչների աշխատություններին, չէր կարող նկատի ունենալ 387 թ.:

Քննարկվող հարցում ուշագրավ է Կորյունի աշխատությունը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության հետ: Կատարելով իր առաքելությունը Աղվանքում և հրաժեշտ տալով

² Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 230; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 70, Մնացականյան Աս., նշվ. աշխ., էջ 67, Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 102, 114:

³ Тревер К., նշվ. աշխ., էջ 201, Гулиев Г., Торговые связи Кавказской Албании в раннем средневековье (по археологическим данным). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Баку, 1972, с. 10.

⁴ Ուրտաբեյան Բ., Հյուսիս - արևելյան Հայաստանի նախամարզայնական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, էջ 160, Հարությունյան Բ., Մեծ Հայքի բազմափոքրյան հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., էջ 91: Акопян А., նշվ. աշխ., էջ 225, Մվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 204-205, Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 32:

Արսվադեն թագավորին ու եպիսկոպոս Երեմիային՝ նա «Հասեալ գայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում անուն Խուրս կոչէին...»⁵: Սրանից ելնելով կարելի է ասել, որ Գարդմանը գտնվում էր մարզպանական Հայաստանի կազմում, քանի որ Մաշտոցը Կուրի ձախ ափին հրաժեշտ տվեց թագավորին և եպիսկոպոսին ու անցավ Գարդման⁷: Եթե Գարդմանը լինէր Աղվանքի կազմում, ապա պատմիչը հանգամանորեն չէր խոսի Մաշտոցի Գարդման անցնելու մասին:

Սրանից ինքնաբերաբար բխում է, որ եթե Ուտիքի գավառներից Գարդմանը չէր մտնում Աղվանքի մեջ, ապա Հայաստանի խորքում գտնվող Արցախը չէր կարող կազմել Աղվանքի մաս: Իրավացի է Բ. Ուլուբաբյանը՝ նշելով, որ Կորյունը գաղափար չունի պարսկահայատակ մարզից, և նրա համար Աղվանքն է բացառապես Կուրի ձախափնյակը⁸: Ա. Հակոբյանը Մեսրոպ Մաշտոցի հյուսիսային երկրորդ ուղևորությունը թվագրում է 428–430 թթ. միջակայքում⁹:

Պակաս հետաքրքիր չէ Մովսես Խորենացու տեղեկությունը հայոց արքունիքում կատարված մի դեպքի հետ: Հայոց թագավոր Խոսրովի մահից հետո Պարսկաստանին անցած Հայաստանի մասում թագավոր է դառնում արյաց արքայի որդին՝ Շապուհը: Վերջինիս ժամանակ էլ հայ նախարարների շարքում պատմիչը հիշատակում է Խոսրով Գարդմանացուն. «Դարձեալ երբեմն ի խնջոյս ուրախութեան Խոսրով Գարդմանացի ի զինուղ զեղխեալ առաջի Շապիոյ՝ զօրէն սեղեխի տոփեցելոյ զհետ ջնարահար քաջամատն կնոջ կրթէր: Ընդ որ ցասուցեալ Շապիոյ՝ հրամայէ ունել զնա և ի դահլճին պահել. այլ նա ի վաղակաւորն հաստատեալ զաջն ..., յիւր տունն անցեալ զնայր, և ոչ որ ի սպասատրացն արքունի համարձակեալ

⁵ «Աշխարհացոյց», էջ 29:

⁶ Կորյուն, էջ 72:

⁷ Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 227–228:

⁸ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 122:

⁹ Յակոբեան Ա., Մաշտոցի երկրորդ հիսիսային ուղևորութեան ժամանակը եւ խնդիրները. – 1600 հայոց գրեր, (Միջազգային գիտաժողով նվիրված հայոց գրերի գյուտի 1600-ամյակին), Երևան, 2006, էջ 126–127:

արկանել ի նա ձեռն, յառաջագոյն գիտելով զփորձ առնն»¹⁰: Այս փաստը մեկ անգամ ևս ժխտում է այն կարծիքը, թե, իբր, Ուտիքը գտնվում էր Աղվանքի կազմում, քանի որ գավառը պատկանում էր Խոսրով Գարդմանացուն և վերջինս դասվում էր հայոց նախարարների շարքին:

Վերոհիշյալ տեսակետի օգտին է խոսում նաև հայկական պետականության կարևոր որոշիչներից մեկը՝ Գահնամակը¹¹: Վերջինս ստեղծվել է Խոսրով Դ-ի կողմից 388 թ.՝ վավերացնելու համար վերամիավորված¹² Մեծ Հայքի թագավորության անկախությունը¹³, և Սահակ Պարթև կաթողիկոսն այն 432 թ. ներկայացրել է պարսկական արքունիքի հաստատմանը¹⁴: Գահնամակը հայ նախարարական տների դիրքի ու պատվի փաստաթուղթն է¹⁵: Դրանում հիշատակվում են «Գարդմանայ տեր» և «Միւնեաց երկրորդ» նախարարները¹⁶: Նույնը տեսնում ենք նաև հայոց ռազմական ուժը ցույց տվող փաստաթղթում՝ Ջորանամակում, որում վերոհիշյալ նախարարները ներկայացված են համապատասխանաբար «Ուտեացի» ու «Ծաղեացի» անուններով և արքունի բանակը համալրում են հազարական հեծյալով¹⁷: Նկատենք, որ Գահնամակը, հաստատվելով պարսից Վռամ արքայի կողմից, Հայաստանում գործել է մարզպանության ժամանակահատվածում: Սրանից ելնելով վստահորեն կարելի է

¹⁰ Խորենացի, Գ. գլ. ԾԾ, էջ 331–332:

¹¹ Հայաստանում նախարարական գահերը ըստ ավանդության սահմանել է Վաղարշակ արքան (տե՛ս Խորենացի, Գ. գլ. Է, էջ 109–112): Այդ մասին պաշտոնական փաստաթուղթը, սակայն, ստեղծվել է ավելի ուշ՝ Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո:

¹² 388 թ. Խոսրով IV-ը (386–391 թթ.), օգտագործելով քաղաքական բարենպաստ իրադրությունը, իր թագավորությանը միացրեց Հայաստանի բյուզանդական հատվածը. (տե՛ս Խորենացի, Գ. գլ. ԽԹ, էջ 319–320): Սակայն 408 թ. Մեծ Հայքի արևմտյան մասը նորից ընկավ բյուզանդական լծի տակ (տե՛ս Հարությունյան Բ., «Գահնամակի» բվագրման հարցի շուրջը. – ՊԲՀ, 1976, քիվ 2, էջ 69):

¹³ Հարությունյան Բ., «Գահնամակի» բվագրման հարցի շուրջը, էջ 74:

¹⁴ Նույն տեղում, էջ 72:

¹⁵ Ուլուբաբյան Բ., Դավազներ Հայոց Արեւիլից կողմանց պատմության, էջ 124:

¹⁶ Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 280:

¹⁷ Նույն տեղում, էջ 282:

ասել, որ Ոստիքը և Արցախը գտնվում էին Հայաստանի կազմում, իսկ եթե դրանք 387 թ. անջատված լինեին, ապա 432 թ. հաստատված փաստաթղթում դրանց անունները տեղ չէին գտնի:

Ներկայացված փաստերին ավելացնենք ևս մեկը:

450 թ. բռնկվեց հայոց հուժկու ապստամբությունը: Հավատարմով նախարարների կեղծ ուրացությանը՝ Հազկերտ Բ-ն նրանց ճանապարհում է Հայաստան: Նրանց հետ ուղարկում է նաև 700 մոզերի, որոնք պետք է զրադաշտականություն տարածեին երկրում: Դեպքերի ականատես Եղիշեն հաղորդում է, որ մոզերն արքունիքից հրաման ունեին մտնելու «...որպես Հայոց աշխարհին, նոյնպես և Վրաց և Աղուանից և Լիվնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաղեից և Դասն և որ այլ ևս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունեին զբրիստոնեութիւն»¹⁸: Եղիշեն «Ծաղեից» իշխանությունը կամ Արցախը (Փոքր Սյունիքը)¹⁹ հիշատակում է Աղվանքից առանձին, իսկ պատմիչի այս վկայությունը վերաբերվում է 450 թ.: Եթե Արցախը լիներ Աղվանքի կազմում, ապա պատմիչն այն չէր հիշատակի որպես նրանից անկախ միավոր: Ճիշտ է, այստեղ խոսք չկա Ոստիքի մասին, սակայն, կարծում ենք, որ թե՛ Ոստիքը, թե՛ Արցախն այդ ժամանակ գտնվել են Հայաստանի կազմում և V դ. երկրորդ կեսին միասին են անցել Աղվանքին:

Եղիշեի վերոհիշյալ վկայությունը միակը չէ նրա աշխատությունում: Խոսելով մարզպան Վասակ Սյունու գործունեության մասին, երբ վերջինս փորձում էր ապստամբներին զրկել հնարավոր դաշնակիցներից՝ նրանց միայնակ թողնելով պարսից գերակշիռ ուժերին դեմ հանդիման, պատմիչը նշում է. «Սոյնպես առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱր-

¹⁸ Եղիշե, էջ 51:

¹⁹ Պապ թագավորը վերացրեց Ծաղեացվոց իշխանությունը, նրա կալվածքները հանձնեց Սյունյաց նախարարական տանը (տե՛ս Հարությունյան Բ., Սեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., էջ 83):

ցախ և յԱղուանս, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց...»²⁰։ Ինչպես նախորդ հիշատակության մեջ, այնպես էլ այստեղ Արցախը Աղվանքի մաս չի կազմում։ Առաջին հայացքից՝ մարզպանական Հայաստանի մաս էլ չէ, քանի որ երկու դեպքում էլ հիշատակվում է դրանցից անկախ։ Որ Արցախն Աղվանքի կազմում չէր, երևում է Եղիշեի հաղորդումից, իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ Արցախը հիշատակվում է մարզպանական Հայաստանից առանձին, ապա դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Փոքր Սյունիքի իշխանությունը որոշել էր պահպանել չեզոքություն՝ չկանգնելով ո՛չ մարզպանի և ո՛չ էլ սպարապետ Վարդան Մամիկոնյանի կողքին, ինչպես, օրինակ, վարվեց հունաց հատվածի նախարար Վասակ Մամիկոնյանը։

Կարծում ենք, վերոհիշյալ իրողությունները խոսում են Ոստիքի և Արցախի մարզպանական Հայաստանի կազմում գտնվելու օգտին։

Գտնում ենք, որ 387 թ. բաժանումից հետո Մեծ Հայքի արևելյան սահմանը մնաց անփոփոխ։ Թեկուզ մասնատված, բայց այն դեռևս իրենից լուրջ ուժ էր ներկայացնում, և աղվանացիները չէին կարող տրվել հայկական այդ նահանգները։ Համոզիչ է Բ. Ուլուքաբյանի այն տեսակետը, ըստ որի «Եթե 387 թ. աջափնյա երկու նահանգները միացված լինեին Աղվանքին, ապա հենց այդ ժամանակ էլ Արցախի և Ոստիքի թեմերը պետք է անցնեին Աղվանից եկեղեցուն»²¹։

387 թ. բաժանումից հետո պարսից արքունիքը, բացառությամբ քոչվորությունների, հավանական է, մահ սահմանակից մի քանի շրջանների, Հայաստանի տարածքը թողեց անփոփոխ։ Հետագայում, ինչպես կտեսնենք, Ոստիքում և Արցախում, որոնք Պարսկաստանի կողմից բռնի միացվել էին Աղվանքին, աղվանից իշխանությունը ձևական բնույթ էր կրում և շուտով դադարեց գոյություն ունենալ, քանի որ հայկական այդ նահանգներում տեղ ու տնօրինություն էին անում հայ իշխանական ընտանիքները։

Հայաստանից Ոստիքի և Արցախի անջատման տարեթվի հարցն

²⁰ Եղիշե, էջ 94։

²¹ Ուլուքաբյան Բ., Դավազներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 127։

առնչվում է նաև Աղվանքում մարզպանության կազմավորման թվականի հետ, և ուսումնասիրողները նշում են մի քանի թվականներ (այդ մասին կխոսվի ստորև): Սակայն արդեն հստակ է, որ ամբողջ IV-դարում Ուտիքն ու Արցախը մնացին Հայաստանի կազմում:

Ինչպես նշեցինք, Աղվանքում մարզպանության ստեղծման տարեթվի շուրջ ուսումնասիրողների մոտ միասնական տեսակետ չկա: Հայագետ Ն. Ակինյանը գտնում է, որ Ուտիքը և Արցախը Մեծ Հայքից անջատվել են III դ. վերջին՝ Դիոկղետիանոս կայսեր ժամանակ²²: Նման կարծիքի համար, սակայն, ոչ մի հիմք չկա: Ս. Երեմյանը նախ համարում էր, որ մարզպանությունը կազմավորվել է 387 թ., ելնելով Մեծ Հայքից Աղվանքի քաղաքական ու տնտեսական կապվածությունից, գտավ, որ 387 թ. Արցախը և Ուտիքը տրվեցին Աղվանքին և որ նույն թվականին էլ այն վերածվում է մարզպանության²³: Սակայն իր աշխատություններից մեկում, Ուտիքի և Արցախի բռնակցումն Աղվանքին Ս. Երեմյանը տեսնում է ավելի վաղ. «Մեծ Հայքի տարածքը փոքրացավ 363 թ. Հովհանոսի «ամոթալի» դաշնագրից հետո, երբ անջատվեցին Արցախը և Ուտիքը»²⁴: Այլևս չխորանալով մանրամասների մեջ, նշենք միայն, որ 363 թ. կնքված պարսկա-հռոմեական պայմանագրում Ուտիքն ու Արցախը չի հիշատակվում²⁵:

Ավելի ուշ Ս. Երեմյանը վերանայեց իր տեսակետը՝ Աղվանքում մարզպանության կազմավորման տարեթիվը նշելով 461 թ.²⁶:

Կ. Տրեվերը նույնպես համարում է, որ Աղվանից մարզպանությունը կազմավորվել է 461 թ.՝ գրելով. «Վաչե Բ-ն մոտ 461 թ. հրաժարվեց գահից և դրանից հետո Աղվանքը կառավարում էին պարսիկ

²² Ակինյան Ն., Մովսես Դաիստրյանցի (կոչումը Կաղանկատուացի) և իր պատմությունն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 1:

²³ Еремян С., Политическая история Албании, III–VII вв., “Очерки истории СССР III–IX вв.”, М., 1958, с. 314; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34:

²⁴ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 70:

²⁵ Տե՛ս Марцеллин, VII, 9–12.

²⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 194:

մարգարանները»²⁷: Ինչպես կտեսնենք, այս կարծիքը հետագայում որոշ վերապահումներով, ընդունելի դարձավ ուսումնասիրողների համար և նոր փաստարկներով ավելի ամրապնդվեց:

Քանի որ արդեն ապացուցված փաստ էր, որ 387 թ. հետո Ուտիքն ու Արցախը Հայաստանի կազմում էին, ապա ուսումնասիրողները փորձել են նշել կոնկրետ թվական, թե երբ անջատվեցին հայկական գավառները մարգարանական Հայաստանից:

Հարցը բազմակողմանի քննության ենթարկեց Բ. Ուլուբաբյանը: Նա ապացուցեց, որ 428 թ. Պարսկաստանը Ուտիքից, Արցախից ու Աղվանքից կազմել է հարկատու մի մարզ²⁸, և որ հայկական նահանգներն ընդգրկվել են ոչ թե Աղվանից թագավորության, այլ մարգարանության կազմի մեջ²⁹:

Անշուշտ, կարելի է համաձայնել Բ. Ուլուբաբյանի կարծիքի հետ այն մասով, որ Ուտիքը, Արցախը և Աղվանքը կազմեցին հարկատու մի մարզ: Պարսիկ մարգարանի գլխավորությամբ վարչական նոր միավորի մեջ հայկական նահանգները և Աղվանքն ունեին նույն կարգավիճակը, այսինքն՝ հայկական տարրը որևէ կախում չուներ աղվանացիներից, այլ նրանց հետ հավասարապես ենթարկվում էր պարսից պաշտոնյային՝ հարկահանության մասով: Բայց ինչ վերաբերում է մարգարանության ստեղծման թվականին, այն է՝ 428 թ., ապա, գտնում ենք, որ պարսից արքունիքը այդ թվականին չէր կարող հայկական գավառները անջատել և ստեղծել Աղվանից մարգարանություն: Ճիշտ է՝ թեև պարսիկները Արևելյան Հայաստանում վերացրեցին թագավորությունը, սակայն նրանք որդեգրել էին հայ նահապարհներին սիրաշահելու քաղաքականությունը: Դա էլ հանգեցրեց թագավորության կործանմանը, և ոչ թե տարածքների կորստի:

Պարսից արքունիքը հայկական հարցում խիստ հետևողական էր: Սակայն եթե ուշադիր հետևելու լինենք տարածաշրջանում նրա

²⁷ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 225:

²⁸ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 127:

²⁹ Ուլուբաբյան Բ., Աղվանից թագավորության տան հարցի շուրջը. - ԼՀԳ, 1971, թիվ 7, էջ 53, 60:

քաղաքականությանը, ապա կոտեսներ, որ արքունիքն իր առջև դրված խնդիրներն իրականացնում էր մաս առ մաս՝ անցանկալի դեպքերից գերծ մնալու համար, սպասելով բարենպաստ առիթի:

Վարչաքաղաքական նոր բաժանման մասին այլ կարծիք ունի Բ. Հարությունյանը: Նա գրում է. «428 թ. Արևելյան Հայաստանի տարածքը պարսից արքունիքի կողմից ենթարկվեց վերաձևության, սակայն ոչ մի փաստ չկա այն մասին, որ Արցախն ու Ուտիքը հենց այդ ժամանակ միացվեցին Աղվանից վարչական շրջանին»³⁰, ապա, շարունակելով, մանրամասնում է. «...արքունական կալվածքների այն մասը, որ Ագաթանգեղոսի մոտ կոչվում էր «յուտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի ի ձմերոցս արքայութեանն Հայոց», իսկ Եղիշեի մոտ՝ «...ներձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից» հավանաբար 428 թ. մտցվեցին Աղվանից մարզի մեջ»³¹: Ընդհանրացնելով կատարած քննությունը, պատմաբանը գտնում է, որ «Արցախի և Ուտիքի՝ դեռևս հայկական մարզականությանը պատկանող շրջանները, Աղվանից մարզականությանը կցվել են 450–451 թթ. պարսկական տիրապետության դեմ հայերի բարձրացրած ապստամբության պարտությունից հետո կամ անմիջապես 451 թվին, կամ էլ 451–481 թթ. ընթացքում»³²:

Մենք սակայն, կարծում ենք, որ 450–451 թթ. ապստամբությունից հետո պարսից արքունիքն ընդհանրապես չէր կարող զբաղվել վարչական փոփոխություններով, քանի որ ուժերի գերագույն լարումով վերջերս էր կարողացել ճնշել հայոց ապստամբությունը, իսկ պարսկահպատակ գավառներն էլ սշտապես ենթարկվում էին հոնների և քուշանների ասպատակություններին: Ըստ այդմ, գտնում ենք, որ Այսրկովկասում կատարված վարչական փոփոխությունները կատարվեցին համեմատաբար խաղաղ ժամանակներում, երբ գահակալական կոիվներում հաղթանակեց Պերոզը, ճնշեց Աղվանից ապս-

³⁰ Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387–451 թթ., էջ 88–89:

³¹ Նույն տեղում, էջ 89:

³² Նույն տեղում, էջ 92:

տամբությունը և զբաղվեց վարչական նոր միավորների ստեղծմամբ:

Իսկ ինչ վերաբերում է Բ. Հարությունյանի այն տեսակետին, որ Արցախը և Ուտիքն Աղվանից մարզպանությանը կարող էին կցվել 451–481 թթ. ընթացքում, ապա դա հետագայում ընդունելի դարձավ ուսումնասիրողների կողմից և, ինչպես կտեսնենք նշվեց կոնկրետ քվակսանը:

Ըստ Ա. Հակոբյանի՝ 428 թ. Ուտիքն ամբողջությամբ, որպես հայ Արշակունիների տիրույթ, անցավ Պարսկաստանին, քանի որ Սասանյանները ստացան Հայոց թագավորի տիրույթները, իսկ Արցախում շարունակում էին իշխել հայ նախարարները, և, մինչ վարչական նոր մարմինների ամրապնդումը, պետք է սիրաշահեին նրանց³³: Ապա, շարունակելով իր միտքը, գրում է. «450–451 թթ. ապաստամբությունից հետո Սասանյաններն անջատեցին Արցախը հայկական մարզպանությունից և տվեցին Աղվանից թագավորությանը»³⁴: Ա. Հակոբյանն իր այս կարծիքը հիմնավորում է նրանով, որ աղվանացիներն Արցախը ստացան որպես «պարզև» պատերազմին չմասնակցելու համար³⁵: Մենք համամիտ ենք Ա. Հակոբյանի տեսակետին, որ աղվանացիներն այդ «պարզև» ստացան իրենց երկրի մի խաղի շնորհիվ, այն է՝ չեկան մարտադաշտ՝ դաշնակից հայերին թողնելով պարսից գերագանց ուժերին դեմ հանդիման: Չէ՞ որ դրանից առաջ հայերը, ուժերի գերագույն լարումով, օգնել էին նրանց՝ երկիրը փրկելով պարսկական ավերումից: Սակայն աղվանացիներն այդ «պարզև» ստացան մի փոքր-ուշ:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե հայկական երկու նահանգներն ունեցել են տարբեր ճակատագրեր, Ուտիքը և Արցախը միասին են մաս կազմել Աղվանից մարզպանությանը:

Վիճահարույց հարցին այլ կերպ է մոտենում Է. Դանիելյանը: Անդրադառնալով Ուտիքի և Արցախի ճակատագրի վերաբերյալ

³³ Акопян А., նշվ. աշխ., էջ 114:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

ուսումնասիրողների հայտնած տեսակետներին և քննության ենթարկելով պատմիչների հաղորդումները խնդրո հարցի վերաբերյալ՝ նա գտնում է, որ Ուտիքի և Արցախի՝ իբրև Աղվանքի հետ վարչա-քաղաքական միավորներ, հանդես գալու մասին ոչ մի տեղեկություն չկա և եզրակացնում է, որ Արցախն ամբողջապես, իսկ Ուտիքը զգալի չափով ինքնիշխան էին³⁶:

Եթե Ուտիքն ու Արցախը ինքնիշխան էին և չէին մտնում Աղվանից մարզպանության կազմի մեջ, ապա հարց է ծագում՝ ի՞նչ կարգավիճակում էին գտնվում և ի՞նչ հանգամանքներում էին դուրս մնացել հայոց մարզպանությունից: Եվ ինչպե՞ս կախող էր պատահել, որ հայերի ապստամբությունից հետո տարածաշրջանում տեր ու տնօրինություն անող Պարսկաստանը հանդուրժեր Ուտիքի և Արցախի ինքնիշխանությունը: Ելնելով ստեղծված քաղաքական հանգամանքներից, գտնում ենք, որ վերոհիշյալ ժամանակ Ուտիքը և Արցախը, մինչև Պերոզի կողմից կատարված փոփոխությունները, գտնվում էին մարզպանական Հայաստանի կազմում, այլ ոչ թե անկախ էին: 451 թ. Ավարայրի ճակատամարտից հետո պարսկական բանակը շարունակեց արշավանքը տարածաշրջանում³⁷, մասնավորապես, փորձելով պատժել հայերի դաշնակից հոների, և Ուտիքն ու Արցախը չէին կարող իրենց անկախ կարգավիճակով դուրս մնալ պարսիկների տեսադաշտից:

Եվ, ինչպես գիտենք, հայկական նահանգները, ի վերջո, միացվել են Աղվանից մարզպանությանը, և վիճահարույց է մնում միայն տարեթվի հարցը:

Ուտիքի և Արցախի կարգավիճակի վերաբերյալ սպառնիչ պատասխաններ է տալիս Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը. «Արցախ յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկուտասան... զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի հայոց», «Ուտիք... ունի գաւառս

³⁶ Դանիելեան Է., նշվ. աշխ., էջ 14, 37:

³⁷ Եղիշե, էջ 128–129:

զոր Աղուանք ունին՝ եւթն»³⁸:

Ինչպէս բազմիցս նշել ենք, «Աշխարհացոյց»-ն պատմաաշխարհագրական այն եզակի հուշարձանն է, որի տեղեկությունները, հատկապէս Մեծ Հայքի, Աղվանքի և Վիրքի մասին հետագա ուսումնասիրողների կողմից բարձր գնահատականի են արժանացել: Եվ ոչ մի ուսումնասիրող մինչ օրս որևէ կասկած չի հայտնել այդ սկզբնաղբյուրի, մասնավորապէս, Աղվանքին վերաբերող տվյալների մասով և դրանք օգտագործել է իրենց բուն նշանակությամբ: Եվ ապա՝ դա այն սկզբնաղբյուրն է, որն արտացոլում է տարածաշրջանում Պարսկաստանի կողմից կատարված վարչատարածքային փոփոխություններն իր ամենայն մանրամասնություններով:

428 թ. Արշակունյաց թագավորության անկումից հետո Ոստիքն Աղվանքի կազմում է տեսնում մահ Ա. Ղարազոյզյանը՝ գրելով. «450 թ. դրությամբ Ոստիքի Խաղխաղ քաղաքն արդեն հանդիսանում էր Աղվանքի թագավորների ձեռնոցը: Հետևաբար՝ հավանական է կարծել, որ Ոստիքի անցումն Աղվանքին տեղի է ունեցել Արշակունյաց հարստության անկումից՝ 428 թ.-ից հետո»³⁹:

Աղվանքում մարզպանական կարգի հաստատմանը հատկապէս անդրադարձած Հ. Սվազյանը գրում է, որ մարզպանությունն Աղվանքում ստեղծվել է 461 թ.՝ Վաչէ Բ-ի գահից հեռանալուց և թագավորական իշխանության վերացումից հետո, քանի որ 457–461/462 թթ. ապստամբությունը ճնշելուց հետո Պերոզը, որն այլևս վստահ չէր, թե այն չի կրկնվելու և հակասասանյան շարժումներին վերջ տալու ձգտումով հեռացնում է Աղվանից թագավորին գահից և Աղվանքը վերածում մարզպանության⁴⁰:

Ինչ վերաբերում է Ոստիքի և Արցախի քաղաքական կարգավիճակի մասին աղբյուրացի հեղինակների տեսակետներին, ապա մենք դրան արդեն հանգամանորեն անդրադարձել ենք, սակայն

³⁸ «Աշխարհացոյց», էջ 33:

³⁹ Ղարազոյզյան Ա., Գարդման, Երևան, 2009, էջ 28, ծան. 27:

⁴⁰ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 201–202:

նշենք, որ նրանք հայկական այդ երկու նահանգները համարում են աղվանական և, ինքնըստինքյան, հարցը փակված համարում: Սակայն, ինչպես տեսանք սկզբնաղբյուրների քննությունից, Ուտիքը և Արցախը սկզբից ևեթ պատկանել են Մեծ Հայքին ու շարունակել մնալ մարզպանական Հայաստանի կազմում մինչև 461 թ., երբ Այսրկովկասում տեղի ունեցան շրջադարձային այնպիսի իրադարձություններ, որոնք վերջնականապես փոխեցին տարածաշրջանի վարչաքաղաքական դիմագիծը:

Ինչպես տեսանք, երկարատև պայքարից հետո Սասանյան Պարսկաստանին, ի վերջո, հաջողվեց վերացնել տարածաշրջանում իրեն թշնամի Արշակունիների թագավորությունը՝ Հայաստանում: Հասկանալի է, Պարսկաստանը չէր բավարարվելու միայն դրանով, և քանի որ դժվարին արգելքը հաղթահարված էր, ապա նոր ստեղծված վարչակարգը պարտադրվեց նաև մյուս պետություններին՝ Վիրքին և, մասնավորապես, Աղվանքին: Մարզպանության ամրապնդումից հետո, իր նպատակների մեջ հետևողական պարսից արքունիքը փորձում էր վերացնել նախարարական իշխանությունները, ինչպես դա արեց Մեծ Հայքում: Դրա հետևանքով տարածաշրջանում ամբողջ V դարի ընթացքում տեղի ունեցան ազատագրական շարժումներ:

457 թ. Հազկերտ Բ-ի մահից հետո նրա երկու որդիների միջև բռնկվում է գահակալական պայքար: Օգտվելով այդ հանգամանքից՝ Աղվանից Վաչե Բ (444–461 թթ.) թագավորն ապստամբություն է բարձրացնում՝ փորձելով թոթափել պարսկական լուծը: Սկզբնական շրջանում ապստամբները լուրջ հաջողությունների են հասնում՝ մի քանի ճակատամարտերում ջախջախելով պարսից զերակշիռ ուժերը⁴¹: Սակայն 461 թ. Պերոզը մեծ դժվարությամբ ճնշելով հակապարսկական այս ապստամբությունն ու զգալով, թե իրենից ինչ վտանգ է ներկայացնում թագավորական իշխանությունը, նաև համոզված չլինելով, թե ապստամբություններն ապագայում չեն կրկնվելու, գահազրկում է Աղվանից թագավորին ու երկիրը վերածում մարզ-

⁴¹ Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ, էջ 16:

պանություն: Այդ կապակցությամբ Մովսես Կաղանկատվացին հաղորդում է. «...քանզի ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից Պերոզ զայրացեալ մոլեգներ իբրև զկատաղել շուն, կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի միանգամայն, շարժել զեկեղեցիս և բառնալ զկարգ քրիստոնէութեան և հաստատել կարգել յիրում իշխանութեանն զմոգութեան ղիսապաշտութիւնն...»⁴²:

Եթե վերացվում էր թագավորությունը, ապա արմատախիլ էր արվում և թագավորական ողջ կառույցը՝ փոխարինվելով մոր վարչակարգով: Իսկ վերջինս պարտադրում էր իր պայմանները: Մովսես Կաղանկատվացու հաղորդումից պարզվում է, որ Աղվանքի գահազրկված Վաչե Բ թագավորին տրվեց միայն «հազար երդ»⁴³ հող որպես հայրենական ժառանգություն. «Իսկ սա հաճեցաւ միայն զսեպիականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ»⁴⁴: Այս վկայությունից երևում է, որ Վաչե Բ-ին բաժին ընկան միայն հայրական կալվածքները, իսկ արքունական արդէն նախկին հողերը դարձան պարսկական արքունիքի սեփականություն⁴⁵: Նման քաղաքականությունը մշակված համակարգ էր. նախ՝ հեռացնել թագավորին, գրավելով արքունական հողերը, ապա, եթե հնարավոր է, ոչնչացնել նախարարական դասը: Սա մի միջոցառում էր, որ պարսիկները կիրառում էին մարգապանություն ստեղծելիս⁴⁶:

Վաչե Բ-ի հետագա ճակատագրի վերաբերյալ Մովսես Կաղանկատվացին լռում է: Ուսումնասիրողները գտնում են, որ թագավորը

⁴² Նույն տեղում, Ա, գլ. ԺԶ, էջ 42:

⁴³ Մենք եւ միանում ենք Ա. Հակոբյանի տեսակետին, ըստ որի. «Հազար երդի» մասին վերջին վկայություն ցույց է տալիս, որ Վաչեն չի եղել Եսվաղենի աւագ որդին որը ժառանգելու էր իր հոր ամբողջ թագաւորութիւնը՝ ի տարբերութիւն մնացեալ որդիների, որոնք ծնողից ստանում էին այսպէս կոչուած «սեպուհական» կալուածքներ» (տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, էջ 94):

⁴⁴ Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ, էջ 17:

⁴⁵ Այդպէս՝ Մեծ Հայքում Արշակունիների ոստան Այրարատն անցավ Պարսկաստանին:

⁴⁶ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 202:

կամ մեկնել է Մազքթագ աշխարհ⁴⁷, կամ գահից հեռանալուց հետո հաստատվել է Արցախի Ավետարանոց գյուղում⁴⁸: Կարծում ենք, որ Վաչե Բ-ն մնացել է հայրական կալվածքում՝ որպես պատվավոր գերի: Հավանական է, դա նկատի ունի պատմիչը, երբ շեշտում է հայրական կալվածքի մասին: Ենթադրում ենք, որ պարսիկները պարզապես չէին բողնի քաղաքական վտանգավոր նման գործչին հաստատվել Մազքթագ աշխարհում կամ մեկ ուրիշ վայրում, ինչը հետագայում հղի կլիներ իրենց համար վտանգավոր հետևանքներով, այլ կպահեին տեսադաշտում՝ մշտական հսկողության տակ:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղվանքում մարզպանական վարչակարգի ստեղծումն առաջ բերեց տարածքային փոփոխություններ. ձևավորվեցին վարչական նոր միավորներ՝ ի հաշիվ մեկ և հոգուտ մյուս պետությունների: Դա մի միջոցառում էր, որով Պարսկաստանը ոչ միայն բուլացնում ու ջլատում էր Հայաստանը, այլև ստեղծում էր հարկային-վարչական մեկ միավոր⁴⁹: Հայաստանը, թեպետ բաժանված, այնուամենայնիվ, Այսրկովկասի վարչատարածքային ամենամեծ միավորն էր: Եվ վերը նշված գործոններով պայմանավորված՝ հունա-հռոմեական աղբյուրների Կովկասյան Ալբանիային և հայ մատենագիրների «քուն աշխարհ Աղուանից» երկրին մարզպանություն կազմավորելիս միացվեց հայկական երկու աշխարհները՝ Ուտիքն ու Արցախը, որի մասին մեզ ամենաստույգ տեղեկությունը հայտնում է Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ն: Այսպես՝ «Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թեպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց»⁵⁰: Այնուհետև տալիս է «Հայաստանից հանված» Ուտիքի և Արցախի աշխարհագրական նկարագրությունը. «Արցախ յերի կալով

⁴⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 194:

⁴⁸ Զալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 248:

⁴⁹ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 204:

⁵⁰ «Աշխարհացոյց», էջ 28–29:

Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՍիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՍեծիքանս, Սեծկուանս, զՀարճղանս, զՄուխանս, զՊիանս, զՊաձկանս, զՍիսականիս, զԿոտակ, զՔուստիփառէնս, զԿոխո, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց» և «Ուտի առ մոից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ. ունի գաւառս զոր Աղուանք ունին՝ եւթն. Արանոտ, Տոն, Ռոտպացեան, Աղուէ, Տուշբատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք»⁵¹: Հանգամանորեն տալով Ուտիքի և Արցախի նկարագրությունն ու դրանց միացումը Աղվանքին՝ Անանիա Շիրակացին, սակայն, չի նշում այդ փոփոխությունների ժամանակը:

Վերոհիշյալ հարցին վերևում մանրամասն անդրադարձել ենք և հայտնել մեր կարծիքը, ըստ որի, մասնավորապես, Աղվանքի համար այդ փոփոխությունները կատարվել են 461 թվականին, երբ այն վերածվեց մարզպանության: Վարչատարածքային նոր միավորի մեջ էին մտնում «զբուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լեռին»⁵², հայկական Ուտիքն ու Արցախը՝ 22.843 կմ² տարածքով⁵³: Ուժով ստեղծված մարզպանությունը կրում է «Աղուանք» անունը, որի սահմանները հյուսիսում Կերասուանյան լեռներն էին, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Իբերիան, իսկ հարավում՝ Արաքս գետը: Ուտիքն ու Արցախը պարսիկների կողմից անջատվեցին Հայաստանից և բուն Աղվանքի (անդրկուրյան երկիր) հետ կազմեցին մեկ մարզպանություն, որն էլ բաղկացուցիչ ավելի մեծ մասի անունից կոչվում էր Աղվանք, Աղվանից մարզպանություն⁵⁴:

Վերջինիս կենտրոնը սկզբում Չողն էր, ապա Պերոզի հրամանով վերակառուցվում է Պարտավ քաղաքը⁵⁵, որն էլ դառնում է Աղվա-

⁵¹ Նույն տեղում, էջ 33:

⁵² Նույն տեղում, էջ 29:

⁵³ Երենյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34, 120:

⁵⁴ Ուլուքբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 5:

⁵⁵ Ն. Աղոնցը գտնում է, որ Պերոզի հրամանով Պարտավը վերակառուցեց Զարմինի Հազարավուխտը (տե՛ս Աղոնց Ն., Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 415):

նից մարգպանության մայրաքաղաք. «Եւ ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէ. Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»⁵⁶, - հաղորդում է Մովսէս Կաղանկատվացին: Կարծում ենք, որ ոչ թե նոր քաղաք կառուցվեց, այլ Պարտավը վերակառուցվեց և հարմարեցվեց ժամանակի պահանջներին ու դրանից հետո էլ դարձավ Ուտիքի քաղաքական կենտրոնը: Այստեղ կենտրոնացան պարսից վարչական մարմինները՝ Աղվանից մարգպանի գլխավորությամբ:

Մովսէս Կաղանկատվացու հաղորդմամբ, ինչպես տեսանք, Պարտավը⁵⁷ Պերոզի հրամանով կառուցել է Վաչէ Բ-ն: Սակայն, հայտնի է, որ Պերոզը գահ է բարձրացել 459 թ. և պատերազմական գործողություններ սկսել Աղվանքի դէմ: Հարց է ծագում, այդ ե՞րբ Վաչեն հասցրեց կառուցել Պարտավը, այն էլ՝ Պերոզի հրամանով: Կարծում ենք, թագավորի անունը թյուրիմացաբար է հիշատակվել որպէս քաղաքի հիմնադրի: Մենք համամիտ ենք Բ. Ուլուբաբյանի այն տեսակետի հետ, ըստ որի «Մրա մեղքը պետք է փնտրել X դարի շարունակողի մեջ, որը մնան աղավաղումներ շատ ունի»⁵⁸: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Մովսէս Կաղանկատվացին Պարտավը հիշատակում է մահ Պերոզապատ անունով, ապա մենք ևս միանում ենք Ա. Հակոբյանի տեսակետին, որ այն առաջացել է «Պերոզակաւատ» անվան ձևափոխման արդյունքում՝ Մովսէս Դասխուրանցու կամ նրա որևէ նախորդի կողմից⁵⁹: Նկատենք, որ Պարտավի ավերակները պահպանվել են ներկայիս Բարդաա քաղաքի մերձակայքում, որը կրում է Պարտավ անվան արաբականացված ձևը⁶⁰:

⁵⁶ Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԵ, էջ 42:

⁵⁷ Յ. Մարկվարտը գտնում է, որ Պարտավը կառուցվել է Կավատ Ա-ի կողմից (տե՛ս Markwart J., Éranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Exkursen, S. 177).

⁵⁸ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 154:

⁵⁹ Յակոբեան Ա., «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-2 դարերի Ադուանքում, էջ 112:

⁶⁰ Յակոբ ալ-Համվի, Աշխարհագրական բառգիրք, -- «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 35:

Իր իշխանությունը հաստատելով Աղվանքում՝ պարսից արքունիքը շարունակեց ողջ տարածաշրջանն իրեն ենթարկելու ծրագրի հաջորդ մասն իրականացնելու, այն է՝ գրավել Կասպից ծովի արևմտյան շրջանները և լուծել մեկ այլ կարևոր խնդիր՝ կասեցնել խազարական արշավանքները, որոնք արդեն սպառնալիք էին պարսից տիրապետության համար Կասպից ծովի ափամերձ շրջաններում և, ինչու չէ, նաև Աղվանքում: Վերոհիշյալ տարածքների նվաճումը և խազարների առաջխաղացման կասեցումը բաժին հասավ Կավատ Ա-ին (488–531 թթ.) և Խոսրով Անուշիրվանին (531–578 թթ.):

Վերոգրյալի մասին արաբ պատմիչ Յակուտ ալ-Համալին, ունենալով պարսից մատենագիրների վկայությունները, հաղորդում է. «Խազարները ասպատակում էին երկրի խորքերը և հաճախ առաջանում մինչև Դայնավար: Սրա վրա Կուբազ իբն Ֆիրուզ թագավորը (*Կավատ – Ա. Վ.*) մի զորավար ուղարկեց իր մեծագույն զորավարներից՝ 12 հազար զորքով, որը Առանը ընկնելուց հետո հասավ առ-Ռաս կոչված գետի մոտ և գրավեց այնտեղից մինչև Շիրվան տարածվող երկրամասը: Կուբազը ինքը իր զորավարի հետևից հասնելով, խազարներին տեղահան անելուց հետո, Առանում կառուցել տվեց Բայլական և Բարզաս (*Պարտավ – Ա. Վ.*) քաղաքները, որը ամբողջ սահմանային քաղաքների կենտրոնն էր, նաև Կաբալան խազարների դեմ: Ապա նա կառուցեց Սուդ ալ-Լաբանը՝ Շիրվանի և Ալանաց երկրի մեջտեղը և Սուդ ալ-Լաբանի շուրջը կանգնեցրեց 360 քաղաքներ, որոնք քանդվեցին Բաբ ալ-Աբվարի շինվելուց հետո: Կուբազից հետո թագավորեց իր որդին՝ Անուշիրվանը, որը կառուցեց ալ-Շարբան քաղաքը, ինչպես նաև՝ Մասկատ քաղաքը: Հետո կառուցեց Բաբ ալ-Աբվարը, որը Աբվար կոչվեց, որովհետև շինված էր լեռնային անցքի վրա և այդ վայրերում բնակեցրեց Սալասջին կոչված մի ժողովուրդ: Հետո կառուցեց Առանի երկրի մեջ Շաքիի և Կամիրանի դռները, ինչպես նաև Ալ-Դուդանիա կոչվող դուռը»⁶¹:

Նվաճված մերձկասպյան շրջանները միացվեցին Աղվանից

⁶¹ Նույն տեղում, էջ 17:

մարգպանությանը, ինչի հետևանքով հյուսիսում սահմանը հասավ մինչև Դերբենդ: Աղվանից մարգպանությունն, արդեն ընդգրկում էր «զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մեջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն», հայկական Ուտիքն ու Արցախը, Չողը, Շրվան, Խսրվան, Դեկաց ու Թավասպարաց շրջանները: Ի դեպ, սրանք մարգպանության առավելագույն սահմաններն էին նրա գոյության ողջ ընթացքում, որը, ինչպես կտեսնենք, երկար կյանք չունեցավ:

Այսրկովկասում արդեն տեր ու տնօրինություն անող Սասանյան Պարսկաստանը վերածնունդ էր տարածաշրջանի քաղաքական քարտեզը: Պարսկաստանի ողջ տարածքը բաժանվեց չորս մասի՝ քուտակների: Երկրի այս վերջին վարչական բաժանումը մանրամասն նկարագրված է «Աշխարհացոյց»-ում. «Քուստի Կապկոհ, որ է կողմն Կաւկասու լեռանց, յորում են աշխարհ երեքտասան. Ատրպատական, Արմն՝ [որ է] Հայք, Վարջան՝ որ է Վիրք, Ռան՝ որ է Աղուանք, Բալասական, Սիսական, Առէ, Գեղան, Շանճան, Դւմունք, Դմբաւանդ, Տապրըստան, Ռւան, Ամլ...»⁶²:

Քուստակների ստեղծումը հետապնդում էր մի նպատակ՝ հեշտացնել նվաճված երկրների կառավարումը: Դրանով Պարսկաստանը վերջնականորեն և ամբողջապես իրեն ենթարկեց Աղվանքը, Մեծ Հայքն ու Վիրքը:

Աղվանից մարգպանությունն իր լրիվ և ամբողջական տեսքը ստացավ երկարատև ժամանակաշրջանում. կազմավորվելով 461 թ., երբ դադարեց գոյություն ունենալ Աղվանից թագավորությունը, այնուհետև VI դ. վերջերին Կավատի և Խոսրով Անուշիրվանի նվաճումների շնորհիվ ընդարձակվեց մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը:

Աղվանից մարգպանությանը կցված տարբեր միավորումները, թեպետ ենթարկվում էին Սասանյաններին, բայց իրենց գոյությունը շարունակեցին որպես վարչական ինքնուրույն միավորներ, ինչը պայմանավորված էր մարգպանության էթնիկական խայտաբղե-

⁶² «Աշխարհացոյց», էջ 40:

տությամբ⁶³: Ինչպես նշում են արաբ մատենագիրները. «Կասպից ծովի մերձակա շրջաններում բնակեցված ցեղերը միմյանց հետ հաղորդակցվում էին թարգմանչի միջոցով»⁶⁴: Եվ եթե առաջին հայացքից մարզպանությունը կրում էր «Աղուանք» անունը, և, թվում է, այն միատարր էր, սակայն, երբ սկսվեց մարզպանության տրոհման գործընթացը, հայկական Ուտիքում և Արցախում կազմավորվեց հայկական մի անկախ իշխանություն, որը, ինչպես կոտեսենք, սկսեց հանդես գալ «Աղուանք» անունով:

2. ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ

Պարսից արքունիքը, որը մեծ ջանքեր էր գործադրել Աղվանից մարզպանության կազմավորման ուղղությամբ, ի վերջո, անհաջողության մատնվեց. մարզպանությունը տրոհվեց և բաժանվեց վարչական մի քանի մասերի: Դրան նպաստեցին թե՛ ներքին, թե՛ արտաքին մի քանի գործոններ: Արտաքին գործոնը հիմնականում պայմանավորված էր դեպի տարածաշրջան խազարական ավերիչ արշավանքներով ու պարսկա-բյուզանդական պատերազմներով, որոնք փոքր ընդմիջումներով շարունակեցին ամբողջ VI դարում և այնքան թուլացրին երկու պետություններին, որ նրանք ի վիճակի չեղան դիմագրավելու արաբական վտանգին: Պարսկաստանը ստիպված էր ոչ միայն նրանց դուրս բշել Այսրկովկասից, այլև ամրացնել Կովկասյան լեռնանցքները, նաև կառուցել բազմաթիվ ամրություններ, որոնք կղժկարացնեին վաչկատուն ցեղերի առաջխաղացումը դեպի Պարսկաստանի խորքերը, քանի որ խազարները չէին բավարարվում միայն Աղվանից մարզպանության ասպատակությամբ: Մարզպանության հետագա ճակատագրի վրա, սակայն, բացասական մեծ ազդեցություն թողեցին Խոսրով Անուշիրվանի ձեռնարկած բարեփոխումները՝ սահմանային մարզերը բնակեցնելու և այնտեղ կառավա-

⁶³ Վարդանյան Ա., Աղվանից մարզպանության կազմավորումը, ԼՀԳ, 2010, թիվ 1-2, էջ 106:

⁶⁴ СМОМПК, вып 29, с. 13, вып. 31, с. 33.

րիչներ նշանակելու ուղղությամբ. «Ընտրում էր Անուշիրվանը թագավորներ և նշանակում է նրանց, նրանցից յուրաքանչյուրին շնորհելով շահական իրավունք առանձին մարզերի վրա: Դրանցից էին լեռների Խաքանը, այսինքն՝ Մերիրի (գահի) տիրակալը՝ Վահրաբգանշահ տիսողոսով, Գիլանի թագավորը՝ ինքը՝ Գիլանշահը և Տաբարասաբան շահը և ալ-լակզերի թագավորը՝ Գուրջանշահ տիսողոսով, Մասքուտների թագավորը՝ Լիրանշահ տիսողոսով և Շիրվանշահ կոչվող Շիրվանի թագավորը»⁶⁵: Այսբան առատածեռն շնորհումներից հետո սրանք պետք է պատվար հանդիսանային քոչվոր ցեղերի ներխուժումներին, սակայն Աղվանից մարզպանությունը կազմալուծվեց ու բաժանվեց մի շարք մասերի, որոնք սկսեցին հանդես գալ որպես առանձին իշխանություններ:

Հայկական ազգագավառները, որոնց ենթակայությունը մարզպանական վարչակարգին, ինչպես ասվեց, կրում էր ձևական բնույթ և Աղվանքի հետ համահավասար իրավունքներ ունեին պարսից արքունիքի առաջ, բնական է, չէին կարող անմասն մնալ կատարվող իրադարձություններին⁶⁶:

Եվ ահա, հայկական Ուտիքում և Արցախում կազմավորվում է մի ինքնուրույն պետական միավորում՝ «նախնական ազգն Հայկազնեանց»⁶⁷ Եռանշահիկ իշխանների գլխավորությամբ:

Երբ աղվանական վերջին պետական միավորումն անդարձ քայքայված էր և «Աղուանք» անվանումը դադարում է գոյություն ունենալ որպես աշխարհագրական անվանում, այն ստանում է նոր իմաստ՝ տարածվելով հայկական Ուտիքի և Արցախի վրա: Կարծում ենք, որ այնուհետև հայկական նահանգներն «Աղուանք» կոչվեցին այն պարզ պատճառով, քանի որ դրանք բնակչությամբ էթնիկապես միատարր էին, ի հակադրություն մարզպանության բազմացեղ և բազմալեզու ազգերի:

⁶⁵ Баладзори, նշվ. աշխ., с. 7.

⁶⁶ Ուլուքարյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 257:

⁶⁷ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ, էջ 172:

Վերականգնվում է պատմական արդարությունը. հայկական նահանգները, թե՛ իրենց դիմադրության և թե՛ զարգացման բարձր մակարդակի շնորհիվ Առանշահիկների գլխավորությամբ ստեղծում են պետական առանձին միավորում: Նոր կազմավորված հայկական իշխանությունն, ընդգրկում էր Կուրի և Արաքսի միջագետքը, ավելի ստույգ՝ հյուսիսում սահմանն անցնում էր Կուր գետով, հյուսիս-արևմուտքում՝ Հնարակերտ ամրոցով, հարավ-արևելքում՝ Արաքս գետով, իսկ հարավ-արևմուտքում՝ Արցախյան, Սևանի ու Մուրղուզի (Միափորի) լեռներով: Այս իշխանությունն է Ս. Յուշկովը համարում է «հայոց երբեմնի մեծ ու հզոր պետության մի բեկոր, որը, թեկուզ՝ կախյալ վիճակում, ապրում էր պետական ինքնահատուկ կյանքով»⁶⁸:

Աղվանից մարզպանության տրոհումից հետո Արաքս գետից Հնարակերտ ամրոցն ընկած տարածքը պատմիչների մոտ հիշատակվում է «Հայոց Արևելից կողմանք», «Ճորին աշխարհն Հայոց», «Ճորին Հայք»՝ կապված նոր ստեղծված վարչական կացության հետ: «Աղուանք» անվանումն արդեն դառնում է հիշյալ արտահայտությունների հոմանիշը՝ կորցնելով իր նախկին իմաստը: Դրա խոսումն ապացույցը Մատթեոս Ուռհայեցու հետևյալ հաղորդումն է. «...աշխարհն Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց»⁶⁹: Իսկ որ Ուտիքը, հետևաբար, նրանից հարավ ընկած Արցախը, գտնվում էր Հայաստանի կազմում՝ նշում է Վարդան Վարդապետը. «Ուտի ի մտից կայ Երասխայ ի մեջ Արցախայ և Կուր գետոյ, որ է Զուռ»⁷⁰: Իր այս հաղորդմամբ նա VII դ. «Աշխարհացոյց»-ից մի քանի հարյուրամյակ անց վերահաստատում է Անանիա Շիրակացու հաղորդում-

⁶⁸ Юшков С., նշվ. աշխ., էջ 137:

⁶⁹ Ուռհայեցի, էջ 246: Պատմիչը, խոսելով Տաշիր-Չորագետի կամ Կյուրիկյան քաղաքության մասին, օգտագործում է «քաղաքի Աղվանից» արտահայտությունը (տե՛ս Ուռհայեցի, էջ 14, 88, 92, 158): Այս առումով Ռ. Մաքսույանը կարծում է, որ «քաղաքի Աղվանից» անվանումը պայմանավորված էր նրանով, որ Կուրիկյաններին Ուտիքի Տավուշ գավառում պատկանում էին որոշ շրջաններ և բերդեր (տե՛ս Մաքսույան Ռ., Տաշիր-Չորագետ (X դ. - XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 101):

⁷⁰ Վարդան, էջ 10-11:

ները դրանց աշխարհագրական պատկանելիության մասին: Հայկական երկու նահանգները՝ Ուտիքն ու Արցախը, Կուր և Արաքս գետերի միջագետքում պահպանել էին իրենց քաղաքական դիմագիծը, փոխվել էր միայն ընդհանուր անվանումը, այսինքն՝ «Աղուանք» անունն արդեն կրում էին Ուտիքն ու Արցախը: Եվ հայկական այս նահանգները մերթ հայկական թագավորության կազմում, մերթ կիսանկախ վիճակում հետագա դարերում պայքարում էին տարածաշրջանն ունակոյս անող քոչվոր ցեղերի դեմ:

Այսպիսով՝ Աղվանից մարզպանության տրոհման հետևանքով առաջանում են նոր, էթնիկապես խայտաբղետ բնակչություն ունեցող և սեփական տիրակալներով կառավարվող վարչաքաղաքական միավորներ, որոնք սկսում են հանդես գալ տեղի իշխանական տների կամ ցեղերի անուններով՝ Գիլան, Լակզ, Լիբան, Շիրվան, Շաքի և այլն⁷¹: «Աղուանք» անունն էլ, որպես մարզպանության անվանում, դադարում է գործածվելուց՝ կորցնելով նախկին, ընդարձակ իմաստը և ձեռք է բերում այլ բովանդակություն՝ տարածվելով Ուտիքի և Արցախի վրա, այլ խոսքով գործածվելով Արաքս գետից Հնարակերտ ընկած տարածքում:

Արաբական տիրապետության ընթացքում նոր նվաճողներն այն անվանում էին «Առան»⁷²: Իրենց հպատակ վարչական այս միավորի մեջ նրանք տեսնում էին միանգամայն տարբեր, մույնիսկ վարչականորեն սահմանագատվող երկու Առան.՝Աղվանք՝ Հայոց Առան (Հայոց Արևելից կողմանք) և անդրկուրյան Առան (Ալբանիա)⁷³: Այդ առումով Յակուտ ալ-Համավին նշում է. «Քոտը գետ է Հայաստանի և Առանի միջև»⁷⁴:

⁷¹ Սվազյան Հ., «Աղվանք» տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ. – ԼՀԳ, Երևան, 2008, քիվ 2, էջ 262:

⁷² Յակուտ ալ-Համավին, նշվ. աշխ., էջ 102:

⁷³ СМОМІК, вып. 38, с. 99, 100, 105, Ուլտաքյան Բ., Դավազներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 26:

⁷⁴ Յակուտ ալ-Համավին, նշվ. աշխ., էջ 102:

3.ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐՈՒՄ (VI-VII դդ.)

Ինչպես տեսանք, V դարի ընթացքում Այսրկովկասում ծավալված հակապարսկական ապստամբություններն ընդհանուր առմամբ չունեցան այն հետևանքները, ինչ ակնկալում էին տարածաշրջանի ժողովուրդները, և Պարսկաստանը վերստին շարունակեց տեր ու տնօրինություն անել Այսրկովկասում:

Աղվանքում Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցիչ Վաչագան Գ Բարեպաշտի մահից հետո⁷⁵, պարսից արքունիքը տեղական ներկայացուցիչների փոխարեն, ինչպես վերը նշել ենք, Աղվանքում կառավարիչներ է նշանակում պարսիկ պաշտոնյաների:

Բյուզանդացիների օգնությամբ գահ բարձրացած Խոսրով Բ Փարվեզը (590–628 թթ.) իր դեմ բռնկված ապստամբության մասնակիցներից վրեժխնդիր եղավ: Այդ սպանդից ազատվեց Միհրան անունով մեկը, որն իբր թե 30 հազար ընտանիքով հեռանում է Պարսկաստանից՝ խազարների մոտ անցնելու նպատակով⁷⁶: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ հետագա գլխացավանքից ազատվելու համար Խոսրովը Միհրանին ուղարկում է մի գրություն՝ առաջարկելով իր բարեկամությունը և իրավունք է տալիս ընտրելու բնակության վայր: Միհրանն այդ ժամանակ հասած է լինում. «ի ստորոտն գաւառին Գ-արդմանայ»⁷⁷: Միհրանյան տոհմի ծագումնաբանության մասին

⁷⁵ Վաչագան Բարեպաշտը մահացել է 510 թ. Բարկուշատում, կասկածելի հանգամանքներում (տե՛ս Օրբելյան, գլ. ԻԱ, էջ 86): Բուն Աղվանքում 461 թ. Վաչե Բ-ի գահազրկումից որոշ ժամանակ հետո նորից վերականգնվեց Արշակունիների իշխանությունը: 481–484թթ. հաղթականորեն ավարտված հայոց ապստամբությունը վճռական նշանակություն ունեցավ տարածաշրջանի երեք երկրների համար: Դրա հետևանքով, հայոց մարզպանի պաշտոնը ստացավ Վահան Մամիկոնյանը, իսկ բուն Աղվանքում իշխանության գլուխ անցավ Վաչագան Բարեպաշտ Արշակունին: Ըստ Ա. Հակոբյանի՝ Վաչագան Բարեպաշտը կառավարել է 38 տարի (485–523 թթ.), (տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագան վեպ»-ը և Արշակունեաց քաղաքության խնդիրը Դ–Ջ դարերի Աղուանքում, էջ 119–120): Բայց, ինչպես հայտնի է, Վաչագան Բարեպաշտի մահից հետո Աղվանքում նորից հաստատվում է մարզպանական համակարգ:

⁷⁶ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ, էջ 171:

⁷⁷ Նույն տեղում:

ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ⁷⁸: Մենք համամիտ ենք այն ուսումնասիրողների տեսակետներին, որոնք չափազանցություն են համարում 30 հազար ընտանիքի գաղթը⁷⁹, որը համեստ հաշվակներով կազմում է մոտ 120 հազար բնակչություն: Այդքան հոծ բազմության գաղթը տևական ժամանակ կպահանջեր, և պարսից աշխարհակալ արքան, եթե չունենար այլ նպատակ, կարող էր արգելք հանդիսանալ իր երկրի բնակչության մի ստվար հատվածի՝ թշնամու կողմն անցնելուն: Դա երկրի համար ևս կունենար ծանր հետևանքներ, քանի որ միջնադարում բնակչությունը կազմում էր պետության հզորության հիմքը: Հետևաբար, Գարդմանում ապաստանած գաղթականությունը, մեր կարծիքով, եկել էր հատուկ նպատակով և ոչ թե պարսից արքունիքից ունեցած դժգոհության պատճառով: Իրավացի են այն ուսումնասիրողները, որոնք գտնում են, որ Խոսրով Փարվեզն ունենալով հեռուն գնացող նպատակներ փորձում էր տարածաշրջանում ուժեղացնել պարսկական տարրը⁸⁰, քանի որ 591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո Ոստիքը ձեռք բերեց ռազմավարական կարևոր նշանակություն, և պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմներում պարսկական զորաբանակն օգնություն կստանար Ոստիքում հաստատված «փախստականներից»: Հավելենք նաև այն հանգամանքն, երբ 624 թ. պարսիկները ներխուժեցին Ոստիք՝ բյուզանդացիների դեմ ճակատամարտ տալու համար. «Պարսից զորաբանակներն այստեղ հանդիպեցին ոչ թե իրենց բազավորից փախածների թշնամությունը, այլ նրանց իջևանած Գարդմանքը դարձրին կարևորագույն հենակետ՝ բյուզանդացիների դեմ վճռական ճակատամարտի նետվելու համար»⁸¹:

Հաստատվելով Գարդմանում՝ Միհրանը և նրա հաջորդներն ամեն ինչ անում էին գավառի հայկական իշխանությունը վերացնելու

⁷⁸ Տե՛ս Սվազյան Հ., Աղվանքը և Միհրանյան տոհմը, ԼՀԳ, 1980, թիվ 9, էջ 91–101:

⁷⁹ Тревер К., *նշվ. աշխ.*, էջ 235–236: Ուլուքաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 235:

⁸⁰ Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 229:

⁸¹ Ուլուքաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 236:

համար: Միհրանյան տոհմից «Քաջ» Վարդանը նենգությամբ կոտորում է հայկական իշխանական տան անդամներին⁸²: Սակայն, զգալով որ չնայած ձեռնարկվող քայլերին, իրենք չեն կարողանում տիրապետող դիրք գրավել հայկական միջավայրում, այդ պատճառով էլ վերը հիշատակված Քաջ Վարդանը ընդունում է քրիստոնեություն⁸³: Դրանից հետո արդեն նրանց իշխանությունն աստիճանաբար սկսում է տարածվել հայկական հարևան գավառներում:

VI դարի վերջում, կոտորելով տեղի Առանշահիկ իշխանական տան ներկայացուցիչներին, Ուտիքում հաստատվում է պարսկական Միհրանյան տոհմը, որը կարճ ժամանակ անց հայանում է և իշխում որպես հայկական նախարարական տոհմ: Ըստ Ֆ. Մամեդովայի՝ Միհրանյանները փոխարինեցին բուն Աղվանքի Արշակունի թագավորներին⁸⁴: Հակապատմական այս տեսակետը գիտության հետ և ոչ մի կապ չունի: Ուտիքի Գարդմանում հաստատված Միհրանյաններն ընդհանրապես կապ չունեին և չէին էլ կարող ունենալ Աղվանից Արշակունի թագավորների հետ, քանի որ վերջին Արշակունի թագավոր Վաչե Բ-ն, զահագրկվել էր 461 թ., իսկ այդ իշխանական ընտանիքը նոր անվանակոչված Աղվանքում ասպարեզ է իջել VI դ. վերջերին:

Այսպիսով, «ամրապնդվելով» Ուտիքի Գարդման գավառում՝ Միհրանյանները փոխարինելու եկան նրա նախկին բուն հայկական նախարարական տանը⁸⁵:

Վիճակն այսպիսին էր այժմ արդեն «Աղվանք» կոչվող երկրամասում VI դարի վերջին և VII դարի սկզբին, երբ մի վերջին անգամ նախարարական արշավանքների շրջանում երկու աշխարհակա-

⁸² Կադանկատվացի, Բ, գլ. ԺԷ, էջ 172:

⁸³ Նույն տեղում, Գ, գլ. ԻԳ, էջ 339:

⁸⁴ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 241.

⁸⁵ Պետք է նկատել, որ Առանշահիկների ու Միհրանյանների տիրապետությունը չի տարածվել միայն Արաքս գետից մինչև Կովկասյան լեռները: Այդ առումով իրավացի է Բ. Ուլուբաբյանը՝ նշելով, որ հայ իշխանների տիրապետության տակ եղած Աղվանից աշխարհը Հայոց Արևելից կողմանց երկու մահանգներն էին հյուսիսում՝ Կուր գետի սահմանով և Կամբենյան գավառի ընդգրկումով (տե՛ս Ուլուբաբյան Բ., Դավազներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 246):

«Արևելքի առյուծը»,⁸⁶ ինչպես Խոսրովին անվանում է Մովսես Կաղանկատվացին, մի քանի խոշոր ճակատամարտերում ջախջախեց բյուզանդական բանակները և կործանման եզրին հասցրեց հազարամյա կայսրությունը:

Նոր գահ բարձրացած Հերակլ կայսրը (610–642) սկզբնական շրջանում չի կարողանում կասեցնել Սասանյան աշխարհակալին: Սակայն վիճակը փոխվում է 622 թ.՝ Հերակլի հայտնի արշավաքոյ⁸⁷: Պատերազմական գործողությունների ռազմաբեմ է դառնում Այսրկովկասը՝ մասնավորապես Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերն. դա հետագայում ողբերգական հետևանքներ ունեցավ տեղի բնակչության համար: Հերակլը, որը կարողացել էր առավելության հասնել պարսիկների նկատմամբ, 624 թ. մնում է ձմեռելու «... ի կողմանս Աղաուանից, Վրաց և Հայոց աշխարհաց»⁸⁸: Պատրաստվելով զարնամը սկսվելիք ռազմական գործողություններին՝ կայսրը սպառնալիքներով փորձում է իր բանակը համալրել տեղական ռազմական ուժերով: Սակայն այդ երկրներն ավելի շատ հակված էին Պարսկաստանի կողմը և ոչնչով չեն օգնում կայսերական բանակին՝ զգուշանալով պարսից տիրակալից: Ռազմական գործողությունները մեծ վնաս հասցրեցին տեղի բնակչությանը: Աղվանների՝ ռազմական գործողություններին մասնակցելու մասին տեղեկություններ չկան, սակայն ինչպես ճիշտ են նկատել ուսումնասիրողները, եթե Աղվանից երկրի իշխանները մերժել են Հերակլին օգնություն ցույց տալ, ապա պատերազմական գործողություններին մասնակցել են պարսիկների կողմում, քանի որ Աղվանից իշխանության գլուխ կանգնած էին պարսկական ծագում ունեցող Սիիրանյանները⁸⁹:

⁸⁶ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԳ, էջ 146:

⁸⁷ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 13, «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեովանես Խոստովանող, Թարգմանությունը բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 18–37:

⁸⁸ Կաղանկատվացի, Բ, գլ. Ժ, էջ 132:

⁸⁹ Մվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 234:

Սկսված պատերազմում թե՛ Հերակլ կայսրը և թե՛ Խոսրով Փարվեզը փնտրում էին դաշնակիցներ, և՛ կայսրին հաջողվում է մեծամեծ խոստումներով խազարներին գրավել իր կողմը⁹⁰: Հերակլի հրավերին արձագանքած հյուսիսային ցեղերի առաջին արշավանքը տարածաշրջան տեղի է ունեցել 627 թ.: Խազարական ահռելի բանակը, Ջեբու-խաքանի գլխավորությամբ ճեղքելով Վորա Պահակը, ներխուժեց Այսրկովկաս: Մովսես Կաղանկատվացին սարսափելի գույներով է նկարագրում խազարների արշավանքները՝ ժողովրդի սպանող, գերեվարությունը և թալանը⁹¹: Ավարառու ցեղերի արշավանքը կրկնվեց 628 թ.: Այս անգամ մույնպես առաջին հարվածն իր վրա ընդունեց Աղվանից աշխարհը: Նշենք, որ ինչքան թուլանում էր Պարսկաստանը, այնքան խազարներն ավելի մեծ տարածքներ էին անպատիժ ասպատակում: Դիմադրության թույլ փորձ կատարվեց Պարտավում⁹², բերդում կենտրոնացնելով շրջակայքի բնակչությանը: Սակայն խազարները գրավում են քաղաքը և կոտորում բնակչության մեծ մասին:

Խազարական հորդան այնուհետև պաշարում է Տփղիսը, սակայն հաջողության չի հասնում: Քաղաքի պաշտպանները մեծ ճիգերի գնով կարողացան պաշտպանվել՝ գիտենալով, թե ինչ է սպասվում իրենց, եթե խազարները մտնեն քաղաք: Այսպիսին էր վիճակը Հայոց Արևելից կողմերում, երբ պարսկական արքունիքում կատարվեցին այնպիսի իրադարձություններ, որոնք որոշ ժամանակ անց պետք է դառնային մի քանի հարյուրամյակ կառավարող Սասանյան դինաստիայի կործանման պատճառը: 628 թ. հեղաշրջման հետևանքով, ոչ միայն գահից, այլև կյանքից զրկվեց Իրանի փառքը՝ աշխարհակալ Խոսրով Փարվեզը⁹³: Մովսես Կաղանկատվացին մի ամբողջ գլուխ է նվիրել արյաց արքայի սպանության հանգամանքներին⁹⁴: Նոր գահ

⁹⁰ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԲ, էջ 141:

⁹¹ Նույն տեղում Բ, գլ. ԺԲ, էջ 140–146:

⁹² Նույն տեղում, Բ, գլ. ԺԱ, էջ 135:

⁹³ Լեո, Երկեր, հ. 2, էջ 253:

⁹⁴ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԴ, էջ 146–149

բարձրացած Կավատը հաշտություն խնդրեց, Հերակլը չմերժեց նրա խնդրանքը: Թվում էր, թե տարածաշրջանում խաղաղություն հաստատվեց: Մակայն չբավարարվելով նախորդ արշավանքների հաբուստ ավարով՝ խազարները 629 թ. երրորդ անգամ ներխուժեցին Այսրկովկաս՝ պաշարելով Տփղիսը: Քաղաքը գրավվում է և ենթարկվում ավերածությունների: Ապա ավարառու հորդան Խաքանի որդու՝ Շաթի գլխավորությամբ շարժվում է Ուտիքի և Արցախի կողմերը, որն աղբյուրներում նշված է «Աղվանք» անունով: Աղվանից կաթողիկոս Վիրոն ամբողջ ժողովրդի կողմից հայատակություն է հայտնում խազարների առաջնորդին⁹⁵: Կաթողիկոսին են վերադարձնում գերիներին⁹⁶, իսկ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններն ընկնում են խազարների տիրապետության տակ:

Թեպետ Պարսկաստանը գնում էր դեպի կործանում, սակայն տարածաշրջանում պահպանում էր որոշ ազդեցություն և Ուտիքում ու Արցախում իշխանությունը հանձնում է իրեն հավատարիմ Միհրանյան տոհմից Վարազ-Գրիգորին, որը դառնում է «գառաջին իշխանն Աղուանից»⁹⁷: Նրա հաջորդի՝ Ջուանշիրի (642–683 թթ.)⁹⁸ օրոք կատարվեցին իրադարձություններ, որոնք եկան փոխելու Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրությունը: 630-ական թվականներին առաջացած Արաբական խալիֆայությունը ձեռնարկեց լայնածավալ նվաճումներ և շուտով դարձավ աշխարհի հզոր տերություններից մեկը: Արաբներն իրենց առաջին հարվածն ուղղեցին Մասանյան տերության դեմ: Որպես հպատակ երկրներ՝ Այսրկովկասի զինական ուժերը կանչվեցին Տիզբոն: Այստեղ Ջուանշիրին ներկայացնում են Հազկերտ Գ-ին (632–652 թթ.) և վերջինս հաստատում է նրան «սպարապետն Աղուանից»⁹⁹:

⁹⁵ Նույն տեղում, Բ, գլ. ԺԳ, էջ 161–162:

⁹⁶ Նույն տեղում, Բ, գլ. ԺԳ, էջ 163:

⁹⁷ Նույն տեղում, Բ, գլ. ԺԵ, էջ 172:

⁹⁸ Մվազյան Հ., Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, ԼՀԳ, 1973, թիվ 11, էջ 112:

⁹⁹ Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ, էջ 174:

Կարծում ենք՝ Ջուանշիրը Քաղեսիայի 637 թ. հունվարի 6-ի ճակատամարտում կռվել է Մուշեղ Մամիկոնյանի. «...որդի Դաթի, զարավարն Հայոց...»¹⁰⁰ հրամանատարությամբ՝ գլխավորելով զորաբաժին: Ջուանշիրը մեծ քաջությամբ է կռվում Սասանյանների համար այդ բախտորոշ ճակատամարտում, սակայն պարսիկները պարտություն են կրում, իսկ օգնության եկած զորքերը հեռանում են¹⁰¹: Ջուանշիրը մնում է և երեք հազարանոց զորաբաժնով մասնակցում 642 թ. Նեհավենդի ճակատամարտին¹⁰²: Ի տարբերություն Քաղեսիայի ճակատամարտի, երբ Ջուանշիրը հայոց ընդհանուր զորաբանակի շարքում կռվում էր Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարության ներքո, Նեհավենդի ճակատամարտում, հավանական է, որ ինքն էր Այսրկովկասից Պարսկաստան գնացած զորաբանակի հրամանատարը: Մանավանդ որ տարածաշրջանի մյուս իշխողներն արդեն չէին հավատում պարսիկների հաջողությունը և գերադասում էին չեզոքություն պահպանել:

642 թ. անցնելով իշխանության գլուխ՝ Ջուանշիրը Գարդմանից տեղափոխվում է Պերոզապատ (Պարտավ)¹⁰³, որը վերստին դառնում է Հայոց Արևելից կողմերի վարչական կենտրոնը:

Մերձավոր Արևելքում հաստատված արաբները չէին կարող աչքաթող անել տարածաշրջանը և 642–643 թթ. արշավում են Հայաստանի արևելյան շրջանները¹⁰⁴: Ջուանշիրն այդ ժամանակ արտաքին քաղաքականության հետ կապված իր քայլերը համաձայնեցնում էր հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունու հետ: Վերջինս, համադրելով ուժերի հարաբերակցությունը, 652 թ. մեկնեց Դամասկոս, որտեղ Ասորիքի ու Միջագետքի արաբ կուսակալ Մուավիան նրան շնորհեց. «իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիրիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Վորայ, և արձակեաց զնա պատո-

¹⁰⁰ Մեքենոս, գլ. Խ, էջ 137:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ, էջ 176:

¹⁰³ Նույն տեղում, Բ, գլ. ԺԹ, էջ 177:

¹⁰⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 308–309:

տով: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»¹⁰⁵, քանի որ արաբներն էլ էին հասկացել, որ տարածաշրջանում իրական ուժ է Հայաստանը: Բյուզանդիան, չէր ցանկանում Այսրկովկասում զիջել իր դիրքերը, և ունենալով Ներսէս III Տայեցիի կաթողիկոսի և հայ բյուզանդասեր նախարարների օժանդակությունը՝ Կոստանդ կայսրը մեծաթիվ զորքով արշավում է Հայաստան՝ Թեոդորոս Ռշտունու հետ Աղվանից և Վրաց երկրների ունեցած դաշնակցությունը խզելու համար: Անհանգստացած Ջուանշիրը 653 թ. Կարին քաղաքում ներկայանում է կայսրին: Վերջինս նրան շնորհում է «պոռտոն պատրիկի»¹⁰⁶ կոչում և իրավունք է տալիս «արևելեայցս ամենցուն արքայաբար առնել տեսչութիւն»¹⁰⁷: Սակայն ինչքան էլ կայսրը փորձեր սիրաշահել Ջուանշիրին և նրան կոչումներ շնորհեր, այնուամենայնիվ, վերջինս Թեոդորոս Ռշտունուց կախյալ վիճակում էր, քանի որ այդ ժամանակ իրական ուժ ներկայացնող Արաբական խալիֆայությունը հայոց սպարապետին էր հանձնել տարածաշրջանի ամբողջ իշխանությունը:

Արաբները, որոնք ուշիուշով հետևում էին բյուզանդացիների քայլերին, 654–655 թթ. ձմռանը¹⁰⁸ երկու ուղղություններով արշավեցին Աղվանք, Հայաստան և Վիրք՝ վերջնականապես հնազանդեցնելու համար: Սալման իբն Ռաբիան ներխուժեց Առան ու գրավեց Բայլականը, ապա արաբական հեծելազորը շարժվեց Պարտավ, որի բնակիչները դիմեցին ինքնապաշտպանության, սակայն ի վերջո, ստիպված եղան անձնատուր լինել: Գրանից հետո արաբներն արշավեցին Շակաշեն, Մեծ Կունք, Մեծ Իրանք, Ուտի, Տրի և Բաղասական: Գրավելով Հայոց Արևելից կողմանց գավառները՝ Սալմանի բանակն անցավ Կուրը և արշավելով հյուսիս՝ գրավեց Կապադակը¹⁰⁹: Սալմանի հետ, հարկ վճարելու պայմանով, հաշտություն կնքե-

¹⁰⁵ Մերեռս, էջ 169:

¹⁰⁶ Կաղանկատվացի, Բ, գլ. Ի, էջ 182:

¹⁰⁷ Նույն տեղում, Բ, գլ. ԻԲ, էջ 185:

¹⁰⁸ Տե՛ս Тер-Гевондян А., Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 40.

¹⁰⁹ Баладзори, նշվ. աշխ., էջ 13:

ցին Շաքբանի (Շաքե) և Կամիբարանի (Կամբեճան) տերերը¹¹⁰։ Եվ վերջապես հասնելով Դերբենդ՝ արաբները շարժվեցին խազարների վրա, սակայն Բալանջար գետի այն կողմում պարտություն կրեցին։ Սպանվեցին թե՛ Սալման իբն Ռաբիան և թե՛ 4 հազար զինվորներ։¹¹¹ Այնուամենայնիվ, Սալմանը կարողացավ գրավել մախկին մարզապետական Աղվանքի ամբողջ տարածքը։ Սակայն արաբներն այս արշավանքով չեն կարողանում վերջնականապես հնազանդեցնել Հայոց Արևելից կողմերը և սրանց հարակից շրջանները, քանի որ զբաղված էին նորանոր նվաճումներով և Բյուզանդիայի հետ շարունակվող անընդհատ պատերազմներով։

Ջուանշիրը, տեսնելով, որ Արաբական խալիֆայությունը բռնել է հզորացման ուղին, իսկ Բյուզանդիան չի կարող մեցուկ դառնալ, մեծամեծ նվերներով 667 թ. ուղևորվում է Դամասկոս, խալիֆա Մուավիայի (660–680 թթ.) մոտ՝ տալով հպատակության երդում։ Վերադարձի ճանապարհին Ջուանշիրն Արուճում ներկայանում է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին (661–685 թթ.) ու Ամաստաս կաթողիկոսին՝ հավանաբար խալիֆայի հետ բանակցությունների արդյունքները զեկուցելու համար։

Այսպիսով՝ Հայոց Արևելից կողմերը, սոսկ հարկերի վճարումով կարողանում էր պահպանել երկրի պետական կառավարման ներքին համակարգը։

¹¹⁰ Եղիազարյան Ա., Հաբիբ իբն Մաալամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ, ԼՀԳ, 2008, թիվ 2, էջ 75։

¹¹¹ Նույն տեղում։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով խնդրո առարկայի շուրջ աշխատության մեջ կատարված քննության արդյունքները, հանգում ենք հետևյալ եզրակացությունների:

Մ.թ.ա. I դարի 80-ական թվականներին արևելյան Այսրկովկասում ձևավորվում է Աղվանական պետություն, որին հայ մատենագիրներն անվանում են «Աղուանք», իսկ հունա-հռոմեական սկզբնաղբյուրները՝ «Ալբանիա»: Աղվանքի սահմանները նրա պետականության ժամանակաշրջանում (մ.թ.ա. I – մ.թ. V դարի կեսերը) կազմել են հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղը՝ Կերաունյան լեռները և սրանց շարունակությունը կազմող Սոանա (Սումգայիթ) գետը, արևելքում՝ Կասպից ծովը, հարավում՝ Կուր գետը, արևմուտքում՝ Վիրքը:

Սկզբնաղբյուրներում «աղվանացիներ» անվանմանն առաջին անգամ հանդիպում ենք մ.թ.ա. IV դարի 30-ական թվականներին, երբ մ.թ.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում աղվանացիները Մարաստանի սատրապ Ատրոպատեսի հրամանատարությամբ կռվում էին հունա-մակեդոնական բանակի դեմ և պարսիկների համար բախտորոշ այդ ճակատամարտում հանդես էին գալիս որպես մարերի ենթակայության տակ գտնվող ցեղային միություններ:

Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետության տրոհումից մինչև մ.թ.ա. I դարի 80-ական թվականներն աղվաններն անցել են պետականության ստեղծման բարդ ու երկարատև ուղի: Այս ժամանակ էլ ձևավորվում են ապագա Աղվանքի սահմանները, որը գրավել է ներկայիս Ադրբեջանի այն տարածքը, որը հայտնի է «Յալոյլութափայան» կոչվող հնավայրով ու, համապատասխանաբար, «Յալոյլութափայան» մշակույթ անվամբ նյութերով:

Մինչ Աղվանքում ավարտվում էր սահմանների ձևավորման գործընթացը՝ Առաջավոր Ասիայում գերիշխանության համար պայքարում էին Հռոմը, Մեծ Հայքը և Պոնտոսը: Աղվանքը դառնում է Մեծ

Հայքից կախման մեջ գտնվող պետություն, և աղվանական զորագնդերը հայկական բանակի կազմում մասնակցում են Տիգրան Բ-ի նվաճումներին, նաև՝ մ.թ.ա. 69 թ. կելի ունեցած Տիգրանակերտի ճակատամարտին: Ինչպես զիտենք հռոմեացիներին հաջողվեց կասեցնել Մեծ Հայքի առաջխաղացումը, և հռոմեական զորավար Պոմպեոսը հաղթում է աղվաններին: Երկու կողմերի միջև կնքվում է հաշտության պայմանագիր. Աղվանքը դառնում է Հռոմի «բարեկամ և դաշնակից», ինչը չի նշանակում, որ Աղվանքը դառնում է Հռոմից վասալական կախվածության մեջ գտնվող պետություն: Այդ պայմանագիրը նախատեսում էր միայն՝ ռազմական փոխադարձ օգնություն:

Ուսումնասիրելով «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի համառոտ և ընդարձակ խմբագրությունները՝ տարընթերցումների միջոցով փորձել ենք ստանալ գավառների ճիշտ անվանումները, որոնց թիվը հասնում է 11-ի: Դրանք են՝ Եխնի, Կամբեճան, Բեխ, Շաքե, Գետառու, Հողմագ, Գեղավու, Ոստան-ի-Մարգպան, Համբասի, Քաղաց դաշտ, Բազկան:

Ընդունելով նախորդ հետազոտողների հայտնած որոշ տեսակետները և կատարելով Աղվանքի գավառների ինքնուրույն տեղադրությունը, մասնավորապես «Աշխարհացոյց»-ի հաղորդումների հիման վրա, կարծում ենք, որ Եխնի գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն: Գավառը սկսում է այնտեղից, որտեղից ավարտվում է Վիրքի սահմանը, այսինքն՝ Վելիս-Ցիխե ամրոցի շրջակայքից, և իր մեջ է ներառում «Գավազք» գավառի տարածքը: Ավելի մեծ տարածություն է ունեցել Գետառու կամ Դեգառու գավառը՝ ի հաշիվ Քաղաց դաշտ գավառի: Վերջինս ոչ թե տարածված է եղել Սանի գետի երկու կողմերում, այլ գետը արևելքից բնական սահման է հանդիսացել Քաղաց դաշտ գավառի համար:

Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արքայանիստ Ոստան-ի-Մարգպան գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն, և նրա հարավային սահմանը հասել է Քաղաքերդ ամրոցին:

Բազկան գավառն ունեցել է ավելի փոքր տարածք, և Համբասի գավառը մի մասով պետք է տեղադրել այդ գավառի մեջ: Բանի որ սկզբնաղբյուրները Համբասի գավառի մասին որոշակի հաղորդում չեն տալիս, ուստի մենք այն տեղադրել ենք ենթադրաբար: Գավառը հյուսիսից սահմանակից է Գեղավու գավառին, հարավից՝ Բազկան, արևելքից Գեղավու գետին, իսկ արևմուտքից՝ Ոստան-ի-Մարգալան գավառին: Եզրակացությունը այն է, որ Համբասի և Ոստան-ի-Մարգալան գավառներն ամբողջ երկարությամբ միմյանց հարևան չեն եղել: Հաջորդ՝ Գեղավու գավառի սահմանը հասել է Կոկիսոն գետը և, ըստ այդմ՝ գավառը սահման չի ունեցել Ոստան-ի-Մարգալան գավառի հետ և ունեցել է ավելի մեծ տարածք:

V դարի կեսերից Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքով տարածաշրջանում տեղի են ունենում շրջադարձային իրադարձություններ, որոնք վերաճում են Այսրկովկասի քաղաքական քարտեզը:

461 թ. գահազրկվում է Աղվանից թագավոր Վաչե Բ-ն, և պարսից արքունիքը երկրում հաստատում է մարգալանական վարչակարգ: Դա չհանգեցրեց միայն թագավորական իշխանության կործանման, այլ փոխեց տարածաշրջանի քաղաքական քարտեզը: Փորձելով թուլացնել Մեծ Հայքը՝ պարսիկները նրանից անջատեցին մի շարք նահանգներ և տվեցին հարևան պետություններին: Եվ հենց 461 թ. էլ հայկական երկու աշխարհները՝ Ուտիքն ու Արցախը, միացվեցին Աղվանից մարգալանությանը: Պարսից արքունիքի կողմից ստեղծված վարչաքաղաքական նոր միավորը կրում էր «Աղուանք» անվանումը, և նրա սահմանները հյուսիսում՝ կազմում էին Կերաունյան լեռները, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Իբերիան, իսկ հարավում արդեն Արաքս գետը:

Իրենց իշխանությունը հաստատելով Աղվանքում՝ պարսից արքունիքը շարունակեց ողջ տարածաշրջանն իրեն ենթարկելու ծրագրի հաջորդ մասն իրականացնելուն: Փորձելով կասեցնել խազարական արշավանքները, որոնք սպառնալիք էին պարսից տիրապե-

տության համար Կասպից ծովի ափամերձ շրջաններում և Աղվանքում, նրանք գրավեցին Չողը, Շրվան, Խսրվան, Դեկաց ու Թավասպարաց շրջանները։ Այս ազգագավառները միացվեցին Աղվանից մարզպանությանը։

VI դ. երկրորդ կեսին Աղվանից մարզպանությունը ստանում է իր ավարտուն տեսքը։ Մակայն նրա մեջ ընդգրկված ազգագավառների միջև օրգանական ոչ մի կապ չկար, դրանք ինքնուրույն քաղաքական միավորներ էին, որոնք ուժով միավորվել էին մարզպանի իշխանության ներքո։ Ուստի, դա էր պատճառը, որ Աղվանից մարզպանությունը երկար կյանք չունեցավ։ «Աղուանք» անվանումը տարածվում է հայկական այս երկու աշխարհների վրա, քանի որ նրանք նախկին Աղվանից մարզպանության ամենամեծ միավորումներն էին մնացել։

Ուտիքի և Արցախի Առանշահիկների նախարարական տունը VII դ. սկզբին ժամանակավորապես իր տեղը զիջում է պարսիկների հովանավորությունը վայելող Միհրանյան տոհմին։ Երկար պայքարից հետո, սակայն IX դ. սկզբին Առանշահիկներին հաջողվում է դառնալ Ուտիքի և Արցախի լիիրավ տերերը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) Հայերեն

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

- 1.1 Ձեռագիր №№ 582, 696, 1267, 1459, 1486, 1717, 1864, 1883, 1898, 2019, 2191, 2291, 2370, 3160, 3502, 4284, 5120, 5613, 7993:

Տպագիր սկզբնաղբյուրներ

- 1.2 Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու Մատենագրությունը, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երևան, 1944, 418 էջ:
- 1.3 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Կանայեանց, «Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի», Տփղիս, 1909, 447 էջ:
- 1.4 «Աշխարհացոյց Մոսկսեսի Խորենացոյ յաւելածովք նախնեաց», «Ի տպարանի Մխիթարեանց», Վենետիկ, 1881, 62 էջ:
- 1.5 «Աշխարհացոյց» Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպլէրեանի, «Արաքս» հրատ., Բարիզ, 1960, 77 էջ:
- 1.6 Անանիա Մոկացի, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն. – «Արարատ», մարտ, 1897, էջ 129–144:
- 1.7 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, «Մովսէսական գրող», հրատ., Երևան, 1979, 400 էջ:
- 1.8 Արաքացի մատենագիրները Հայաստանի մասին, հաաքեց և

թարգմանեց Բագրատ Խալաթեանը, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1919, 147 էջ:

- 1.9 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965, 367 էջ:
- 1.10 Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», ռուսերենից թարգմանեցին Ա. Սարգսյանը, Ռ. Մավիսակալյանը, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, 654 էջ:
- 1.11 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1957, 223 էջ:
- 1.12 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, 426 էջ:
- 1.13 Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, տպ. «Հուսաբեր», Երևան, 1941, 126 էջ:
- 1.14 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ա. Կրկյաշարյանի, ՀԽՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1986, 651 էջ:
- 1.15 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեանց, «Արագածոտիկ Մնացական Մարտիրոսեանցի», Տփղիս, 1904, 211 էջ:
- 1.16 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն: Գրաբար բնագիրը Մամբրե Մելիք Աղամյանի և Ներսես Տէր-Միքայելյանի, «Երևանի համալսարանի հրատարակչություն», Երևան, 1991, 540 էջ:
- 1.17 Միքայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1879:
- 1.18 Մելիքսեթ-Բեկ Լ. Վրաց աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, հ. Ա, «Հրատ. Մելքոնյան ֆոնդի», Երևան, 1934, 268 էջ:

- 1.19 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Ս. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1991, 560 էջ:
- 1.20 Մովսէս Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, «Հայաստան» հրատ., Երևան, 1969, 320 էջ:
- 1.21 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, 412 էջ:
- 1.22 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ, Պատմութիւն Հայոց, «Տպ. Օր. Ն. Աղանեանցի», Թիֆլիս, 1912, 427 էջ:
- 1.23 Պատմութիւն Ղետնդեայ մեծի վարդապետի հայոց, «Ի տպարանի Ի. Ն. Սկորոխտովի», Ս. Պետերբուրգ, 1887, 201 էջ:
- 1.24 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, «Տպ. Օր. Ն. Աղանեանցի», Թիֆլիս, 1910, 619 էջ:
- 1.25 Պատմութիւն Մեքեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979, 446 էջ:
- 1.26 Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, հրատ. Ստ. Մալխասեանց, «Ի տպարանի Ի. Ն. Սկորոխտովի», Ս. Պետերբուրգ, 1885, 438 էջ:
- 1.27 Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, «Ի տպարանի սրբոյն Ղազարու», Վենետիկ, 1843, 640 էջ:
- 1.28 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, «Տպ. Ս. Էջմիածնի», Վաղարշապատ, 1871, 136 էջ:
- 1.29 Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, 1987, 456 էջ:
- 1.30 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 8, «Ասորական աղբյուրներ», Ա, թարգմանություն բնագրից, առաջա-

բան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, 478 էջ:

- 1.31 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 9, «Հին հունական աղբյուրներ», Ա, Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, քարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, 266 էջ:
- 1.32 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Ասիր, քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, 443 էջ:
- 1.33 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 13, «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանող, Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, 361 էջ:
- 1.34 «Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», 16, «Արաբական աղբյուրներ» Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Ներածությունը և բնագրերից քարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2005, 704 էջ:

բ) Ռուսերեն

- 1.35 Аммиан Марцеллин, История, перевод с латинского Ю. Кулаковский и А. Сонни, вып. I–III, “тип. Кульженко”, Киев, 1906–1908, 293 с.
- 1.36 Арриан, Поход Александра, перевод с древнегреческого Е. Сергеевко, М.-Л., 1962.
- 1.37 Баладзори, Книга завоевания стран, перевод П. Жузе, “Общество обследования и изучения Азербайджана”, Баку, 1927, 42 с.
- 1.38 Вахушти Багратиони, История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, “Мецниереба”, Тбилиси, 1976, 338 с.
- 1.39 Ган К., Известия древних писателей греческих и римских о Кав-

казе. – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 4, Тифлис, 1884, с. 1–248.

- 1.40 Жизнь катлийских царей, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая, Изд-во “Наука”, Москва, 1979, 101 с.
- 1.41 Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. I, Типография императорской АН, СПб., 1893, 296 с.
- 1.42 Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. II, Типография императорской АН, СПб., 1904, 270 с.
- 1.43 Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении, Азербайджане. – Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXIX, Тифлис, 1901, с. 1–73.
- 1.44 Квинт Курций Руф, История Александра Македонского, Изд-во Московского университета, М., 1963, 478 с.
- 1.45 Корнелий Тацит, Сочинения в двух томах, перевод С. Утченко, т. I, “Наука”, Л., 1970, 444 с., т. II, 370 с.
- 1.46 Летопись Картли, перевод, введение и примечания Г. В. Цулая, Изд-во “Мецниереба”, Тбилиси, 1982, 111 с.
- 1.47 Матиане Картлиса, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Изд-во “Мецниереба”, Тбилиси, 1976, 98 с.
- 1.48 Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, предисл. и коммент. Ш. В. Смбатяна, Изд-во АН АССР, Ереван, 1984, 258 с.
- 1.49 Патканов К., Армянская География VII века по р. Х., (приписывавшаяся Моисею Хоренскому), Типография Императорской Академии Наук, Санктпетербургъ, 1877, 110 с.
- 1.50 Плутарх, Сравнительные жизнеописания, т. II, Изд-во “Наука”, М., 1963, 548 с.
- 1.51 Страбон, География в 17 книгах, перевод, статья и коммент. Г.

А. Стратановского, Изд-во "Наука", Л., 1964, 940 с.

